

ՃԱՆԱԳԱՐ Է

ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ

5. M 5

ՃԱՆԱՊԱՐՀ

ԵՐԶԱՆԿՈՒԹԵԼՆ

ՈՐ Է

ՄԱՐԴՍ ԵՐԶԱՆԿԱՑԸՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍԸ


ԱՄԵՆ ՄԱՐԴՈՒ

ՅԱՐՄԱՐՑՈՒ ՅԱԾ

ԹԱՐԳՄԱՆԵ ԱՅ Ի ԳԱՂՂԻԱԿԱՆԷՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՐՈՒՍԵՑԻ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՉԱՄՈՒՌՃԵԱՆՑ



ՀՐԱՄԱՆԱԻ ՏԵԱՌՆ

ՄԱՏԹԷՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐԳԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ՝ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

= 1845 =

ՀԱՅԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ
Գրքերի և թղթերի վաճառքի համար
Գրքերի և թղթերի վաճառքի համար
Գրքերի և թղթերի վաճառքի համար

2

4-2

REVISED

1894-1895

1894

UNITED STATES DEPARTMENT OF AGRICULTURE

OFFICE OF THE CHIEF BUREAU

WASHINGTON, D. C.

REPORT OF THE CHIEF BUREAU

FOR THE YEAR 1894

CONTAINING

AN ACCOUNT OF THE

PROGRESS OF THE BUREAU

IN THE YEAR 1894

AND THE

A
804

UNITED STATES DEPARTMENT OF AGRICULTURE

OFFICE OF THE CHIEF BUREAU



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թ Ը Ր Գ Մ Ը Ն Չ Ի Ն

ՄԱՐԴՍ աշխարհք եկած ատենէն մինչև մեռած ատենը իրեն մէկ հասիկ նպատակ ունի, երջանիկ ըլլալը : Ի՛նչ որ ընէ՝ այս նպատակիս կը նայի : Մարդս ստեղծողը Աստուած՝ այս նըպատակըս անոր սրտին մէջ գրեր է : Բայց ա՛յն մարդ չեն գիտեր թէ երջանկութիւնը ի՛նչ է՝ և ինչո՞վ կը հասնովի : Գէշն այն է որ՝ այս հարկաւոր քանս սորվելու համար ո՛ւր երթալու է՝ այն ալ չեն գիտեր : Փիլիսոփայութիւնը կը պարծի՝ թէ կրնամ մարդուս սորվեցընել երջանիկ ըլլալուն ճամբան . բայց այն ալ քանի որ իրեն աղբիւրէն հեռանայ նէ կը մոլորի, յետին ուամիկներուն կարծիքներէն աւելի խելք հասնելու քան չի խօսիր :

Երջանկութիւնը մարդոյս մարմնոյն չի վերաբերիր, մտքին կը վերաբերի, ըսել է՝ հոգիին : Հոգին մարմնոյն հետ չի մեռնիր, յաւիտեան կ'ապրի . քանզի մարմնոյն պէս քանի մը տեսակ բաներէ բաղադրուած չէ՝ որ ասոնք իրարմէ զատվին ու ինքը մեռնի : Գոյութիւնը պարզ ըլլալով՝ մեռնիլն ալ միայն ոչընչանալով կրնայ ըլլալ : Բայց ստեղծուած բաներուն ոչընչանալն ալ մէկ անհուն զօրութեան յատուկ գործ մըն

է. բնագէտս ո՛չ եղած ունի՛ և ո՛չ ալ կրնալ ըլլալ-
 լիքը խելք կը կտրէ : Ի՛նչ բանի համար մենք
 ոչնչացաւ ըսել սովորութիւն ըրած եմք նէ՛ այն
 բանին միայն մասուհիքները իրարմէ կը քակիլին ,
 և առաջին ձեւը կրփոխէ . բայց մասանց մէկն
 սլ չի կրնար ոչնչանալ անանկ՝ որ բնաւ երբէք
 չեղածի պէս ըլլայ :

Զգալն ու խմանալը և խորհիլը՝ հոգւոյն աշ-
 նանկ գործքերն են որ՝ բնաւ հոգիէն չեն զատ-
 վիր . մարմինը ուրիշ բան չէ՛ , բայց եթէ աշ-
 խարհքիս մէջ մեզնէ դուրս գրանրլած բաները
 մեզի խնայունող գործիք մըն է , ասանք մեզի
 զգալու և խմանալու և խորհելու նիւթ կուտան,
 բուն այս կարողութիւններըս հոգիին իրենն են .
 որ ինքը իրեն բաւական նիւթ կրնայ ըլլալ խորհ-
 հելու . և ասանկ էակ մը՝ յաւիտեան չի մեռնե-
 լու ըլլայ նէ՛ զգալն ու խորհիլը և խմանալը յա-
 շիտեան իր վրան պիտի ըլլան . անանկ է նէ՛
 երջանկութիւնը միայն այս կեանքովրս պիտի չի
 լըմըննայ . որովհետեւ ենթակայն մարմիննիս չէ՛ .
 այլ յաւիտեան պիտի աւուէ :

Յաւիտեանսկանութեան վերաբերեալ ի՛նչ
 բան կայ նէ՛ նոյն ինքն մեր Արարիչը պիտի
 սորվեցընէ մեզի : Աստուծոյ սորվեցուցածը՝
 Քրիստոսնէական հաւատոյ վարդապետութեանը
 մէջ պարունակած է . ուրեմն՝ մարդոյս երջան-
 կութեանը առաջնորդ՝ կրօնքէն զատ ուրիշ բան
 չի կրնար ըլլալ : Քրիստոսնէութենէ դուրս ու-
 րիշ ճամբով երջանկութեան հասնիլ ուզելը՝
 բոլորովին ծաղրական բան է . որպէս թէ գիշե-
 րը աղէկ աեսնելու համար ճրագը մարել , կամ
 ձմեռը չի մտելու համար՝ իր վրան հագած լա-

Թերը հանել, և տանը սրատուհանները բանալ, և հովու և ձիւնի դէմ նստիլ. կամ ամբուփան տաք օգէն սրաղը շարկելու համար կրակի դիմաց նստիլ :

Նմանապէս ծաղրական է այն փիլիսոփայից աշխատութիւնը՝ որ կատարեալ երջանկութիւն սորվեցընելու համար կրօնից ցրցուցած ճամբէն կը զատվի. և ուրիշ ճամբով մը չի կրնալով սորվեցընել, որովհետեւ փորձը զինքը սուտ կը հանէ. կը յուսահատի և կ'ըսէ թէ՛ երջանկութիւն ըսվածը մտացածին բան մըն է. անունը կայ՝ ինքը չի կայ. մարդոյս երջանկութեան ետեւէ խնարձ՝ իր տուերէն անդին անցնելու աշխատիլ է. և այլն : Ասանկ են անոնք՝ որ երջանկութեան սասնկ սահման մը կ'ուտան. « Երջանկութիւնը՝ երեք տեսակ բարիքներուն մէկ տեղ գտնելին է » . և այս բարիքներս են մտքի բարիքը՝ որ է ամէն գիտելիքները գիտնալ, սա բանը ինչո՞ւ չեմ գիտեր կոր ըսելով օխ չընել : Մարմնոյ բարիքը, որ է կատարեալ սուղջութիւն ունենալ : Եւ բաղդի բարիքը, որ է ուղածին չափ հարստութիւն ունենալ : Այս սահմանս արււոզները իրենք ալ կ'ըսեն որ՝ երեքը մէկէն կատարեալ սասիճանի մէջ անհնար է որ մէկ մարդու մը վրայ գտնելի. և ասկէց ինչ կրնաս հետեւցընել. բայց եթէ՛ անհնար է որ մարդս երջանիկ ըլլայ : Եւ ասով՝ բարոյական փիլիսոփայ յութեանն ալ լոկ անունը կը մնայ. չ'ըլլալու բանի վրայ փիլիսոփայութիւն ըսել կ'ըլլայ. քանզի բարոյական փիլիսոփայութեան նպատակը՝ մարդս երջանկացընելն է. և մէկ գիտութեան մը նպատակը ոչինչ և անկարելի ըլլայ նէ՛ նոյն

խակ գիտութիւնն ալ ոչինչ և անպիտան կ'ըլ-
լայ :


Ուստի՛ աղէկ բարոյական սորվելու համար ,
այսինքն՝ երջանիկ ըլլալու ճամբան գիտնալու հա-
մար հա՛րկ է Աստուծո՛ւ չի վատովլ , որ մեզ մի-
այն կրնայ երջանիկ ընել : Ա՛նոր սորվեցուցած
վարդապետութեանը յարգը գիտնալ , որով միայն
կրնամք երջանիկ ըլլալ : Ա՛նոր պատուիրանքնե-
րը և խրատները պահել , որով կրնամք այս աշ-
խահա մէջն ալ յաւիտենական երջանկութեան
ճաշակը առնել : Երջանկութիւնը մէկ է՝ չի բաժ-
նրովիր . աշխարհքիս մէջ երջանիկ ըլլալը՝ հան-
դերձեալ աշխարհի երջանկութեան ճամբուն ըս-
կըզքնաւորութիւնն է . և ասոր վրայ գրքիս հե-
ղինակը լուսաւոր կերպով կը խօսի , որ մենք
յանձն առինք թարգմանելու իբրեւ կատարեալ
բարոյական փիլիսոփայութիւն : Բարեպաշտ
խնդրովն փափայքը և մեր աշխատութիւնը կը
յուսամք որ պարապ չ'ելլեր . հասարակութեան
օգուտ ըլլալով :

Գրքիս հեղինակը Գաղլիոյ անաստուածու-
թեան ատենի հեղինակներէն ըլլալով՝ Քրիստո-
նէական հաւատոգրը ճշմարիտ ըլլալուն ապացոյց-
ներու վրայ երկար գլուխ մըն ալ գրեր էր .
Ճոխ ծանօթութիւններ ալ ունէր : Մենք այն
գլուխը ամբողջ՝ և ծանօթութիւնները ետ ձը-
գեցինք . միայն ճշդիւ երջանկութեան վերաբե-
րեալ գլուխները թարգմանեցինք . որ կարգա-
ցողը չի ձանձրանայ և օգուտ քաղէ :



Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ

Ե Ր Ջ Ա Ն Կ Ո Ւ Թ Ե Ը Ն



Գ Լ Ո Ւ Խ Ը

Երջանկութեան փափաքիլը՝ և անիկայ փնտրուելը՝

ԻՆՉՊԵՍ որ մէկ քնքուշ ծաղիկ մը՝ արեւուն առաջին շառաւիղները վրան զարնելուն պէս կը բացվի, ա՛նանկ ալ միայն երջանկութեան դա՛ զափարը մեր սիրտը կը բանայ։ Ի՛նչ մտաւոր և զգայուն էակ, ի՛նչ մարդկրնայ ըլլալ՝ որ երջանիկ ըլլալու փափաք չունենայ։ Ա՛յս փափաքս՝ որ ա՛նանկ յօժարութիւն և միտում մըն է՝ որուն դէմ կենալը անհնար է, և բնութիւնը ասոր յօժարութիւնը մեր սրտին մէջը տպաւորեր է, ասիկայ մեզ ստեղծողին բարերար դի

տաւորութեանը ամէնէն աւելի զգալի նշանն է: Աստուած մեզ երջանկութեան համար ստեղծեց: Այլ բարի Աստուած, որ քու բարութիւնդ նոյն իսկ քու էութիւնդ է, որ մեզ լուսաւորող սաստղը մեր աչքին դիմացը կրճագես, որ աշխարհիս տեսարանը մեզի համար կը գեղեցկացնես, որ մեր ոտքերուն տակը այնքան բարիքներ ցաներես: Այլ դու՝ որ քու գերագոյն նմանութեանդ քանի մը գիծերը վրան տպաւորելու բարեհաճութիւն ըրած էակներդ ազգականութեամբ և մարդկութեամբ և ցաւակցութեամբ՝ և իրարու կարօտ և իրարու օգնական ընելով իրարու հետ կապերես, ո՞վ Աստուած իմ և Հայր, ինձի ազգում ըրէ, մեզ իրար սիրելու բռնկցնող Աստուածային կրակդ իմ հոգիիս մէջ անցուր, որ անոնք սիրելով՝ երջանկութեան ճամբան անոնց առաջը բանամ:

Արջանկութեան վրայ մտացածին գաղափարներ ունեցող մարդիկ եր-

կար ատեն իրենց ակնկալութենէն
խաբւելով՝ պիտի պօռան, երջան-
կութիւն մի, ատիկայ մարդոյս ակտը
ժելի՝ բայց խաբէական անգոյ բան
մըն է: Անք անոր ետեւէն փափա-
քանօք երթալով՝ պարաս աշխատե-
լէն մեղի հոգնութիւն եկաւ: Անանկ
կերեւի որ՝ միշտ մեղի մօտ է, բայց
կը բռնեմք կոր կարծած ատեննիս՝
փախչող շուքի մը պէս մեր ձեռքէն
կը հեռանայ: Չէ, մեղի համար եր-
ջանկութիւն չի կրնար ըլլալ:

Ալ քաղաքակիցներս, իմ բարե-
կամներս, իմ եղբայրներս, յիրաւի՝
կը խաբւիք կոր, և ի՞նչ գէշ կը խաբ-
վիք կոր: Այց ես ալ ձեզի շիտակը
ըսեմ, գիտե՞ք, քանի՞ անգամ ես ալ
ձեր ըսածին պէս եմ ըսեր: Տղայու-
թեանս ատենը՝ որ մենք սովորու-
թիւն ըրած եմք մեր կենաց պի՛նգ
գեղեցիկ ժամանակն է ըսելու, գրե՛-
թէ կենացս ամէն վայրկեանը մէկ
մէկ սխալ կարծիքով նշանաւոր ըրի:
Այն տարիքին յատուկ հեշտութիւն
ներուն ես զիս տալով՝ և միայն ա-

նոնք վայելել ուղելով՝ յիմարական
 գինովութեան մէջ ես զիս ձգեցի :
 Մայց որովհետեւ այս կերպս երկար
 ատեն դիմանալիք չունի, երբ որ
 խելքս գլուխս եկաւ նէ տեսայ որ
 երջանիկ չեմ եղեր : Նախանձէ յա-
 ռաջ եկած հակառակութիւնները,
 անհաւատարիմ մատնութիւնները,
 անհաստատութիւնը, շռայլութիւ-
 նը՝ և միշտ կարօտ ըլլալս, ուժոյս և
 առողջութեանս հատնիլը, մտքիս
 չարաչար տառապանք տուող յիշա-
 տակները և դառն զղումներս շատ
 ուշ ինձի սորվեցուցին որ՝ ուրա-
 խութեան և հեշտութեան և խըն-
 դալու քանի մը բոպէները՝ մարդու
 շատ սուղ կը նստին կոր : Այն ատե-
 նը ես ինձի ըսի. « Աւրախութիւնը
 շուտ կանցնի, և խնդալը մարդը կը
 խաբէ կոր » :

Օյս խաբողներուն տեղը ուրիշ
 խաբէութիւններ եկան, որ առա-
 ջիններէն քիչ վնասակար չէին : Մաղ-
 դը առաջս բացվեցաւ որ իմ կորսըն-
 ցուցածներուս տեղը լեցընէ, և

վատնած ինչքերէս ելել ինձի վաս-
 տրկցրնէ : Հարուստները տեսայ՝ ու
 իմ խաբովիս իմացայ : Անոնց մէկը
 ինձի ըսաւ , սա հարստութեանս և
 փառաւոր հագուստիս սրայծառու-
 թիւնը աչքովդ կը տեսնես կոր : Պա-
 տառաքաղ և շողոքորդ մարդիկ հա-
 ցրս կուտեն , ու իմ վիճակիս կը նա-
 խանձին , իմ երջանկութեանս և յա-
 ջողութեանցս վրայ ինձի ուրախա-
 կից կ'ըլլան , բայց տրամութիւնն
 ու ձանձրութիւնը ներսըս տիրեր է ,
 կեանքս կը մաշեցրնէ : Առատու-
 թեան մէջ կը լողամ , կիրքս և կամ-
 քքս ինչ ուզէ նէ՝ ամէնն ալ կ'ը-
 նեմ , բայց կշտացող մարդուն ինչ
 գանելիք կուգայ նէ՝ ամէնն ալ իմ
 վրաս կը կրեմ , անհանգստութենէն
 ու ցաւէն զատ ուրիշ բան չեմ իմա-
 նար , առաջկուց շատ հեշտութիւն-
 ներ վայելած ըլլալուս համար՝ հի-
 մա մէկ բանի մըն ալ համը չեմ կրը-
 նար կոր առնել : Մէկ բարակ հի-
 ւանդութիւն մը առողջութեանս
 հիմը քրչիկ քրչիկ տակէն կը փորէ ,

ջիղերս փափկութիւն մը վաստըկած
 ըլլալով՝ սուր ու սաստիկ ցաւեր
 քաշել կուտան ինձի : Այս . հարրս
 տութիւնս քիչ եղած ատենը սիրտս
 դոհ է ես առոյգ էի . այն վիճակին
 նորէն հասնելու համար՝ ես իմ ան-
 դամբներու մէկը կորսնըցնելու
 յանձնառու կ'ըլլայի : Այս հա-
 րուտ մարդոյս ըսածները ինձի զար-
 մանք բերին . և ես նոյն օրը դացի՝
 անոր պէս հարուտ ուրիշ մը դտայ՝
 և ըսածներս անոր սրտմեցի առանց
 ըսողին անունը տալու . բայց անկէց
 ալ նոյնը ըտեցի նէ՝ մտածէ՛ որ զար-
 մանքս ո՞րքան եփեցած կրնայ ըլլալ :

Ինձի մէկ հատիկ կիրք եղաւ ան-
 կէց ետքը՝ մեծութեան աստիճան-
 ներու հասնելու փափաքը : Տակա-
 ւին փառասիրութիւնը ինչ ըլլալը
 հասկընալու տարիքիս չի հասած՝ չա-
 փազանց փառասիրութեան սկզբուն-
 քը իմ ներսը տիրած էր : Այլ փա-
 ռաց և իշխանութեան հասնելու
 յոյս մը ունեցածիս պէս՝ անանկ
 ուժով և անանկ շուտ երեւան է

լաւ այս կիրքըս , որ չէր կարծւիւր
 թէ ասոր առաջը առնելու բան մը
 կրնայ ըլլալ : Աշխանութեան հասած
 մարդիկները մօտէն տեսայ , մեծա-
 մեծ մարդիկ տեսայ : Արեւնին նա-
 յելով հանդարտութիւն և սրարզու-
 թիւն մը կը տեսնուի , բայց ներ-
 սերնին քննելով տեսայ որ՝ հոգը
 զիրենք ներսէն կրմաշէն , շորս դիէն
 նախանձողներ լեցված են , միշտ ի-
 ընց յարգը՝ և իրենց բարձրանա-
 լոյն առիթ եղող կուսակիցները կոր-
 սընցընելէն կը վախնան , իրենց ճար-
 տարութիւնովը և հնարագիտու-
 թեամբը հասած բարձրութենէն
 վար ինչալ գլորելէն երկրնչելով ալ՝
 այն բարձրութիւնը աւելի բարձ-
 րութեան հասնելու մէկ աստիճանի
 մը սէս են բռնած : Տեսայ որ կըշ-
 տանալ չեն գիտեր կոր , միշտ նորէ
 նոր անհանգստութիւններով և նոր
 փափաքներով կը տանջուին , մինչեւ
 որ՝ այն ատենը որ ամէն վտանգէ
 ազատ կ'երթամբ կը կարծեն , յան-
 կարծակի անդունդ մըն է առաջին

կը բացվի . և չի կարծած ատեննին
խաղբ ու խայտառակ ըլլալով մէջը
կիյնան , իրենց անցած գացած մե-
ծութեանը միայն յիշատակը երազի
մը պէս մըտվընին կը մնայ : Արենց
ցաւալի ոչընչութիւնը կը գտնեն
իրենց ճամբուն ծայրը , և յուսա-
հատութիւնը կը տիրէ :

Ատեն անցնելով՝ աւելի ազդու
մէկ բան մը տեսայ . մէկ մեծ շիտթ
մը և փոփոխութիւն մը , որ մէկէն
'ի մէկ տակն ու վրայ ըրաւ և ոչըն-
չացոյց հարստութիւնները , պա-
տիւնները , գերագոյն ատօիճանները .
Թագաւորաց Թագն ու գաւազանը
կոտրտեց . տըներ փրցուց . ամբողջ
ազգեր աշխարհքէս վերցուց . մին-
չեւ ամէնէն պատուական յիշատա-
կարանները և մեր նախնեաց գե-
րեզմանները անյայտ և աներեւոյթ
ըրաւ . և մեղի աւերակներէն զատ
բարիք մը չի ձգեց : Այս չի մտցը-
վելու փոփոխութեանըս գլուխ և
գործադիր եղողները տեսայ , որ գե-
րագոյն իշխանութեան հասնելու

փափաքով կամ ոսկիի չի կշտացվելու
 աչքը ճակուժիւնով խենթ կ'ըլլային ,
 և ամէն բան հասարակութեան հա-
 մար ընելու պատճառանքով ամէն
 բան միայն իրենց համար կ'ընէին :
 Ատնք տեսայ որ՝ իրենց պէս մար-
 դոց կեանքը և առ հասարակ ամէ-
 նուն երջանկութիւնը իրենց խաղա-
 լիքի պէս ընելէն ետքը , և պինտ
 մաքուր արիւնները ջուրի պէս վա-
 ղեցրնելէն ետքը՝ ամէնն ալ իրարու
 վրայ ինկան , թապրութեան ու
 կործանեցան : Այս կերպ կերպ դի-
 պուածները ամէնն ալ տեսայ , և
 Պերսիաս բանաստեղծին ըսածը կրրիկ
 նեցի . “ Այս ի՞նչ է անմիտ մարդոց
 հոգը , միշտ ոչինչ բաներու վրայ ” :
 Ամէն մարդոցմէն եվել աշխարհային
 բարիքներուն համը առնող իմաստ-
 նոյն հետ ըսի . “ Աւնայնութիւն ու-
 նայնութեանց , ամենայն ինչ ընդ ու-
 նայն է ” :

Բայց սիրելիք , այսքան աղէտ-
 ներուն մէջ , այսքան անհաստատու-
 թեանց մէջ , որ ամէն բան շուտով

մը կուգան, կանցնին ու կը կորսը-
վին, ես ի նչպէս համարձակիմ՝ ձեզի
երջանկութեան խօսք ընելու :

Գ Լ ՈՒ Խ Բ.

Երջանկութիւնը սէր որ չէ նէ հոն կը փնտրուի :
Ճշմարիտ երջանկութեան գաղափարը :

Անչնէ նէ՝ երջանկութիւնը մէկ
գեղեցիկ մտացածին բան մըն է : Ա-
նանկ է նէ՝ սննիկայ՝ որ մեր սրտին
մէջ երջանիկ ըլլալու անյայտութիւն փա-
փաքը տարաւորած է, ուրիշ բան չէ
ըրած, բայց եթէ առանց մեր սիր-
տը և մեր փափաքը լեցընելու՝ պա-
րապ տեղը մեր միտքը բացեր է ու
մեր կարողութիւնները բանեցուցեր
է : Չէ՛, այն գերագոյն իմաստութիւ-
նը խաբեբայ և սուտ ու փուտ ճամ-
բաներով մարդս իր նպատակին չի
հասցներ : Յիրաւի կարելի է որ՝ մեր
այս համառօտ կենացս մէջ կատարե-
լապէս երջանիկ ըլլալը կամք չէ՛ ըրած :

Կարելի է որ՝ մեզի համար սահմանած յաւիտենական բնակարանին համար պահված երջանկու թեանը միայն մէկ սղտիկ ճաշակը և առհաւատչեայն պիտի տայ մեզի այս աշխարհքիս մէջ։ Բայց գննէ, թէ որ մենք անոր ցը ցուցած ճամբովը օրէ օր այդ երջանկու թեանը մօտենամք նէ՝ մեր յոյսը՝ ու իր կողմէն մեր սրտին մէջ տրպաւորված փափաքն ու յօժարու թիւնը բոլորովին պարսպ չի հաներ։ Եր հոգնիլը անօգուտ չ'ըներ, այս աշխարհքիս մէջն ալ այն կատարեալ երջանկու թեան համը կառնեմք, որ մենք անոր համար ստեղծված եմք. թէ և մենք ասոր վրայ կը կասկածիմք ու կը վախնամք ու կը տրանջեմք։

Այս աղէկ։ Բայց մեզ մեր ճըշմարիտ վախճանին քը չիկ քը չիկ մօտենալու թող չի տուողը ո՞վ է. ի՞նչ բան է։ Եր սխալ կարծիքները՝ և մեր կիրքերուն մեզ գլխէ հանելը։ Ենք երջանկու թիւնը իրեն սկիզբէն և մեզնէ գուրս կը փնտռեմք։ Ալ առ այժմ միայն մեր վրայ խօսիմք, երջանկ

կութիւնը իր թագաւորութեան ա-
 թոռը մեր սրտին մէջ հաստատած
 պիտի ըլլայ : Ենչպէս մէկ մարդ մը
 միայն իր սրտովը կրնայ ճշմարտապէս
 մեծ ըլլալ, նմանապէս երջանկու թիւ-
 նըն ալ միայն սրտով կրըլայ : Արտա-
 քին բարիքները՝ որ ունենալը չու-
 նենալը մեր ձեռքը չէ՛, դուրսէն
 սրտածառած ուրախութիւնները՝ որ
 իրենց սրտածառ եղած բանը քանի՛
 տկարանայ նէ՛ իրենք ալ կը տկարա-
 նան և ոչոնչութեան կը հասնին . հա-
 բրատութիւնները՝ որ ուրիշ մարդիկ
 կրնան մեր ձեռքէն յափշտակել, ետ-
 քէն վրանիս եկած մեծութիւնները՝
 որ մեզի բնական չեն՝ օտար են , այն
 ամէն ոչինչ և անպիտան բարիքները՝
 որ մեր հոգին կատարելագործելու
 և ազնուացրնելու տեղը շատ անգամ
 կը պղտիկցրնեն . ասանք կրնան մի
 մեր գոհ և երջանիկ ըլլալուն հաս-
 տատուն հիմն ըլլալ : Ասոր համար
 ես՝ ասանկ բան մը փնտրուելնիս պա-
 րապ աշխատութիւն ըլլալուն վրայ
 ամենեւին չեմ զարմանար . բուն ի-

բը մեր ձեռքէն կը փախչի, և մենք
անոր շուքին ետեւէն կը վազեմք
կոր:

Թէ որ երջանկութիւնը մեր կե-
նացը միայն քանի մը վայրկեանին
մէջ վայելելու բան է նէ՛ ո՞վ կայ
որ այդ երջանկութեանը մինչեւ հի-
մա բնաւ երբէք հասած չըլլայ. ո՞վ
կայ որ՝ հիմա ալ երջանիկ եմ ըսե-
լով ինքզնիքը խաբելու կարող ըլ-
լայ: Վայց նոյն իսկ մեր գանգաւ-
ները մեզի ասպացոյց մըն են որ՝ շու-
տով անցնելու ուրախութիւնները
չեն որ մեզ երջանիկ պիտի ընեն:
Երջանիկ ըլլալու համար այնքան
բարիք պէտք է որ՝ տարածվելովը
մեր բոլոր կեանքը իր մէջը առնէ:
Վնանկ բարիքներ պէտք են որ՝ մեր
կենացը հետ խառնըլած՝ դառնու-
թիւնները անդամ, ցաւերը անդամ
անուշորենն, և ասոնք մեզի իրօք
օգտակար բաներ ընեն: Վնչ ըսեմ,
անանկ բարիք պիտի ըլլան մեզ եր-
ջանիկ ընող բարիքը՝ որ դրսէն բա-
նէ մը կախում չունենան. մեզի

ներքին և բնականի պէս ըլլան . որ
 մեզնէ դուրս բան մը չի կրնայ անի-
 կայ մեզնէ զատել : Անանկ բարիք
 ըլլալու են որ՝ քանի՛ որ այն բարիքը
 վայելեմք նէ՛ եվելնալու կարող ըլ-
 լան . և ի՛նչ բան որ մեր գլխուն
 գալու ըլլայ նէ՛ անոր յարգը մեր
 առաջը եվելցընէ : Մի՛րելիք , երջան-
 կութիւնը ասանկ փորձերու տակ
 խօթելը , և ասանկ գտնելիլը դժ-
 ուար երեւցած պայմաններ վրան
 դնելը՝ ձեզ խաբելու նշաններ չեն
 կրնար ըլլալ :

Իայց մարդկային բնութեան ըն-
 դունակ ըլլալու երջանկութեանը
 ճիշդ գաղափարը ստանալու համար՝
 այս տեղըս հասկըցընելու աշխատիմ
 թէ իմ մտացս մէջ ի՛նչ գեղեցիկ
 գաղափար մը ունեցեր եմ վրան .
 անոր հաւատարիմ պատկերը նայիմ
 կրնամ մի գծագրել : Այլ ասոր օրի-
 նակ պիտի բըռնեմ աչքիս առջեւը
 եղած բաները . և իմ հետազօտու-
 թիւնս և իմ սիրտս : Անկէց ետքը՝
 վերի յիշած պայմաններս անոր յար-

մարցընելու դժուարութիւն մը չի մընար :

Այս իմ մտացս մէջ երջանկութան գաղափար դրած եմ՝ մեզի աւելի օգուտ ընելու բաներուն վրայօք աղէկ գաղափար և ճանաչում ունենալնիս, ամէն բանին ինչ յարգ վայելիքը գիանալնիս, ակտորժելի ըզգացմունքները, սրտին մէջէն բըղխած մարութ ուրախութիւնները, անվտիտիսելի նման խաղաղութիւնը, հոգինիս հաստատութեամբ միշտ միօրինակ բունելը, քաշած տառապանքներնուս մէջ անուշիկ թեթեւութիւն գտնելնիս, և պինդ հաճելի և ակտորժելի տեսարան մը՝ որով մենք մեզ գիտեմք ու մեզնէ գոհ ըլլամք : Մնկերական կարգի մէջ ալ ազնիւ առաքինութիւններ, սրբտին հաճելի գալու սէր, ճշմարիտ զուարճութիւններ : Ասոնք քանի՛ որ իրօք երեւան ելեն նէ՛ այնքան աւելի կիմանամք մեր երջանիկ ըլլալը :


Ամենեւին կասկած չունիմ որ աւմէն մարդ ըսածներուս հաւանու-

Թիւն կուտայ : Մայց ոմանք պիտի
 ըսեն որ՝ ասանկ խառնիխուռն կեան-
 քի մը մէջ այդպէս երջանկու-թիւն
 ձեռք ձգելը անհնար բան է : Աւ-
 այս ալ մէկ փիլիսոփայական դրու-
 թեան պէս բան մը բռնելով՝ մտա-
 ցածին կարծիքներուն կարգը կը նե-
 տեն : Աւրիչներուն առաջը մէկէն
 ՚ի մէկ սուտ կարծիք մը կելլէ, որ
 նորելուկ է . բայց հիմա միայն նու-
 բելուկ ըլլալը բաւական է որ՝ մէկ
 կարծիք մը հրքան սուտ և անտեղի
 ըլլայ նէ ըլլայ, հաստատութիւն չի
 գտնայ ալ նէ՝ քիչ մը ատեն բերնէ
 բերան կը սլտըտի : Ասանկներս տես-
 նելով՝ որ այս դրութեանս դործադ-
 րութեանը հնարաւորութիւնը մի-
 այն կրօնքով կրնայ ըլլալ, որովհե-
 տեւ կրօնքը իրենց ատելի բռնած-
 են, կրօնքին հետ անոր միջնորդու-
 թիւնովը ըլլալու երջանկու-թիւնն
 ալ կը մերժեն :

Աս պարզ հաւատարմութիւն կը
 պահեմ, գիտեմ որ միշտ և ամէն
 բանի մէջ հաւատարիմ չ'ըլլալը ին-

804

ձի շատ ծանր կրլայ : Այս գործադ-
 րութեան մէջ կրօնքէն զատ ուրիշ
 մէկ բան մը չի գտայ՝ որ զիս երջա-
 նիկ ընէ : Մայց վերջապէս՝ սիրելիք,
 ես որքան որ մարդս կրնայ երջանիկ
 ըլլալ նէ՝ երջանիկ եմ. միայն աւելի
 առաքինի կրնամ ըլլալ որ չեմ :
 Մայց դուք երջանիկ չէք : Այլ ո՞վ
 որ իմ բռնած ճամբաս բռնած է, և
 ո՞վ որ կրօնքին բուն էութեանը հա-
 սած է մտօք, այսինքն՝ Վրիտանիա
 կան կրօնքը ինչպէս պիտի ըլլայ՝ և
 իրօք ինքնին ինչպէս է նէ, անանկ
 գիտցողը, և անիկայ ամենայն մտք
 րութեամբ և անսրատութեամբ ՚ի
 գործ դնողը, ասոնք ամէնն ալ ինձի
 պէս կրնան ըսել որ՝ քանի՛ որ կրօնքը
 ճանչցած են նէ՝ երջանկութեան
 հասած են : Ասոր վրայ կարժէ որ
 դուք ալ քիչ մը միտք հոգնեցընէք :
 Ասոր օգուտը է՛ի աղէկ մեծ և հար-
 կաւոր բան է, ճշմարիտ երջանկու-
 թեան գիտութեանը վրայօք պէտք
 եղածները հասկրցուցած ատենս՝
 դուք ալ մտքով ետեւէս գալու էք .



կուզէք նէ՝ ինչպէս էք նէ այնպէս մը
նալու մտքով թող ըլլայ . այս ձեզի
վնաս կ'ընէ , բայց գոնէ վնասը կը
հասկընաք . բարիքները աչքի երե-
ւելիք՝ բայց գէշութիւնները իրա-
կան են : Տեսէք որ ես ձեզի կրօն-
քին տանելուքէն և ձեզի տալու
կարող եղածէն աւելի բան խոստա-
ցեր եմ մի :

Արօնքին ու երջանկութեան իրա-
րու հետ համաձայնութիւնը՝ որ ես
կայ կ'ըսեմ , և հոս ալ անոր ասպացոյց-
ները տալու յանձնառու եղած եմ ,
կրօնից համար գեղեցիկ ասպացոյց
մըն է , որ շիտակ և ճշմարտասէր
մարդոց մտքին ըյս կուտայ , ամէ-
նուն սիրտը ասիկայ գիւրաւ կ'ըզ-
գայ : Վճռէքքիե՛օ՝ որ լայն ու խո-
րունկ միտք ունէր , և դրացի ազ-
գերը անոր վրայ մեզի կը նախանձին ,
և ստոր փառքն ու համբաւը մեր
առժամանակեայ կարծիքներէն ու
ծուռ դատումներէն կախված չէ՛ ,
ասանկ մարդ մըն ալ այս ըսածս իբ-
րեւ կրօնքի յայտնի ասպացոյց բըռ-

նեց : “ Օ արմանալի՛ է կ'ըսէ , որ
 ” Քրիստոնէական կրօնքը , որուն նը
 ” սրատակը միայն հանդերձեալ կե-
 ” նաց երջանկութիւնը ըլլալ կերե-
 ” լի , այս աշխարհիս մէջն ալ մար-
 ” դըս երջանիկ կ'ընէ ” :

Եւ յիշաւի՛ . Աստուածութեան
 աւելի արժանաւոր բան մը չէ՞ մի
 որ՝ ինքրզինք մարդոյս յայտնած ըլ-
 լայ չէ՛ թէ միայն անիկայ հանդեր-
 ձեալ աշխարհքին մէջ ունեցած նը-
 սրատակին և վերջին վախճանին հաս-
 ցընելու համար , այլ և այս աշ-
 խարհքիս մէջն ալ անիկայ երջանիկ
 ընելու համար , որքան որ կը տանին
 իրեն իմաստութեան խորհուրդնե-
 ըր , և մարդոյս վաստըկցընել ուղած
 արդիւնաւոր գործքերը , և այն կա-
 տարելութիւնը՝ որուն հասնելու
 ճամբայ մը տուեր է մարդոյս կա-
 տարելութեան ընդունակ ըլլալը ,
 որ ունեցած յատկութիւններնուս
 աղէկներուն մէկն է : Թէ որ իրեն
 խորհուրդը ասանկ է , և թէ որ ին-
 քը խոնարհեցաւ և կամեցաւ ճըշ-

մարիտ երջանկու թեան ճամբան ինքնին մեզի սորվեցրնելու, այս ճամբաս մանել չուզելը մէկ անձոռնի կուրութիւն մը չըլլար մի. և մենք ասանկ ընելով խենթեցած չեմք մի ըլլար :

Մեզի այս աշխարհիս մէջ ամէնէն պատուական երեւցած բանին հետ կրօնքին համեմատութիւն ունենալը՝ Վրիստոնէութիւնը մարդոյս սրտին յարմար գալուն մէկ հատիկ ապացոյցը չէ. ամէն տեսակ ապացոյցներէն ունի կրօնքը. և ես այս գրքիս մէջ անոր մէկ քանին բացատրելովս, որ իր նպատակին համար արժանի է որ ձեռք առնողը մտադրութեամբ կարդայ, կը յուսամ սիրելիք՝ թէ շատ մարդ ըսածներուս հաւանութիւն պիտի տայ, որ Վրիստոնէութիւնը աւելորդ պաշտութիւն չէ. և Վրիստոնէութեան պաշտպան եղողները թիւր կարծիքի բռնրված չեն :

Մի վախնաք որ՝ ես ձեզ ասով՝ կրօնամուտութեան (սօֆիութեան և

դասխարութեան) մութ ճամբաները
կը խօթեմ: Իմ դաւանած կրօնքիս
ունեցածին պէս անուշիկ փիլիսո-
փայութիւն մը, և մէկ փափուկ և
դիւրազգած (նազիք) սիրտ մը, ու
բով իմ երջանկութեանս բոլոր իմ
բարեկամներս հաղորդ ընելու կը
փափաքիմ, ինձի չեն ներեր որ ու-
րիշ դիտաւորութիւն ունենամ,
բայց եթէ խելքի համեմատ եկած
միջին սահմանը բռնեմ անոնք, և
որքան որ ձեռքէս կուգայ նէ՛ միա-
բանութեան և խաղաղութեան ա-
ռաջնորդեմ:

Գ Լ ՈՒ Խ Գ.

Մեզի աւելի օգտակար ըլլալու բանին վրայօք
հին և նոր փիլիսոփայներուն կարծիքը:

Թի՛ որ ես իմ գոյութեանս օկիզ-
բը, և իմ և բոլորս առնող էակ-
ներուն բնութիւնը, և իմ բուն
վախճանըս չի գիտնամ նէ՛ ի՞նչ

բան կրնամ իմ երջանկութեանս
հիմն դնել : Ամենեւին կասկածելու
տեղ մը չունիմք . ասանկ են այն ա-
ռարկայները՝ որոնց հետ իմ աւելի
աչքս եղած բանը կապված ըլլալով՝
ինձի շատ պէտք է որ անոնց վրայօք
ճիշդ գաղափար մը ունենամ :

Հիմա հոս հին փիլիսոփայնե-
րուն խորհուրդ հարցընեմ , եթէ
մեր ժամանակը գտնելու խելացի-
ներուն : Հին փիլիսոփայները որ-
քան որ նախնիքներուն աւանդու-
թեանէն կը հեռանան՝ կը տեսնեմ որ
ամէնքը մէկէն իրենց կարծիքներուն
մէջ այնքան կը մոլորին , ո՛չ իրարու
հետ կը համաձայնին , և ո՛չ բնու-
թեան իրաց յարմար բան մը կը խօ-
սին , և այնքան ալ շիտթ կը խօսին
որ՝ ըսածնին աղէկ հասկըցայ ըսե-
լով սարծիլը ամէն մարդու բան չէ՝
և կրնամք ալ կարծիք ընելու իրա-
ւունք ունենալ , թէ արդեօք իրենց
ըսածը իրենք կը հասկընային մի :

Թ՛աղէս ամէն էակներուն մինչև
առաջին սկիզբը ելլել ուզելով՝ ամէն

բանին առաջին սկիզբ՝ ջուրը տը-
 վաւ . և մէկ ներգործող և մտաւոր
 և իմացական սկիզբ մըն ալ ասոր
 հետ կուտայ նէ՝ չերեւիր որ ասիկայ
 նիւթէն ուրիշ մէկ բան մը կարծած
 ըլլայ : Անոր ըսածին նայիմք նէ՝ ա-
 մէն բան աստուածներով լեցուն է :
 Հերակղիղէս Ափեսացին՝ որ թա-
 ղէսէն քիչ մը ետք էր , ասոր հակա-
 ռակ ըսաւ թէ՝ ամէն բանին սկիզբը
 մինակ կրակն է : Անաբոխմանդրոս՝
 ոչ կրակը ուղեց և ոչ ջուրը , ասոնց
 տեղը անհունը դրաւ . բայց այս
 անհունս նիւթական էր . ուստի հու-
 նաւոր մասունքներէ շինված պիտի
 ըլլար . Անաբոխմենէս՝ անհուն տա-
 րածութեան գաղափարը իր խել-
 քին յարմար երեւցածին պէս ձեւի
 մը խօթեց . և ըսաւ որ՝ ասիկայ
 օդն է : Մտենոփանէս ըսաւ որ՝ Աս-
 տուած մէկ անհուն բոլոր մըն է .
 և ասոր վրայ իմացականութիւն մըն
 ալ ելելցուց : Ամէնը մէկ է ըսաւ ,
 և բնաւ դիպուածի տակ չ'իջնար .
 և այս է Աստուած , ասիկայ յաւի-

տենական է, և ձեռն ալ բողորակ է ըսաւ: Քսենոփանէսին աշակերտը Պարմենիդէս՝ երկու տարերք կ'ընդունի. մէկը կրակն է, և մէկայլը՝ հողը: Արակը հողին վրայ կը ներդործէ, և հողը անոր նիւթն է կ'ըսէր: Այլ կըրպնդէր որ՝ մարդկային ազգին առաջին ճնունդը արեւէն է: Անպէս սագորաս, որ թաղէսէն հարիւր տարիի մը չափ ետք էր, նիւթէն էապէս զատված մէկ ներդործող պատճառի մը հարկաւոր ըլլալը իմացողներուն առաջինը եղաւ. և այս գրութիւնս իբրեւ սկզբունք դրաւ որ՝ տիեզերաց բարեկարգ կազմութեանը և դիրքին համար՝ մէկ անհուն հոգիի մը իմաստութիւն և կարողութիւն պէտք է: Վայց հին փիլիսոփայներուն շատին հետ ասիկայ ալ ժայռի զարնըմէցաւ. երբ կարծեցին թէ՛ երկու սկիզբները առանց իրարմէ կախում ունենալու միապէս յաւիտենական են, երկուքն ալ իրենց գոյութիւնը իրենցմէ աւնին. ուստի գոյութիւննին հար-

կաւոր է . սակայն մէկը կ'ըստիպէ
մէկալը՝ որ ինքը ինչ ձեւի խօթել
կ'ուզէ նէ՝ այն ալ հնազանդի և այն
ձեւը մըտնէ :

Մարդկային ազգին սկզբնաւո-
րութեանը համար Անաբաստորասին
բաժը մտքէ չի հանեմք : Ա՛րքէ որ՝
հողը առաջնութե թաց և ջրով խառ-
նած ըլլալով՝ և ետքը արեւէն տաք
նալով՝ առաջին անասունները և ա-
ռաջին մարդիկը ասանկ գոյացան :
Ասկէց առաջ Անաբսիմանդրոս բաժ-
էր որ՝ տաքցած ջրախառն հողէն գո-
յացած են իրարու նման ձկներ և
անասուն կենդանիներ : Այլ այս
ձկներուս հետ մարդիկ ալ ըստեղծ-
վեցան , որ մինչեւ իրենց չափահա-
սութեան տարիքը հասան նէ անոնց
հետը մնացին , և երբ որ այս տա-
րիքիս հասան՝ իրենց առաջ երթա-
լուն արգելք եղած բաները վերցը-
նելով՝ իրենք իրենց ասորուստը
գըտնելու բաւական եղան :

Վեմսկրիտոս՝ Հիւլէներուն մըշ-
տընջենաւոր և հարկաւոր մէկ շար-

ժուժ մը կուտայ : Այլ իրեն գըրու
 թեամբը՝ ամէն բան ասոնց իրարու
 բով գալու միանալէն առաջ կու
 գայ : Բայց թէ որ ասոնց շարժումը
 հարկաւոր է , և իրենց բնութենէն
 է այս շարժումը , և ինչպէս որ են
 նէ՝ անանկ ըլլալնին հարկ եղած է ,
 ինչպէս կրնան կոր իրարու շարժ
 մունք փոխել , իրարու հետ կաշիլ ,
 կասրիլ , և իրար շարժմունքէն գաղ
 բեցընել : Ասկէց զատ՝ ինչպէս մէկ
 կանոնաւոր բոլոր մը կրնան կոր
 բաղկացընել :

Բեմակրիտոսին աշակերտը Պրօ
 տագորաս որ Բիագորասին պէս ա
 սոր համար ալ անաստուած բսին , և
 անոր պէս այս ալ Աթէնքէն վրոզն
 տրվեցաւ , այս ալ ըսաւ որ՝ ամէն
 բան ճշմարիտ է , և հողին ու մար
 մինը՝ երկուքը մէկ բան են :

Հին Ակադեմիային գլուխը է
 զոյ Պլատոնը , որ Ատուածային
 կ'ըսի , և շատ տեղեր ամենամութ
 կերպով կը խօսի , մանաւանդ Տիմէո
 սի տրամախօսութեան մէջ անանկ

մութ կը խօսի որ՝ Արևելքոնին բաւ-
 ծին նայինք նէ, որ այս դործս Աւ-
 տիներէնի թարգմանած էր. մարդ-
 չի կրնար պարծիլ թէ ես հասկըցայ :
 Այս Պղատանս՝ որ երբեմն վարդա-
 պետօրէն և կտրողական ձեւով կը
 խօսի, և երբեմն ամէն բանի վրայ
 տարակուսիլ կը ցըցընէ, անանկ կ'ը-
 սէ որ՝ աստուածները ճշմարտութիւ-
 նը միայն իրենց համար պահած են .
 և մարդոյս բաժին՝ ճշմարտանրմա-
 նութիւնը ձգեցին : Օգալի բանե-
 րը ամէնն ալ իր աչքին խաբէու-
 թիւն երեւցած են :

Ապիկուրոս կ'ըսէ որ՝ հեշտու-
 թիւնն է ծայրագոյն բարին . բայց
 ինչ հեշտութեան վրայ խօսիլը դիւ-
 րաւ հասկընալու բան չէ . մեզնէ
 դուրս գտնելիւ թէ բաները դատելու
 և ասոնց վերաբերեալ ճշմարտու-
 թեան առաջնորդ բռնելու համար
 զգայարանքներէն զատ բան չ'ընդու-
 նիր . և ասով հարկ եղած է իրեն բ-
 սել որ՝ արեւը երկու ոտնաչափէն
 աւելի մեծութիւն չ'ունի : Ամէն

բան ամենամանր փոշիի նման նիւթերուն իրարու պատահելէն և դիպուածէն առաջ եկած է կ'ըսէ :

Սգրատուն այս փոշէնքման նիւթերը չ'ընդունիր . և կ'ըսէ թէ՛ ամէն բանը ընողը կոյր հարկն է : Արկեսիդաս՝ որ երկրորդ Ալիագեմիային հիմնադիր եղաւ , առածի պէս այս խօսքս կը դնէ որ՝ ճշմարիտն ու սուտը իրարմէ զատելը անհնար է : Պիւռոն և անոր աշակերտները՝ երկու իրարու հակառակ բաներ մէկէն հատատելու խելք կը հոգնեցընէին . և մէն տեղ և ամէն բանի վրայ հատատելու պատճառ ալ կը դռնէին՝ հերքելու և չ'ընդունելու ալ : Օհնոն Աղէացիին շարժումը կուրանայր , և մեզնէ դուրս բան մըն ալ չի կայ կ'ըսէր : Արիստոտէլ՝ որ Աիկեոնի հռչակաւոր դպրոցը բացաւ , և աշակերտները ճեմական անունով հռչակվեցան , Աստուծոյ անմարմին էակ մը ըլլալը կը ճանաչէր . մարդոյս հոգին ալ անոր պէս է կ'ըսէր . բայց աշխարհքս յաւիտենական կը դնէր .

և ոչինչէ ստեղծուած բան չ'ըլար
 կ'ըսէր: Սգրատոն՝ որ վերը յիշե-
 ցինք, թէպէտ ասիկայ ալ Վիկէոնի
 դպրոցին վարժապետ եղաւ, բայց
 ըսաւ որ բնութենէն զատ ուրիշ
 Աստուած չի կայ, և այս ալ ոչ ձեւ
 ունի, և ոչ բան մը կ'ըզգայ: Օե-
 նոն Սիգրիացին՝ որ Սոյիկեան ա-
 ղանդոյն հիմնադիր եղաւ, և սրահը
 ամբարտաւանութեամբ դաս կու-
 տար, բնաւ հոգեղէն էութիւն
 չ'ընդունիր, և ամէն բան անխոր-
 շելի ճակատագրին իշխանութեան
 տակը կը ձգէ: Այս ալ կ'ըսէ որ՝
 Աստուած և բնութիւնը, բանն ու
 անիկայ բանող վարպետը՝ ամէնը
 մէկ են: Բայց կ'ուզէ որ՝ ուրիշ ա-
 մէն բանէն աւելի՝ Վթերին (կամ
 օգոյն վերի նուրբ տեղերուն) տրը
 վի Աստուծոյ անունը: Բայց այս
 դպրոցիս աշակերտներէն Վլէանթոս
 անուն մէկը՝ այս անունս արեւուն
 յարմար կը տեսնէ, և ասոր վրայ
 Վիկերոն կ'ըսէ, «Այս բանիս վրա
 » յօք իմաստուններուն իրարու ան

„Համաձայն ըլլալուն նայելով հարկ
 „կ' ըլլայ մեզի մեր գերագոյն Տէրը
 „մոռնալ . քանզի չեմք գիտեր, արե՞-
 „ւը պատուելու եմք եթէ Աթերը” :

Այս կշտամբութիւնս հին փիլի-
 սոփայներուն վրայ ասկէց անդին
 տանիլ չ'եմ ուզեր : Վուցէ ասանկ
 գիրքի մը մէջ՝ որ երջանկութեան վը-
 րայ խօսելով ամենուն պիտանի ընել
 կ'ուզէի, պէտքէն աւելի ալ խօսած
 ըլլամ . բայց Աիկերոնին մէկ ուրիշ
 տեղ մը ըսածը՝ թէ “Չեմ գիտեր
 „ինչո՞ւ համար է որ՝ մարդ չի կրնար
 „անանկ անձունի բան մը ըսել՝ որ
 „փիլիսոփայներուն մէկը ըսած չ'ըլ-
 „լայ” . այս խօսքս որքան ճշմարիտ
 ըլլալը հասկըցրնելու համար այսքա-
 նըս ըսելն ալ հարկաւոր էր : Այլ
 մարդու խելք . անանկ է նէ՝ դուն
 քեզի մնալով՝ քու տկարութենէդ
 և քու բան մըն ալ ընելու ուժդ
 չ'օգտելէն զատ մեզի պիտանի բան
 մը սորվեցրնելիք չ'ունիս :

Բայց արդեօք Ասոյիկեանց և
 Ղեմականաց դըպրոցին հետ հին

դըպրոցները ամէնն ալ մէկդի ձրգե-
 լով՝ հիմակվան փիլիսոփայներուն
 գալու ըլլանք նէ՝ աւելի մէկ լոյս մը
 կրնանք մի առնել : Մայց մեղք որ ,
 ասոնց շատն ալ՝ որը մէկ կերպով՝
 որը մէկ ուրիշ ճամբով , հինցած մո-
 լութիւնները երեւան հանելէն զատ
 բան մը ըրած չ'ունին . իրենցմէ ա-
 ռաջ զրուցվածն է որ աւելի ճոռո-
 մաբանութիւնով մեղի նորէն կը զը-
 րուցեն . և թէ որ հոգեփոխու-
 թեան աղանդոյն հաւատացողներէն
 ըլլայի նէ՝ կրնայի ըսել որ հին փիլի-
 սոփայներն են ասոնք , նորէն աշ-
 խարհք եկեր են . և առաջին խեն-
 թումենթ կարծիքնին հիմայ նորէն
 մըտվրնին եկած է : Ասոնց մէկը ին-
 ձի մէկ հատիկ գոյացութիւն մը կայ
 կ'ըսէ , և այս ալ իրարու հակառակ
 և հակասական բաներէ բաղկաց-
 եալ , որովհետեւ մարդկային բարուց
 վերաբերեալ իրարու հակառակ
 վարդապետութիւնները ամէնն ալ
 իր տակը կը սրարունակէ : Մէկ ու-
 ըրիջ՝ որ է Պէյլ , երկբայելէն զատ

ուրիշ բան սորվեցուցած չ'ունի :
 Մէկ բան մը շինեց մի . քիչ մը ան-
 ցածին պէս իր ձեռօքը կը փլըրնէ ,
 կը քակէ . և առաջկուց քակածը կը
 շինէ . կերեւի որ՝ իրեն մէկ հատիկ
 խօսքը՝ էս ի՞նչ գիտնամ ըսելը պիտի
 ըլլայ : Մէկ ուրիշ մը՝ (Վօլդէր) , ա-
 մէն ճշմարտութիւն և ամէն դրու-
 թիւն իրեն խաղալիք է ըրեր . ամէն
 բան ծաղր կրնէ . ամէն բանի վրայ
 կը ծիծաղի , և կուզէ իր սուր ման-
 գաղովը ամէն բան կըտրել նետել :
 Մանգաղն ալ՝ ծաղրելն ու երգիծա-
 բանութիւնն է : Վսկէց զատ , ամէն
 բան կաւրէ , իր ձեւէն կը հանէ ,
 ծուռ և սուտ վկայութիւններ կը
 բերէ . և ամէն բան գիտնալ կը ցը-
 ցրնէ : Վնդագար մէկ ծայրէն մէ-
 կալ ծայրը կանցնի . անաստուած ,
 աստուածեան , երկբայող , երբեմն
 ալ ջերմեռանդութիւնը մինչեւ սը-
 նոտիապաշտութեան կը հասցրնէ .
 և ասոնք ամէնն ալ գրեթէ մի և նոյն
 օրվան մէջ իր վրան կը տեսնուիին :
 Իրեն խորխտ հակառակօրդը (Ռու-

սօ), որ աս ալ փիլիսոփայ ըլլալով՝
 փիլիսոփայներուն գլխուն փորձանք
 էր եղեր, և ինքն ալ անոնց երեսէն
 հանգիստ գտած չ'ունէր. այս ալ
 օգտակար ճշմարտութիւններուն
 հետ անճոռնի և հակասական խօս-
 քեր ալ լիաձեռն (ալուճ տօլուսու)
 կը խառնէր. և ասոր համար՝ ըսա-
 ծը չի հասկըցվիր կոր ըսելը բաւական
 սեպվեցաւ: Մէկ ուրիշը սրտի գրպ-
 չող և ոգեշարժ զրուցվածքով՝ բնու-
 թիւնը իրեն օգնութիւն կը կոչէ. և
 բնութեան մէջ՝ նիւթէն ու շար-
 ժումէն ուրիշ բան չի գիտեր: Այս
 բնութիւնս, որուն թարգման ե-
 ղաւ ինքնիրեն՝ Անսիքլորէտի ըսված
 բառարանները շինողներուն պարա-
 գլուխը (Տիտոօ՝) մէկ առանձին
 գիրքով մը, ասոր գրչին տակը մէկ
 չի հասկըցվելու հանելուք մը դար-
 ձած է. և մթութիւնները գիտես
 թէ իրարու վրայ գիզված են. և
 քանի՛ որ բացայայտել կուզէ՝ մը-
 թութիւնը եվելցընելէն զատ ուրիշ
 բան չ'ըներ: Մէկ ուրիշը խօսքը

կարճ կը կապէ, ու բացայայտ խօս-
քով իմաց կուտայ որ՝ սուտ կար-
ծիքներուն ամէնէն մեծը և ամէնէն
աւելի արմատացեալը՝ Աստուծոյ
գոյութեանը վրայօք ունեցած կար-
ծիքնիս է: Այն ալ կելլէ կ'ըսէ որ՝
Աստուծոյ գոյութիւնը՝ տիեզերաց
հանդիսարանովս միայն կը հաստատ-
վի, բայց ասանկ ապացոյցով ալ բան
չի հաստատուիր. քանզի այս փիլիսո-
փային կարծեօքը աշխարհքս և բո-
լոր տիեզերք՝ լոկ երեւոյթ մըն են.
և այս երեւոյթս մարդոյս իր միտ-
քէն առաջ կուգայ: (Մտել է թէ՛
երեւակայութիւն է): Մոլոր բնու-
թեան մէջ իրմէ զատ բան չի տես-
ներ, ամէն բան իր մէջն է եղեր, և
իրմէ դուրս բան չի կայ եղեր: Ա-
նանկներ կան որ՝ Աստուած ճանչնա-
լով որպէս թէ մէկ շնորհ մը՝ մէկ
աղէկութիւն մը բրած կըլլան, բայց
այսու պայմանաւ ընդունիլ կուզեն
որ՝ այս աշխարհքիս մէջ եղած բա-
ներուն չի խառնըլի, և իրեն անհո-
գաբար հանգիստ մնալը իրեն բա-

ւական սեպելով՝ ոչ ամէն բան ի
 րեն համար ետ ձգող մարդուն ա-
 ռաքինութեանը վարձք տայ, և ոչ
 բոլոր կեանքը զՆստուած անարգե-
 լով և մարդոց մեծ հասցընելով ան-
 ցընողները սլատժէ : Այս ալ սրայ
 ման կը դնեն որ՝ կամ մեզնէ բնաւ
 զինքը սրաշտել չուզէ, կամ ո՛վ ինչ-
 սէս զինքը սրաշտէ նէ՝ ամէնն ալ
 անտարբեր ընդունի, թէ՛ և իրարու
 ալ հակառակ ըլլան, իրեն Նստուա-
 ծային փառացը և իրեն ստորագե-
 լիքներուն կամ յատկութիւններուն
 ալ : Ամէնն ալ իրենց խելքը իրենց
 կուռքի սէս են ըրեր, և ասանկ
 խելքէ ծնածները՝ անճոռնի հրէշք-
 ներ կ'ըլլան : Աերջապէս՝ ամէնն
 ալ անդադար իրենց կարծիքնին փո-
 խելով մեզի բնաւ հաստատուն բան
 մը չ'են տար, և իրենք ալ ոտքեր-
 նին ուր դնելիքնին չ'են գիտեր :
 Առողջ գաղափարը ասանկ խելացի-
 ներուն մէջ կը փրնտովի մի, իմ եր-
 ջանկութեանս հարկաւոր եղած ճշ-
 մարտութիւնները գտնելու համար

ասոնց դպրատունները մի երթամ :
 Թէ որ աշխարհիս և մարդոյս
 սկզբնաւորութեանը և բնութեանը
 և վախճանին վրայ անոնց բան մը
 հարցընելու ըլլամ նէ՛ մէկ մը թա-
 ղէսին պէս կ'ըսեն որ՝ ամէն բանին
 սերմը ջուրն է , և մենք ալ անկէց
 ելած եմք : Մէկ մը կ'ըսեն թէ՛ ա-
 մէն բան կրակէն սկսաւ , և մեր բը-
 նասկած երկիրն ալ՝ ուրիշ ամէն մո-
 լորակներուն պէս՝ արեւուն վրայէն
 գիսաւորի մը զարնըվելով փրթած
 ինկած մէկ կտորն է : Աւրիշ իմաս-
 տունի մը խելք անանկ վկայեր է
 որ՝ բոլոր աշխարհիս սկզբնաւորու-
 թիւնը մէկ աւազի հատէ մը եղած
 է . առաջ այն աւազէն մէկ հատ
 մը , ետքը ասոնց երկուքէն մէկ մէկ
 հատ ալ . և այլն . մինչեւ այնքան
 շատոցեր և իրարու վրայ դիզվեր են
 որ՝ այս կերպովս լեռներ գոյացեր
 են , ասով եղեր է բոլոր աշխարհք՝
 իր մէջի ամէն բաներովը : Ասկէց
 զատ՝ պինտ առաջ միայն մէկ կեն-
 դանի մը կար կ'ըսեն , որ ամէն կեն-

գանիններուն նախահայրն էր . և
 բնութիւնը ասիկայ երկընցընելով ,
 կարճեցընելով , ձեւէ ձեւ փոխե-
 լով , անդամքներնուն որ մէկը շատ
 ցընելով և ուրիշները գոցելով և
 սրակսեցընելով՝ այլ և այլ կենդանի-
 ներ եղեր են : Մտօքդ անանկ երե-
 ւակայէ՛ որ ձեռքիդ մատուլները ի-
 ռար փակած են , և քեզի եղունգ
 կերպաւորող հիւթը շատկեկ գալով
 բոլոր ձեռքիդ վրայ տարածվեր և
 կարծրացեր՝ ձեռքիդ եղունգէ կե-
 ղեւ մը եղեր է . ասիկայ կ'ըլլայ ձի-
 ու ոտք : Այս մեր իմաստունները
 երբեմն մարդոյս համար մէկ վար-
 պետութեամբ շինուած մեքենայ
 մըն է կ'ըսեն , բայց հոգին նիւթա-
 կան և տարածուած բան մըն է ,
 որ հասարակ շփայարանէ կ'ըսեն : Մար-
 դըս տեսակ մը խոտ է կ'ըսեն՝ որ
 քիչ մը ելելիկէկ հոգի ունի . ինչպէս
 որ խոտերն ալ՝ մարդոյն սրկաս հո-
 գի ունեցող տեսակն են : Աւրիշները՝
 ձուկ է կ'ըսեն . բայց կարօտ չ'են
 Անաքսիմանտրոսի պէս ըսելու թէ

մարդոյս առաջին ստեղծումը ձու-
կերուն մէջ եղաւ : Աւրիշները կ'ը-
սեն թէ՛ մարդը կապիկներուն ()
րանկուդանկ ըսված տեսակէն է .
և կապիկներէն միայն ասով կը տար-
բերին , որ կապիկներուն առջի ոտ-
քերնին է որ միանգամայն ձեռք և
ոտք է , յատկապէս ձեռք չունին . և
կը կարծեն որ՝ մարդոյն ուրիշ անա-
սուններէն աւելի գերազանցութիւ-
նը միայն ձեռք ունենայէն է . և
ուրիշ անասուններուն ալ միայն
ձեռք ունենալ պէտք է որ մարդ
ըլլան : Վարդս բնապէս վայրենի էր
ըսող կայ , և թէ՛ միշտ անանկ վայ-
րենութեան վիճակին մէջ մնար նէ՛
աւելի աղէկ կ'ըլլար : Այն ինչ նա-
խանձելի վիճակ կ'ըլլար ասոնց խել-
քովը՝ վայրենի մարդուն վիճակը .
որովհետեւ շատ բանի կարօտ չէին
ըլլար . միայն իրենց կերակուրը՝ ի-
րենց էգը և իրենց հանգիստը գրա-
նելէն ետքը աւելի բան չէին ուզեր :
Արեւի թէ՛ ասոնք ալ միայն այս-
քան բանի համար ստեղծուած են :

Ասոնց խօսքին նայիս նէ՛ երկաթն
 ու ցորենը մարդոյս քաղաքական կրը-
 թութեան պատճառ են եղեր ,
 բայց մարդս ոչնչացուցեր են :
 Ռուսօ՛ (որուն գրածներէն առինք
 այս վերջին զրուցածներս) , այս ալ
 կ'ըսէ որ՝ մտածելը մարդոյս բնու-
 թեանը դէմ բան է . և մտածող
 մարդը՝ իր բնականէն աւրելած կեն-
 դանի մըն է : Անհնար է կ'ըսէ՛ որ
 մարդ երեւակայէ , թէ առաջին վի-
 ճակին մէջ (այսինքն՝ վայրենութեան
 մէջ , որ ասոր խելքովը՝ մարդոյս
 առաջին վիճակն էր) , ինչո՞ւ համար
 մարդս իրեն նման մարդու մը կա-
 բօտ կ'ըլլար ընկերանալու , կապիկ-
 ները կամ գայլերը իրեն ընկեր չէր
 ուղեր : Ասոնցմէ ետքը մէկ նոր
 փիլիսոփայ մըն ալ ըսաւ թէ՛ մարդս
 սկիզբէն թէ՛ մարմնով և թէ՛ մտքով
 մերկ ստեղծվեցաւ , և խառնուփըն-
 թոր ու վայրենի աշխարհիս երեսը
 անանկ նետվեցաւ , ինչպէս ըլլայ նէ
 ըլլայ : Օ ինքը ստեղծող անձանօթ
 կարողութեանը նետած որբը ըլլա-

լով՝ երկինքէն եկող չ'եղաւ իրեն
 քովը՝ որ իրեն պէտք եղածները
 ստրվեցրնէ, ասոնք իրեն զգայարանք
 ներէն ստրվեցաւ, և ինչ ընել պէտք
 էր նէ՝ ասոնք ալ իրեն կարօտու
 թենէն զատ ուրիշ ստրվեցրնող չի
 կար կ'ըսէ :

Թէ որ մէք այս իմաստուններուն
 բարոյականին նայելու ըլլամք նէ՝
 շատին մէջ մէկ անհատնում կարծիք
 ներու կռիւ մը կը տեսնեմք, իրենց
 օրինաց գրքին ամէն մէկ յօդուածին
 վրայ հա՛ ըսող ալ կայ՝ չէ՛ ըսող ալ :
 Ամէն ճշմարտութիւն՝ խնդիրի են
 փոխեր, վրան վէճ կ'ընեն : Ա՛յի ա
 ղէկ հասարակաց կը տեսնեմ անոնց
 մէջ այս կարծիքս թէ՝ օրէնքներուն
 և դահիճներուն պէս՝ բարոյականն
 ալ կենցաղակրթութիւնէն առաջ
 եկած բան է. (այսինքն՝ բօլիդիքա
 յէն) : Վործքերը ինքնին անտար
 բեր բաներ սեպելու է, և ասոնց
 էրբ առաքինական ըլլալէն դադարի
 լն ու մոլեկան ըլլալը որոշելը՝ օրէնք
 դնող մարդուն պաշտօնն է : Վնքնին

նայելով՝ բարոյական կարգի մէջ ո՛չ
 առաքինութիւն կայ և ո՛չ մտու-
 թիւն . ո՛չ աղէկ կայ և ո՛չ գէշ . ո՛չ ար-
 դարութիւն և իրաւունք՝ և ո՛չ անի-
 ըաւութիւն . ամէնն ալ մասնաւօ-
 լաց հաճոյիցը համեմատ՝ մարդու
 շինած բաներ են . մեռնելու հոգի
 մը բան մըն ալ ընելու պարտակա-
 նութիւն չունենար . ամէն արդա-
 րութեան և իրաւանց հեղինակ և
 պատճառ՝ մարդոյս բնական դիւ-
 րազգածութիւնը կամ մէկ բանէն
 դիւրաւ առնրիլը՝ և ամէն մէկուն
 իրեն առանձին օգուաներն են . և
 այլն : Ինչպէս որ անհնար է մար-
 դոյս գէշ բանը գէշ ըլլալուն հա-
 մար սիրել , անանկ ալ աղէկ բանը
 լոկ աղէկութեանը համար սիրելը
 անհնար է : Աշխարհութիւնն ու
 առաքինութիւնը անանկ բաներ են՝
 որ ունեցողին օգուտ ըրածներնուն
 չափ արժողէք ունին :

Այլ շիտակութիւն և զգաստու-
 թիւն սիրող մարդիկ . ասանկ խեն-
 թութեան և գէշութեան կանոննե-

բու գիրք մը աչքէ անցուցած ա-
 տեննիդ գիտեմ որ կը փշաքաղիք .
 ինձի ալ անանկ եղաւ . բայց քիչ
 մըն ալ նեղանալնիդ զսպեցէք , ու
 մեր նոր վարստներուն տուած դա-
 սերը լրման մտիկ ըրէք : Այս բարոյա-
 կանի կանոններուն վրան ուրիշ ի՞նչ
 կ'եւելցրնեն : Անք ի՞նչ կ'ուզեմք
 որ ուրիշները մեզի ընեն՝ մենք ալ ու-
 րիշներուն անանկ ընելու եմք : Վը-
 նական բարութեան ասկէց աւելի
 օգտակար կանոն մը գտեր են ասոնք .
 որ այս է եղեր . “ Աւրիշին քու ձեռ-
 ” քէդ եկածին չափ քիչ գէշութիւն
 ” ընելով՝ օգուտը միայն քեզի ընել
 ” նայէ ” (Ա՛ՌԱՍՕ) : Ախրքերը մարդոյս
 արգիլելը՝ մարդոյս իր մարդութիւ-
 նը կատարելու թող չի տալ է ե-
 ղեր . բունն և սաստիկ երեւակա-
 յութիւն ունեցող մարդու մը՝ քու
 ցանկութիւններդ չափի դիր ըսե-
 լը , քու բնական կազմութիւնդ փո-
 խէ ըսել է եղեր . արիւնին հրամա-
 յել է եղեր որ քիչ մը կամաց քալէ
 (ՏԻՄՈՒՕ) : Մարդոյս կիրքին և ախոր-

Ժակինն պէտպիսութիւնը պիտի ըլլայ
 եղեր մեր առաքինութիւնն ու մո-
 լութիւնը իրարմէ որոշողը (Հելլե-
 տիոս) : Օգտացմունքը՝ կիրքերուն
 հոգին է . և զգացմունք ըսած բա-
 ներնիս՝ ազատ բան մը չէ՝ Լ^օնչ ըզ-
 գացմունք որ՝ նեղութիւն քաշելու
 վախէն կամ հեշտութիւնը սիրելէն
 առաջ կուգայ մեր մէջը՝ օրինաւոր
 է . և մեր բնական ազդեցութեանը
 համեմատ է . և ցանկութեանց տը-
 ված ձանձրութենէն ազատելուն
 մէկ հատիկ հնարքը՝ անոնց ուզածը
 ընելն է եղեր . և մէկ մարդ մը
 երջանիկ ըլլալու համար պէտք է ե-
 ղեր որ իր խղճմտանքը խեղդէ .
 քանզի ասիկայ մէկ մեղք մը գոր-
 ծելէն առաջ բանի մը խեր չունի .
 մեղքը գործած ատենդ՝ և անկէց
 ետքն ալ՝ բնաւ բանի մը չի ծառա-
 յեր , պարասպ տեղը նեղութիւն
 կուտայ : Աչինչ բաները ինչ ընելով՝
 և առաջկուց մտքին մէջ տպաւոր-
 ված նախապաշարմունքները ամուր
 բռնելով՝ աղէկ փիլիսոփայութիւնը

բողոքովին պարսպ տեղը անպատիւ
կ'ըլլայ եղեր, և մէկ մարդ մը հո-
գին հագալէն առաջ մարմինը հո-
գալու է եղեր, որովհետեւ միայն
ժամանակաւոր երջանկութիւնն է
եղեր ճշմարիտ փիլիսոփայութեան
ընդունածը, և մէկէն աւելի ոչ
կեանք կ'ըլլայ եղեր և ոչ երջանկու-
թիւն: Այլ զգայական հեշտութիւն-
ները մարդոյս ամէն տեսակ առա-
քինութիւն կրնան ազդել եղեր,
և մարդոյս գործել և մտածել տը-
ւողներն) ալ՝ այս տեսակ հեշտու-
թիւններն են եղեր, և բարոյական
աշխարհը շարժելու կարողութիւնը
միայն ասոնց քով կը գրանրվի կոր:
Փիլիսոփայները չեն հասկրնար ե-
ղեր թէ օրինաւոր կնոջմէն զատ
հարճ (օտալքիս) ալ սրահելը մեղք
սեպիլելու ինչ պատճառ ունի: Տո-
ղերը հասարակութեան շատ օգուտ
ունին կ'ըսեն, և ասոնք աւելի կը
մտածեն ուրիշի աչք մտնելը, քան
թէ իրենց հոգեւոր հովիւներէն խը-
րատ առնող սրարկելոտ կանայք

(Հելլենտիոս) : Այլ թէ որ կնիկ մարդիկ հասարակաց ըլլային՝ և ծնած տղայքը աղգին ընդհանուրին սեպ վէին նէ , խենէշու թիւնը այն ատենը մնասակար ըլլալու բան մը չէր ունենար եղեր . և ամէնէն առաջ լաթ հագնիլ հնարողը՝ շատ հարկաւոր բան մը չէ՛ հնարեր . և որդիական սէրը վերնալու՝ շատ անգամ հրաման կրնայ տրվիլ . և մէկ մարդ մը՝ ինձի հայր եղեր է ըսելով ինչո՞ւ համար անոր երախտիքը ձանձնալու և անիկայ սիրելու և յարգելու ըլլալը՝ Հելլենտիոս չի հասկընար եղեր : Անկ երկրի մը մէջ խելացի մարդոց պէս մնասակար մարդ չի կրնար ըլլալ կ'ըսեն . որովհետեւ ասանկները՝ հասարակ մարդոց առջին կուռքի պէս յարգութիւն կը դրոնեն . և Աստուած մեծամեծ տէրութիւններուն կառավարութիւնը և աշխարհիս տեւողութիւնը անխոհեմներուն և խենթերուն ձեռքը տուած է կ'ըսեն . և խելացիութիւն ըսլած բանը շատ մեծ յարգութիւն

և պատիւ գտնելու բան մը չէ՛, և
 թէ որ ամէն քաղաքացիք խոհեմու
 թիւն ունենային նէ՛ խոհեմութիւ
 նը Աստուծոյ պարգեւներուն ամէ
 նէն աւելի միասակարբ կ'ըլլար: Տը
 դան ծնած ատենը ո՛չ մէկ երկրի մը
 հպատակ է՛ և ո՛չ մէկ կառավարու
 թեան կամ պետութեան մը: (Նու
 թիւնը ամէն մէկ մարդուն իր ապ
 ըելու պէտք եղած բաները հոգա
 լու կարողութիւն տուած ըլլալով՝
 յայտնի է որ մարդիկ ՚ի բնէ իրար
 մէ կախում մը չունին, ամէնն ալ
 ազատ ստեղծվեցան, մէկ մարդ մը
 մէկ ուրիշ մարդու մը իշխանու
 թեան տակ չի կրնար իյնալ, ամէն
 մարդ իր անձին բացարձակ տէրն է,
 և ասկէց կը հետեւի որ՝ ազատու
 թիւնը ամէն պայմաններուն անբա
 ժանելի ընկերն է: (Աստի՛ մէկ օ
 ղէնք մը դրված ատենը խորհուր
 դին մէջ միայն մէկ մարդ մը պակաս
 գտնելի նէ՛ այն մարդը ազատ կ'ըլ
 լայ այն օրէնքը բռնելու կամ չի
 բռնելու, որովհետեւ հոն գլու

նրված ատենն ալ անոր հաւանութիւն տալու կամ չի տալու ազատ էր) : Սարգս իրեն զգայարանացը իշխանութեան տակը ըլլալով՝ երբեմն զգայարանացը դպած բանէն կը փախչի . երբեմն անոնց հաճոյ և հեշտալի եկածին ետեւէն կիյնայ . և ասով հարկ կ'ըլլայ իր կեանքը սիրել և սրահելը :

Արբ ստուգութեան կանոններու գամբ նէ՝ աչքի յայտնապէս կերեւի կոր , կամ յայտնի և պայծառ կը հասկըցվի կոր ըսելները ընդունելի զրուցվածքներ չ'են ասոնց առջին : Ամէն ասպացոյցներէն աւելի փընտրուվածը՝ բացայայտութիւնն է . և թէ որ մէկուն առաջկուց իմաց տրուված չ'ըլլար նէ՝ ասիկայ ամէնէն տկար ասպացոյցը կ'ըլլայ եղեր : Սուտ կրօնքի հետեւողները կը կարծեն թէ իրենց կրօնքին գիրքերուն մէջ գրուածները ճշմարիտ են : Տղայքը՝ դուրսը բէրի կայ ըսես նէ կը վախնան . անանկ է նէ՝ յայտնի բան չի կայ :

Ահա մեր իմաստուններուն փիլիսոփայութիւն ըսածը ասանկ բաներ են, իրենց անձին վրայ ցրցուցած յարգութիւննին, իրենց վրայ հաւնելով զարմանալնին՝ զիրենք ահա այս աստիճանիս հասցուցած է։ Անոր համար է որ՝ իրենց խօսքը իրենց կուսակիցներուն դարձնելով կ'ըսեն, «Վոլոր աշխարհքս քեզի յդպրատուն, և մէջի մարդիկը քեզի աշակերտ սեպէ»։

Վայց ես նորէն կը հարցընեմ, իմ և ուրիշ մարդոց երջանկութեան վրայօք լոյս և տեղեկութիւն առնել պէտք ըլլայ նէ՝ ասոնց դըպրատունին պէս դպրատունէ՞ մի ուղելու եմ։ Ա՛յլ բարեկամներ, այս իրենք զիրենք իմաստուն ցրցընող մարդոց մեր ոտքին տակը փորած փոսերնին տեսնելով՝ որ բոլոր կարգ և առաքինութիւն և պարտակալութիւն ոտքի տակ կ'առնեն, սարտափ կուգայ ձեզի։ Ատեն մը անոնց խօսածը լսեցիք, հիմայ ասկէց աւելին կայ՝ որ իրենց խօսածին համե-

մատ ըրածնին ալ տեսար: Մեր ա-
մէն մէկուն և բոլոր ազգաց ի՞նչ
խեր եղաւ ասկէց, մէկ մըն ալ այն
մտածէ՛ որ՝ ասոնք մեզի ի՞նչ էին խոս-
տացեր: Ազատութեան և հայրենա-
սիրութեան և հասարակաց օգուտ
ընելու և բարերարութեան և մար-
դասիրութեան խոշոր խոշոր բառե-
րով ականջնիս կը խլցընէին կոր: Խօս-
քերնուն նայէինք նէ՛ ոսկի դարը նո-
րէն պիտի երեւան ելէր: Բայց ա-
նոնք մեզի երկաթի դար բերին: Ե-
րենց երեւելի պարագլուխներուն
մէկը կ'ըսէ. «Անոնք փիլիսոփայ են,
» ուստի բնաւ մարդու գէշութիւն ը-
» րած չ'ունին »: Բայց մե՞զք որ՝ հի-
մակվան մարդու արիւն խմողները
ամէնն ալ փիլիսոփայ են: Այս խմա-
տունները իրենց անունը՝ պեքո-լի-ն-
ները հաշտեցնող դրին. բայց ի՞նչ հաշ-
տութիւն: Այլ Աստուած, այն ի՞նչ
խաղաղութիւն էր մեզի բերածնին:
Ամենաստոյգ բան մըն է որ՝ վերջին
ատեններս մեր վրայ տիրելու հա-
սան, բայց իրենց տիրապետու-

Թեան կերպը մեր աչքին առաջը ե-
 դաւ . ի՞նչ տեսանք : Յանցանքի և
 գէշերու Թագաւորու թիւն : Ա՛հ .
 Թողունք անանկ մարդիկը՝ որ կիր-
 քերնին արձակ թողելով բան մը
 կորսընցնելիք չունին , վաստրկելիք
 նին շատ է . մէկ դի թողունք փա-
 ռասէրները և հարուստ մարդիկը .
 մանաւանդ՝ ուրիշները կողոպտելով
 հարստացողները . հեշտասէր՝ և ի-
 րենց ցանկութեանը գերի եղող
 մարդիկը . խելք կը բանեցընեմք ը-
 սելով սուտ խօսող և ուրիշները խա-
 բողները , և անանկ տիղմի (չամու-
 ուի) պէս մըտքերը , որ անոնք լու-
 սաւորելու և շիտկելու կարողու-
 թիւն ունեցող բան մըն ալ չի կայ :
 Թող տանք որ անոնք ասանկ փիլիսո-
 փայութիւնով մը իրենց մխիթարու-
 թիւնը գտնեն . ասանկ գարշելի և
 սուտ փիլիսոփայութիւնով մը՝ որ
 վերջապէս իր երեսին վրայի քօղը
 նետեց , և մեր ատենը ինքը զինք
 իր բոլոր մերկութիւնովը ցրցուց :
 Ա՛նք՝ որ բարեկամ և քաղաքակից

եմք, երթամք երջանկութիւնն ու
ճշմարտութիւնը ուրիշ տեղ փրնաը
ուեմք :

Գ Լ ՈՒ Խ Գ.

Մեր երջանկութեանը վրայօք խելքէն և կրօն-
քէն առնելու ամենահարկաւոր և անսխալ գաղա-
փարներուն վրայ :

Մեզի ամէնէն հարկաւոր բանը
այն է որ՝ Աստուծոյ վրայ և մեր
անձին վրայ՝ և մեր գոյութեանը
պատճառ և սկիզբն եղող էակին հետ
ինչ յարաբերութիւն կրնալ ունե-
նալնուս վրայ, և ուրիշ մարդոց հետ
ունենալու յարաբերութիւններ-
նուս վրայ ճիշդ և շիտակ գաղա-
փարներ ունենամք :

Թէ որ մենք ուրիշներէ կախում
չ'ունեցող էակներ ըլլայինք, և թէ որ
գոյութիւննիս մեզնէ ըլլար, ուրիշէ
մը առած չ'ըլլայինք, և մեր գլխա-
ւոր դատաւորը և ինքնիշխան տէրը

մենք ըլլայինք, և մեր վիճակը մենք
 որոշէինք, այն ատենը մէկէ մըն ալ
 բան մը առած չ'ըլլալով և մեզնէ
 դուրս օտար պատճառի մը բնաւ
 պարտք մը չունենալով և յուսալու
 կամ վախնալու անոնցմէ բան մը
 չ'ունենալով, մեր պարտականու-
 թեանց չափ և մեր կամացն ու յօ-
 ժարութեանը կանոն բռնելու հա-
 մար մեր զօրութիւնը մեզի խորհրդ-
 դակից ընելէն զատ բան մը չ'էինք
 ունենար: Բայց ամէն բան մեզի
 կիմացընէ որ՝ մեր գոյութեանը կող-
 մանէ ինչ որ ունիմք նէ՝ պատճառ-
 ները դրսէն բաներ են, մեզ գո-
 յացընողը մենք չ'եմք, և այս աշ-
 խարհքիս մէջ գոյութիւննիս ալ մեր
 ուղածին չափ երկնցընելը մեր ձեռ-
 քը չ'է: Սեր մարմնոյն կազմութե-
 նէն զատ ուրիշի հարցընելու չ'ըլ-
 լանք ալ նէ՝ այն ալ ամէն մասամբ
 մեզի կը վկայէ որ մէկ իմացական և
 իմաստուն պատճառ մը պիտի ըլլայ
 մեզ այս կազմութեամբ ստեղծողը:
 Ամէն բան մեզի կը սորվեցընէ որ՝

բնութիւնն և նիւթ ըսված բանը
ինքնին անտարբեր բան մըն է . կըր
նայ ալ շարժիլ, կընայ ալ անշարժ
կենալ . շարժած ատենն ալ՝ շար
ժող պատճառը ինչպէս ուղէ նէ կըր
նայ անանկ շարժել, մէկ որոշեալ
և իրեն հարկաւոր շարժում մը չ'ու
նի . ուրիշ մարմին մը պատահի նէ՝
կընայ իրեն շարժումը փոխել, և
շարժելու ինչ տարւորութիւն ա
ռած էր նէ՝ անոր մէկ մասը կամ
ամէնը մէկէն կորսընցընել, և ան
կէց աւելի կամ պակաս մէկ ուրիշ
շարժում մը առնել, որ շատ ան
գամ առաջին անգամին ունեցած
շարժման հակառակը կ'ըլլայ . կարճ
խօսքով ըսեմ, միայն ուրիշէն կ'առ
նէ շարժումը, և այս ալ ինչպէս
ընդունելուն մասնաւոր կանոններ
կան, որ անոնցմէ դուրս չի կընար
ելլել, և ասոնք ամէնն ալ կ'իմացը
ցընեն որ՝ նիւթոյն շարժումը իր
մէն և իր էութենէն չէ . մէկ գե
րագոյն շարժիչ մը ունի, և այս աչ
խարհքիս և տիեզերաց կարգադ

բու-թիւնը նիւ-թոյն գործը չէ՛ . որ
 ասոր մէջ ամէն բան հարկաւորու-
 թեանէն դուրս է . ըլլայ ալ նէ կ'ըլ-
 լայ՝ չ'ըլլայ ալ նէ . և ամէն մասունք
 ները իրարմէ կախում ունին , ու
 միշտ փոփոխութեան տակ են : Ա-
 մէն բան մեղի կ'իմացնէ որ՝ այս
 տիեզերաց կարգադրութիւնը դիպ-
 ուածոյ բան չէ՛ . և նոյն իսկ դիպ-
 ուած ըսելը՝ աննշան բառ մըն է . և
 թէ որ աղէկ մը մտածելու ըլլամք
 նէ՝ առանց պատճառի գործ ըսելու
 գլուխ կը զարնէ : Աշխարհքիս մէջի
 բաներուն մէկն ալ ասանկ չէ՛ . գե-
 րագոյն կարողութիւն և իմացակա-
 նութիւն և խորհուրդ ունեցող
 պատճառի վերաբերեալ բաներ են :
 Այս աշխարհքիս մէջ գտնուիւած բա-
 ներուն որի՛ն վրայ որ նայինք , թէ՛
 պինտ սղտիկներուն և թէ՛ պինտ մե-
 ծերուն , թէ՛ գետինը սողացող կամ
 օդոյն մէջ թռչող ճճիին , կամ
 գետնի վրայ օրէ բուսող օրէ չորցող
 խոտին , և աշխարհքիս վրայ տա-
 րածուիւած անթիւ անհամար ստեղծ-

ուսածներուն , որ երկինքի աստեղք-
 ներուն պէս շատ ըլլալով՝ աչքդ որ
 դին դարձնես նէ դէմդ կ'ելեն .
 և այս աստեղքներս ալ՝ որ ամէն
 մէկը մէկ մէկ արեւի պէս ընդար-
 ձակ և մեծ մարմիններ ըլլալով այն
 ընդարձակ տեղը կը թաւալին . և
 այս տեղիս վրայ մարդ խորհելու ըլ-
 լայ նէ՝ երեւակայութիւնը կը մտ-
 ըի , խելքը կը շփոթի , ասոնց որին
 վրան որ նայինք , և որն որ մըտա-
 ծեմք նէ՝ հետը գտնելած անհուն
 կարողութիւնը և գերագոյն իմաս-
 տութիւնը կը հռչակէ : Այլ և այլ
 էակներուն շղթայաբար (զէնձիրլէ-
 մէ) իրար բռնելը , իրարու հետ ու-
 նեցած անչափ համեմատութիւն-
 նին , իրարու հետ ունեցած գեղե-
 ցիկ յարմարութիւննին , որով ամէ-
 նը մէկէն մէկ բոլոր մը կ'ըլլան , ա-
 սոնք ամէնն ալ ասոնց ստեղծողին
 մէկ հատիկ ըլլալուն ասպացոյցներն
 են : Այլ որովհետեւ մէկ գործ մը
 ինչ կ'ըլլայ նէ ըլլայ , իր պատճա-
 ռէն աւելի կատարեալ աղէկութիւն

չի կրնար ունենալ, հարկ կ'ըլլայ մեղի ասկէց մակաբերել թէ՛ իր ստեղծած էակներուն մէջ ի՛նչ կատարելութիւններ կայ նէ՛ անոնց ամէնուն ալ մէկ հատիկ սկիզբը ըլլալուն համար՝ կատարեալ աստիճանով ա՛նոնք ամէնն ալ իր վրան պիտի ունենայ :

Թէ որ ասոնք ստեղծողը այն է նէ՛ սրահողն ալ այն է . և թէ որ ի մտցականութեամբ ստեղծեց նէ՛ իրեն իմաստութեանը համեմատ մէկ նպատակ մը բըռնած է , որ ասոնք գէտ ՚ի անոր ուղղէ . և այն նպատակը՝ անոնց ամէնուն բնութեանը համեմատ ըլլալու է : Այս նպատակիս պիտի շիտկըվին բնական բաները՝ որ իրենց գործելուն և կրելուն յատուկ կանոններ ունին՝ որ իրենք ալ չ'են ճանչնար , և անոնց հետեւիլը իրենց հարկ է : Աոյնպէս բարոյական էակներն ալ , ինչպէս են մարդիկ , որ ասոնք ալ հետեւելու օրէնքներ ունին , բայց չի հետեւիլն ալ իրենց ձեռքն է : Սակայն ա

սոնց թէ՛ օրինասպահու թիւնը և թէ՛
 օրինազանցու թիւնը՝ Աստուծոյ իր
 նարատակին համար դրած սահմանէն
 դուրս չի կրնար ըլլալ, և ի՛նչ օրէնք
 որ կաւրեն նէ՛ իրենց կարգէն դուրս
 ինկած կ'ըլլան, և վերջապէս հարկ
 պիտի ըլլայ իրենց նորէն այն կար-
 գը մտնելու: Անոնք դերագոյն օրի-
 նադրի մը պէս կը կառավարէ, տի-
 րոջ պէս հրաման կուտայ, դատա-
 ւորի պէս՝ աչքը վրանին է, հօր պէս
 կառաջնորդէ և կը խնամէ: Ալ մե-
 զի նայելով՝ իրեն նախախնամու-
 թեանը ամենայայտնի նշաններուն
 և անհերքելի ապացոյցներուն մէ-
 կը այս է որ՝ մեզի քիչ մը վտանգ և
 վնաս բերելու պարագայի մը մէջ
 գտնըվինք նէ՛ ո՛վ Աստուած մեծ ը-
 սելով՝ շուտ մը աչքերնիս դէպ ՚ի
 երկինքը կը դարձնեն մք, ասիկայ բո-
 լոր աշխարհքիս բնակիչներուն միօ-
 րինակ՝ բնական ազդու մի պէս սովո-
 ղու թիւն մըն է, աշխարհքիս մէկ
 բեւեռէն մինչեւ մէկալ բեւեռը
 որքան բնակիչ կան նէ՛ ամէնն ալ

առ հասարակ իրենց ծանր պիտա-
 նաւորութեանցը մէջ այս ձայնս կը
 հանեն և այս գործքս կ'ընեն . ասի-
 կայ անանկ մէկ աղօթք մըն է որ՝
 Աստուած բոլոր մարդոց սրտին մէջ
 տպաւորեր է , որ ամէն բանի մէջ
 իր օգնութեանը ապաւինիլ սորվին :
 Թէ որ Աստուած մեր աղօթքին լը-
 սելիք չ'ունի , և իր արարածներուն
 վրան ամենեւին խնամք չ'ունի , և
 մեզի վերաբերեալ բաները բնաւ
 իր հոգը չ'է նէ՛ ինչո՞ւ համար քանի՛
 որ աշխարհքս ստեղծուած է , բնու-
 թիւնը միշտ և ամէն ատեն մարդոյս
 սորվեցուցեր է որ Աստուծոյ աղօթք
 ընեն մարդիկ :

Աւելի և լուսաւոր խելքը Աստ-
 ուածութեան վրայօք մեզի ի՛նչ կը
 սորվեցընէ նէ՛ կարճ կերպով մը բա-
 ցատրեցինք , և կրօնքը ասիկայ մեզի
 աւելի աղէկ կը սորվեցընէ . այս ա-
 մենահարկաւոր ճշմարտութիւններս
 պայծառացընելով , և այնքան վար-
 ինջեցընելով որ՝ պարզ կերպով և
 առ հասարակ ամէնուն ոորվեցու-

ցածր ամէնուն խելքին հասնելու
 աստիճանէն վեր չ'ըլլայ . և իր բոլոր
 հեղինակութիւնն ալ ասոր հաստա-
 տութիւն կուտայ . և սուտ փիլիսո-
 փայութիւնը կամ կուսպաշտներուն
 սնտոխասպաշտութիւնը ասոնց հետ
 ինչ բան որ խառներ էին նէ՛ անոնց
 ամէնէն ալ կը մաքրէ : Բոլոր արա-
 ըածները Աստուած ստեղծեց . եղի-
 ցի լոյս ըսաւ՝ և լոյսը ստեղծուե-
 ցաւ : Ամէն բան անով է , և միայն
 ինքն իրենմով է : Ինքն էր որ Սով-
 սէսին ըսաւ . « Ես եմ որ էն » : Այս
 զրուցվածքս վսեմ և ճշմարտասպէս
 Աստուածային է . որով գերագոյն
 էակը իր էութեանը վրայ պինտ ճիշդ
 և շիտակ ծանօթութիւնը տուաւ .
 այս մեծ էակին բնութեանը վրայ
 հին փիլիսոփայներուն վէճ և խըն-
 դիրներ հանելէն շատ առաջ : Արով-
 հետեւ ամէն բան ինքն ստեղծեց ,
 ամէն բան ալ համրանքով ու չափով
 ու կշիռքով ըրաւ : Աստեղքներուն
 ընթացքին կանոն դրաւ , աշխարհ-
 քիս հիմը ձգեց , և խարխոխներուն

վրան հաստատուց . ծովը սահմաններ
 րու մէջ գոցեց , և անոր պատուի
 րեց . մինչեւ հոն եկուր , և անկէց
 անդին մի անցնիր . և քու ալիքնե
 րուդ ամբարտաւանութիւնը քու
 մէջըդ թող կոտորի : Մովոէսի և Յով
 բայ գիրքերը , Սաղմոսները , Սաղ
 գարէութիւնները , և սուրբ Վրոց
 բոլոր մատենագիրները Աստուծոյ
 սրբութեան և բարութեան և ի
 մաստութեան և արդարութեան և
 կարողութեան և ողորմութեան մե
 ծագործ և ազդու օրինակները ամէն
 տեղ մեզի կը նկարագրեն : Աստա
 րելութիւնը անսահման է . յաւի
 տենական , անչափ , անհուն : Ամէն
 ժամանակ և ամէն տեղ իր մէջը կը
 պարունակէ , մենք ալ մեր կեանքը
 և շարժումը և գոյութիւննիս անոր
 մէջը ունիմք . ամենասպասուական շը
 նորհքներն ու ձիրքերը մեզի անկէց
 կուգան : Ամէն բան անոր բոլորը
 կը շարժին և կը փոխալին . միայն ինքն
 է որ փոխալելուն շուքը անգամ չունի :
 Իր նախախնամութիւնը ամէն ա

տեն կը ներգործէ , և իր ձեռացը
 գործը եղողներուն ամէնուն ալ վը-
 րայ կը ծաւալի , Ամէնէն հին աւան-
 դութիւն է բոլոր աշխարհքիս մէջ
 տարածված , որ երկնային իմացա-
 կան գոյակներ , իրեն լուսովը լու-
 սաւորված և իրեն սիրոյն կրակովը
 վառված մաքուր ոգիք աստիճան
 աստիճան մինչեւ անոր աթոռը կը
 հասնին , անոր փառացը կը մօտե-
 նան , և անոր կամացը սպասաւորու-
 թիւն կընեն : Այս իմացական էակ-
 ներուն աշխարհքին մէջը այս ամէն
 հոգիներս նիւթէն ազատ ըլլալով ,
 սակայն ասանկ ալ էակներուն կար-
 գին մէկ շղթայն ալ իրենք ըլլալով՝
 նոր կարգ մըն ալ իրենց մէջը կը
 հաստատեն , ինչպէս որ այս աշխարհ-
 քիս մէջը նիւթական և զգայուն և
 հոգիաւոր էակները , և անմարմին
 էակները լոկ մարմնաւորներուն հետ՝
 և հոգին մարմնոյն հետ կապով միա-
 ցընող էակները , ինչպէս եմք մեք
 մարդիկըս , ասանկ կարգ կը հաստա-
 տեմք : Ասոնց ամէնուն վերակացուն

Աստուած է, և մեր վիճակին թելը
 և ծայրը անոր ձեռքն է, իր արա-
 րածներուն ամէն մէկուն բնութեա-
 նը համեմատ երջանկութիւննին կ'ու-
 զէ, մեզի տալիքը մեր արժանաւո-
 րութեանը վրայ կը չափէ, մեր ա-
 մէն գործքը իրեն արդարութեան
 կշիռքովը կը կշռէ. ըլլալու բաները
 իրեն արդարութեամբը կամ գթու-
 թեամբը կ'ուղղէ, իր կարողու-
 թեամբը և իմաստութեամբը կը
 տնօրինէ. մէկ ծայրէն մէկալը զօրու-
 թեամբը կը հասնի, և ամէն բան
 քաղցրութեամբ իրեն յառաջագիր
 նպատակին կը յարմարցնէ: Ամէն
 բանի վրայ կ'իշխէ. ամէն բանին
 ինչպէս որ սկիզբը՝ անանկ ալ վախ-
 ճանն է:

Աստուծոյ վրայօք ունեցած ծա-
 նօթութիւններնու համառօտու-
 թիւնը ահա՛ այս է. որ ինչպէս որ
 տգէտները՝ անանկ ալ իմաստուննե-
 րը խելքէն աւելի Աստուածային
 յայտնութիւնը ասանկ բանի մէջ ի-
 բենց վարժապետ ունին: Հիմա

նայիմք որ՝ մարդոց վրայ խելքն ու
կրօնքը մեզի ինչ կը սորվեցընեն : Այլ
ասով կը հասկընամք թէ՛ որ բանը
գիտնալը մեզի ուրիշները գիտնալէն
աւելի հարկաւոր է : Այլ ասոնք են
մէկ մը Աստուած , մէկ մըն ալ մեր
անձին վրայ եղած գիտութիւնը :

Քիչ մը առաջ տեսանք որ՝ մենք
առաջին պատճառէ մը կախում ու
նեցող էակներ եմք : Ա՛մէն բան մենք
անկէց առած եմք , ամէն բան անոր
պարտական եմք , իրեն նախախնա
մութեամբը մեզ կը կառաւարէ , և
մենք անոր իշխանութեանը տակն
եմք : Մեզի տուած խելքը մեզ մինչ
չև այս գերագոյն էակիս բարձրա
ցընելով՝ մեր անոր հետ ունեցած
յարաբերութիւնը մեզի զգալի կ'ը
նէ , որ են՝ պատճառի և գործոյ
յարաբերութիւն , իշխանութեան և
հպատակութեան յարաբերութիւն ,
երախտիքի և շնորհակալութեան յա
րաբերութիւն :

Մեզ աւելի մօտէն քննած ատեն
նիս մեր մեջը մէկ օրէնք մը և խորճ

մրտանք մը և բարոյականութիւն
 մը կը գտնեմք : Անանկ օրէնք մը ,
 որ մեզի նայելով՝ մեր իրաց բընու-
 թեանը վրայ հիմնած համեմատու-
 թիւններնէս և յարաբերութիւնէն
 կը ծագի . և այս յարաբերութիւնս
 չէ՛ թէ միայն Աստուծոյ հետ՝ այլ
 և մեր անձին և նմանեացը հետ ու-
 նիմք , և անոնց հետ ամէնուս բը-
 նութիւնը իրարու հետ մէկ ըլլալուն
 կողմէն կապիւած եմք : Անկերական
 ըլլալու կարողութիւննիս ալ մեզի
 այս կերպ յարաբերութեան մը
 պատճառ կ'ըլլայ . և այս սկիզբս
 մարդոյս բնական է , և ամէնուս օ-
 գուտը՝ հասարակաց կ'ընէ : Անկ
 պատճառ մըն ալ՝ իրարու ծառա-
 յելնիս և իրարմէ կախում ունե-
 նալնիս է . որ մեզի մի և նոյն պա-
 րագայի մէջ մի և նոյն իրաւունքը
 կուտան , և մի և նոյն տեսակ սար-
 տականութեանց տակը կը ձգեն
 մեզ : Այս օրէնքս մեզի իրական մէկ
 պարտականութիւն մը կուտայ . ո-
 րովհետեւ մեր էութեանը՝ և մեզի

Հետ յարաբերութիւն ունեցող է-
 ութիւններուն բնութենէն առնը-
 ված ըլլալով՝ առանց ճշմարտու-
 թեան հակառակ կենալու չեմք կրը-
 նար ասոր հակառակիլ, որ մեզի
 կուգայ Աստուածութեան անփո-
 փոխ և յաւիտենական գաղափա-
 րէն : Հակառակ կենալու կ'ըլլամք
 բնութեան հեղինակին ալ, և անոր
 մեզի շնորհած խելքին ալ, որ մարդ-
 կային բնութեան մասն է : Այս
 օրէնքըս խղճմբտանքի միջնորդու-
 թեամբ մեր սրտին պինդ խորունկ
 տեղը փորված և քանդակուած է :
 Մենք չեմք կրնար մեր խելքը բանե-
 ցընել, մինչեւ որ այս օրէնքին հաւ-
 նածին հաւնիմք, և չի հաւնածին չի
 հաւնիմք : Մեր կողմէն մէկ ներքին
 հաւանութիւն մը, մէկ գաղտնի
 հաճութիւն մը, և արդարապէս
 մենք մեզ յարգել մը, այս արդա-
 րութեան և բնութեան և խելքի
 կանոններուն համեմատելուս ա-
 ռաջին պտուղներն են : Այց այս
 օրէնքըս աւրելու ըլլամք նէ՛ մեր

ներսէն մէկ զգացմունք մը ոտքը կը
 հանէ, որ մեր կամքին հակառակ
 մեզի դէմ կելլէ, և դառն կշտամ-
 բութիւններ կ'ընէ մեզի, և ասիկայ
 մէկ անհանգստութիւն մը և չարչա-
 րանք մըն է՝ որ հոգինիս կ'իմանայ,
 որովհետեւ կարգէ դուրս ելած կը
 գտնուի, և կիրքերուն ձայնէն զօ-
 րաւոր մէկ ձայն մը մեզ կը հրաւիրէ
 որ նորէն նոյն կարգին մէջ մտնեմք :
 Իայց կրնայ մարդ այս ձայնս կրտ-
 բել տալ, սակայն այս ալ կ'ըլլայ ի-
 մաստակութիւններով և խաբէական
 ձեւերով բռնի ինքը զինքը խաբե-
 լով, և իրեն բնութիւնը ետեւէ ե-
 տեւ վար ինջեցընելով և ազտեղի
 ցանկութեանց տիղմերուն մէջը գը-
 լորելով, կամ ուրիշ յանցանքներու
 մէջ թապըլտրկելով, մէկէն ելելով
 և մէկալը մտնելով, կամ գոնէ՝ Ալրա-
 տիոսին ըսածին պէս՝ չորս գին երեք
 կարգ զրահով գոցելով խղճմտանքը :
 Վարդուս վրայ ինչ որ ըսինք նէ՝
 բարոյականին հիմը ասոնք են, աղէ-
 կը կը տեսնէ և կրնայ ընել, ազատ

է . և իրեն աղատութիւնը գիտնալուն համար է որ՝ իր բրածին կը հաւնի կամ չի հաւնիր . և իր նմաններէն՝ գովեստ կամ քամահրանք լսելու , և սրտիժ կամ վարձք առնելու արժանի կը սեպիլի : Յատկապէս խենթ ըսլած մարդը՝ մեղքնալու արժանի է : Արան բան չի ձրգիլիր . քանզի աղատութիւն չունենալը ամէնուն յայտնի է :

Թէ որ մեր գոյութեան արարիչը մեր մէջը մէկ օրէնք մը տարաւոր ցուցած է նէ՝ մեր առաջիւցը տածներնուս պէս՝ իրեն իմաստութեանը և կարողութեանը համեմատ վճիռ մը տուած պիտի ըլլայ ասոր վրայօք . ըսել է որ՝ իրեն Աստուածային օրէնսդրութեանը համեմատ՝ այս օրէնքը աւրողներուն սրտիժ մը յատկացուցած ըլլալու է , և օրէնքը հաւատարմութեամբ պահպանողը վարձատրելու է : Այս վճիռըս այնքան հարկաւոր է որ՝ ասիկայ չ'ըլլայ նէ , մէկ գիէն մեր մէջը երջանկութեան փափաք մը տըն

կաճ ըլլալով, որուն ո՛չ դէմ կրնամք
կենալ և ո՛չ ալ աւրել. և մէկ գիէն
մենք մեզ ուրանալու պատուիրանք
մըն ալ տալով, որ շատ հարկաւոր
գիտուածներու մէջ կը պարտաւո-
րիմք մենք մեր օգուտը անտես ը-
նելու, և այս օրէնքս մեզ կը պար-
տաւորէ մեր պարտականութեանց
էութիւնը՝ և մեր կիրքերուն բռնու-
թիւնը, և ուրիշ մարդոց մեզ բռնա-
դատելը ճանչնալու. թէ որ կ'ըսեմ
ազգէկութեան վարձք և գէշութեան
պատիժ չ'ըլլար նէ՝ այս ամէնքս հա-
կատական կուգային: Հարկ կ'ըլլայ
մեզի՝ պարտականութեան օրինացը
համեմատ բաներ ընել: Բայց այս
վճիռըս՝ այս աշխարհքիս մէջ ո՛չ
անվրէպ է՝ և ո՛չ կատարեալ: Բնդ-
հանրապէս խօսելով ճշմարիտ է որ՝
առաքինութիւնը իր մէջը իրեն մէկ
վարձք մը կը գտնէ, և մոլութիւնը
իւր պատիժը իւր հետը կը կրէ. մէկը
յարգութիւն կը գտնէ, որ մէկալ-
ներուն սովորաբար ատանկ յարգու-
թիւն չի տրվիր: Վէշութեանը հե-

տեւանքները ձախորդութիւններ
են, ամէն մարդ ասոնք կ'ատէ և կը
նախատէ, բայց առաքինութիւնը
յարդեղի է և ամէն մարդ զինքը կը
պատուէ, անոր կը վառահի և անի-
կայ կը սիրէ: Բայց այս ընդհանուր
կանոնս շատ մեծ բացառութիւններ
ունի: Հատ պարագայներու մէջ՝
առաքինութիւնը ոտքի տակ գացած
է, ասոր խաթերը համար մեր զուար-
ճութիւններուն և հեշտութիւննե-
րուն ամէնէն ալ կ'անցնիմք, և անոր
գրած օրէնքները պահպանելու հա-
մար մինչեւ մեր կեանքը անգամ կը
զոհեմք: Ասոր վկայ կրնամ բերել
շատ մը իրաւունք սիրող մարդիկ,
որ ասանկ ըլլալին ամէն մարդ կըր-
նայ վկայել, և մենք տեսած եմք որ՝
ճշմարտութեան սրբազան օրէնքնե-
րուն և կանոններուն և մարդասի-
րութեան և խղճմտանքի ուզածը
տեղը տանելու համար իրենց անմեղ
գլուխը կտրել տալու անգամ յանձ-
նառու եղած են: Ասոր հակառակ,
մոլութիւնը և գէշութիւնը շատ

անգամ միայն առաքինութեան վայրած և անոր արժանի եղած վարձքը բռնի իրեն յափշտակած է : Արբեմն հասարակութեան ձայնը ասոր կողմէն է , և փառաւոր և յաղթող կերելի : Մտէ՛ թէ՛ այս յաղթութիւնըս շուտ կ'անցնի , և քիչ դիմանալովն ալ՝ Աստուածային նախախնամութեանը և վրէժխնդրութեանը մէկ յայտնութիւնն է : “Տեսի զամբարիշտն վերացեալ և բարձրացեալ որպէս զմայրսն Վիբանանու : Անցի և ահա՛ ոչ էր” : Սակայն յաջողութիւնը որքան ատեն որ կը կենայ՝ մարդուն աչքը կ'առնէ (խամաշտորը միշ կ'ընէ) , և երբեմն անանկ կերելի որ՝ մինչեւ 'ի մահ պիտի տուէ , ինչպէս որ Քրօմվելինը եղաւ , բայց առաքինութեանը շատ անգամ հալածող եղաւ , տանջանք և տառապանք քաշեց , և առաքինի մարդուն նոյն իսկ առաքինութիւնը մեռնելուն պատճառ ալ եղած ունի : Այս բոլոր ըսածներուս վրայ՝ ասկէց զատ մէկ ուրիշ կեանք մըն

ալ կենսալը հասկըցընելու համար ա սիկայ բաւական է : () րինաց վրայ եղած վճռոյն կատարեալ գործադրութիւնը հոն պիտի ըլլայ . օրինադրին ամէն դիտաւորութիւնը այն տեղը պիտի կատարվի . կարգը հոն պիտի շիտկըվի . առաքինութեան և երջանկութեան կատարեալ համաձայնութիւնը այն տեղ պիտի թազաւորէ . և արդարութիւնը իրեն ամէն իրաւունքները այն տեղ պիտի ձեռք ձգէ :

Ասոր համար մարդոյս հոգւոյն անմահութիւնը բնութեան օրէնքի պէս՝ և առ հասարակ ամէն մարդու հաւատալիքի պէս բռնըված է : Ասոր համար է ամենայն ազգաց մեռելները պատուելը և գերեզմանները յարգի բռնելը , որ մեր դարուս խիստ գէշ ժամանակներուն մէկուն մէջը այս ալ ոտքի տակ առնըվեցաւ մեր մէջ :

Մարդս իրեն համար սահմանված կեանքէն ելել ասրելու՝ և բոլորովին չի մեռնելու յուսով ասանկ կը

ցաթիկէ ասորգային մէջ . և մեր բա-
 նաստեղծներուն մէկը շատ աղէկ
 ըսած է որ՝ « Ոչնչանալու փափաքը
 « գէշ մարդուն ուղածն է » : Ասիկայ՝
 միայն անոնց ուղածն է . անոնցմէ
 զատ ուղող չի կայ : Գէշ մարդիկ
 կուզեն որ՝ ոչինչ ըլլալը իրենց բաժ-
 նին իցնայ . և ասոր խելքերնին հաս-
 ցընելու և իրենց համողելու հա-
 մար ամենայն դօրու թեամբ կ'աշխա-
 տին , քանզի չ'ուզելով ալ՝ Աստու-
 ծոյ անկաշառ արդարութենէն կը
 վախնան : Գերեզմանին բոլորը կը
 ցաթիկեն , կը խաղան , կը խնդան .
 կը խենդուկնան , և իրենց վախը
 գոցելու համար գինովութեան կը
 զարնեն , և վերջապէս իրենք զիրենք
 աջվրնին գոցելով վար կը նետեն կամ
 խենթի պէս՝ կամ վախկոտի պէս . և
 այն յաւիտենական գիշերը անոնք ա-
 մէնը մէկէն կը կըլլէ : Բայց անմեղ-
 ները և առաքինիները՝ Վամբիէները
 քաղաքին 18 Արյսերուն պէս միշտ
 խելիքին գլուխը , և տանջանքի և
 իրենց հալածողներուն թուրին տա-

կը անգամ միշտ հանդարտ՝ որ մեռ-
 նելու երթալու համար դրված կառ-
 քերնուն մէջը դէմ առ դէմ բարե-
 պաշտական տաղեր և երգեր կը կան-
 չէին, ասոնք ալ կը մխիթարվին. և
 ապագայ կեանքը աւելի երջանիկ
 ըլլալը գիտնալով՝ որպէս թէ կան-
 խիկ անոր ճաշակը կ'առնեն և
 քաղցրութիւնը կը վայելեն: Թէ որ
 ասոնք երկաթով կապված ատեննին,
 կամ թուրը շրջինքներնուն վրան
 վերցրված և զարնելու ատենը մէ-
 կը յանկարծ գայ, աղատութեան ա-
 ւետիս տայ նէ՛ անոր վրայ ապրե-
 լու աւելի համբերութիւն պէտք է
 անոնց, որ մեռնելու համար այն-
 քան համբերութիւն պէտք չ'եր:

Ամէնը մէկ խօսքով ըսեմք, սա
 ամէն բանով եվելնալու վրայ եղող
 երջանկութեան փափաքը, որ այս
 աշխարհքիս մէջը ո՛չ մեր ներսը և
 ո՛չ դուրսը բան մը չի կայ որ անիկայ
 կշտայընելու կարող ըլլայ, մեր սրը-
 տին պինդ խորունկը ինչեցընեմք:
 Աոյն գոյակը՝ որ յաւիտենականու-

Թեան և անհնու թեան ընդարձակ
 և վսեմ գաղափարները իր մէջը կը
 պարունակէ և կը սղմեցընէ . ասոնց
 հետինքն ալ կը միանայ իր խորհրդու
 վը և իր ցանկութեամբը : Ալ ար-
 դարեւ լուսաւորեալ մտքի և դիւ-
 րազգաց սրտի մը համար՝ Աստուած
 մեր ամէն պիտոյքներէն վեր է :

Սա մարմնոյն կողմէն նիւթական
 և մահկանացու՝ և հոգւոյն կողմէն
 աննիւթ և անմահ մարդս ի՞նչ մեծ
 է : Սա մարդս կ'ըսեմ, որ իրեն բա-
 ղադրութեանը մէկ մասովը բոլոր
 զգալի էակներուն հետ, և մէկալը-
 վը Աստուծոյ հետ կապված է . բը-
 նութեան թաղաւոր և քահանայ
 ըլլալու համար աշխարհքիս վրայ
 դրված է որ՝ բնութեան կողմէն բը-
 նութեան արարիչը պատուէ և մե-
 ծարէ : Սարդս սրբան մեծ է . որով-
 հետեւ իր օրէնքը՝ և առաջին օրէն-
 քը՝ գերագոյն բանն է, և երկու
 պատուական յատկութիւն ունի . որ
 են արդարութիւնն ու ճշմարտու-
 թիւնը ճանչնալը . և իրեն ներսէն

իրեն ազատութիւնը անանկ կիմա-
 նայ որ՝ մինչեւ որ ինքը զինք չի կու-
 րացրնէ նէ չի կրնար ասոր դէմ դը-
 նել, և խելքը բանեցնելով՝ կ'ըլլայ
 մէկ բարոյական էակ մը, որ վարձքի
 և սպառժոյ կրնայ արժանի ըլլալ, կըր-
 նայ զգալ, ինքնիրեն ընթացքը չիտ-
 կել և կատարելութեան հասնիլ:
 Տակաւին սէտք եղածին չափ չի խօ-
 սեցայ, մարդս այնքան մեծ է որ՝
 միշտ իրեն կրիցը մէջ տարտամ տա-
 րակուսած մնալով՝ և սատոիկ զար-
 նրվածքներէն ալ ետ հրվելով՝ կրնայ
 ասոնք ամէնն ալ յաղթել և ասոնցմէ
 վեր ելլել: Չորս դիէն զինքը անանկ
 բաներ սրաշարած են, որ կամ դէս
 'ի իրենց կը քաշեն, կամ նեղութիւն
 և ձանձրութիւն կուտան, կրնայ մէ-
 կուն փնտտակար խայծերուն դէմ
 դնել, և մէկալներուն արիական սրը
 տոտութիւնով ու դիւցաղնական
 քաջութիւնով դիմանալ: Թէ՛ իրեն
 վրայ՝ և թէ՛ զինքը չորս դիէն սրաշա-
 րող բաներուն վրայ իրեն ծանր փոր-
 ձութիւններու՝ և զինքը իրեն սիրած

բանէն զատելու բաւականութիւն
ունեցող նիւթեր կը գտնէ . բայց
վերին օգնութեանն ուժ առնելով,
թէ որ ուզէ նէ՝ շատ ալ ուժովնա-
լով՝ իր փորձութիւններուն մէջ իր
հոգւոյն բոլոր բովանդակ ժրութիւ-
նը կրնայ գործածել, և ասոնցմով
բարձր և մեծամեծ առաքինութիւն-
ներ գործելու ձեռք զարնել, և ի-
րեն ունակութիւն ընել:

Այն ալ ըսել պէտք կ'ըլլայ մի որ՝
Ատուած իրեն ամէն հոգը և նա-
խախնամութիւնը մասնաւոր կեր-
պով մը անոր վերայ կը ծաւալէ:
Թէ որ միտքըդ անանկ գընես թէ՛
երկնային մարմնոց մէջ իմացական
և մըտաւոր արարածներ չի կան,
Ատուծոյ առաջ ի՞նչ եղած կ'ըլլան
բոլոր այն աստեղքները: Ի՞նչ կըր-
նար ըլլար . բայց եթէ՛ այսքան գըն-
տածել մարմիններուն համաձայնու-
թիւնը մէկ սրտի զգացմունքի մը
համար . մանաւանդ՝ գերազոյն էա-
կը սիրելու զգացմունք մը մեր սր-
տին մէջը ծագելու համար, մեզի

նման մարդոց աղէկութիւնը ուզելու՝ և խեղճերուն վրայ ցաւելու համար : Սեր գերագոյն իմացակա նութեանը նայելով՝ մեղքըցող և աղէկութիւն ուզող սրտէ մը բղխած արցունքը և հառաչանքը՝ բոլոր այս տիեզերքս բաղկացընող նիւթերուն ամէնէն սրտուական բան մը չէ՞ր մի ըլլար : Մտենք թէ աշխարհքիս մէջ մէկ մարդ մը, մէկ հատիկ մարդ մը կայ՝ որ կրնայ ձեռքը դէպ ՚ի Աստուած երկնցընել, և միտքն ու սիրտը վերցընել ու անոր շիտկել . յիրաւի ասոր վրայ Աստուած աւելի խնամք կ'ընէր, քան թէ բոլոր արարածոց վրայ մէկէն :

Բայց մարդս՝ որ իր կարողութիւնները պէտքին պէս գործածելովը այնքան մեծ է, ասոնք գէշի գործածած ատենը ո՞րքան սղտիկ և ա նարգ բան մը կ'ըլլայ : Վէշն այն է որ՝ ասանկ գէշի գործածելը աւելի սովորական եղած է անոր : Ռուսօ ըսեր է թէ՛ մարդս աղէկ է . (երբ մինակ մնայ), բայց մարդիկ գէշ են

(շատը մէկ տեղ դան նէ) : Բայց
 թէ որ մարդս բնապէս աղէկ է նէ՝
 մարդիկ ինչո՞ւ համար շատ անգամ
 գէշ պիտի ըլլան :

Այս տեղս Աստուածային յայտ
 նութիւնը իր լոյսը կ'առնէ, և կու
 գայ մեզ կը լուսաւորէ : Ինչ բան որ
 մեզնէ ծածկել ուզեր է նէ՝ մենք
 ալ անոնք չ'եմք խառներ, գաղտնի
 խորհուրդներուն կարգը կը թռ
 զումք : Այս յայտնութիւնս մեզի
 կը սորվեցընէ գիտնալը մեզի հարկա
 ւոր եղած բաները, և ինչ որ յայտ
 նեալ կրօնից տնտեսութեանը յար
 մար և համեմատ կուգան : Այս
 շիտակ է որ մարդս արարչին ձեռ
 քը ստեղծուած ատենը աղէկ էր .
 սակայն մեզքը աշխարհք մտած ա
 տենը՝ Աստուծոյ և մարդու մէջ,
 մարդոյս և իրեն իշխանութեան տա
 կը ինկած արարածներուն մէջ, իր
 մտքին և իր կամքին մէջ, իր խելքին՝
 և անոր հրամանին տակը մտնող
 զգայարանքներուն մէջ եղած համա
 ձայնութիւնը աւրեց : Այն մեղա

սարսու հայրէ մը ճնած եմք, և անոր
 մեղքը մեզի սեպւած է, չէ՛ թէ այն
 մեղքը մենք գործածի սէս, քանզի
 մենք ճնած ըլլալէն առաջ ուրիշի
 մեղաց գործակից չ'եմք կրնար ըլլալ,
 որովհետեւ մեր մեղքը կամքէն ա-
 ռաջ կուգայ և ազատ գործ մըն է,
 ազատութիւննիս գէշի բանեցընել
 է: Մասնաւորաց խիստ կարծիքները
 հաւատքի վրայ չի ձգեմք, որուն
 մէկ հատիկ թարգմանը՝ Ակեղեցին
 է, և հաւատալու կանոնը և շտա-
 կըն ու սուտը իրարմէ որոշելու մի-
 ջոցը բոլորովին մեր ձեռքէն չի նե-
 տելու համար՝ Ակեղեցին և հա-
 ւատքը յաւիտենական ճշմարտու-
 թեանց հակառակ բան սորվեցու-
 ցածի սէս չի ցրցընեմք: Խեղքն ու
 հաւատքը ի՞նչոք հարկաւոր են և
 իրար կը բռնեն, և ասոնց երկուքին
 ալ իրաւունքը սրահելով կրնամք այս
 իրարու պիտանութիւնս ցրցընել:
 Աստուած՝ գերագոյն արդարութիւն
 է, իրեն խորհուրդները մեր խոր-
 հուրդներէն շատ վեր ալ են նէ՛

անոր արդարութիւնը մեր արդարութեան կանոնը ըլլալու է : Անանկ է նէ՛ այն բանն որ՝ բնասպէս չի կրնար մեզի սեպիլիլ, Աստուած ալ անիկայ մեզի չի սեպեր : Բայց այս սկզբնական մեղքէն անանկ արատ (լէքէ) մը մնացած է մեզի որ՝ մեր նախահայրը հնազանդ եղած ատենը ինչ իրաւունքներ պիտի վաստակէ ինք նէ՛ անոնցմէ միշտ զուրկ մնացինք : Ասանկ ամէն օր առանց Աստուածային արդարութիւնը մեղադրելու կը տեսնեմք որ՝ մէկ տղոց տէր մարդ մը իրեն գէշութիւնովը իր հօրմէն մնացած ժառանգութիւնը կ'ուտէ, կը մըսիսէ, ուրախ կեանք կ'անցընէ, անոր տեղը անոր տղայքը աղքատութեան և չքաւորութեան ծանր և անտանելի բեռը կը վերցընեն, թէ՛ և անմեղ են, ասանկ պատիժ կրելու արժանի ըլլալու բան մը ըրած չ'ունին : Ասանկ ամէն օր մեր աչքին առաջն է որ՝ տղայք ամենեւին յանցանք չ'ունենալով ալ, Աստուածային իմաստու-

Թեան կարգը կը մտնէ կոր որ իրենց
 հօրը և նախնեացը գէշութեան ե-
 րեսէ վաստրկած հիւանդութիւննին
 իրենց ալ անցնի : Աւրիշներուն ըրա-
 ծըն ու կրածը տեսնելով խելվընին
 գլուխնին ժողվելը և հաւատարիմ
 ըլլալը իրենց գործն է : Աստուած
 մարդս ստեղծած ատենը՝ անոր տա-
 լու շնորհքներուն տէրն էր . անոնք
 տալու ատենը ուղած պայմանը կըր-
 նար դնել : Առաջին մարդոյն ինչալը
 մեզ ուրիշ կարգի մէջ մտցուց . որ
 մարդոյս վրայ խելքէ դուրս հակա-
 ռակ բաներ իրար խառնելով կը
 տեսնուին . մեծութիւնն ու պղտի-
 կութիւնը , լոյսն ու խաւարը , ուժն
 ու տկարութիւնը , և ասիկայ ինքնին
 մէկ անխմանալի խորհուրդ մըն է :
 Տգիտութիւնը , կիրքերը և նախա-
 պաշարմունքը՝ իրեն ու հարկաւոր
 ճշմարտութեանց մէջ տեղը թանձր
 վարագոյր մը կը քաշեն . խելքին
 ինկած իշխանութեանը մէկ մասը՝
 երեւակայութիւնն ու զգայութիւն-
 ները յափրշտակած են . և այն բա-

ները որ մեր վայելիցը և զուարճու-
թեանը համար ստեղծուած էին ,
մեզի շարունակ փորձութեանց աղ-
բիւր մը եղեր են . և մեզի դէմ
գլուխ վերցուցեր զէնք առեր են :
Ահա սկզբնական մեղաց ամէնէն ա-
ւելի յայտնի յիշատակարանը , և
որպէս թէ դրոշմը և կնիքը այս է :

Բայց այս նոր կարգիս մէջ՝ մեր
օգտին մէկ ուրիշ դրութիւն մը կե-
րելի աւելի փառաւոր , աւելի մեծ .
որուն մէջ կը գտնէ Աստուած իրեն
պատշաճ եղած բոլոր փառքը , և
մարդս կը շահի իր կորսընցուցածէն
աւելի : Աւ այս այն է՝ որով Ադա-
մայ մեղք ինկած ատենէն հետէ մէկ
նորոգիչ և փրկիչ մը խոստացված է :
Այս խոստմունքս՝ քանի՛ որ ատեն
անցնի նէ՛ աւելի բացայայտ կ'ըլլայ .
և ժամանակը երբ որ կուգայ նէ՛
բանը մարդկութեան հետ անձա-
ռելի միաւորութեամբ միանալով
աշխարհ կուգայ : Ասանկով Աստ-
ուած՝ իրենմէ՛ ՚ի յաւիտենից ծնած
բանին միջնորդութեամբը մէկ ի-

րեն վայլելու՝ և անհուն գին ընելու հատուցում մը կը գտնէ։ Ասկէց ետքը միայն մարդս չէ որ զԱստուած կը պաշտէ և կը փառաւորէ . այլ նոյն իսկ իրեն բնութեանակից և համագոյակից որդին ալ։ Մարդս Յիսուսի Քրիստոսի անձինը հետ միանալով՝ անոր շնորհօքը մաքրեցաւ, բարձրացաւ, ազնուացաւ, և անոր արժանաւորութիւնները իր վրան առաւ։

Վսեմական տնտեսութիւն, որ փիլիսոփայ մը (Մալպրանշ) այնքան բարձր հանելով իրեն խորհրդածութիւնները, որքան որ կրնայ բարձրը ելլել փիլիսոփայութիւնը կրօնքէն օգնութիւն առնելով, հաւատալ կ'ուզէր որ՝ « Առաջին մարդը » մեղք ինկած չ'ըլլար ալ նէ՝ տակաւին Աստուածային անձանց մէկը կուգար տիեզերաց հետը կը միանար՝ որ անիկայ սրբէ, և պրղծութեան վիճակէն հանէ, և անոր մէկ արժանաւորութիւն մը տայ . որ Աստուած՝ որ միայն իր փառացը

„Համար կը գործէ, անկէց իրեն գոր-
 „ծոյն համեմատ պատիւ առնէ” :

Աստուծոյ և մարդոյս համար
 բնութեան և խելքի և կրօնքի հա-
 մեմատ գաղափարներ առնելնուս
 ետքը՝ այս աշխարհքիս մէջը մեր
 ճշմարիտ երջանկութիւնը գրվելու
 հիմը կատարեալ դնելու համար մե-
 զի հարկաւոր է աղէկ ու գէշ ըս-
 վածներուն ալ յարգը ճիշդ ճանչ-
 նալ, քանզի մեր երջանկութեանը
 և թշուառութեանը տարերքը և
 գործիքը ասոնք են : Այլ ասով՝ մեր
 խելքին մեզ մօլորեցընելու սխալ
 կարծիքներէն կրնամք ազատ մնալ :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Աղէկն ու գէշը աղէկ հասկընալու և կշռելու
 վրայ, և մեզ երջանկութեան մօտեցընելու կա-
 նոններ :

ԷՐԶԱՆԿՈՒԹԻՒՆԸ ասոր վրայ կը
 կայանայ, որ որքան աղէկութիւն
 կուզեմք նէ՝ անոնց ամէնը մէկէն չէ

ալ նէ՝ շատր ունենամք . և որքան գէ-
 շութիւններ կան նէ՝ անոնց ամէնէն
 ալ չէ՛նէ՛ շատէն ու մեծերէն ազատ
 մնամք : Աւտի մեր վիճակը ձեռ-
 քէ եկածի չափ աղէկ ընելու երկու
 ճամբայ կայ . մէկն է՝ աղէկութիւն
 նիս շատցնել . և մէկ ալ՝ գէշու-
 թիւնները քիչցնել : Այլ ասոնց հաս-
 նելու համար ասոնք ճանչնալու ե-
 տելէ որքան խնամք նէ քիչ է . որ
 ասոնք ճանչնալէն ետքը իրարու
 հետ բաղդատեմք , մեզ երջանկու-
 թեան աւելի մօտ տանող աղէկու-
 թիւններուն ընտրութիւնը ընելու
 կարող ըլլալ . և մեզ անկէց աւելի
 հեռացրնող գէշութիւններէն զգու-
 շանալու ճամբան գտնել :

1. Արկու տեսակ աղէկութիւն
 կայ . ճշմարիտն է մէկ տեսակը , և
 մէկալ տեսակն է աւերելոյթ :

Շատ անգամ ասիկայ հասկըցած
 եմք որ՝ երեւոյթքը մեզ կը խաբէ .
 և այն բանն որ մեզի առաջկուց ա-
 ղէկ կերեւէր , ձեռք անցնելէն ետ-
 քը կը հասկընամք գէշ ըլլալը : Մայց

երբեմն առերեւոյթ գէշութեան մէջ մէկ մեծ աղէկութիւն մը պահ ված կրնայ ըլլալ :

Չեմք կրնար ճշմարիտ աղէկ սեպել այն բաները՝ որ մեր անձը և մեր գոյութիւնը աւրելու և գէշը նելու և փոխելու կը նային . քանզի միայն ասանկ ընելը՝ մեր երջանկութեանը արմատը փորելով փլցընել է : Աւտի խելքը մարդոյս առաջին առաջնորդը ըլլալուն համար՝ իրեն ալ ազնուական մասը ըլլալով, ինչ բան որ խելքի հետ չի միաբանիր, չի կրնար մեր երջանկութեանը պատճառ ըլլալ : Ասանկ ըսել և հասկընալ պէտք է այն ամէն բաներու վրայ՝ որ մեր և մեր բոլորի բաներուն մէջ եղած բնական յարաբերութեանը և կապակցութեանը հակառակ կուգայ . որովհետեւ այս յարաբերութիւնները մեր կազմութեանը և բնութեանը կըտորն են . և ասոնց գէժ ընելը՝ մեր կազմութիւնը աւրել, և մեր գոյութեան բնութիւնը գէշընել է :

Մէկ դիէն նայիմք նէ՝ կարծիքի վերաբերեալ աղէկութիւնները աւելնն ալ առերեւոյթ, աղէկութեան կարգը կրնամք դնել : Փառք, մեծութիւն, հարստութիւն, և այլն, թէ որ մեր երջանկութեանը հարկաւոր բան սեպելու ըլլաս նէ, ունեցած աղէկութիւննին միայն առերեւոյթ է, աչքի կերեւի : Արքան մարդիկ, և որքան խելացիներ կան որ՝ համբաւոյ և մեծ հարստութեան և բարեբաղդութեան և մեծ ատիճանի և իշխանութեան մէջ չի կրցած գտած խաղաղութիւննին՝ անյայտ վիճակի մէջ չափաւոր և միջակ ընչից տէր ըլլալով և գրեթէ կարօտ և աղքատ ըլլալով կրցան գտնել : Ասիկայ չի մոռնամք որ՝ մարդուն գոհ ըլլալուն և խաղաղութիւն գտնելուն աղբիւրներն են ճշմարիտ իմաստութեան սկզբունքները, ինքնիրեն տէր ըլլալը, և ինքրզինք աղէկ կարգի մէջ սպահելը :

2. Ամէն բարիք միակերպ և իրարու հաւասար չ'են : Մեծ բարին՝

պզտիկ բարիէն վեր բռնելու եմք ,
մեզի յարմար եկած աղէկութիւն
ներուն ամէնէն գերազանցը ձեռք
ձգել նայելու եմք . և մեր փափա
քը և ետեւէ ինալնիս՝ ուզած և
փափաքած աղէկութիւններնուս բը
նութեանը յարմարցընելու եմք :

Վ.յս կանոնս ինքնին յայտնի է .
քանզի մէկ աղէկ բան մը որքան գե
րազանց ըլլայ , և որքան որ բնու
թիւնը մեզի յարմար գայ՝ մեր եր
ջանկութիւնը այնքան կ'եմբռնէ :

3. Վիմացկուն բարիք ալ կան ,
չուտով անցնելուններ ալ կան : Վ՛մէն
ուրիշ բաները հաւատար սեպելով՝
երկու բարիք ըլլան . մէկը կ'անցնի՝
և քիչ ստեն կը մնայ , և մէկալը
չատ կը դիմանայ կամ բնաւ չ'անց
նիր , չ'անցնողը և շատ դիմացողը
մէկալէն վեր բռնելու է : Արկու
քին մեզի տուած հեշտութիւնները
իրարու հաւատար չ'ըլլան ալ նէ ,
խեղքը մեզի կը սորվեցընէ որ՝ աւե
լի հեշտութիւն պատճառող՝ բայց
չուտով անցնող աղէկութիւնը՝ շա

րունակ բայց քիչ հեշտութիւն տը-
ւող աղէկութեան հետ բաղդատե-
լու է . և տեսնելով որ՝ ասոր հեշ-
տութիւնը թէպէտ քիչ՝ բայց ա-
պահով է , ամէն ատեն կրնամք վա-
յելել , մեր ձեռքէն ելելիք չու-
նի , և երկար ատեն շարունակ մե-
ղի հանգստութիւն տալով մեր եր-
ջանկութիւնը կրնայ եվելցընել . ա-
սիկայ առնելու և մէկալը ձգելու է :

4. Բարիքին այլ և այլ տեսակնե-
րուն մէջ ոմանք ուղղակի հոգւոյն
կը վերաբերին , և ոմանք մարմնոյն :
Հոգւոյն վերաբերեալներուն առար-
կայն քանի՛ որ աննիւթ բաներ են
նէ , երկու կերպ կրնայ բռնել ա-
նոնք մարդոյս միտքը . մէկը՝ ճշմար-
տութեան տեսութիւնով . մէկալը՝
արդարութեան գործադրութիւնով :

Բնորութեան մէջ՝ հոգւոյն վե-
րաբերեալ բարիքը մարմնոյ վերա-
բերեալներէն այնքան վեր պիտի
բռնըվին , որքան որ իրենց բնու-
թեամբը մէկ գերազանցութիւն մը
ունին , և մէկալէն գերազոյն կար-

գի մէջ են . ինչպէս որ աննիւթ և անմահ հոգին՝ նիւթեղէն և մահ կանացու մարմինէն վեր է :

Այս ալ ըսեմք որ՝ հոգւոյ բարիքը մարմնոյ բարիքի պէս չ'են որ քիչ ատենի մէջ անցնին , և վայելելով և գործածելով ալ տկարանան . այլ երկար ատեն կը դիմանան . և որքան որ դիմանան և գործածութեան գան նէ՝ կ'ելեւնան . և այս հեշտութիւններըս վայելելը՝ մարդոյս հոգին չի տկարացրներ և չի մաշեցրներ , ինչպէս որ կ'ընեն հեշտալի բարիքները որ զգայութիւններէ կուգան ու երկար կը քշեն . մահաւանդ կը զօրացրնէ և կատարելութիւն կուտայ :

Տ. Ինդհանուր բարիքներ ալ կան՝ մասնաւոր բարիքներ ալ : Մասնաւորները միայն քանի մը մարդոց յատուկ կրնան ըլլալ . ընդհանուրները ամէն տեղ և ամէն մարդու կը յարմարին . գոնէ՝ մարդկային մեծ ընկերութեան ամէն անդամքներուն վրայ կը տարածին , և մենք ասոր ալ

ւելի ամուր և մօտ կապով կապ
ուած եմք :

() րէնքի և խելքի կանոններուն
նայելով՝ որ մասնաւորները ընդհա-
նուրին տակը կը ձգէ , և մեր ձեռ-
քը անցնելու բարիքին գերազանցը
ընտրել պէտք ըլլալով , ընդհանուր
բարիքը մասնաւորէն վեր բռնելու
եմք :

Մէկ բանին ճշգրիտ յարգը գիտ-
նալու անկասկած ճամբաներնուս
մէկը այն է որ՝ գերագոյն խելքը և
ամէն կարգի և արդարութեան և
ճշմարտութեան ազբիւրը անիկայ
ինչպէս բռնած ըլլալը դատեմք , և
անիկայ ամէն մէկ բանի ինչ աստի-
ճան յարգ կուտայ նէ՝ մեր տալու
յարգն ալ այն համեմատութեամբ
յարմարցընեմք : Արդ՝ գերագոյն
օրէնսդրին սկզբունքներուն և կա-
նոններուն մէկը՝ որ մեզի հաղորդած
խելքին միջնորդութեամբը աւելի
յստակ և պայծառ կը փայլեցընէ
մարդոյս մտքին առաջը , և սրտին
աւելի զգալի կ'ընէ , թէ որ միտքն

ու սիրտը կիրքերուն բռնութենէն աւրջլած չ'ըլլան նէ, այս կանոնս կարգի օրէնքն է, ինչպէս որ բացատրեցինք :

Մեղհանուր և ամէնուն վրան տարածվելու բարիքն է որ մեր ամէն մէկուս ալ մասնաւոր բարիքներուն աղբիւրը կ'ըլլայ, և այս կարգի օրէնքին հնազանդելու համար մենք ինչ բան որ կորսընցընեմք, և ինչ բան ետ ձգեմք նէ, ամենեւին կասկած և երկբայութիւն չ'եմք կրնար ունենալ որ, այս օրէնքիս աղբիւր եղող իմաստութեան տիրոջը իշխանութեան տակը քանի որ մնամք, հարկաւորապէս ինչ և իցէ կերպով՝ մեզ այն բարիքէն զրկելնիս մեզի շատ մեծ ալէկութեան պատճառ պիտի ըլլայ :

Նոյն ուշադրութեամբ քննելով գերագոյն էակին անփոփոխելի և յաւիտենական գաղափարներուն վրայ մեր խելքը և զգացմունքը և օգուտը՝ թէ որ օգուտնիս ալ ալէկ հասկընամք նէ, կանոն կը դնեմք թէ՛

այն բանը որ իրաւունք ունիմք կա-
մելու թէ ուրիշները մեզի չ'ընեն,
մենք ալ անիկայ ուրիշներուն չ'ը-
նեմք . և այն բանն որ՝ ուրիշին մե-
զի ընելը իրաւունք ունիմք ուղելու՝
մենք ալ անիկայ ուրիշին ընեմք : Չէ
թէ անիրաւութիւն , այլ խենթու-
թիւն ալ է՝ ուրիշին երջանկութեա-
նը արգելք տալով մեզ երջանիկ ը-
նելու ճամբան փնտրուելը : Վանզի
ընկերութեան ամէն մէկ անդամքը
այս իրաւունքս ունեցած կ'ըլլայ . և
այն ատենը բոլոր ընկերութիւնը
ի՛նչ կ'ըլլար , մենք ի՛նչ կ'ըլլայինք ,
թէ որ ամէն մարդ իրեն անձին հա-
մար այս իրաւունքս բանեցրնէր , և
մեզ թշուառացրնելով՝ և մեր եր-
ջանկութիւնը խափանելով ինքն եր-
ջանիկ ըլլալ ուղէր :

Աւրեմն՝ մէկ մարդու մը իրեն
կիրքերուն բռնութեանը դէմ պաշտ-
պանութիւն գտնելու համար , և ա-
մէն անիրաւութենէ ինքրզինք պաշտ-
պանելու և ազատ բռնելու համար ,
և ուրիշներն ալ՝ կիրքերուն գէշ և

մնաստակար գործքերուն տակը չի ձը-
գելու համար՝ պինտ առաջ մարդ-
ինքրզինք այն մարդոց տեղը պիտի
դնէ , որ իր անիրաւութիւնովը և
կիրքերովը գրգռւելով՝ ինքը երջան-
կութեան հասնելու համար անոնք
պիտի զրկէ :

6. Թէ՛ բարիք ըլլայ թէ՛ գէշու-
թիւն , ներկայ ալ ունի՝ ապագայ
ալ : Եւ մենք փորձով սորված եմք
որ , շատ անգամ մէկ բան մը ձեռ-
վընիս հասնելէն առաջ՝ անկէց ի՛նչ
օգուտ քաղել կը կարծեմք նէ , ձեռ-
վընիս հասած ատենը անիկայ չ'եմք
գտներ , անանկ որ՝ ամէնէն հաճելի
և ախորժելի կարծրվածներուն տա-
կէն ամենադառն հետեւութիւն մը
կ'ելլէ , և մեծ բարիք մը ձեռք ձը-
գելու համար սկիզբէն է՛փ աղէկ
աշխատութիւն քաշել հարկ կ'ըլլայ .
ուստի խոհեմութիւնը մեղի կը թե-
լադրէ որ՝ լոկ աչքերնուս առաջը
երեւցածին չի կապիլիմք , գալու ա-
պագայներուն ալ նայիմք , և երկու-
քին վրայ մէկէն խորհիմք որ մէկ

հաստատուն դատում մը ընելով՝
ինչ ընելիքնիս որոշելու կարող ըլ-
լամք :

Քիչ մը խորհրդածութիւնով
մենք սլ առանց աշխատութեան
կրնամք գտնել որ՝ ետքը մեզի մեծ
գէշութիւն բերող ներկայ բարիք մը
ընտրելը խելքի դէմ է : Ասոր պէս
այն աղէկ կը հասկընամք որ՝ մեծ
մէկ բարիք մը ձեռք ձգելու համար
մէկ քիչ մը նեղութիւն և չարչարանք
քաշելու յանձնառու ըլլալը՝ խոհե-
մութեան կանոններու դէմ չէ :
Սեր հիմակիսն ըրած բազդատու-
թիւններնուս մէջ ասոնք երկու ի-
րարմէ տարբեր գումարի (եէքիւնի)
պէս են . որոնց մէկուն մէկալէն ա-
ւելի ըլլալը հարկաւորապէս մեր եր-
ջանկութեանը վրայ յաւելուած մը
կ'ընէ . կամ թէ որ գէշ ընտրու-
թիւն ըրինք նէ՝ թշուառութիւննիս
կ'եմբարնէ :

7. Մեծութեամբը երեւելի ե-
ղած բարիքին ու չարիքին համար կա-
տարեալ ստուգութիւն ունենալ

հարկ չէ՛, միայն հաւանականութիւնը՝ որով մեզի անանկ կուգայ թէ ասկէց կարելի է որ մէկ մեծ աղէկութիւն մը կամ գէշութիւն մը ծագի, և լոկ ճշմարտանմանութիւնը անգամ հերիք կ'ըլլայ խելացի մարդոց՝ որ մէկ քանի մանր մունր բարիքներէ իրենք զիրենք զրկեն, և քանի մը թեթեւ նեղութիւն քաշելու անգամ յանձնառու ըլլան, աւելի մեծ բարիք մը ձեռք ձգելու և կամ աւելի ծանրը գէշութենէ մը ազատելու մըտքով:

Եւ յիրաւի խելքն ալ մեզնէ աւանակ կը սրահանջէ որ՝ դատելու և ընելիքնիս որոշելու համար ստուգութիւն չի գտած տեղերնիս՝ հաւանութիւնն ու կարելիութիւնը մեզի կանոն բռնեմք. մանաւանդ՝ երբ որ այս քննութիւնս մեզի շատ մեծ օգուտ ընելու ըլլայ: Վանզի այն աւտենը մեզի առաջնորդութիւն ընող և մեզ լուսաւորողը միայն այն հաւանութիւնն ու կարելիութիւնն է, և թէ որ առաջնորդ մը ունե-

նալը՝ առանց առաջնորդի ուր եր-
թալիքդ չի գիտնալով թափառական
ըլլալէն աղէկ բռնես, և արեւուն
լոյսէն զրկուլած ատեննիս տունը ու-
նեցած ճրագնիս ալ մարելու է չ'ը-
սես, խելացիութիւն է որ՝ յայտնի
և ստոյգ փաստ չ'ունեցած տեղեր-
նիս կարելութիւնը մեզի առաջնորդ-
ընենք: Վ որորովին մութը մնալով
մեր երթալու տեղը չեմք կրնար
գտնել. քիչ մը լոյս ունենամք նէ՝
որքան քիչ ըլլայ նէ օգուտ կրնէ:

8. Ղշմարիտ բարիքին համը մեր
հոգիին առնել տալու համար ամէն
բան ընելու է. բնաւ մէկ բանի մըն
ալ անհոգանալու չէ: Վ նանկ որ՝ մէկ
գերազանց բարիք մը ըլլայ, և անոր
գերազանցութիւնը ճանչցուլած ըլ-
լայ նէ, անոր փափաք մը ունենայ
մեր հոգին. և պէտք եղած ջանքը
և աշխատութիւնը մեզի քաջել
տայ անիկայ ձեռք ձգելու համար:

Վ յս վերջին կանոնս բնապէս մէ-
կալներուն ետեւէն կուգայ, և ա-
նոնց գործադրութիւնը՝ և անոնցմէ

քաղելու պտուղնիս մեզի կ'ապահով-
 ցնէ : Սեզ ճշմարտապէս երջանիկ
 կամ թշուառ ընելու բարիքներուն
 և գէշութիւններուն ինչ և ինչպէս
 բան ըլլալուն վրայ մտքերնիս լուսա-
 ւորվիլը հերիք չէ՛, պէտք է որ՝ այն
 լուսաւորված խելքերնուս համե-
 մատ՝ կամքերնիս ալ իրեն ախորժա-
 կովը և ունակութիւն ըրած ըլլալովը
 անոնց ինքրզինք որոշելը գիւրին ըլ-
 լալու համար՝ ասոնց սկզբունքներն
 ալ զօրաւոր և գործունեայ ընեմք :
 Չըսես թէ՛ մարդոյս ախորժակը նո-
 բոգելը և յօժարութիւնները փոխե-
 լը անհնար բան է : Ի՛երնին ախոր-
 ժակը և համը ինչպէս է նէ՛ մտքինն
 ալ անանկ է : Փորձը կը ցրցնէ որ՝
 ասոնց երկուքն ալ կրնան փոխվիլ .
 և առաջկուց մեզի անհաճոյ երեւ-
 ցած բաները կրնամք հաճելի ընե-
 լուն ճամբան գըտնել : Առաջ ըսիլը
 սանիլը աշխատութեամբ և խելիքիս
 հոգնեցընելով և տանջելով կ'ըլլայ .
 բայց ետքը քրչիկ քրչիկ անոնց կը
 սորվիլի և ընտել կ'ըլլան . և քանի՛

որ գործքերը կրկնեմք նէ՝ այնքան
 գիւրութիւն կուգայ : Անդի հակա-
 աակ գալը կը դադրի . առաջ ինչ
 աչքով կը նայվէր նէ՝ այն տտենը ու-
 ըիշ աչքով կը նայիլի . և այն բանն
 որ առաջկուց մեզի գէմ գալով ա-
 տելի եղած էր , սորվելնուս ետքը
 սիրելի կ'ըլայ , որ չեմք կրնար անի-
 կայ ձեռվընուս հանել : Սովորու-
 թեան և ունակութեան ուժը ա-
 սանկ է . մէկ մարդ մը ընել սովորու-
 թիւն ըրած բանին այնքան միտք
 կուտայ , և հետը այնքան կ'ընտելա-
 նայ , որ անիկայ չ'ընելը իրեն նեղու-
 թիւն կը բերէ :

Անր երջանկութեան հասնելու
 համար դրած սկզբունքները անանկ
 բաներ են որ՝ լուսաւորված և հան-
 դարտ խելքը նախապաշարմունքնե-
 ղէն և կրից խռովութիւներէն ա-
 զատ ըլլալու ըլլայ նէ՝ ասոնց ճշմար-
 տութիւնը անհնար է որ չի ճանչնայ :
 Բայց սրբան քիչ կը գտնուիլն այնչափ
 խելացի մարդիկ , որ իրենց առաջ
 կուց մտվընուս մէջ դրած սուտ գա-

ղափարներուն վրայ աշխրհին բանան, և իրենք բռնի քաշքըշող տանող յօժարութիւններէն և կիրքերէն հրաժարովին, և խելքը երջանկութեան վրայ խօսած ատենը անդամ անոր ըսածը մտիկ ընեն :

Սակայն՝ սիրելի բարեկամներ, թէ որ խելքի խորհուրդ հարցընելու չի ղիջանող (իրթիքեաց չ'ընող) մարդիկ՝ խելքին ձայնին աւելի մտադրութեամբ ականջ դնելին նէ՝ ո՞րքան սրտմաշութենէ և սպաշարներէ իրենք զիրենք կը խնայելին : Ասանկ դժնդակ սպաշարէ մը մենք մեզ հեռի բռնելու համար՝ մեր սխալներուն գլխաւոր աղբիւրները այս տեղս քիչ խօսքով ցըցընեմք, ասոնցմէ զգուշանալը դիւրացընելու համար ասոնք աղէկ մը ճանչնալը շատ բան ըսել է : Աւելի զգաստ և խոհեմ ըլլալու սորովիլ՝ երջանկութեան հասնիլը սորովիլ է :

Գ Լ ՈՒ Խ Թ . Գ .

Մեր սխալներուն գլխաւոր աղբիւրները :

ԱՌԱՋԻՆ ԱՂԲԻՒՐ

Ճշմարտութեան անհոգ ըլլալնիս :

ՂՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ մեր երջանկու-թիւնը իրարու հետ ի՛նչ կապակցու-թիւն ունենալը պէտք եղածին չափ չ'եմք ճանչնար կոր : Ի՛նչ բան որ մեզի ախորժեղի կուգայ՝ ա՛նիկայ մեզի ճշմարիտ կ'երեւի . բայց այն ալ մտածելու էր որ՝ այն բանն որ մեզի ճշմարիտ կ'երեւի , թէ որ իրօք սուտ ելլէ նէ , մեր անիկայ այն-բան մեծ բանի տեղ դնելնիս չ'ար-ժամ կ'ըլլայ : Թէպէտ մենք մեր եր-թալու ճամբուն միայն մէկ մասը կրնամք տեսնել , բայց դիւրին է մեզի հաւատալը որ այն կտոր ճամ-բան որ մեր տեսածէն անդին կը մնայ , անկասկած և ասպահով կեր-պով մեզ նաւահանգիստը կը տանի

կը հասցունէ : Այն տկար և փուտ
նաւակի մը մէջ մտեր՝ անհաւատա-
րիմ և փտանգաւոր տարերքի մը
մէնք մեզ հաւատացեր եմք , ամէն
փտանգներուն յանձնառու ըլլալով՝
առաջնիս ելած ճամբան մեզի քիչ
մը հարստութեան կամ իշխանու-
թեան կամ հեշտութեան յոյս մը
ցրցուցածին պէս՝ կ'իյնամք այն ճամ-
բուն մէջ . և ամենեւին մըտվենիս
ալ չ'եմք բերեր՝ որ եղերքէն քիչ
մը հեռանալուս պէս կրնայ նաւակ
նիս քարի մը զարնըվիլ և կոտորտիլ .
որով մըտվենիս դրածը ամէնն ալ ,
յոյսերնիս ալ մէկ տեղ՝ պարասը
կ'երթայ :

Ղշմարիտը սուտը հաւասար մե-
զի անպիտան բանի մը պէս բըռնե-
լուն հետեւութիւնն է զանցառու-
թիւնն ու անհոգութիւնը , չի քննե-
լը՝ կամ միայն հարեւանցի կեղ վրայ
սորվիլը . կանխիկ և ժամանակը չե-
կած դատելը , ամբարտաւանու-
թեամբ պնդելը , յանդգնութիւնը ,
և ասոնց մօտ ուրիշ բան մըն ալ

կայ՝ որ այնքան մօտ ըլլալը չ'ես կար-
ծեր, և է թուլնալը և վախկոտու-
թիւնը :

Ասոնց քովը կը շարվին կարգաւ
թեթեւութիւն, պարսպ բաներու
ետեւէ ինչալ, մէկ բանին վրայ բե-
րանը բաց մնալ զարմանալ, մանա-
ւանդ՝ խողալիքի պէս բաներու
վրայ : Ասոնց ետեւէն կուգան այն
ամէն խենթութենթ և ամբողջութեղ
բաները, որով մեր կեանքը խելքի
հակառակ և իրարու դէմ բաներով
և տեսակ տեսակ վտանգներով
հիւսոված բան մը կ'ըլլայ :

Ասանկ խելքերուն բնաւ խրատ
և դաս խեր չ'ըներ : Այնքան զարմա-
նալի և ապշեցուցիչ փոփոխութիւն-
ները, արիւնահեղ վտանգները,
մարդկային իրաց ոչինչ և անկայուն
ըլլալուն վրայ հազար և բիւր ան-
գամ փորձելով կատարեալ հաստա-
տութիւն գտնելը, թէ՛ իրենց՝ և թէ
իրենց սիրելի մարդոցը գլխուն ե-
կած աղէտքը՝ ասոնք ամէնն ալ մէկ
ըսպելի մէջ կ'ըլլան ու կանցնին, մըտ-

վրնուն մէջ ասոնցմով բան չի տրայա-
 ւորիր : Ա՛մէն ատեն միակերպ խել-
 վրնին սրարայ մարդիկ, սուգ և լալ
 պէտք եղած բաներուն վրայ ալ՝ ու-
 ըիչ ազգաց առաջն ալ իրենց քաղա-
 քակիցներուն առաջը ըրածի պէս
 ուրախութիւն և խնդութիւն և զու-
 արճութիւն կը ցրցընեն : Խեղճու-
 թեան մէջ ամբարտաւանութիւն՝ և
 խենթութեան ծախքեր ընել, ան-
 ուանի և յարգի սեպվելու պատ-
 ճառները իրենց անարգութիւն և
 նախատինք կը սեպեն, թէ՛ և իրենց
 թշուառութիւնովը եղած ըլլայ : Ա՛-
 մէնը մէկ խօսքով լրմընցընեմ, ամէն
 խորհրդածութիւն իրենց խելքը
 գլուխը բերելու և բարբերնին շիտ-
 կելու տեղը՝ աւելի կրփախցընեն
 խելքերնին, և անանկ աւրած բարբ-
 մը կը ցրցընեն՝ որ ամէնուն ալ գայ
 թակզութիւն կուտայ :

Ա՛յմարտութեան և իմաստու-
 թեան վրայ այս ի՞նչ անխորութիւն
 է, մարդոյս խելքը ի՞նչ թեթեւ և
 ի՞նչ անկանոն է, որ իրեն հասնելու

երջանկու թեան առաջը ինք կը կըտ-
 րէ: Ատրելի է որ՝ այս ինչ կամ այն ինչ
 բանին պիտանու թիւնը քիչ մը հաս-
 կըցված ըլլայ, որ այս բանս իբրեւ
 վախճան բռնըվելու էր, և այս բա-
 նին մեզի նկատելով ինչ յարգ ու-
 նենալուն վրայ չի խորհելնուս հա-
 մար՝ ասիկայ ձեռք ձգելու հարկա-
 ւոր եղած ջանքը չ'եմք ըներ, ասի-
 կայ ձեռք ձգելնուս արդելք ըլլա-
 լու դժուարութիւններուն ոչ առա-
 ջը առնելու կը նայիմք և ոչ յաղթե-
 լու, և ոչ ալ ձեռք ձգելնուս ետքը՝
 ձեռքէ չի հանելու համար պէտք է
 զած հաստատութիւնը հոգ կ'ընեմք:
 Ասոր վրայ մտադրութեամբ խորհե-
 լու և պէտք եղած զգուշութիւննե-
 րը ընելու տեղը՝ թող կուտամք որ՝
 սարսապ և խաբեբայ գաղափարնե-
 րը և ոչինչ բաները՝ և միայն քիչ
 մը ատեն մեզի պրզտիկ զուարճու-
 թիւն մը տուող և մեզ հաճեցընող
 անկանոն կամքերնիս մեր միտքը ու-
 րիչ բաներու վրայ տանի, և ասանկ
 մեծ աղէկութիւն մը ետևէ թող չի

տայ որ երթանք : Ասանկ ընողը ա-
նանկ ճամբորդի կը նմանի որ՝ ծանր
բանի մը համար ճամբայ ելեր է .
խելքը միտքը այն բանին պիտի տայ .
և որ առաջ այն բանը լըմնցընելու
համար ճամբան ալ արտորնօք ընէ .
բայց շիտակ ճամբան երթալու չի
նայիր . ծաղիկ կամ ծովու ժժմուն-
քի կեղեւներ ժողվելու համար
ճամբէն դուրս կելլէ . ճամբուն վը-
րայ պինտ առաջ պատահած վաճա-
ռատեղիէն ապիկի մանեակներ (սրը-
չա կերտանլըս) և տղոց խաղալիք-
ներ և ուրիշ խենթ բաներ կ'առ-
նէ . և ասանկ ճամբէն դուրս ելլե-
լով և ուշանալով իր ճամբորդու-
թեանը նպատակին չիհասնելէն ետ-
քը՝ խենթութիւն մըն ալ ըրածնե-
րուն վրան կ'ելելցընէ . որ կորսըն-
ցուցածին վրայ կը ցաւի :

Նախապաշարմունք :

Թի որ ասոնք ամէնն ալ լրման զուցե լու ըլլայինք նէ՝ համրանքը շատ կ'երկննար : Մեզի բաւական սեպենք սովորական եղած նախապաշարմունքներուն այլ և այլ կարգերէն դուրս չ'ելլելու : Եւ այս նախապաշարմունքներս են անոնք , որ խեղացի և հաստատուն սկզբունքներով չի հաստատուած՝ և անկէջ չի լուսաւորուած կրթութիւն մը մարդոյս մտքին մէջ կր խօթէ տղայութեան ժամանակը : Անակուծիւն եղած նախապաշարմունքը , մարդասոր վրայ կր խորհի և ասոր վրայ կր գործէ , անոր մտադրութիւն չը ներ որ՝ մէկ բան մը մեզի դիւրին և զուարճալի ըլլալովը օգտակար և պարկեշտ և ճշմարիտ ալ կրնայ մի ըլլալ : Հեղինակութեան և օրինակի և քաղաքական սովորութեան նախապաշարմունքներ ալ կան , իմաստ

տուն և գիտուն և անուանի մար-
 դոց ըսածին բռնըլելու նախասպա-
 շարմունքներ ալ կան : Մայց մէնք
 տեսանք որ՝ այս իմաստութիւնները՝
 և այս մեզի պինտ հարկաւոր բանե-
 ըր մեզի ցրցընելու բաւական լոյս
 կարծածնիս շատ ժամանակ ի՞նչ կ'ել-
 լեն , վերջերնին ուր կը հասնի , և
 ասանկ վարպետներու խօսքերուն
 այն ատիճան վստահիլ և կապիլը
 սրբան անմտութիւն է : Այս ալ
 կ'ըսէ որ՝ ամէն աշխարհք ասանկ
 կ'երթայ , ասիկայ հիմակիւն կերպն
 է , առ հասարակ ամէնուն ընդու-
 նելի եղած կարծիք մըն է : Այլ ա-
 սանկ ըսելով սովորութեան ետին կը
 կապիլի կ'երթայ , օրինակի լուծը իր
 ճիտը կ'առնէ , ամէն բանէ ետ կը
 կենայ , բարի ըլլայ , վայելուչը ըլլայ ,
 իրական և ճշմարիտ օգուտներ ըլլայ ,
 ասոնց մէկն ալ աչքին չ'են երեւիր ,
 նոր կերպի (մտայի) և նոր կարծի-
 քի հետեւիլը ասոնցմէ աղէկ կը սե-
 պէ : Մայց ճշմարտապէս խելացի ե-
 զողը՝ թէ՛ իրեն և թէ՛ ուրիշին եր-

ջանկու թեանը համար ամէն բան
 ետ կը ձգէ, կրօնքին բռնած և
 հաստատութիւն տուած խելքը ա-
 նոնց ամէնէն վեր կը բռնէ: Թէ՛
 կուսակցութեան նախասպաշարմունք
 ունենայ, որ կրնայ վերը բացատրած
 սլատճառներուն մէկէն առաջ գալ,
 թէ՛ ուրիշ բաներէ ըլլայ՝ որ ուրիշ
 մարդոց իմացընէն և ինքն անգամ
 իմանալը բանին ձեռք չի տար. ա-
 սոնք ամէնն ալ ետ կը ձգէ: Մէկ դի-
 մը հակամիտեր է. այն կողմին տրկա-
 րութիւնը իմացեր է. ճիծաղական
 ըլլալը հասկըցեր է. երբեմն չար և
 ուրիշի մնաս բերելու խիղճ չ'ընողն
 ալ տեսած կ'ըլլայ. բայց ինչ ընէ.
 մէկ անգամ մը այն կողմին բռնըվեր
 է. խօսքով կասրվեր է. շատ վտան-
 դաւոր և շատ մեծ ամօթ կը սեպէ
 անկէց ետ կայնելը. թէ՛ և իրօք ա-
 սլահովը այն է, և խելացութիւն է
 ետ կայնելը: Ասով, ինքրդինք կու-
 րութեան զարնելով, և կուսակցու-
 թեան հարկաւոր եղած դաժանու-
 թիւնն (դատխալութիւնն) ալ ձեռք

առնելով՝ առած սուտերը և զըր-
պարտութիւնները և գէշ խօսքերը
և հալածմունքը և զրկանքը և բռն-
նութիւնը ամէնն ալ բանեցընելու
համար ամէնէն անիրաւ և ատելի
եղանակներուն և ճամբաներուն
ձեռք կը զարնէ : Այրազ կը տեսնէ ,
գիշեր ցերեկ այն կը մտմբտայ՝ որ
պարսպ խոստմունքներով կամ սուտ
վախերով տկարները իրեն քաշէ ,
և խաբէական պատճառաբանու-
թիւններով անմիտ բազմութիւնը
գլխէ հանէ . և ուրիշները խաբէու-
թեամբ և սուտ խօսքերով խաբխբէ .
որ ամէննալ ետքը ետքը կանուխ
թէ ուշ՝ իր գլուխը պիտի դառնան :
Այլ ասանկով շատ մը մարդիկ թըշ-
ուառացընելէն ետքը՝ սովորաբար
վերջը իրեն թշուառութիւնովը կը
գոցէ :

Այս ալ չի մոռնամք որ՝ նախա-
պաշարմունքներու դէմ ամէնէն ա-
ւելի պօռալով դատախազութիւն
ընողներն են շատ ատեն , որ նախա-
պաշարմունքներով լեցուն են , և կը

յամառին ալ , չեն ուղեր նախա-
սրաշարմունքները իրենցմէ ձգել :

ԵՐՐՈՐԴ ԱՂԲԻՒՐ

Ձգայարանքները :

ԱՍՈՆՔ մեզի մարմնոց երեւոյթը
կը ցըցընեն . բայց նոյն իսկ մարմին-
ներուն էութեանը և ինչ ըլլալուն
վրայ , և անոնց ձեւոյն և մեծու-
թեանը և շարժմանը և հեռաւո-
րութեանցը վրայ շատ անդամ մեզ
կը խաբեն : Այն գաւաղան մը մին-
չեւ կէսը ջուրի մէջ խօթես նէ՝
կոտրած կ'երեւի . բայց ձեռքով
ջոշափելով շիտակ կը գտնես : Ա-
ռու տեղ քառակուսի մէկ աշտա-
րակ մը ըլլայ նէ՝ բոլորածեւ կ'ե-
րեւի . հեռուի բաները իրենց
բուն չափէն աւելի պզտիկ կ'երե-
ւին մեր աչքին . երկինքին երեսը
պայծառ փայլուն աստղը՝ մեր աչքին
մէկ կէտի մը չափ է . բայց այն ալ

մեր աշխարհքին պէս աշխարհք մըն է .
 և մերինը անկէց որքան հեռու է նէ՛
 ան ալ մերինէն այնքան հեռու է : Մէկ
 գետի մը ընթացքովը՝ հաւասար
 շարժմամբ վերէն վար ինջնալու ըլ-
 լամք նէ՛ կը տեսնեմք որ գետին ե-
 ղերքի ցամաքը ետ ետ կը փախչի .
 բայց շիտակը այն է որ՝ մեր հեծած
 նաւակն է ճամբայ ընողը . գետին
 եղերքը կեցած տեղերնին կը կենան .
 տեղ չ'են երթար : Նսանկ որպիսու-
 թիւններ կան որ՝ թէպէտ մեր վրայ
 են , բայց մենք ուրիշ մարմնոց վրայ
 կը կարծեմք . որ այն բաները այն
 որպիսու թիւնները մեր գաղափարին
 մէջ արթըննալուն լոկ առիթ մըն
 են : Նսանկ են գոյնը , հոտը , համը ,
 և այլն : Բայց մեզի աւելի վտանգ
 հասցընելու կերպով մեզ խաբելնին
 այն ատենն է , երբ որ մեզի ախոր-
 ժելի կամ անախորժ բան մը ներկա-
 յացուցած ատեննին՝ այն բանին
 գաղափարը առած զգացմունքներ
 նուս համեմատ կը տպաւորեն մեր
 մտացը մէջ : Մեզի ախորժելի եկած

բաները . փափկութիւնը , զգալի ա-
խորժակները և հեշտութիւնը՝ և
ասոնց վերաբերեալ բաները՝ մեր
երջանկութեանը գլխաւոր և նախ-
կին նիւթ և տարերքի պէս կը բռու-
նեմք . և շատ անգամ՝ բայց միշտ
ժամանակը անցնելէն ետքը կ'իմա-
նամք թէ մեզ երջանկութենէն ո՞ր-
քան հեռացուցեր են : Անգի տխոր-
ժելի չ'եկածները մէկիկ մէկիկ քըն-
նելու ալ չ'եմք առներ . խառն 'ի
խուռն ամէնը մէկէն մէկ դի կը ձը-
գեմք . և ասանկ են այն բաները որ
մեր մարմինը կը կարծրացընեն . մեր
հաճելի բաներէն մեզ կը զրկեն .
հեշտալի բաներէն ետ քաշվիլ կու-
տան . ժուժկալութիւն կը քարոզեն ,
ծանր և դժուար աշխատութիւննե-
րու տակ մեզ կը խօթեն : Ասկայն
ընդհանրապէս մեր առողջութիւնը
և հոգւոյ զօրութիւննիս և գոհ ըլ-
լանիս և երջանկութիւննիս ասանկ
բաներէ կ'ըլլայ :

Օ գայարանքներուն միջնորդու-
թեամբը մուտրելնիս մեզի այն գէ-

շութիւնն ալ կը բերէ որ՝ բարուց
 վերաբերեալ բաները ամէնն ալ մե-
 ղի ծուռ դատել կուտայ : Օգայա-
 ընաց բարոյականը , (թէ որ այս
 խօսքով բան մը կրնաս հասկնալ նէ) ,
 խելքի և մտքի և սրտի բարոյակա-
 նէն շատ մեծ տարբերութիւն ունի :
 Սարգուս միտքը կը բթացընէ և ան-
 բան անասունի պէս կ'ընէ . գաղա-
 փարները բնականին աւելի համե-
 մատ ընելու սրտածառանքով , և այս
 բանիս վրայ պնդելով անգամ կ'աւ-
 րէ , բնականէ դուրս կը հանէ . յօ-
 ժարութիւնները և բնական բեր-
 մունքը կը խանգարէ . նիւթասպաշտ
 և անձնասպաշտ կ'ընէ . կարճ ըսեմ .
 ամէն մոլութիւններու և ամէն տե-
 սակ տկարութիւններու ճամբայ կը
 բանայ : Այլ և այն՝ որ իր բոլոր
 կեանքը մարմնական հեշտութիւննե-
 րուն է տուած , իր կենացը և հեշ-
 տութիւններուն տակը ուրիշ բան
 գտնելիք չ'ունի , բայց եթէ խղճմը
 տանքին դառն խայթոցը՝ և զղջա-
 լուն լեղիութիւնը :

ՉՈՐՐՈՐԻ ԱՂԲԻԻՐ

Երեւակայութիւն :

ԱՍՈՐ ցրցուցած զարմանալի բա-
ներուն և ունեցած կարողութեանը
վրայ բաւական կը խօսուի : Բայց որ-
քան դժուար է ասոր իշխանու-
թեանը տակէն ազատուիլը : Արձ-
վրայ որ տիրէ նէ՝ անոր բնութեա-
նը կը համեմատի, ոմանց դաժան
և ժանխրոտ կ'երեւի, և ուրիշներուն
ծիծաղերես. ոմանց սրտին մէջ խենթ
զուարճութիւններ կը խօթէ՝ և սուտ
յոյս մը կը գոյացընէ, և ուրիշները
տխուր սեւամաղձոտութեան մը տակ
կը ձգէ, սեւ և մութ գոլորշիքնե-
րով գլուխնին կը լեցընէ և կը մըթա-
ցընէ, և ամէն տեղ վախնալու և
սոսկալու բաներ աչքերնուն առաջը
կը բերէ : Սեր կը իցը սննդարար մէկ
կարողութիւնն է, երբեմն մեր սրը-
տին մէջ տուփական և անարժան սի-
րոյ կրակներ կը վառէ, երբեմն մեր
ատելութիւնները կ'արթընցընէ և

կը դրդուէ : Ամէն բան կը բնական
 որպիսութենէն կը փոխէ . իրենցմէ
 բոլորովին օտար եղած կերպարանք
 ներով կը ցցընէ մեզի : Շատ ան
 դամ իրենց բնականէն շատ մեծ կը
 ցցընէ անոնք մեզի . մէկ պղտիկ
 ճանճը փիղի չափ կ'ընէ : Բաղդա-
 տութիւններէ և ձեւերէ և չափա-
 զանցութիւններէ շատ կ'ախորժէ .
 անհոգի և անշունչ բաներուն հոգի
 և շունչ կուտայ . մտացածին բանե-
 րու գոյութիւն կուտայ . Նիմֆա և
 Նայատ և Տրիատ և Համատրիատ
 և Սադիր և Փաւնօ և Սիրվէն ըս-
 ված բաները՝ երեւակայութեան ըս-
 տեղծածներն են . երկինքն ու երկի-
 ըրս իրեն ստեղծած սուտ աստուած-
 ներովը լեցուց : Այսբան բարձր
 ելելու և հեռուն երթալու ալ կա-
 րօտ չեմք . ամէն օր ամէն տեղ՝ և
 մեր աչքին առաջը անգամ մարդոց
 մտքին մէջ բերիներ և ուրիշ արեղ-
 ցրփեղ անգոյ բաներ հնարելով ա-
 մէնուն սիրտն ալ վախ կը ձգէ : Այն-
 բեմն երեւոյթքը խաղաղ և հան-

դարտ ձգել լով՝ միտքը անհանդարտ
կ'ընէ . մարդ չի գտնելած անաստու
ներու մէջ կ'առնէ կը տանի . անբը
նակ կղզիներ , ընդարձակ անշէն տե
ղեր և ծառոտ անտառներու մէջ :
Ուրիշները անուշիկ երազներով կ'ըզ
բօսեցընէ . Յաւերժահարսներուն
երկիրները կը տանի , կամ Թէմբէի
զուարճալի ձորերուն մէջ կը պտըտ
ցընէ հովիւներու հետ . և անոնց
ասպրելու եղանակը անանկ աղէկ կը
ցցընէ որ՝ անոնց վրայ նախանձիլ
կուտայ : Աւելի խրոխտութեամբ՝
մտքերնուն մէջը ասպետութեան
գաղափարներ կըխօթէ . Աէնալտօի
և Թանքուէտիի և Ամատիճիի պէս
մարդոց վրայ զարմանք և սէր ձը
գել կուտայ : Արեւակայութիւնն է
որ՝ ուման ըսլած սուտ պատմու
թիւնները կարգալը մեզի այնքան
անուշ կը բերէ : Արանի՛ թէ՛ մեզ
աղէկցընելէն զատ նպատակ ունե
ցող ումաններ շատ չի գտնուէին ,
որոնց շատը՝ ազնիւ և ոգեշարժ պատ
կերներու հետ մարմնական հեշտու

Թեան պատկերներ ալ կը խառնեն ,
 և կըսեն որ՝ մոլութեան պատկեր-
 ները մարդս առաքինութեան կը
 տանին . բայց նոյն իսկ պատկերնե-
 րը եվելջօք վտանգաւոր են :

Արեւակայութիւնը իրեն սպա-
 րանքները և խաբէութիւնները շա-
 րունակելու և եվելջընելու համար
 դուրսէն բան փնտրուելու ալ կարօտ
 չէ : Սեր բոլորը գտնելած բանե-
 րը , և մեր կիրքերուն աւելի մօտէն
 յարմարութիւն ունեցողները իրեն
 նիւթ կառնէ . ինչ բան որ մեր վը-
 րայ ազդեցութիւն մը ունի նէ՝ ա-
 նոնց ամէնուն ալ մեծութիւն մը
 կուտայ . սարապ ո՛ր ազանութիւն-
 ներու և դրսէն երեւոյթներու
 յատկութիւն մը կուտայ , որով
 մէկ մարդ մը զարդարած ատենը
 ուրիշ բան չ'ըներ , բայց եթէ անոր
 պզտիկութիւնը և ոչնչութիւնը կը
 ծածկէ : Արբութեան և կատաղու-
 թեան վրայ կտրըճութեան հանգա-
 մանք մը կը դնէ , վրէժխնդրութեան
 աղնիւ գաղափարներ կուտայ . ինք

նին տկարութենէ զատ բան չ'եղա-
ծին՝ զօրութեան և մեծանճնու-
թեան գաղափար մը կ'ելեցընէ վը-
րան. կեանքի համբերելը և ինքըզինք
չի մեռցընելը՝ արիութեան պակա-
սութիւն և թուլամորթութիւն կ'ը-
սէ : Ամօթալի և նախատանաց ար-
ժանի բանին՝ պատուոյ գաղափար
կուտայ. խայտառակութեամբ մարդ
գլխէ հանելուն կամ բռնութիւն
ընելուն անունը վաստակ և յաղթել
կը դնէ. ոչինչ և անպիտան բաներու
տէր ըլլալը, և սուտ և խաբէական
բաներ ունենալը՝ երջանկութիւն կը
սեպէ. ուտել խմելուն և ամօթալի
հեշտութիւններուն անունը ճշմա-
րիտ հեշտութիւն կը դնէ. և ասանկ
բաները և մանաւանդ հարստու-
թիւնը երջանիկ ընելէն կը դադրին՝
երբոր անոնք ունեցողը սկըսի անոնք
իր պիտոյիցը գործածելու. բայց
երբոր կորսնցընելու ըլլամք նէ՝ իրաւ
և ճշմարտապէս թշուառ կ'ըլլամք :

Բայց մեր երեւակայութիւնը
գէշի բանեցընելու վրայօք բան մը

տակաւին չ'եմ խօսած , որ երեւակա-
յութեան երեսէն մեղի հասնելու
մեծ գէշութիւնը այս է : Անոր այն-
քան կարողութիւն կուտամք որ՝ մեր
զգայարանքներուն տակը չ'ինկած
բաները շատ անգամ չ'եմք ուզեր
ընդունիլ . քանզի մեր մտացը մէջ
չ'եմք կրնար անոր պատկերը ձեւա-
ցընել : Ասոր համար է որ տղայք՝
և քիչ լուսաւոր խելք ունեցող մար-
դիկ , որ երեւակայութիւնը անոնց
վրայ տիրած է , յաւիտենականու-
թիւնը չի կրնալով տեսնել , որ ըզ-
գայութեան տակ չ'իմացվիր , մտքով
հասկցվելու բան է . չ'են հաւատար
որ յաւիտենականութիւն ըսված բա-
նը իրօք կրնայ ըլլալ : Խելքերնիս
զօրաւոր է ըսելով պարծենցողներուն
ալ խաբովիը ասկէց է . բնութենէն
զատ բան չ'են տեսներ , քանզի Աստ-
ուած մեղի այս աշխարհքիս մէջ միայն
իր գործքերուն վրայ կը տեսնուի , և
բնութիւնը՝ որ մէկ գերագոյն և ա-
մենակարող արարչի մը ստեղծուած-
ներուն ամէնը մէկ տեղ գալով ե-

դած միութիւնը կամ հաւաքումն է ,
 անիկայ միայն Աստուած կը սեպիլի .
 որ ըսել է թէ՛ անոնց համար Աստ-
 ուած չի կայ : Նմանապէս հոգինիս
 ալ չեն տեսներ . և թէպէտ իրենց
 ունեցած զգացմունքը անոնց բաւա-
 կան վկայութիւն կուտայ հոգւոյն
 գոյութեանը վրայ . և թէպէտ մար-
 դոյս խելքը եվելօք պառկեցընող ա-
 պացոյցներ կան՝ որ մարդոյս հոգ-
 ւոյն աննիւթութիւնը կը հաստա-
 տեն . բայց անոնց խելքովը ամէն
 բան նիւթ է : Աւրիշներ ալ կան որ՝
 մարդ մեռնելէն ետքը հոգւոյն ինչ
 ըլլալիքը չի կրնալով երեւակայել , և
 չի հասկընալով թէ մարմինէն ինչպէս
 կը զատիլի , աւելի դիւրին եկած է
 իրենց հաւատալը թէ հոգին ալ
 մարմնոյն հետ կը մեռնի : Այն ալ
 կը տեսնեն որ՝ քանի՛ որ անդամքնիս
 և գործարանքնիս թուլնայ և մաշի
 նէ՛ հոգինիս ալ անոր հետ կը տկա-
 րանայ . և անիկայ չի մտածելով թէ
 Աստուած մարդս երկու բանէ բաղ-
 կացեալ ստեղծեր է , և ասոնք իրա-

րու հետ անանկ միացուցեր է որ՝
 իրարու հետ շատ ամուր կապակցու-
 թիւն ունին, իրարու հետ կը շփոէթ,
 որպէս թէ երկուքը մէկ գոյացու-
 թիւն մը եղած ըլլայ: Ասկայն այս ալ
 պէտք էր անոնց գիտնալ, թէ հոգին
 զգայարանքներէն անանկ շատ տար-
 բերութիւն ունի որ՝ թէ որ զգայա-
 րանքները բան մը ազդելու ժամա-
 նակին հոգին հոն չ'եղածի պէս ըլ-
 լայ նէ՝ մարմինը և մարդը այն զգա-
 յարանաց ազդելէն բան մը հասկը-
 նալէք չ'ունի: Մտեմք թէ հոգիս բո-
 լորովին իրեն գաղափարներուն մէջ
 ընկղմած է, բնաւ բան մը ոչ կը
 տեսնեմ և ոչ կը լսեմ, և շատ ան-
 գամ ինձի մէկ զգացմունք պատճա-
 ռող բան մը կամ իմ ներսս կամ
 քովերս կ'ըլլայ, և ես բնաւ չ'եմ
 իմանար: () գոստոս կայսեր ատեն
 վան մատենագիրներուն մէկը ասոր
 վրայ սա կարեւոր տեղեկութիւնը
 տուած է. « Հոգին կ'ըսէ ուրիշ բա-
 յներու զբաղած ըլլայ նէ՝ աչքը կոյր
 յ'ըլլայ » :

Բողոք կիսկատար փիլիսոփայները, որոնց վրայ էր խօսածնիս, որ միայն երեւակայութեամբ և զգայարանքով կը տեսնեն. չ'են կրնար գործը պատճառէն տարբերել, և ո՛չ այլ և այլ պատճառները իրարմէ զանազանելով ամէն մէկուն յատուկ եղած գործը գտնել, ո՛չ ալ ճշմարիտ սկզբունքները գտնել, և անոնցմէ հարկաւ ելլելու մակաբերութիւնները և հետեւանքը հասկընալ:

Թէ որ մեր ըրածին պէս՝ երեւակայութեան իշխանութեանը տակը եղած բաները խելքի միջնորդութեամբը եղածներէն զատովի, այն ատենը դիւրին կ'ըլլայ գոնէ շատ բանի մէջ ճշմարիտ ու սուտ գազափարները իրարմէ որոշելը:

Չեմք կրնար պնդել՝ թէ ասանկ ընդարձակ և հարկաւ որ բանի մը վրայ պէտք եղածները ամէնն ալ առանց բան մը դուրս ձգելու խօսել կարող եմք. տակայն ըստճներուս պինտ վերջը մէկ խորհրդածութիւն մըն ալ եւեւ լցընեմք: Ահնդանի և

արդիւնաւոր երեւակայութիւն մը
 միշտ և անդադար գովեստ կ'ընդու-
 նի : Արդարեւ՝ թէ որ դատողու-
 թիւնը իրեն կանոն բռնէ նէ՛ գովե-
 լու արժանի բան չէ՛ չ'եմք ըսեր :
 Բայց անոր հետ համաձայնելն ալ
 քիչ անգամ կը սրտասհի . դատողու-
 թեան դնելու լուծը հնազանդու-
 թեամբ ընդունող երեւակայու-
 թիւն՝ քիչ մարդու քով կը դտնրվի .
 համառօտ ըսեմ . ասանկ փայլուն և
 կենդանի երեւակայութիւն ունե-
 ցողները թէպէտ հասարակաց խել-
 քին նման խելք չ'ունին , բայց շատ
 մեծ գովեստ կ'ընդունին . որպէս թէ
 բոլոր աշխարհքիս խելքը իրենց քու-
 վըն է . անկէց դուրս խելք չ'է մնա-
 ցեր : Ատ աղէկ կ'ըլլար այն ալ՝
 թէ որ անոր տուած գաղափարնե-
 րուն մէկ քանին ամուր բռնելով՝
 որ բնութիւնը երեւակայութեան
 միջնորդութեամբ մեր մտքին մէջը
 տպաւորեր է , այնքան խորունկ տը-
 պաւորված չ'ըլլար , որ անհնար չ'ըլ-
 լար մեզ անոնք աւրելը . քանզի շատ

անգամ մեր խնացականութեան մէջ
մեծ շիտթներ կը սրատճառեն, և
խենթութեան ալ իրենք շատ մօտ
կ'ըլլան՝ ու մեզ ալ կը մօտեցընեն :

Արեւակայութիւնը մեր խելքին
վրան տիրելու չափ արձակ թող տը-
ված չ'ըլլամք, և խելքերնիս երևա-
կայութեան սանձը բողորովին իր
ձեռքէն ձգած չ'ըլլայ նէ՝ թէ՛ ասոր
և թէ՛ զգայարանքներնուս և կիրքեր-
նուս դէմ՝ դնելու զօրաւոր դեղեր-
նուս մէկը՝ երեւակայութիւնը երե-
ւակայութեան դէմ հանել է : Օգա-
յարանքին ու կիրքերուն դէմ դեղն
ալ այս է ըսինք . քանզի ասոնք ալ
շատ անգամ իրենց ուժը երևակա-
յութենէ կ'առնեն : Ինչո՞ւ համար
հին և կռապաշտութեան ատենի ի-
մաստունները, և անոնց մէջ ալ ամէ-
նէն երեւելիները, ինչպէս են Սոկ-
րատ, Պլատոն և Քսենոփոն, յա-
ճախ մեզի կապըսպրրեն որ մահը
մըտովնուս չի հանեմք . որ այս մտա-
ծութիւնս մեզի շատ ազդու է և հո-
գիններնուս կը դըպչի : Ինչո՞ւ համար

կ'ըսէին որ՝ մարդոյս բոլոր կեանքը՝
 աղէկ մեռնել սորվելու համար ա-
 շակերտութեան պէս բան մըն է :
 Քանզի՝ երեւակայութեան պատուա-
 կան և մեծագին բռնած ոչինչ բա-
 ներէն մեզ զատելու ասկէց զօրաւոր
 բան չի կրնար ըլլալ : Ի՛նչ բան որ
 մեզի ախորժեղի կ'երևինէ՝ մեր բա-
 նաստեղծներուն մէկը ըսած է որ
 « Ամէն բան երկու երես ունի . կէսը
 « պակասութիւնները կը ցրցընէ . և
 « կէսը գեղեցկութիւնները » : Քեզ
 գլխէ հանող և իրեն կապող հեշտու-
 թիւններուն՝ անդադար և առանց
 հոգնելու դէմ բեր անոնց սովորա-
 բար իրենց ետեւէն բերած գար-
 շելի և փնասակար հետեւանքները ,
 որ քու երեւակայութիւնդ ալ ա-
 նոնք մէկ աղէկ կերպարանքի մը մէջ
 չի կրնար խօթել : Այն ատենը քե-
 ղի աղէկ և զարմանալի գեղեցկու-
 թեամբ երեւած երեւակայութիւն-
 ները անանկ երեւեղին կը կորսըն-
 ցընեն , ուրիշ կերպ կ'երեւին : Ասի-
 կայ ընելու համար կրօնքը փիլիսո-

փայութենէն եւեւ կ'օգնէ մեզի :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՂԲԻՒՐ

Կերբ :

ԻՆՔԸԶԻՆՔ Թող տուող մարդ մըն ալ չի կայ որ կրից որոգայթին մէջ ինկած չ'ըլլայ : Եւ վերջապէս ասոնց երեսէն կորուստ չի գացող ալ խիստ քիչ կը գտնուի : Սակայն մարդ ալ չի կայ որ ասոնց մեզ խաբէրու համար գործածած ձեւերնին և նենգութիւննին չի գիտնայ :

Սկսինք անձնասիրութենէն : Այս անունովս այն սէրը չ'եմ իմանար , որ ամէն իմացական և զգացող արարած բնապէս ունի , և մեր մէջն ալ բնական է . և առանց անոր ուրիշ բաները ո՛չ սիրել կրնամք և ո՛չ ատել : Այլ այն ինքնասիրութիւնը , որ մարդ ինքրզինք անով իրեն և ուրիշներուն հետ կը բաղդատէ , և զինքը վեր կը գտնէ , մեր գոյութեանը և մեր ա

ղէկու թեանը գաղափարը ունողը և
 սրահողը այս սէրն է : Ասիկայ ինքնի-
 բեն կը հաւնի . և այս անձնասիրու-
 թիւնը կամ ինքնասիրութիւնը , այս
 մտքիս վրայ հասկընալով , մեր մտքին
 վրայ մեզ յամառեալ կը սնդէ , այն
 չինայիր թէ հիմը աղէկ է մի , ծոռ
 է մի : Վ'նչ որ իրեն հակառակ կու-
 գայ նէ՝ գրեթէ անոնք ամէնն ալ
 ետ ձգել կուտայ անարգելով , քըն-
 նութեան ալ անարժան սեպել կու-
 տայ : Այլ մեր մտքի կարծիքը առաջ
 քալեցընելու համար մեզի սուտ գա-
 ղափարներ և խելքի հակառակ խօս-
 քեր և խաբէական փաստեր բանե-
 ցընել կուտայ : Վ'նութիւնը մեզի
 ի'նչ աղէկ յատկութիւն տուեր է
 նէ՝ անձնասիրութիւնը անոնք մեր
 աչքին մեծ կը ցըցընէ . սրահասու-
 թիւննիս կը ծածկէ . և մեր ամէն
 տկարութիւններուն արդարացընե-
 լու պատրուակ և պատճառ կը գըտ-
 նէ : Վ'նչ բան որ մեզնէ է նէ՝ մեզի
 աղէկ կը ցըցընէ . ուրիշն եղածնե-
 րուն կամ բնաւ չի հաւնելիք կ'ընէ ,

կամ երեսը թթուեցրնելով հազիւ
 թէ հաւանութեան նշան մը կու-
 տայ : Ի՛նչ բան որ մերն է՝ կամ
 մենք կը սիրեմք անիկայ , անոնց հա-
 մար մեզ կը կուրացրնէ . և մեր չի
 սիրած բաները անիրաւութեամբ
 քամահրել կուտայ : Սեր ամէն մէկ
 կիրքին համեմատելով՝ անձնասիրու-
 թիւնը երբեմն խոշորացոյց ասպակի
 կը նմանի , որ ի՛նչ բանի վրայ նայիմք
 նէ մեր աչքին մեծ կ'երեւի , եր-
 բեմն մանրադիտակ կը նմանի , որ
 նայած բաներնիս չափէն աւելի կը
 պզտիկցրնէ , կամ իրենց բուն կեր-
 պարանքէն կը հանէ , ուրիշ կերպ
 կը ցրցրնէ :

Անիրաւութեան և կուրութեան
 ուրիշ մէկ աղբիւրն ալ՝ մեր անձին
 օգուտը նայիլն է . և ասոր ալ ներ-
 գործութիւնը քիչ չէ : Իրեն օգու-
 տէն աւելի ճշմարտութեան կանոն
 և արդարութեան չափ չի ճանչնար .
 օգուտ ըսածն ալ՝ միայն ներկայ ժա-
 մանակին օգուտն է : Իր չափազան-
 ցութիւնները իր աչքին առջին

արդարացրնելու համար աղէկը գէ-
 ջի և մոլութիւնը առաքինութեան
 կը փոխէ = Տրլամօդ ըսեր է . “ Հահը
 ” անունը փոխեր՝ իրաւունք է եղեր .
 ” և առաքեալ և քարոզիչ եղած ա-
 ” տենը մի և նոյն բանին անուն մը
 ” տալով մեզի անիկայ կ'արգիլէ . ու-
 ” ըիչ անուն մը տալով՝ ընելու հը-
 ” բաման կուտայ ” :

Փառասիրութիւնը , սէրը , հեշ-
 տասիրութիւնը , ատելութիւնը ,
 բարկութիւնը , նախանձը , վրէժ-
 խնդրութիւնը , վերջապէս՝ ինչ
 կերք կայ որ պինտ անձոռնի խաբէ-
 ութիւններու աղբիւր չ'ըլլայ . և
 սաստկութեան աստիճանի մը հաս-
 նելով՝ ամէն տեսակ գէշութիւն-
 ներ ընելու բաւական չ'ըլլայ : Արն
 է որ՝ իրեն նպատակ բռնած վախ-
 ճանին վրայ և իրեն յարած բանին
 բնութեանը վրայ մեզ չի խաբէ . ին-
 քըզինք հաճեցրնելու համար գոր-
 ծածած միջոցները օրինաւոր չի ցը-
 ցրնէ . և մեզի իրեն չի կրնալ ճա-
 րելու հեռաւոր մէկ երջանկու-

Թեան մը յուսով չի խաբխբէ : Աիր-
քը հրամայած ատենը միտքը կը շե-
փոթի, և դատողութիւնը ձայնը կը
կտրէ : Քանի որ կիրքը մեզ խռո-
վութեան մէջ ձգէ ու մեզի տիրէ
նէ՛ այնքան մեր ամէն գաղափար-
ները կը շփոթէ, ներքի վրայ կ'ընէ,
յստակութիւննին և ճշդութիւննին
կը պակսեցնէ : Մէկ յստակ ջուր
մը, մէկ մաքուր վտակ մը՝ դիմացը
եկած բանին ճիշդ և հաւատարիմ
պատկերը կ'երեւցնէ . մէկ պզտիկ
հով մը անոր երեսին յուզմունք մը
բերածին պէս՝ թէ՛ և դիմացի դըր-
ված բաները նոյնը ըլլան, մէջի ե-
րեւցած պատկերը կը շփոթի, և
հաւատարիմ նմանութիւնը անյայտ
և աներեւոյթ կ'ըլլայ :

Մեզ մեր կրիցը դէմ զգուշացը-
ները բաւական չէ՛ . ուրիշներուն
կիրքէն ալ կասկածիլ սորվելու է .
անոնց տպաւորութենէն և ազդե-
ցութենէն մեզ պաշտպանելու է .
և այս ազդեցութիւնս մեր երեւա-
կայութեանը և կրիցը և զգայու-

Թեանցը հետ մէկէն համեմատու
 թիւն ունենալով՝ հարկաւորագէս
 մէկ համակրու թիւն մը կը պատճա
 ռեն . որով մեզի սիրելի կամ ատելի
 կ'ըլլան : Օտարին կիրքը մեզի ալ
 կը պլըշկի , մեզի ալ նոյն կիրքը կ'անց
 նի . ելեւրիսյի պէս միանգամայն սաս
 տիկ և շուտ կ'ազդէ մեզի . կիրքը
 և դատումը և նախապաշարմունք
 ները մեր քովնեներէն և մեզի հետ
 խօսողներէն շուտ մը մեզի կ'անցնին .
 և խօսքով և ձեռքի և ոտքի շարժ
 մունքով և գործքով՝ սրբան կրնան
 նէ այնքան հեռու իրենց ազդեցու
 թիւնը կը ծաւալեն :

ՎԵՑԵՐՈՐԴ ԼՂԲԻԻ

Սուտ կանոններ . սուտ սկզբունքներ :

Մէկ սուտ սկզբունք մը բըռնէ ,
 կ'սկըսիս անկէց սուտ սուտ հետե
 ւու թիւններ հանել , ամէնը իրարմէ
 անձոռնի և դուցէ իրարմէ ելել
 վտանգաւոր :

Օրինակի համար, սո՛ս սկզբունքս
 դիր որ՝ ի՛նչ բանի գործածութիւն
 գէշի կրնայ տարվիլ նէ՛, այն բանը
 վերցընելու է: Այն ատենը՝ ինչպէս
 որ վերը ըսինք, որովհետեւ բան մը
 չի կայ աշխարհի մէջ որ գէշի չի տար-
 վի, անանկ օգտակար բան մը չի կայ
 որ ուզողը անկէց վնասակար հետե-
 ւութիւն մը չի հանէ, սկզբունքէդ
 ելելու հետեւութիւններովդ հարկ
 կ'ըլլայ քեզի ամէն կերպ կառավա-
 րութիւն և ամէն կերպ օրէնք մէ-
 կէն վերցընել: Արտեսնես որ՝ մի-
 այն մտօքըդ հաշիւ ընելով քեզի
 շատ մեծ օգուտ ցրցընող բանը գոր-
 ծի եկածին պէս՝ անկէց ալ գէշ և
 վնասակար բան չ'ըլլար: Այն ատե-
 նը հարկ կ'ըլլայ քեզի սո՛ս առածը
 ընդունիլ որ կ'ըսէ. «Շատ անգամ
 »աւելի աղէկէն մեծ թշնամի չի կըր-
 »նար ըլլալ աղէկին »:

Մեր ծանօթութիւններուն մէկ
 հատիկ հիմն սո՛ս խօսքը դիր, թէ մի-
 այն ամենայայտնի բաները պէտք է
 ընդունիլ. ի՛նչ բան որ երկրաչափա-

կան կանոններով հաստատուած է
 նէ՝ միայն անիկայ իբրեւ ճշմարիտ
 բռնել : Այլ բնական և բարոյական
 ստուգութիւնները , որ ասոնք ալ
 ուրիշ կարգի մէջ մէկ բանին ճշմար-
 տութիւնը կը հաստատեն , և աւել-
 լի շատ անգամ ասոնք 'ի դործ դնել-
 լու կը հարկադրիմք , ասոնք ամէնն
 ալ նոյնժամայն կ'իյնան , կը ոչընչա-
 նան : Անկէց ետքը հաւանականու-
 թեան բոլոր հաշիւները՝ և ճշմար-
 տանմանութեան կանոնները՝ որ մեր
 կենաց սովորական ընթացքը կանոնի
 կը դնեն , անընդունելի կ'ըլլան , և
 գրեթէ ամէն բանի մէջ՝ մեր դատ-
 մանը հակառակ՝ կախ մնալու կ'ըլ-
 լամք , ընելիքնիս կամ գիտնալիքնիս
 որոշելու բաւական ապացոյց և
 պատճառ չ'ունենալով : Ասոնց պէս
 է այս սկզբունքս ալ . տեսածէդ զատ
 բանի հաւատալ պէտք չէ : Աւրիշ
 մարդոց վիսյութիւնը , անցած դա-
 րու մարդոց ըրած փորձերը , ինչ
 բան որ պատմութեանց մէջ գրված
 պահված է՝ ասոնց մէկն ալ բնաւ

հեղինակութիւն մը չ'են ունենար .
 և մեզի համար՝ չի դրուածի պէս
 կ'ըլլան : Հում և Վճնտուա և Վճրու
 դէրտամ քաղաքներուն կենալը
 խնդիրի տակ կը մտնեն . Վճքտանդը
 կամ Աեսար անունով մարդիկ աչ-
 խարհք եկած ըլլալնուն վրայ երկ-
 բայիլ պէտք կ'ըլլայ :

Փիլիսոփայներուն իրենց ըսածին
 հակառակը ըսել չի տալու համար՝ ա-
 լելի խելացութեամբ ու ճշմարտու-
 թեամբ ամուր կենամք սա խօսքին
 վրայ , թէ այն բանն որ յայտնի է՝
 միայն անիկայ իբրեւ յայտնի բըռ-
 նեմք , միայն ստոյգը իբրեւ ստոյգ
 բռնեմք , և մէկ բան մը մինչեւ ըս-
 տուգութեան կանոններով չի ստու-
 դեմք նէ՝ անոր համար ստոյգ չ'ը-
 սեմք : Այլ ինչ բան որ հաւանական
 կամ ճշմարտանման է նէ՝ ունեցած
 հաւանականութեան կամ ճշմար-
 տանմանութեան աստիճանովը բըռ-
 նեմք :

Ար մնայ հիմայ ճիշտ և անվրէպ
 ծանօթութիւն ունենալ թէ՛ գաղա-

փարներուն և թէ՛ ներքին զգաց-
 մունքներնուս յայտնութեանը վրայ :
 Եւ թէ՛ յատկապէս ստուգութիւ-
 նը որն է՝ հաւանականութիւնը որն
 է : Թէ՛ որ մենք այս բաներուս վը-
 րայ երկան խօսելով՝ ասոնց ամէն
 մէկուն նշանները զատ զատ տալու
 ըլլայինք, և կանոնները ցրցընէինք
 նէ՛ խօսքերնիս շատ կ'երկննար, և
 մեր սահմանէն դուրս կ'ելլէինք :
 Աստի ասոնց վրայ խօսիլը՝ տրամա-
 բանութեան գիրքերու կը ձգեմք .
 որոց մէջ շատ գերագոյն և սլատուա-
 կան բաներ կը գըտնելին :

Առ հասարակ ամէնուն ընդու-
 նած մէկ կանոնն է որ՝ գերագոյն
 օրէնք՝ հասարակութեան փրկու-
 թիւնը կամ օգուտը ըլլալու է :
 Բայց ի՞նչ կ'ըսես : Թէ՛ որ հասարա-
 կութեան փրկութիւնը ըսելով
 հասկըցած բանը՝ ազգային իրա-
 ւանց դէմ բան չ'ըրած չի կրնաս
 ձեռք ձգել, ասոր համար ամէն
 սլարտականութիւն, և ամէն սրբա-
 զան սեպւած կասկակցութիւնները

ուղբի տակ առնել պէտք ըլլայ նէ ,
այս հասարակաց փրկութիւն ըսլած
բանը՝ որ ասանկ գէշ հասկըցված
և գէշ անուն դրւած է , պէտք էր
մի ձեռք ձգելու համար ամենայն
արդարութեան և բարոյականի , և
մարդոյս ապահովութեան հիմն ե-
ղած բաները , և մարդկային ազ-
գին հանդարտութեանը և հանգըս-
տութեանը օրէնքները ոչինչ ընել ,
այդ չ'ըլլար : Անանկ է նէ՝ ճշմարիտ
գիտուններուն հետ մենք ալ կ'ը-
սեմք , և ամէնուն ականջը աղէկ մը
խօթելու համար կրկնել ալ հարկ
է , թէ “Անիրաւութիւն եղած բա-
” ներուն մէկն ալ չի կրնար ճշմար-
” տապէս օգտակար ըլլալ ” :

“ Չայն բազմաց՝ ձայն Աստու-
ծոյ ” խօսքն ալ հասարակութեան
մէջ էփ աղէկ բանած խօսք մըն է :
Ասոր վրայ կ'ըսէ Վօք . “ Ամենեւին
” չ'եմ գիտեր կոր որ Աստուած մար-
” դոյ պատգամ տուաւ նէ՝ բազմու-
” թեան բերնովը տուաւ մի . կամ
” թէ բնութիւնը իրեն գաղտնիքը

„բաղմուլթեան ձեռօք յայտնած ու
 „նի՞ մի” : Ամէնուն գիտցած բանն
 է որ՝ հասարակութիւնը ինչպէս որ
 խօսեցրնես նէ՛ անանկ կը խօսի, շատ
 անգամ իրեն առաջնորդողներուն
 խօսքը իր կարծիքին վրայ կ'ազդէ .
 ուղած գիւերնին կրնան դարձընել,
 որ կողմէն օգուտ մը տեսնեն իրենց
 նէ՛ այն կողմը կը դարձընեն : Ամէ-
 նուն գիտցած բանն է որ՝ հասարա-
 կութիւնը ո՛չ մէկ բանին ճշմարտու-
 թիւնը՝ և ո՛չ մէկ մարդուն արդիւնք
 ունենալը կամ արժանաւոր ըլլալը
 աղէկ չի կրնար դատել, թէ որ ընտ-
 բուլթիւնը անոր թողուս նէ՛ սրխա-
 լիլը կը տեսնես : Պաքոն կ'ըսէ, “ Հա-
 „սարակութիւնը մէկ մարդու մը ար-
 „ժանաւորութիւնը դատելու և գո-
 „վելու ըլլայ նէ՛ գետի ջուր կը նը-
 „մանի, թեթեւ և ուռեցած բան
 „մը գտնէ նէ երես կը հանէ, ծանր
 „և ամուր և հաստատուն բաները
 „թող կուտայ որ տակը ինջնան” :
 Թէ որ ուղղակի հասարակութեան
 օգտին վերաբերեալ բան մըն է ա-

նոնց դատելիքը նէ՛ գրեթէ միշտ ներկայ օգտին նայելով կը վճռէ . ըլլալիքը ո՛չ կը մտածէ , և ո՛չ ալ կըր նայ գուշակել : Արդէացիները իրենց դրացի ազգի մը հետ կտոր մը գետնի վրայ վէճ ունենալով , որ երկու կողմն ալ մերն է կ'ըսէին , դատերնին Հռոմայու հասարակապետութեանը յանձնեցին . անոնց տալու վճռոյն հնազանդիլ խոստացան : Այս իրենց ընտրած դատաւորը անամօթաբար վճիռ ըրաւ որ՝ ի՛նչ տեղի վրայ էր կռիւը նէ՛ այն տեղը իրեն տրվի . և այսպիսի յայտնի անիրաւութիւնով քիչ մնաց որ իրեն բոլոր դաշնակիցները իրեն թշնամի կ'ըլլային կոր :

Այս ըսել չ'է որ հասարակութիւնը երբեմն ազնիւ զգացմունքներ և անկեղծ շիտակութիւն չ'ունենար . որով շատ խմատուն մարդիկ անգամ կարող ըլլան պարծելու . քիչ մը ետքը ասոր մէկ օրինակը Աթենացւոց քով պիտի տեսնեմք : Իսկ այս ասոնք հասարակութեան վրայ

եկող անցնող տրամագրու թիւններ
էն . որ ասոնց աստուծինիլ չ'ըլար :

Սակայն ասոր հաւանութիւն
տալու է որ՝ թէպէտ բազմաց ձայնը՝
առաջին ըսածին պէս ըլլալու շատ
բան կուզէ , բայց ասկէց այն չի հե-
տեւիր որ հասարակաց մէջ դորացած
կարծիք մը ը'լայ նէ՝ անիկայ նետե-
լու է . որպէս թէ ամէնն ալ սուտ
և ծիծաղական բաներ եղած ը'լան :

Սոր հակառակ չափազանցութիւնը
կ'ընեն սմանք , սրոնց համար \ ջք կ'ը-
սէ . “ \ յն բազմագլուխ գազանը մէկ
” կողմ մը բռնածին պէս՝ ասիկայ
” բաւական կը սեպիլի կոր ըսելու թէ
” ճշմարտութիւն չի կայ անոր մէջ : . .
” \ յս հազուագիւտ խեղացիները՝ մի-
” այն սովորականէ դուրս եղած ծանօ-
” թութիւնները կ'ախորժին . և ինչ
” բան որ հասարակութիւնը ամէնն
” ալ միակերպ կ'ընդունին՝ գիտես թէ
” անոր վրան գազանին կնիքը զարնը
” վածի պէս կուգայ իրենց . և անանկ
” կը կարծեն որ՝ ասանկ բաներու ա-
” կանջ գնելը կամ ընդունիլը՝ իրենց

„ սուր մտքին և խելացիութեանը չ'իւ
 „ նար : Վեւբերնին մտքերնին՝ արտա
 „ ռոց կարծիքներու վրայ է : Մասնկ
 „ ները կը փնտռեն և կ'ընդունին և
 „ ուրիշներուն կը սորվեցընեն : Այլ կը
 „ յուսան որ հասարակութենէն ա
 „ սով պիտի զատվին : Վայց մէկ բան
 „ մը հասարակութեան ամէնուն մէ
 „ կէն ընդունելի ըլլալը կամ չ' ըլլալը՝
 „ անոր ճշմարիտ կամ սուտ ըլլալուն
 „ նշան չ'է . ուստի մենք ճշմարտու
 „ թիւնը փնտռած ժամանակնիս ա
 „ սոր ամենեւին նայելու չ'եմք : . . .
 „ Ստոյգ է որ՝ ռամիկը աղէկ չի կրնար
 „ տրամաբանել . և անոր համար պէտք
 „ է անոր ըսածներուն վրայ կասկա
 „ ծիլ . և անիկայ անսխալ առաջնորդի
 „ տեղ չի դնել՝ և անոր չի հետեւիլ :
 „ Վայց հասարակութեան կարծիքը
 „ մէկ դի ձգող փիլիսոփայները իրենք
 „ ալ անճոռնի սխալներու մէջ ինկած
 „ են . որ ռամիկներուն սխալներուն
 „ պէս է , , և շատ անգամ անկէց
 „ գէշ ալ է :

Սկզբունքներուն՝ կամ մարդկա

յին վարուց կանոն բռնելու զրուց
 վաճքներուն մէջ մէկ հատ մը կայ՝
 որ շատ մարդիկ իրենց կանոն կը բռ-
 նեն . և կ'ըսեն . «Վէտք է որ մարդ
 իրեն նախնեացը կրօնքին մէջ ապ-
 ղի ու մեռնի » : Այլ ասիկայ անանկ
 կը ցըցընէ որ՝ աշխարհքի մէջ ամէ-
 նէն աւելի հարկաւոր եղած բանին
 վըայօք մէկ մարդ մը մոլորութեան
 մէջ ինկած ըլլայ նէ՝ այն մոլորութիւ-
 նը որկէց որ սորվեր է նէ անոր խօս-
 քէն դուրս չ'ելլէ . և ասով որպէս
 թէ անոնց մոլորիլը օրինաւոր եղած
 կ'ըլլայ : Բայց մեծնալնուս ետքը
 մենք պարտական եմք մեզ լուսաւո-
 րելու : Աշխարտութեան հիմը աւե-
 լի ապահով ըլլալու է . և մէկ մարդ
 մը իր խելքին տէրը ըլլալէն ետքը
 անանկ գիտնալու չ'է որ՝ կրօնք մը
 պէտք է մարդու . իրաւ եղեր սուտ
 եղեր հոգ չ'է :

Ռամիկներուն համար մէկ կանո-
 նի մը պէս բռնելով ինչ է այս խօսքս
 ալ . «Ամէնը ինչ ընեն նէ՝ դուն ալ
 յայն ըրէ » : Բայց կ'ըլլայ որ , թէ որ

ուրիշ մարդիկ ամէնն ալ, կամ գոնէ
 շատը գէշ ճամբայ մը բռնած ըլլան
 նէ՛ անոնց պէս ընողը ինքրզինք պի-
 տի կարենայ արդարացընել, ըսել
 կ'ըլլայ որ՝ թէ որ մարդոց շատը ի-
 րենց երջանկու-թիւնը ամօթալի
 գործքերուն վրան սեպելու ըլլան՝
 և իրենց փառքն ու մեծու-թիւնը ի-
 րօք պզտիկու-թիւն բերող բաներուն
 վրայ, և իրենց երջանկու-թիւնը՝ զի-
 րենք երջանկու-թեանէ հեռացընող
 բաներուն վրայ գնելու ըլլան նէ՛ ա-
 սոնց կարծիքին նայելով պէտք պի-
 տի ըլլայ բաւական անմիտ ըլլալ, որ
 մարդ ինքրզինք իր աստիճանէն ձգէ,
 սղտիկ և պարասպ և ոչինչ մարդոց
 կարգը անցնի, իրեն իրական տան-
 ջանք ու տառապանք պատրաստէ,
 և ուրիշներուն ըրածին պէս կ'ընեմ
 կոր ըսելով ճամբէ ելլէ, և ինքրզինք
 կորսընցընէ :

Հատ մարդու համար՝ « Բընու-
 ՞թեան հետեւիլ պէտք է » ըսելն
 ալ մէկ առածի մը տեղ դրված է :
 Թէ որ ասիկայ ինչպէս որ հասկընալ

պէտք է՝ անանկ հասկըցիլի նէ, ճըշ
 մարիտ կ'ըլլայ. քանզի բարեկարգ-
 եալ բնութիւնը միշտ խելքի համե-
 մատ կերթայ. որովհետեւ խելքն
 ալ մարդոյս բնութեան հարկաւոր
 մէկ մասն է: Բայց մեր հիմակլան
 Ապիկուրեաններուն առած մտքովը
 առնելով՝ սուտ կ'ըլլայ. քանզի ա-
 նոնք այս ըսելով մեզ հաւանեցընել
 կուզեն որ՝ աւրբլած և մոլի բնու-
 թիւնն անգամ մեղնէ ինչ որ ուզե-
 լու ըլլայնէ ընելու է:

Ռուսո մէկ տեղ մը կ'ըսէ որ՝ ես
 գէշ սկզբունքները գէշ գործքերէն
 աւելի կ'ատեմ. և պատճառն ալ
 կուտայ. քանզի անկարգ կիրքերն են
 որ մարդոյս գէշ բան ընել կուտան.
 բայց գէշ սկզբունքը մարդոյս նոյն
 իսկ խելքը կաւրէ. և աղէկի գառ-
 նալու ճամբաները ամէնը մէկէն կը
 գոցէ: Այս ալ ըսենք որ կիրքերը
 կ'անցնին, սկզբունքները կը մնան:

Սուտ տրամաբանեւ :

ԱՕԹ իրեն ճարտիպին ճապ վրայ
 շինած գրքին մէջ հաստատած է որ՝
 հաւաքաբանութեան ձեւերը չի
 ճանչցող և գործ չ'ածող մարդն ալ
 շատ աղէկ կրնայ տրամաբանել . և
 ասիկայ է՛փ աղէկ դիւրաւ հասկցվե-
 լու կերպով է հաստատած : Արիս-
 տոտէլէն գիտեմք հաւաքաբանու-
 թեան ձեւերը . բայց Արիստոտէ-
 լէն առաջ եղող մարդիկ ալ աղէկ
 կը տրամաբանէին . և անկէց ետքը
 հաւաքաբանութիւն գործածող մար-
 դոց մէջն ալ գէշ տրամաբանող շատ
 կը գտնուի : Ասոնք շատ անգամ
 նիւթը աւելի սլծրութէն զատ բա-
 նի չ'են գար . և այն ատենն է որ
 տրամաբանութիւնը մարդուն խել-
 քը կ'ըսպաննէ : Անոր համար Աօք
 ամէնէն աւելի խօսքի սկիզբը որկէց
 առնելուին վրայ , և ճիշդ հետեւո-
 ղութիւն հանող գաղափարները ի-

բարու հետ կապելուն վրայ կը խօսի:
 Սակայն այս ալ չ'եմք կրնար ուրա
 նալ, որ հաւաքաբանական արուես
 տը պարզութեան մտած ըլլայ նէ՝
 գոնէ քանի մը բաներու մէջ կրնայ
 տրամաբանելուն եղանակը աւելի
 կարճ և աւելի ազդու ընել, կամ
 խօսվածքին մէջ գտնելու ազդու
 թիւնը դիւրաւ երեւան հանել:

Ի՛նչ որ է նէ, մենք այս տեղս
 մեր ձեռքէն եկածին չափ համա
 ոտ խօսքով կ'ուզեմք սուտ տրա
 մաբանելուն սովորական եղած պատ
 ճառները հասկըցընել: Ասկէց առաջ
 նշանակած մոլորութեան աղբիւր
 ներնիս մէկ դի առնելով՝ այս սուտ
 տրամաբանութեան պատճառները
 սա ըսելիքներուս մէջ կրնամք բռ
 վանդակել:

1. Աստիճաւոր կամ վրան վէճ
 վերցընող բաները իբրեւ սկզբունք
 բռնել, մէկ անստոյգ բան մը հաս
 տատելու համար մէկ ուրիշ անստոյգ
 բան մը խօսիլ, մթին բան մը բա
 ցատրելու՝ ուրիշ մութ բան մը գոր

ծածեւ, վիճի տակ եղած բանք
վճարված ճշմարտութեան պէս
բռնեւ, և անիկայ ուրիշ բան մը
հաստատելու համար ապացոյց բե-
րել: Ասոնք ամէնն ալ անանկ բա-
ներ են որ՝ տրամաբանութեան մի,
և նոյն պակասութեանը տակը կը
մտնեն:

Նոր փիլիսոփայութեան (Վճու-
դէնականներուն փիլիսոփայութեա-
նը) կոյր կուսակիցներուն որոնն շե-
նած գիրքը կ'ուզես նէ բաց, այս
դեղձոմն սիլեան ըսված թերութեան
հաղարաւոր օրինակները կը գտնես,
և այս այն թերութիւնն է որ՝ վիճ-
մունքի տակ եղած բանը իբրեւ ճշ-
մարիտ կը բռնէ, և այն խօսքը ա-
պացոյց կուտայ՝ որ առաջ անիկայ
հաստատելու համար ուրիշ ապա-
ցոյցներ պէտք են: (Օրինակի հա-
մար ձեռք առնեմք Դրոմի-ն Բնո-
թեան ըսված գիրքը, և անոր մեջէն
բանի մը խօսքերը ընտրեմք, որով
հեղինակը կ'աշխատի մեր խելքը
հասցընելու թէ՛ ի՛նչ բան որ մեր

մէջը և մեզնէ դուրս կայ՝ ամէնն ալ
նիւթոյ և շարժման գործքեր են :

“ Թէ որ կ'ըսէ մէկը մեզի հար-
” ցընէ թէ՛ մէկ բան մը զգալը ո՞ր
” տեղէն կրնայ ունենալ նիւթը , ա-
” նոր պատասխան կուտամք թէ՛ ա-
” սիկայ կենդանիին անդամքներուն
” և գործարանքներուն կարգադրու-
” թենէն առաջ եկած բան մըն է :
” Անանկ որ՝ անկերպ և անզգայ նիւթ
” մը կենդանի եղածին պէս՝ անզգայ
” ութիւն չի մնար վրան , և այս նիւ-
” թըս կենդանի կ'ըլլայ , երբ որ կեն-
” դանիին հետ կը միանայ : Օգտաւ
” ըսածդ՝ մեր գործարանքներուն
” մէկ թօթվրովին է . . . և խորհրդա-
” ծո-վի-նը՝ մեր ներսի գործարանքին
” ինքըզինք մէկ եղանակի մը մէջ խօ-
” թելու և իր վրան դառնալու ու-
” նեցած կարողութեանը մէկ գոր-
” ծադրութիւնն է : Ասպո-ճը ուղե-
” ղին այն կարողութիւնն է , որով
” իրեն դուրսէն առած կամ իր ներ-
” սը կրցած արթնցուցած գաղա-
” փարները իրարու հետ կը բազդա-

„տէ՛ անոնց իրարու հետ ունեցած
 „համեմատութիւննին և գործքեր-
 „նին հասկընալու համար” :

“Մարդս մէկ զգայուն նուագա-
 „բանի մը կրնամք նմանցընել, որ
 „ինքնիրեն ձայն կուտայ, և ինքնի-
 „րեն կը հարցընէ թէ ո՞վ է իրեն
 „այն ձայները տալ տուողը : Չի
 „տեսներ, բայց եթէ զգայուն ըլլա-
 „լուն սրատճառաւը, ինքըզինք կը
 „չալէ, չալողն ալ ինքն է՝ չալիողն
 „ալ, և ինչ բան որ իրեն կը գալչի՝
 „զինքը կը չալէ և ձայն հանել կու-
 „տայ” :

“Վիպակոյտ-Բիւն կամ ինքըզինք
 „գիտնալ ըսվածը՝ մէկ որոշեալ
 „թօթվովիլ մը կամ ուղեղին մէկ
 „մասնաւոր եղանակի մը մէջ մանեղն
 „է : Խելչ, Իմաստ-Բիւն, Բարո-Բիւն,
 „Խոհեմո-Բիւն և առաջինո-Բիւն կ'ըս-
 „վին այն հաստատուն կամ գիւրաւ
 „անցներու եղանակները կամ տրա-
 „մադրութիւնները, որ մեր ներսի
 „գործարաններնուս մէջը կ'ըլլան,
 „և մարդկային տեսակին կենդանի-

„ներուն գործել կուտան : Այնպէս
 „լուսինը մէկ մարդուն դէպ ՚ի ին
 „քը գալը , և որպէս թէ ծանրու
 „թեամբը դէպ ՚ի իր վրայ քաշուիլն
 „է . անգործութեան պէս բան մըն
 „է : Այլ բանի մը յօժարութիւն
 „ունենալը՝ յգողութեան պէս բան մըն
 „է . որ բոլոր աշխարհքս գտնուած
 „բաներուն վրայ կը տեսնեմք : Ատե
 „լութիւնը՝ ճշման ըստ ըստի պէս է .
 „քանզի բոլոր էակները այս կեր
 „պով բնութիւնը իրարու կը մօտե
 „ցնէ , երբ որ իրարու վրայ ներ
 „գործելու սահմանի մէջ են . և
 „ճշման անոնք իրարմէ կը զատէ ” :

Այլ չի հասկընար՝ որ այս այլ և
 այլ խօսքերուն մէջը՝ որ ասոր պէս
 ուրիշ շատ մըն ալ կրնամք գանել ,
 հեղինակը նոյն իսկ վէճի տակ եղած
 բանը իրեն խօսքերուն հիմն կը դնէ .
 մանաւանդ՝ անանկ բաներ են ա
 սոնք որ՝ հոգւոյն աննիւթ ըլլալը
 հատուտելու համար գործածուած
 անհերքելի փաստերով ասոնք բոլ
 րովին սուտ կ'ելլեն . գոնէ սպացոյց

բերած բանը անանկ բան մըն է որ՝
 առաջ անիկայ պէտք էր ասպացոյցով
 հաստատել : Ասիկայ հասկընարու
 համար քիչ մը շիտակ միտք ունենա-
 լը՝ և գրածը մտադրութեամբ կար-
 դալը բաւական է : Անկերպ և ան-
 զգայ նիւթը կենդանացած ատենը ,
 այսինքն՝ կենդանիին հետ միանալովը՝
 անկերպ և անզգայ ըլլալէն կը դադ-
 րի եղեր : Կմայականութեան բոլոր
 գործողութիւնները՝ նիւթոյ շաման-
 դաղներուն գործքերն են եղեր .
 ինչպէս որ վերոյգրեալ խօսքերէն
 քիչ մը առաջ զրուցած էր : Այլ թը՝
 թէ պէտ ինչ շարժում ունի նէ իրեն
 օտար է , ուրիշէն իրեն կը հաղորդի ,
 և ինքը ուրիշէն կ'առնէ , տակայն
 ինքնիրեն վրայ կը ներգործէ եղեր .
 նիւթը մարդոյս վրայ մէկ զգայուն
 քնարի պէս բան մըն է , որ ինքնի-
 րեն ձայն կը հանէ , և ինքըղինք կը
 չալէ . մասնաւոր մէկ եղանակ մըն
 է եղեր մարդոյս գիտակցութիւնը ,
 և ներսի գործարանքներուն կերպ
 կերպ եղանակներու մէջ մտնելն է

որ մարդոյս խելք և խմաստութիւն
 և բարութիւն և առաքինութիւն
 կ'ըլլան : Մարդըս դէպ ՚ի ինքը կը
 ծանրանայ եղեր . հոգւոյն կիրքերը
 ֆիզիքական ձգողութիւն և մղումն
 ըսլածներուն պէս բաներ են եղեր :
 Այոքան խօսքերուն մէջ մթին գա-
 ղափարները մէկ դի ձգելով՝ միայն
 սպարդերուն և դիւրաւ հասկցվելու-
 ներուն վրայ խօսխմք . ինչ են ա-
 սոնք . բայց եթէ զեղծութիւնս սկզբան .
 և շատ մը սուտ հաւաքաբանու-
 թիւններ :

2. « Փորձով և սարսցոյցով հաս-
 » տատելու բանը մէկ դի ձգել . ու-
 » թիշ բան հաստատելու հոգնիլ » :
 Մտենք թէ՛ մեզի հաստատել կ'ուզէ
 մէկը թէ հեշտութիւններն են որ
 մարդս երջանիկ կ'ընեն . ասիկայ
 միտքը դրածը չի կրնալ ընելուն
 համար իր ճամբէն դուրս կ'ելլէ .
 հեշտութիւնները ինչ հաճելի և ա-
 խորժելի բաներ ունին նէ՛ կ'սկըսի
 ազիտը խօսքերով անոնք ստորագրե-
 լու : Ասոնք չ'էր ընելիքը . մեզ եր-

ջանիկ ընողը ասոնք ըլլալը պիտի
 հաստատէր, և երջանկութիւնը քա-
 նի մը օրով՝ և կեանքին քանի մը
 բոպէովը չի լմննար, աւելի ամուր
 և հաստատուն բան մը ունեցած
 պիտի ըլլայ, և վերջերին դառնու-
 թիւն բերող և քիչ դիմացող հեշ-
 տութիւններուն պէս՝ անցնելէն ետ-
 քը ընողը ընելուն վրայ զղջալու չէ՛,
 ձանձրանալու չէ՛, ինչպէս որ ասոնց
 ետեւէ ինողը ասոնցմէ կը ձանձրա-
 նայ, կը կշտանայ, և շարունակելովը
 սիրտը կը նեղանայ, անանկ զղջալ մը
 կուգայ որ սիրտը կը կտրբտէ : Խրղճ-
 մըտանքին տուած տանջանքը և հան-
 գըստութիւնը կորսընցընելը և պա-
 տիւր և ինչքը և առողջութիւնը կոր-
 սընցընելը, և ծերութեան ատենը
 կենաց քաղցրութենէն բան մըն ալ
 չի կրնալ իմանալը չ'եմ ըսեր : Մեր
 կիրքերուն ախորժ գալու պարագայ
 ները և մեզի հաճելի եղած կողմը՝
 և մեր զգայարանքը որպէս թէ իր
 ետեւէն ձգել տանելը՝ մարդոյս
 միտքը մոլորեցընելու կերպով ստու-

բաղրբերլով միայն մէկ բան մը կը հաստատովի, որ ասոր վրայ ալ երկբայող անդամ չի կայ. և այս է. թէ հեշտութիւնը մարդուն հեշտալի է. ճշմարիտ երջանկութիւնը ասոր վրայ ըլլալը այդ խօսքերէն բնաւ չի հասկըցովիր :

3. “Մէկ բան մը հաստատելու” ասպացոյց՝ նոյն իսկ խօսքը բերել” : Եւ ասոր կ’ըսեն յոռի շջան : Տրամաբանելու այս պակասութեանս մէջ կ’իյնրովի, երբ որ ըսած խօսքին վրայ խել մը ատեն դառնալէն ետքը՝ վերջին խօսք և հետեւութիւն և ըսածներուն հաստատութիւն նորէն այն խօսքը կը բերէ. որպէս թէ ըսածներէն յայտնի կերպով այն ըսելիքը հասկըցված ըլլայ. բայց ինչ որ ըսաւ նէ՝ ըսածն ալ այն է՝ ըսելիքն ալ. ինդրոյն բուն էութեանը ամենեւին չէ՛ դարձ : Բ՛սենք թէ մէկը պիտի հաստատէ որ՝ առաքինութիւնը սովորութեամբ և մարդոց իրենց մէջը սրայմանով եղած բան մըն է : Եւ մինչեւ ինքրզինք կորսընցընելու

չափ՝ մասնաւոր երկիրներուն սովորութեանը վրայ խօսելէն ետքը, որ ըսելու բանին ամենեւին յարաբերութիւն մը չ'ունի, այն երկրի մարդոց կրթութեան ասե՛նէն իրենց մտքին մէջը հաստատած և արմատացած մոլորութիւններ և նախապաշարմունքներ են, վերջապէս ըսածներուն ապացոյց բերելով սկզբունքի պէս դնէ թէ՛ առաքինութիւնները և մոլորութիւնները որոշող և վճռողը՝ ամէն մէկ երկրին բարբնու սովորութիւնն է: Պինդ առաջ անիկայ հասկըցընելու էր որ՝ բնաւ մէկ բան մը իրեն բնութենէն աղէկ կամ գէշ ըլլալ չ'ունի. բնաւ մէկ բան մը ինքնին արդար կամ անիրաւ չ'է. և այս կողմէն մտածելով, այն բանն որ մեզի սոսկալի գէշութիւն մը կ'երեւի, դիւցազնական և ծայրագոյն առաքինութիւն սեպած բաներնէս ունեցած տարբերութիւնը միայն մեր կարծեացը մէջն է:

Այն յոռի շքանին մէջ կ'յնամբ, երբ որ երկու նախադասութիւն

ձեռք կ'առնեմք, և իրարմով հաս-
 տատելու կը նայիմք, կամ երբ որ մե-
 կովը մէկալին ուժը կը կոտրեմք: Ա-
 ուաջինին օրինակ ըլլայ, երբ մէկը դա-
 տի մը վըայ ըսէ թէ՛ այս դատը կըտ-
 բողները իրաւունք գիտցող մարդիկ
 են, անանկ է՛նէ՛ դատը շիտակ կըտ-
 բըվեցաւ: Այլ իրաւունք ճանչցող
 մարդ ըլլալին հաստատելու համար
 դառնան ըսեն թէ՛, դատը շիտակ
 կտրեցին, և ասկէց յայտնի է որ ի-
 րաւունքը կը ճանչնան կոր: Արկրորդ
 ըսածիս օրինակ: Ամանք կան որ՝ մե-
 ղի դէմ խօսած ատեննին՝ երբ որ ի-
 բենց ըսածին հակառակը հեղինա-
 կու-թեամբ կը հաստատեմք նէ՛ մենք
 հեղինակու-թիւն չ'եմք ճանչնար, և
 հեղինակու-թիւն ճանչնալ պէտք չ'է՛
 կ'ըսեն: Վայց երբ որ իրենց մէջէն
 մարդիկ՝ հեղինակու-թիւն ճանչնալ
 պէտք չ'է՛ ըսածնին լմանի բռնելով
 վերջին հետեւու-թիւնները հանելու
 ձեռք կը զարնեն նէ՛ անոնց դէմ
 խօսած ատեննին կ'ըսեն, ասանկ բա-
 ներու մէջ խելքը ըստակ չ'ըներ.

հեղինակութիւն նայելու է :

4. « Մէկ բանին միայն մէկ կողմը
 „քննութեան առնել, մասունքները
 „պահաս և անկատար համբել” : Մ
 սեմք թէ մէկը ըսէ որ, կեանքը մար
 դոյս վնասակար մէկ պարգեւ մըն
 է : Այլ ասիկայ հաստատելու համար՝
 սկըսի մարդկային կենաց հետ խառ
 նրված տեսակ տեսակ տառապանք
 ները և նեղութիւնները համբել :
 Ասոնք ամէնը ասանկ ընելէն ետքը
 բան մը հաստատած չի կրնար ըլլալ .
 սկտք էր որ՝ ապրելուն պատճառ
 եղած և մեզի համար պատրաստած
 աղէկութիւններն ալ համբանքի առ
 նէր . որ կեանքը մեզի անոր համար
 տրված է . և մենք այն վախճանին
 շիտկեմք նէ՝ անտարակոյս է որ պի
 տի հասնիմք : Ասոնք ընելէն ետքը
 այն ալ սկտք էր, հաստատել թէ՝
 կեանքէն պատճառած դէշութիւն
 ները աղէկութիւններէն շատ և
 մեծ են :

Մարդ կայ որ կուզէ ինքրզինք
 հաւտացընել, թէ մէկ մարդ մը շատ

մեծ թշուառութեան մէջ խնայու
 ըլլայ նէ՝ իրեն կեանքը կտրելու իրա
 ւունք կ'ունենայ, և ասիկայ ալ հաս
 տատելու համար բանաստեղծին մէ
 կուն սո՛խօսքը վկայութիւն կը բե
 րէ, որ ամէնն ալ գիտեն, «Մէկ
 »մարդ մը ամէն բան կորսնցուցած
 »ըլլայ՝ և վատորկելու յոյս չ'ունե
 »նայ նէ՝ սալիլը անոր նախատինք՝
 » և մեռնիլը պարտք կ'ըլլայ »:

Սակայն՝ այս վերջին աստիճանին
 հասնելու, և ասանկ մեծ հետեւու
 թիւն ունեցող բանի մը ձեռք զար
 նելու համար առաջկուց էփ սղէկ
 քննելու և հասկընալու բաներ կան,
 որ ասոնք են: Ախա՛ գիտնալու է թէ՛
 արդեօք իրա՞ն է մի որ բնաւ երբէք
 այն թշուառութեանը ճար և յոյս
 մը չ'է՛ մնացեր, որովհետեւ այնքան
 անկարծելի փոփոխութիւններ կը
 նան ըլլայ, որ մեր յոյսը կտրած թըշ
 ուառութիւններուն ալ ճար կ'ըլլան:
 Արկորդ՝ արդեօք մերն է մի այս
 կեանքը՝ որ մեզի տրվողը մենք չ'եմք,
 և ասոր ալ աղէկ գործածութիւնը

կը կայանայ, չէ՛ թէ միայն անոր մեզի տուած բարիքները չախաւորութեամբ և խելքով գործածելով, այլ և անոր հետ խառնուիւած տառապանքներուն ու նեղութիւններուն ալ քաջութեամբ դիմանալով. որ վարձուց գլխաւորապէս արժանի եղած բանը ասիկայ է: Այրորդ՝ մեր կենացը վրայ արարչին ունեցած տէրութիւնը մեզի յափշտակելով՝ մեռնելով մեզ ազատել ուզած տանջանքներնէս աւելի գէշ տանջանքներու մէջ մեռնելէն ետքը չ'իյնալիքնիս ազէկ գխտնալու էինք:

Կիտու թիւններուն և արուեստներուն դէմ խօսքեր գտեր են ումանք, և երեսնուս դէմ պօռալով մեզի հասկըցընել կուզեն որ՝ մարդկային ազգի մնաստակար բան են ասոնք: Բայց ասանկ պօռալներէն բան մը չի հասկըցիլիր, մինչեւ որ մէկ արդար կշիռ մը գլտնըվի, և անոր մէկ աչքը՝ գիտութիւններէն և արուեստներէն եղած մնասը, և մէկուլ աչքը՝ ասոնցմէ եղած օգուտը

դնելով կշռելու է : Ասոր պէս է ու մանց ըսածը՝ որ կառավարութեան այս ինչ տեսակը այս ինչ ազգի չի յարմարիր : Այլ միայն ասկէց ըլլալովն ասաներուն վրայ կը խօսին , առանց քննելու և առանց մէջ բերելու այն ազգին վերաբերեալ բոլոր բնական և բարոյական բաները , որ բաղդատութեան մէջ ասոնք ալ մտնելու են , կարելի է որ՝ ապահովութեանը և հանգստութեան և ստացուածքերուն և աղատութեանը կողմէն մտածելով անանկ օգուտներ գտնուի որ՝ մէջ բերված գէշութիւնները վճարելէն ետքը շատ մըն ալ անդին անցնի : 'Կեռասոն՝ ուրիշ մէկ նիւթոյ մը վրայ խօսելով ըսած է որ՝ ասանկ մարդիկ ինչ բանի վրայ նայելու որ ըլլան՝ միշտ մէկ աչքով կը նային , երկու աչքերնին մէկէն բընաւ բացած չ'ունին : Ամէն կիրքի տէր մարդիկ , մէկ կողմի մը տէր ելլողները՝ որքան իմաստուն ըլլան , ասոնց կարգն են :

Անք՝ մեզ սուտ գաղափարնէ

րէն և սուտ տրամաբանութիւննէ,
 րէն պահպանող ճշմարտութեանը
 սէր ունենալուս համար միշտ տախ-
 կայ նշանակելը մեզի պարտք կը սե-
 պեմք որ, մարդոյս միտքը ազատ ըլ-
 լալու է, և այս ազատութիւնս կիր-
 քերու և նախապաշարմունքներու
 հետ չ'ըլլար: Ասոնց հետ՝ շատ ար-
 դարութիւն և ընտրողութիւն ալ
 ունենալու է: Շատ կը պատահի որ՝
 երկու ծայրէն մեզ հաւատար հեռա-
 ցրնելով միայն ճշմարտութեան ա-
 ռաջնորդ ըլլալու միջասահմանը բըռ-
 նելուն տեղը՝ մարդոյս միտքը երկու
 ծայրերուն մէկուն աւելի մտտիկ է:
 Առդէն նշանակել մեզի թէ խառ-
 նուածքը մեր բարուցը և մեր վա-
 րուցը վրայ ո՞րքան ազդեցութիւն
 ունի, և ասիկայ իրենց հիմն բըռ-
 նելով ոմանք կ'առդէն ամէն բան բը-
 նական սրաածատներու տուլ, ուրիշ-
 ները՝ ազատութեան շատ դէմ դա-
 լէն վախնալով և ազէկ չի մտածե-
 լով՝ ամէնը մէկէն բարոյական պատ-
 ճատներու կուտան: Սակայն՝ հոգ-

ւոյն ամէն կարողութիւնները՝ և իրեն վրան գալու հիւանդութիւնները և անոնց յարմար գեղերը ճանչնալու համար՝ բնական և բարոյական պատճառը իրարու միացրնելու և անանկ հասկընալու է :

Վարդկային խելքին դիւրութեամբ իյնալու ծայրերուն վրայօրօրինակ մըն ալ տամք : Ա՛ռւղէս հաւկընալ թէ Ա՛տուած մեզի նկատելով ի՛նչ ճամբայ բռնէ նէ աղէկ կ'ըլլայ եղեր : Շատ մեղքէ զատ վե՛լ չ'ուզող մարդիկ՝ որ տակաւին Ա՛տուածոյ կը հաւատան , բայց կուրանալու փոփոք ունին , կ'ըտեն թէ՛ Ա՛տուած բարի է , և ես ի՛նչ որ ընեմ՝ նէ՛ անիկայ զիս կորուստը խորկելու համար չէ՛ ստեղծեր : Ար թէ որ խելվընին հասնէր՝ և ստորոգելիքներուն միայն մէկ հատը բռնած կայնած չ'ըլլային նէ , պիտի ըսէին թէ՛ Ա՛տուած բարի է , բայց արգար ալ է , և իր արդարութեանը հետեւանքն է որ՝ ամէն մարդու իրեն գործածին համեմատ փոխարէն

պիտի տայ : թէ որ ես տակաւին ա-
նոր անհաւատարիմ ըլլամ նէ՛ անի-
կայ չ'ըլլար զիս կորուստ մասնողը ,
ես կ'ըլլամ , որ իմ ազատութիւնս
գէշի գործածելով ես զիս կը կորսըն-
ցընեմ : Աւրիշները իրենց ըրած
յանցանքէն ետքը միայն Աստուծոյ
արդարութիւնը կը մտածեն , և ա-
նոր ապաւինելու տեղը յուսահա-
տութեան մէջ կ'իյնան , չ'են խելք
ըներ որ զղջումով իրենց մեղքը քա-
ւեն , որովհետեւ Աստուածային
բարութեան և սղորմութեանը վրայ
աչմընին գոցեր են :

Անանկ է նէ՛ խոստովանիլ հարկ
կ'ըլլայ որ՝ ամէն բանին ճիշտ միջինը
բռնել պէտք է , քանզի ճիշտ ստու-
գութիւնն ու ճշմարիտ ապահովու-
թիւնը ասոր վրայ կը կայանայ :

5. “Նշան և ցուցակութիւն չ'ե-
ղած բաները անանկի տեղ դնել ,
” և պատճառ չ'եղած բանը պատ-
” ճառ սեպել ” : Հեթանոսներուն
սնտի պաշտամունքներուն շատը՝
չ'աստուածներուն կամքը մեզի հառ-

կրցրն: աղ նշան բռնրված բաներու վրայ էր. ինչպէս են հաւահմայութիւնը, ընդերահմայութիւնը, և ամէն տեսակ սւրիշ հմայութիւնները: Ասով՝ զոհերուն տաք տաք ազիքները քննելը, թռչուններուն թռչիլն ու երգը, կայծակին աջ կողմէն ձախը կամ ձախ կողմէն աջը երեւիլը, կռատունը պահված հաւերուն շաա կամ քիչ ախարժակով ուտելնին, ասոնց ամէն մէկը պինտ հարկաւոր բաները կախ կամ ետ ձգել կուտային, կամ յաջողակ կամ ձախորդ երթալնին կ'իմացընէին: Եայց ասոնք կամ գլխաւոր մարդոց ձեռքը մէկ գործիք մըն էին քաղաքական մասին, որով ժողովուրդը կը կառավարէին, կամ ազահու թեամբ՝ անոնց դիւրահաւանութենէն իրենց սրտուղ կը քաղէին: Արեց ըսված Աստոնին ըսածը ծանօթ է, որ ինքն աղ հաւահմայներուն մէկը ըլլալով կ'ըսէր. ինչպէս կ'ըլլայ որ երկու հաւահմայ առանց ինդալու կրնան իրարու երես նայիլ:

Մարդս ապագայ ըլլալիքները
 ճանչնալու միշտ հետաքրքրու թիւն
 մը ունի, բայց այս ալ թէ որ ձեռք
 ձգելու բանը ըլլար նէ՛ ազատ գոր-
 ծողու թիւններուն հաւատարակըչ-
 ու թիւնը կ'աւրրովէր. և գլխընուն
 գալու գէշու թիւնը միշտ աչքերնուն
 առաջը ըլլալով՝ տանջանքներուն և
 տառապանքներուն չ'էր դար : Սա-
 կայն մարդիկ ասոնք չի մտածելով՝
 և միշտ ապագայն ճանչնալ ուզելով,
 երազներուն և վիճակներուն և դի-
 պուածով զրուցուած խօսքերուն և
 մտքերնուն չ'անցած մարդու կամ
 բանի հանդիպելնուն և փրորչտա-
 լուն և ականջը խօսելուն և ուրիշ
 ասոնց նման բաներու համար կար-
 ծեցին թէ՛ ըլլալիքը մեզի հասկըցը-
 նելու զօրութիւն ունին : Տակաւին
 շատ ատեն անցած չ'է՛ որ կը կարծէ-
 ին թէ պոչով աստղ երեւիլը՝ մեծ
 մարդու մը մեռնելու նշան է. և
 այսպէս նշան երեւելէն ետքը մեռ-
 նելու՝ քիչ մարդիկ արժանի կը սեռ-
 վէին :

Հիմայ ալ պարզամիտ և հասկը-
ցողութիւննին կարճ մարդիկ՝ աս-
քարքի կը հաւատան . պարզմտու-
թեամբ վիճակ (Ֆալ) նայել կու-
տան . ձեռվըներնուն գիծը նայել
կուտան . ջուրի մէջ կամ թրղթի վը-
րայ իրենց երեսը նայել կուտան .
և այլն : Հատ կը տեսնեմք , մանա-
ւանդ կնիկ մարդոց մէջ , որ տանն
և երեք համրանքէն կը վախնան . ա-
ղին ամանը ինայ թափի նէ՝ գէշ
նշան կը սեպեն . և ուրիշ ասանկ
հազար կերպ ոչինչ բաները աղէկի
կամ գէշի մեկնելով բանի տեղ կը
դնեն :

Ասոնցմէ աւելի բան մըն ալ
պատմեմ : Արբեմն մեր հասարակո-
րէն տեսածէն տարբեր անձրեւ
կուգայ . ասանկները կ'ըսէին որ՝ այս
բաներս մեծ գէշութիւններ կը
պատճառեն , բայց ասոնց ամէնն ալ
բնական պատճառներ ունին , որ
հին ատենը գիտցող չի կար :

Ասով խօսքերնուս կարգը անանկ
բաներու վրայ խօսելու կուգայ ,

որ պատճառ չ'են, բայց պատճառի տեղ անցած են: Ամէն մարդ գիտէ որ ատեն մը աստղերը մարդոյս աւրագային և բարուցը և առաքինութիւններուն և մոլութիւններուն վրայ ինչ աստիճան ազդեցութիւն ունին կը կարծւի: Շատ հեռուն չ'երթամք, ամէն որ մեր աչքին առաջը որքան մարդիկ կան որ իրենց տկարութեանը մնասը տեսնելով իրենց բողոքին կը նեղանան, իրենց կիրքին անկարգութենէն իրենց հասած մնասը՝ երկինքին վրան կը ձրգեն¹: Աւրիշ տեսակ բաներու մէջ՝ աշխարհքիս ամէն կողմի պատմութիւնը կարդալով որքան շատ կը տեսնեմք, որ իրենց պատճառած գեշութիւնները իրենց վրայէն նետելու համար անանկ բաներու կուտան, որ անանկ բան ամենեւին պատճառած չ'ունին, և ասիկայ՝ մարդիկ խաբելու համար հնարված

¹ Այս մէնք ալ միշտ կը տեսնեմք. ֆելեթ անուն մը կուտան, և անոր գեշ կ'ըսեն. ֆելեթ՝ երկինք ըսել է:

մէկ դժոխային արհեստ մըն է :
 () րինակ գնեմք : Արբեմն հունձքը
 շատ սուտ եղած տարիներն ալ՝
 շինծու սով մը կը պատահի . և ասոր
 օրինակները էփ աղէկ կան պատմու-
 թեանց մէջ : Այն ատենը խառնա-
 կիչ և խռովարար մարդիկ կ'ըլեն .
 և ասոնք ալ ուրիշ պատուհասնե-
 րուն պէս կամ երկրին կառավարու-
 թեանը վրայ կը ձգեն , կամ քաղա-
 քացւոց մէկ մասին և մէկ կարգին
 վրայ , որ անոնք ուրիշներուն ատելի-
 ընեն : Մինչեւ որ վերջապէս ռամի-
 կը , որ այս փոանգներուն բուն
 պատճառը մինչեւ ճանչնալու ըլլայ
 նէ՝ ձեռքը քիչ բան կը մնայ իրեն
 ասպրուտ ճարելու համար , բուն
 պատճառ եղողները գիղած հարբա-
 տու թիւններնէն կը ճանչնայ , որ հա-
 տարակու թիւնը ասանկ սուտ համ-
 բաւ հանելով կողոպտեր են , և
 մարդու մը վրայ չի կրնալով ձգել՝
 թէ հասարակու թեան քաշած սովոյն
 և նեղութեան պատճառը ասոնք
 են , մէկ գաղտնի կերպով մը մենք

էինք ըսելու պէս կ'ըլլան :

6. «Սէկ բան մը անանկ պարա-
 »գայի մը վրայ դատել , որ բնաւ
 »անոր բնական չ'է . և անոր վրայ
 »գտնելիք մէկ լոկ դիպուած մըն
 է » : Քանի մը խարդախ մարդոց
 ամբարտաւանութիւնը աղանդներ
 հանել կուտայ . և կրօնքը պատճառ
 բռնելով շատ խռովութիւններ կ'ել-
 լէ : Անոր վրայ նախապաշարեալ և
 չարամիտ մարդիկ կը պօռան , անանկ
 է նէ՛ կրօնքը ինքնին կուռոյ և հա-
 կառակութեան պատճառ կ'ըլլայ է-
 դեր : Աւելի ճշմարիտը ըսեմք , կը-
 րօնք ըստ ին բուն յատկութիւնը
 այն է որ՝ ամէն մարդիկ իրարու
 հետ կապէ . և ասիկայ թէպէտ կրը-
 նան ոմանք գէշի բանեցընել , բայց
 այս չ'ըլլար նէ ի՞նչ պիտի ընէին :
 Փիլիսոփայութիւնն ալ թէ որ գէշի
 գործածիլի , և սուտ սկզբունքներու
 վրայ հիմնած ըլլայ նէ՛ շատ մեծ գե-
 շութիւններու աղբիւր կ'ըլլայ . շի-
 մայ ըսե՛նք մի որ՝ փիլիսոփայութիւ-
 նը ինքնին՝ և պէտքին պէս հասկըց-

ված մտքովը առնելով՝ ճշմարտապէս
դէշ բան մըն է :

7. « Մէկ բանը՝ ըլլալէն ետքը
» դատել » : Ասեմք թէ մէկ բանի
մը վրայ իմաստութեամբ խորհուրդ-
ներ եղան . մարդոյս խոհեմութեան
ընելուն չափ հաշիւները և զգու-
շութիւնները եղան . բայց մէկ բան
մը վրայ եկաւ . որ անակնուկն ըլ-
լալուն համար անիկայ հաշիւի մէջ
խառնել և այն կողմն ալ զգուշանա-
լը՝ մարդու պարտականութիւն չ'էր .
բայց այս դիպուածս ամէն բան
աւրեց : Անդի կողմը՝ աղէկ չի խոր-
հեցան ըսելու մարդիկ պատրաստ
են : Մէկ բան մը շիտակ մըտքով և
իմաստուն և խոհեմ զգուշութիւն-
ներով եղած է . բայց գէշ մեկնու-
թիւններ տուող ալ եղեր է : Այն
բանը չ'է յաջողեր . անանկ է նէ՛ կ'ը-
սեն , ընողներուն միտքը ծուռ է ե-
ղեր . տակը խարդախութեան դի-
տաւորութիւններ պահված են ե-
ղեր : Մէկ ուրիշ մը վտանգաւոր և
յանդուգն , կամ գոնէ երկդիմի մէկ

դիտաւորութիւն մը բռնելու է, կ'ըլլայ որ անոր այն մտքին վրայ բրած բանը աղէկ վերջ մը կ'ունենայ. դու ցէ ընողին ալ մտքին դէմ. ամէն մարդ կ'ըսեն որ շատ մեծագործութիւն ըրաւ. և ասոր վրայ գովեստները մըտիկ ըրէ՛ : Ահա շատ մարդ ասանկ կը տրամաբանէ :

8. « Սեծ գործերուն մեծ պատճառներ տալ » : Սակայն պզտիկ պատճառ է մը առաջ եկած մեծ գործքերու պատմութիւններով հին պատմագիրքերը լեցուն են : Վայց ասոր նայելով անանկ մարդ ալ եղած է որ՝ մեծամեծ գործքերը քրնհութեան առեր, և ամէնուն ալ միշտ և ամէն ատեն ոչինչ պատճառներ տուեր է. և այս կարծիքիս վրայ ալ կը յամառի կը մնայ : Հազար կերպ բաներու հետ մէկ պզտիկ բան մըն ալ մէջ մտած՝ և պատճառներուն կարգը խառնըված կրնայ ըլլալ : Վայց տաիկայ յատկապէս պատճառ չի կրընար ըսիլ. միջանկեալ բան մըն է :

9. « Մեծ հանուրէն մասնաւորի

„Հետեւեալ թիւն հանել” : Արպէս
 թէ կանոն եղած տեղը բացառու
 թիւն չ'ըլլար . բայց կրնամք ըսել
 թէ՛ առանց բացառութեան կանոն
 խիստ քիչ կայ :

“Մասնաւորէն ընդհանուր հե-
 ”տեւցընել” : Վրէ՛թէ Վօրդէնին
 պատմած մարդուն պէս . որ Վլօաէն
 անցած ստեներ մէկ լոսանքաճի մը
 կրնկան հետ կուիւ ընելով՝ իրեն ճա-
 նապարհի օրագրութեան մէջը գը-
 րեց . “Վխոցիր որ՝ Վլօայի կնիկները
 ”ամէնն ալ կոպիտ են” : Արքան մար-
 դոց կարգ և ընկերութիւններ կան .
 որ մէկ մարդու մը մասնաւոր գործ-
 քի վրայ ամէնուն մէկէն վճիռ կը
 տրրվի : Ա՛րսեն . այս ինչ և այն ինչ
 մարդիկ շատ բամբաստելի վարք ու-
 նին . բռնած ճամբանին իրենց աւ-
 տիճանին չ'իյնար . և ասանկներն են
 որ ամէնուն աչքին կերեւին : Ա՛սկէց
 կը հետեւցընեն որ՝ այն կարգին և
 այն աստիճանին մարդիկը ամէնն
 ալ նոյն անկարգութիւնները և
 նոյն գէշութիւնները ընելու ընդու-

նակ են : Ասկէց աւելին կ'ընեն , այս
կարգիս մէջէն մէկ քանիին գէշու-
թիւնը բարձր կարգին վրայ կը ձգեն :
Ասով այն մարդը կը նմանի , որ կ'ըսէ
թէ այս պտուղս կամ այս տեսակէս
շատ պտուղներ աւրելած են , ա-
նանկ է նէ՝ ամբողջ ծառը ըստակ
մը չ'ըներ : Ասոնք թէպէտ շատակ
տրամաբանել չ'են , բայց երբեմն ,
մանաւանդ խռովութեան ատեննե-
րը անանկ պատճառներ են որ՝ ա-
մէն բան կը կտրեն կը նետեն :

Վիզիբայի մէջ՝ և պատմութեան
ուսմանց մէջ շատ անգամ , թէպէտ
այն ալ թեթեւութեամբ , քանի մը
մասնաւոր դիպուածներէն և դիտու-
ղութիւններէն ընդհանուր հետե-
ւութիւններ կը հանեն , և ետքը այս
հետեւութիւններս սկզբունքի կարգ
կանցընեն : Ամանապէս , մարդկա-
յին կենաց սովորական՝ դիպուած-
ներուն մէջ քիչ անգամ չի պատա-
հիր մէկ կամ երկու օրինակէն ընդ-
հանուր հետեւութիւն հանելու :
Այս ինչ և այն ինչ մարդոց գործը

յաջող դնաց . թէպէտ յանդգնու-
թեամբ ճամբայէ ելան , բայց վտան-
գէ ազատեցան . անանկ է նէ ես ալ
կ'ազատիմ . անանկ է նէ իմ դործս
ալ կը յաջողի : Այս ինչ մարդը սանկ
բան մը ըսաւ . և շատ մարդիկ ա-
նանկ բռնեցին , որպէս թէ ամէնուն
խօսքն ալ այս է . անոր բերնէն ե-
լածը կը ծաւալեն , և բերնէ բերան
կը ստըտցընեն : Ամօթ կ'ըսէ . « Ա՛ր-
քան արձագանգներ կան որ մ'որ-
դու կարգ կը համբլին » :

10. « Անորոշ և երկդիմի նշանա-
կութիւն ունեցող բառերը իր ու-
ղած կողմը քաշքըշել » : Ասիկայ մո-
լորութեանց գլխաւոր աղբիւրնե-
րուն կարգը դնելնիս , և զատ յօդ-
ուած մը ընելնիս կ'աժէ . ինչպէս որ
մենք ալ անանկ ընելու միտք ու-
նիմք :

Սուտ տրամաբանելու սովորա-
կան սկզբունքներուն և սրտձառնե-
րուն վրայ բաւական խօսելէս ետ-
քը՝ կը մնայ ինձի ջուխտ մը խօսքով
այն ալ ըսել՝ որ այնքան անգամ

զրուցված է, և ամէն ատեն ալ պա-
հելու հոգ ընող քիչ եղած է: Տրա-
մաբանելու արուեստը՝ պայծառ և
որոշ հասկըցված գաղափարներէն
առնելու է, և յայտնի կերպով ա-
նանցմէ հետեւութիւն հանելու է:
Եւ ասիկայ նոյն գաղափարները իրա-
րու հետ կապելով կ'ըլլայ: Անանկ
մը իրարու մօտ ըլլալու է որ՝ առա-
ջին գաղափարէն առնելով ամէնը
իրարու մէջ պարունակին, և մինչեւ
հետեւութեանը գալու ըլլայ նէ՝ և
հետեւութեան գաղափարն ալ՝ իրա-
րու հետ անբաժանելի կապակցու-
թիւն ունենան:

Աւտօի՛ մէկ տրամաբանական զը-
րուցվածքի մը ճիշդ՝ և հետեւու-
թիւնը օրինաւոր ըլլալը ճանչնալու
ամէնէն ապահով եղանակն է՝ ա-
ռաջ մէկ մը խօսքը իրեն ճարտասա-
նական ձեւերէն մերկացընել, օտար
և աւելորդ գաղափարները վրայէն
վերցընել, որ՝ հետեւութիւնը որ-
կէց կ'ըլլայ նէ՝ անոր հետ խառնը-
վելով՝ բնաւ կտայ չ'եղած տեղը կապ

մը ցրցընէլու պէս կ'ընեն . կամ դո՛ւնէ՛ այն բաներուն մէջ կապակցու-
թիւն չի կենայլը թող չ'են տար որ
տեսնելի : Ասանկով տրամաբանու-
թիւնը իրեն առաջին տարերքներուն
և սկզբունքներուն բերելով , և մի
այն այն գաղափարներուն ամփոփե-
լով՝ որ ապացոյցին և հաստատու-
թեան բոլոր ուժը ասոնց վրայ է ,
միտքը ասոնք ասանկ տեսնելով ա-
ղէկ կը հասկընայ թէ իրարու հետ
ինչ կապակցութիւն ունին , և այս
միջոցովը՝ ասոնցմէ հանված հետե-
ւութիւններուն շատ կամ քիչ շե-
տակ և օրինաւոր ըլլալը կրնայ դա-
տել . հաւաքաբանութեան բնաւ
կարօտ չ'ըլլար :

ՈՒԹԵՐՈՐԴ ԵՂԻՒՄ

Բաւերուն միտքը ծուռ աննէ :

ԱՄԿԱՅ մէկալ աղբիւրներէն ա-
ւելի շատ մոլորութիւններու սրատ-
ճառ կ'ըլլայ : Վործոյս երբորդ գլու-

խին մէջ ըսած եմք որ ինչպէս որ
 ինչ և ինչպէս բառերը որքան
 անգամ ծուռ մտքի վրայ առնուի
 են : Փիլիսոփայութիւն ըսվածը՝
 ճշմարտութեան սէր և խելացի կա-
 նոններու գործադրութիւն ըլլալուն
 տեղը՝ հիմայ մէկ ատելի և պարսպ
 դատարկաբանութիւն մըն է եղեր .
 և իրեն յատուկ գործ տրվեր է ա-
 մէն ճշմարտութիւններուն վրայ վա-
 ըրագոյր քաշելով մթացընել, և ա-
 մէն սկզբունքները ներքի վրայ ընել :
 Փիլիսոփայ ըսվածներն ալ՝ ուրիշ
 մարդիկը լուսաւորելէն՝ և անոնք ա-
 լելի խելացի և երջանիկ ընելով ա-
 նոնց գովութեանը և յարգանացը
 արժանի ըլլալէն շատ հեռու են .
 ասոր տեղը՝ ալելի թանձր և խորին
 խաւարի մէջ ընկղմած են անոնք ,
 լոկ բնական և նիւթական էակնե-
 րուն կարգը խօթելով, կամ գոնէ՝
 անբան անասուններուն կարգը ա-
 սոնց տեղ ցրցընելով . ամէն բարո-
 յականի գաղափարը և զգացմունքը
 անոնց մտքին ու սրտին մէջէն բնա-

ջինջ ընելով, մարդասիրութեան
 դասերով անոնք անձնասէր ընելով,
 և անոնց անիրաւ և բարբարոս ըլլա-
 լուն ճամբայ բանալով, ինչպէս որ
 տեսանք: Իրենք զիրենք մեր աչքին՝
 Ղուկիանոս Սամոսացիին գիրքին
 մէջ սլատմըլած իր ժամանակի փիլի-
 սոփայներէն եւել տղեղ և անարգ
 և ծիծաղական ցրցուցին: Ղուկիա-
 նոսին ատենի փիլիսոփայները արժա-
 նի եղան որ այն ծաղրածու փիլիսո-
 փային ծիծաղելուն նիւթ և իրենց
 ժամանակակից խելացի մարդոցը ա-
 տելի ըլլան:

Ինչ-ի-ն բառին համար ալ ա-
 ռաջ ըսինք որ՝ թէ որ ամենայն ա-
 բարածնեբուն ճշմարիտ սկիզբը և
 կարգադրիչը այս բառըս գործածե-
 լով դուրս ձրգվի նէ՝ երկգլմի բառ-
 մը ըլլալով, անոնց գրուածքներուն
 մէջը և անոնց բերանը կամ բոլոր-
 վին մէկ գաղափար մը չի տար, կամ
 հակասութիւններով լեցուն մէկ
 խառն ՚ի խառն գաղափար մը կու-
 տայ:

Բայց մենք այս օրինակներուս վրայ խօսք երկրնցընելու կարօտ չ'եղած ուրիշներ ալ կրնանք գըտնել, որ բառերուն միտքը ծուռ հասկընալով ելած վնասներուն չի մոռցը վելու յիշատակներն են :

Այս դարուս մէջը՝ որ Իիլիսոփայական Դարը ըսելով կը պարծին շատ մարդիկ, ուստի շատ լուսաւոր ծանօթութիւններ կը յուսացվին ասկէց, աւելորդապաշտութիւն և կրօնաճշտութիւն բառերը ուղղակի կրօնքի բաներու յարմարցուցած են. թէ պէտ և կրօնքը կրօնամոլութեան ալ հակառակ է՝ աւելորդապաշտութեան ալ : Արեւի է որ՝ բնաւ մէկ ատեն մը մեր ժամանակը ըրածներնուն պէս այս բառերս այնքան բանուկ գործիք եղած չ'են գործածողներուն ձեռքը : Անոնք՝ որ այնքան դարերէն սկսելով մինչեւ հիմա հասարակաց բարոյականը պահպանելը իրենց յատուկ գործ ունէին, և գոնէ միայն այս բանիս համար պէտք էր որ հասարակութիւնը ասոնցմէ

չնորհակալ ըլլար, ասոնք ճշմարտապէս կրօնքի դէմ խենթեցողներուն՝ և խելքէ դուրս փիլիսոփայութեան հետեւող անգութ մարդոց ձեռօքը՝ աւելորդապաշտ և կրօնամոլ անունով հասարակութեան ատեանը քաշիլեցան, և այս անունս անոնք արժանաւոր կ'ընէր՝ որ առ հասարակ ամէնուն առաջը ատելի և նախատելի ըլլան:

Օ իշո-Տն: Օ իջման պաշտպան կենալ: Ահա մեք ատենի փիլիսոփայները քանի որ ուրիշներուն կողմանէ զիջման և թողութիւն գտնելու կարօտ էին, այս բառերըս բերաններնուն վար չ'էին ձգեր, և երբ իմացան որ ուրիշին զիջմանը կարօտ չ'ըլլալու չափ ուժովցան, այն ատենը այս բառերս մէկ մըն ալ բերաննին չ'առին, և չի ճանչնալ սկսան:

Ի այց իրենք մեզի թող մէկ կառավարութիւն մը՝ մէկ ազգ մը ցըցընեն, որ այն տեղ մէկ գերագոյն էակի մը գոյութեան վրայ ամէն ազգաց միաբան ընդունած հաւատ

քին դէմ վարդապետութիւններ
յայտնի քարոզիլն, և այն տէրու-
թիւնը և ազգը ատանկ բան քարո-
զողներուն ներելու զիջանի: Վանդի
ասանկ վարդապետութիւններս ա-
մէն բարոյական և ամէն ընկերու-
թիւն կը կործանեն:

Աւելի սրտերնին նեղացածը այն
է՛ որ իրենք անունը Վրիստոնէա-
կան աններողութիւն ըսեր են: Վայց
մէկ մը խելքդ գլուխդ ժողովէ՛ ու
մտմբտո՛ւ, որքան մեծ և ծայրագոյն
տարբերութիւն ունին իրարմէ՛ փի-
լիսոփայական զիջումն՝ ու Վրիստո-
նէական կրօնից ճշմարիտ հոգւոյն
ազգած զիջումը և ներելը, ինչպէս
որ Վրիստոս իր աշակերտներուն
սորվեցուց, որդիք որոտման ըլլալուն
կերպը հասկըցուցած ատենը: Սուտ
փիլիսոփայութիւնը կրօնքներուն ա-
մէնուն ալ կը զիջանի, ամէնուն ալ
տեղ կը ցըցընէ, միայն ճշմարիտ կը-
րօնքին չի զիջանիր, որ ամէն կիրքե-
րուն սանձ կը դնէ, և թէ որ այս
փիլիսոփայներուն ձեռքէն գար նէ՛

ասանկ կրօնքի մը պաշտօնեայներուն նշանը և յիշատակը անգամ աշխարհքի վրայ չ'էին թողուր : Վրիստոնէական կրօնքը՝ մոլորութեան վերաբերեալ բաներուն մէկուն ալ չի ներեր . բայց պէտք եղածին պէս խմացիլի և հասկրցիլի նէ՝ մոլորած և ճամբէ ելածներուն վրայ ցաւիլ՝ և անոնց ներել կը սորվեցընէ : Մտել է որ՝ ճշմարտութենէն զատ բանի երես չի տար , քանզի ճշմարտութիւնը մէկ է . և սիրով ներում և զիջումն ալ ունի , որով ամէն մարդ մեղի բարեկամ և եղբայր կը բռնեմք :

Խեղ բառն ալ , որ փիլիսոփայական նախապաշարմունքներուն և կիրքերուն տիրած ատենները ամէն մարդ իր ուզածին պէս կը հասկընար , և իր սրտին սիրած գոյնը վերան կը զարնէր , այս ալ շատ չափազանց ծուռ միտքեր բանեցընելով գործածւած է : Նչպէս որ ուրիշ տեղ ըսինք՝ մեր օրը խելքը մինչեւ աստուած ըրին , բայց խելք բանե-

ցընելն ալ յանցանք սեպիւեցաւ :
 Խելքին համար միայն Սեհեաններ
 նուիրեցին , և ճշմարիտ Աստուածը
 Ֆռանսայէն դուրս հանվեցաւ :
 Խելքը աչքի ցըցընելու համար աստ-
 ուածուհիներ ընտրեցին , և քաղա-
 քին մէջ կառքով ստորոցուցին :
 Բայց ի՞նչ աստուածուհիներ , և սե-
 ղաննին ալ ի՞նչ զարդով զարդարե-
 ցին : Այս խենթութեանս ետեւէն
 մէկ ուրիշ խենթութիւն մըն ալ ը-
 րին . ճշմարիտ և ամենակարող Աս-
 տուծոյ որպէս թէ շնորհ մը ըրին ,
 ներելով որ ետ դառնայ և Ֆռան-
 սայ մտնէ . և վճռով և հանդիսա-
 ւոր հրամանագրով ներեցին Ֆրոան-
 սըղներուն , որ կարող ըլլան Աստու-
 ծոյ գոյութեանը և հոգւոյն անմա-
 հութեանը հաւատալու : Վարդկա-
 յին մտքին այս ի՞նչ անմտութիւն
 և կարգէ դուրս խենթութիւն է :

Օրէնք բառն ալ՝ որ նուիրական
 և սրբազան բառ մըն է , և առիկայ
 ալ միայն շիտակ խելքի բացատրու-
 թիւն մը ըլլալու է , և մինչեւ որ

արդարութեան համեմատ չըլլայ նէ
 չի կրնար ճշմարիտ օրէնք սեպւիլ ,
 այս բառս ալ ինքնիշխան և բռնա-
 ւորական կամքի բացատրութեան
 տեղ առնելով ինչ էր : Հասարակու-
 թեան զրկանք ընող և ունեցածնին
 առնելու և բռնութիւն բանեցընե-
 լու համար տրված վճիռները՝ այս
 կրթեալ ազգին մէջ բարբարոսական
 օրինաց գիրք մը եղան : Արսէին ,
 օրէնքը այս է . և միայն օրէնքի ա-
 նուն տալով՝ շատ անմեղ մարդիկ
 կը մեռցընէին :

Աղապրութիւն , հասարակութիւն , եղ-
 բայրութիւն : Ասոնք ալ այն գեղեցիկ
 և ինքնին ճշմարիտ բառերն են , որ
 այնքան ծուռ մտքի տարված են :
 Պինտ առաջ ըսված է որ՝ «Վարդիկ
 » ազատ կը ծնանին , և օրինաց տա-
 » կըր ամէնը իրարու հաւասար են » :
 Ի այց այն ինչ ազատութիւն է նոր
 ծնած տղուն ազատութիւնը , որ կը
 տաւներու մէջ կը փաթտեն , և իրեն
 անդամքները ուզածին պէս գործա-
 ծելու անգամ ազատ չեն թողուր :

Այն ինչ ազատութիւն է տղոց ազատութիւնը՝ որ վարպետի ձեռքի տակ կը թըվելու վրայ են, կամ իրենց պիտոյիցը համար իրենց ծնողացը իշխանութեան տակը մնալ հարկ եղած է : Այն ինչ ազատութիւն կըլլայ այնքան մարդոց ազատութիւնը, որ թէ՛ իրենց պիտոյքներուն համար, և թէ՛ ընկերութեան բարւոյն և համաձայնութեանը և հաստատութեանը հարկաւոր շատ մը ուրիշ կապերու համար հարկաւորապէս իւրարմէ կախում կ'ունենան : Բայց մեր փիլիսոփայ իրաւագէտները ասանկ բաները այնքան բարակ չ'էին մտածեր, և ասոր ճշմարիտ ըլլալն ալ անոնց շատ հոգը չ'էր, ուզածնին միայն այն էր՝ որ հասարակութեան փափաքանաց աղէկ բան մը ըրած ըլլան, և կիրքերը ամէնն ալ ազատ ընեն : Աստի այսքան գովիւած ազատութեանս անունովը սկսան ո՛չ հայր ճանչնալ, ո՛չ մայր, և ո՛չ վարպետ, երբոր ասոնց ձեռացը տակէն գլուխ քաշելովն իրենց փնաս մը չի գալը

խելքին կտրեց : Այլ քիչ մը տար-
 ւոք մարդերուն համար՝ ազատու-
 թիւնը այն ըսել էր որ՝ կամքին ու-
 ղած յանցանքը ընէ, և ամենեւին
 պատիժէ մը չի վախնայ : Ասով ա-
 մուսնական կապը, որ քաղաքական
 կրթութեան տակ մտած մարդիկ ա-
 մէնն ալ մէկ չ'աւրրովելու կապի մը
 պէս՝ և քաղաքական ընկերութեանց
 հիմն և հաստատութիւն է, անանկ
 ազատութիւն մը վաստակեցաւ որ՝
 կարգըված մարդիկ իրենց կանայքը
 թողին, ուրիշը առին, անանք ալ ու-
 րիչներու համար թողին, և մէկ
 տարվան մէջ շատ անգամ կին փո-
 խեցին : «Ամէն մարդ օրէնքի կողմա-
 »նէ ազատ և իրարու հաւատար կը
 »ճնանին» խօսքը իբրեւ սկզբունք
 բռնելով՝ կարծեցին և անանկ բռ-
 նեցին թէ՛ անկէց ետքը մարդ մար-
 դու բնաւ մէկ երեսէ մը պարտա-
 կանութիւն չ'ունի : Տայց ստանկ
 գէշ զրուցված և գէշ հասկըցված
 ծանօթութիւններուն փնասը և ան-
 պատշաճութիւնները՝ մեծ և գլլ-

խաւոր մարդիկ շատ աղէկ հասկը-
ցան, և վերջապէս՝ մարդկային ազ-
գի իրաւանց նոր գիրքերուն մէջ՝
քաղաքական ազատութեան և հա-
ւասարութեան խուելի ճիշդ սահ-
մաններ կը գտնեմք :

Բայց այս խոշոր բառերն ալ շատ
գործածած ատեննին ի՞նչ ատեն էր :
Ի՞նչ որ է նէ՝ համարձակութեամբ
ըսենք ասիկայ, որ մենք ազատու-
թեան և հաւասարութեան և եղ-
բայութեան աւելի ազնուական և
մաքուր և ճշմարիտ գաղափարը՝ Վը-
րիատոնէական կրօնքի մէջ կը սորվինք :
Ասոր ձեռօքը՝ ցածութեան և գե-
րութեան լուծէն ազատվածնուս
պէս անիրաւութեամբ ուրիշներու
վրայ տիրելէն ալ հեռացած ըլլա-
լովնիս՝ բարեկարգ ազատութիւնը
կը սիրեմք, որ օրինաց սրաշտպան ըլ-
լայ և անոր յարգութիւն տայ : Ա-
սով է որ ամէն մարդու վրայ մեր
մարդկային բնութեան յարգը կը
ձանձնամք ու կը պատուեմք, քանզի
այս բնութիւնս անոնց և մեր մէջը

հասարակաց է, և ընկերութիւնը հաստատ բռնող և ամէն անդամք ները իրարու հետ կապող հնազանդութեանը ամենեւին չի դպչելով՝ ամէն մէկուն իրեն ինկածը կուտամք, Աստուծոյ և օրինաց առաջ անոնք ամէնն ալ մեղի հաւասար և մեղի ընկեր բռնելով: Այս կրօնքովս է որ՝ անոնք ամէնն ալ, և մեղալ անոնց հետ, մի և նոյն հօր զաւակ կը բռնեմք. մեր անձը սիրածի պէս անոնք ալ կը սիրեմք, և թէ որ ամէնս ալ մի և նոյն հոգւով հոգեւորված ըլլայինք նէ՝ խելքերնիս ալ սրտերնիս ալ մէկ կ'ըլլար առաջին հաւատացելոց պէս:

Բանաւոր: Այս ատենս՝ այս անունը Հռոմայու տասնապետներուն և եռապետներուն և հարիւր հոգիէ բաղկացեալ ժողովքին և Վիննեսիոս Սիրակուսացիին և Փալարիս Ալրականդացիին և Ներոնին և Կալիգուլայի պէս մարդոց չէր տրուվէր. այլ այս անուանս արժանի ըլլալու համար՝ կայսր և թագաւոր

ըլլալը միայն հերիք սեպված էր։ Աթէնքի վերջին թագաւոր բարե- սիրտ Վոգրոսը՝ որ իր հայրենեացը ազատութեանը համար իրեն կեանքը չի խնայեց . Տիտոս, Անտոնինոս, Սարկոս Աւրելիոս, չորրորդ Անրիկոս, հայր հայրենեաց անունով ծանօթացած երկոտասաներորդ Վուդոզ վիկոսը, ասոնք ամէնն ալ բռնաւոր կը սեպվէին, և ռամիկ հասարակութիւնն ալ ասոր կը հաւատար :

Աղնուսիանք : Յունաստանի քանի մը հասարակապետութեան մէջ, և մանաւանդ Աթենացւոց հասարակապետութեան մէջ այս բառս ուսման համար իրեն բառը որքան աղմուկներու և խռովութեան պատճառ եղան : Սեր մէջ ալ առաջին բառը անանկ եղաւ . որուն թէ որ բուն ստուգաբանութիւնը նայվինէ՛ աւելի պարծանք մը ըլլալու է այս անունս ունեցողին . որովհետեւ նշանակութիւնը՝ հասարակութեան առած մըտքէն շատ հեռու է : Աւրիչ մը ընդարձակ նշանակութեամբ

առնելէր նէ՛ հասարակութիւնը և ժողովուրդը քաղաքական ժողովքներու մէջ ներկայացընող մարդոցը ազէկ կը յարմարէր . և ասոնցմով նոյն իսկ կառավարութիւնը մէկ ազէկ ազնուապետութիւն մը դարձեր էր . միայն այս բառս ո՞րքան արիւններ թափուելու պատճառ եղաւ : Մէկ մարդ մը հարձուտ էր մի , աղնիւցեղէ՞ էր մի , քահանայ էր մի , և կամ ազգին մէջ մէկ պաշտօն մը , մէկ աստիճան մը ունէ՞ր մի . աղնուկան անուներ վրան կը դնէին և կը մեռցընէին :

Ահա՛ մարդոց մէջ բառերը աւանկ կը բանէին , մէկը առանց հասկընալու վրան կ'առնէր՝ և ցաւը կը քաշէր . ետքը երբ որ ինքը զօրանար նէ՛ անուներ ինչպէս առեր էր նէ աւանկ կուտար : Աեղծ (խալալ) կամ խառնուրդը (այարը) ցած ըստակ դարձուցին . բայց այս ալ հոգ չէր . ասոր միջնորդութեամբը կրօնական ուղած դէշութիւննին ամէնն ալ ընել . և այս բառերուս մէկը հիննար

և գործածութիւնը խափանէր և ուժը կտորէր նէ՛ անոր տեղը ուրիշ բառ կը գտնէին, անոր ալ բուն նըշանակութիւնը աւրելով գործածելու: Անոնց աչքին ամէն բառ աղէկ էր. ուզածնին միայն այն էր որ՝ հասարակութիւնը խաբելով իրենց ուզածը ընելու սպառուակ ըլլայ: Իայց մեր մէջէն ո՞վ կայ որ՝ ուրիշ ներուն մնաս հասցրնելու համար ատանկ խարդախ ճամբաներ բռնէ: Ո՞վ կրնայ մարդ ըլլալէն դադարիլ: Ինչպէս՝ եղբայրներէ բազկացեալ մէկ ժողովուրդ մը ըլլալով՝ կրնայինք մենք մեզ նենգութիւնով կամ բռնութիւնով՝ խարդախ գաղանններէն և յափշտակող գայլերէն կամ վագրէն աւելի արիւնտէր ցըցրնել ուրիշներուն:

Խօսք մը կայ որ՝ « Աւրիշը ձանձ » բացընելուն վարպետութիւնը՝ ա » մէն բան լրման ըսելուն վրայ կը » կայանայ »: Սենք ալ թէ որ հասարակութիւնը խաբելու և ամէն գէշութիւնները օրինաւոր սեպել

տալու համար միտքը գէշի տանել-
 լով գործածված բառերուն ամէնուն
 վրայ զատ զատ խօսելու ըլլայինք նէ՝
 կասկած չ'ունիմք որ կարդացողը կը
 ձանձրացընէինք : Բայց երկու բառ
 ալ կան . հայրենասիրո՞ւն և հայրենա-
 սէր . ասոնք ալ ետ ձգել չ'եմ ուզեր :
 Ապարտայու և Վճէնքի և Հռովմայ
 պինտ աղէկ ատենները՝ հայրենեաց
 փառացը և պատուոյն նախանձախըն-
 դրութիւնը ամէն մարդու սրտին
 մէջը կրակի պէս կը վառէր . անոր
 վրայ եկած փորձանքներուն վրայ սրը-
 տերնին կը ցաւէր , կուլային , և շատ
 մեծ ջանքեր կ'ընէին . պէտք որ ըլլար՝
 և օգուտ ընելը խելիքնին կտրէր նէ՝
 իրենց անձնակրան հանգոտութեանը
 և շահուն և մինչեւ կենացը վրայ
 անգամ գալու շատ մեծ վտանգնե-
 լու տակ կը մտնէին . իրենց գործ-
 քովը իրենց ազգին և հայրենիքին
 պարծանք բերելու՝ և անոնք սրայ-
 ծառացընելու կը նայէին . իրենց ա-
 ռաքինութիւններովը և խիստ և
 զգաստ վարքովնին փառք կուտային

անոնց . և ահա՛ բուն և ճշմարիտ
հասարակապետութեան մարդիկը ա-
սոնք են : Սեր օրերն ալ քանի մը
մարդոց հայրենասէր և ազգասէր ըստե-
ցաւ նէ՛ ի՞նչ սովորութիւններ և
ի՞նչ բարքեր ունէին ասոնք , և ի՞նչ
խելքի տէր մարդիկ էին : Ասանկ
կ'ըլլային , կամ ասանկներու կարգը
կ'անցնէին անոնք՝ որ օրինաց հընա-
զանդող՝ բայց հանդարտ և խաղա-
ղասէր մարդոցը համար՝ կասկածելի
մարդիկ են ըսելով ամբաստանու-
թիւն կ'ընէին : Խռովութիւն հա-
նողներուն մէկ միաբանութեանը
կամ ընկերութեանը անդամ կ'ըլ-
լային . և յափշտակութեամբ և զըր-
կանքով քիչէ շատէ իրենց հարստու-
թիւններ կը դիզէին . շատը մէկէն
ձեռք չի կրնային ձգել նէ՛ քիչին ալ
բաւական կ'ըլլային : Վերաններնուն
եւրծ խօսքն էր՝ ջարդել , արիւն և
մահ . ասով իրենք իրենց հայրե-
նեսցը նախատինք՝ և իրենց ազգին
տանջանք կ'ըլլային . միայն գէշու-
թեան և զրպարտութեան հետ եղ-

բայր կ'ըլլային : Այս նշաններուն նայելով՝ որ այն ատենները մեր մէջը չափէն ելել շատցան, հարկ կ'ըլլայ մեզի ըսել որ, քաջութեան և կտրիճութեան կողմանէ ամէն ատեն Պաանսրդ եմք ալ նէ՛, ազգասիրութեան կողմէն ամէն ատեն՝ ալ կեդեմնացի և Աթենացի չ'եմք կրցած ըլլալ :

Այս յօդուածս երկու երեք մտգական բառերով գոցենք, որոնք ծուռի առնելը հաստատուն և հասարակաց սովորութիւն եղած է : Առասանկ են ընդհանուր բարի, և հասարակաց բարի բառերը : Ասանկ մարդուն աչքը կապելու զօրաւոր խաբեբայ պատրուակի և վարագոյրի պէս գործածված բառերովն է որ՝ հասարակութեան ժանտախտի պէս եղող խարդախ մարդիկ միշտ իրենց փառասիրութիւնը և իրենց անձին մասնաւոր օգուտը գոցած են : Հասարակաց բարւոյն համար պետութիւնները տակնուվրայ պիտի ընեն . Քաղաքացիները իրարու դէմ կռիւի

պիտի հանեն, իրենց հայրենիքը ծա-
 ուայութեան երկաթով պիտի կա-
 պեն, իրենց ատենական մարդոցն ալ՝
 իրենցմէ ետքը եկողներուն ալ՝ թրշ-
 ոււառութեանը և խեղճութեանը
 պատճառ պիտի ըլլան, և ասոնք ա-
 մէնն ալ ինչո՞ւ համար, հասարակաց
 Բարոյն համար: Ասանկ մարդիկս են
 որ ամէն ատեն անվայել գործքե-
 րու ուժով դէմ կեցող կը յըցընեն
 զիրենք, և յանդգնութեամբ կը
 սարծին, որպէս թէ ասանկ բանե-
 րը շիտկելու են ելեր, և ասիկայ պատ-
 ճառանք (վէսիլէ) բռնելով՝ վեր-
 ցընել ուզած գէշութիւններէն
 հազարապատիկ ծանրերուն ճամբայ
 կը բանան: Սակայն ասանկ մարդիկ
 են որ՝ իրենց իշխանութեանը տա-
 կը առատութիւն և ազատութիւն
 և հանգիստ կեանք կը խօստանան,
 և բերած պտուղնին է սրղութիւն,
 գերութիւն և խեղճութիւն: Ան-
 միտ ուամիկներուն առաջը խայծ
 (եէմ) կը նետեն, քանի մը կըտոր
 սուտ ու փուտ յոյս և ակնկալու-

Թիւններ տալով անոնց ամբարտա-
 ւանութիւնն ու ազահու-թիւնը
 ձեռք կ'առնեն, խմելու ներկայա-
 ցուցած կախարդական գաւաթին
 շրթունքը քիչ մը մեղր քրտելով կ'ա-
 նուշորնեն ու անանկ կուտան, և
 բաղմութիւնը և ռամիկը ազահ և
 անմիտ՝ ասանկ խարդախ անուշու-
 թիւններու բռնրվելէն ետքը՝ վար-
 պետութիւնով պատրաստելով ռ-
 կեղծ գաւաթին տակը բարակ թոյ-
 նէն և լեղիէն զատ բան չ'են կրնար
 գտնել: Արանի՛ թէ՛ իրենք իրենց
 գլխուն մտածելու՝ և հասարակաց և
 ընդհանուր բարի բառերուն վրայ
 խորհելու կարող մարդիկ՝ այս գե-
 ղեցիկ զրուցվածքներս գործածող
 խարդախ և չարամիտ մարդոց բուն
 ներքին դիտաւորութիւնը ինչ ըլլա-
 լը հասկընալու համար քիչ մը խելք
 հոգնեցրնէին: Արանի՛ թէ՛ միշտ մըտ-
 վընուն չի հանէին որ՝ ասոնց գործա-
 ծած այն մեծ և գեղեցիկ բառերը՝
 երբոր մարդկութեան իրաւունքը
 ոտքի տակ առնելու և արդարու-

Թեան և ընկերական կենաց կանոնները՝ որ ամէն մարդ և ամէն ազգ իրարու հետ կը կապեն, քակելու գործիք եղած ատեննին բոլորովին աննշան բառ կը դառնան. կամ շէտակը ըսեմք, իրենց բնական նըշանակութիւնը ինչ էր նէ, անոր բոլորովին հակառակ միտք մը կուտան: Մէկ բան մը արդարութեան կանոնէն դուրս ելածին պէս՝ անհնար է որ հաստատուն և ամուր կերպով հասարակութեան աղէկութիւնը ընէ. ատանկ բաները ոչ ընդհանուրին կրնան օգուտ մը ընել՝ և ոչ մասնաւորներուն:

Աթենացւոց ժողովուրդն ալ ա սիկայ մէկ հարկաւոր պարագայի մը մէջ աղէկ հասկըցաւ, կամ թէ որ ժողովուրդը չէ՛ ալ նէ՛ օրինաւոր և արդար ըսելուն միտքը անոնց սորվեցընողը աղէկ հասկըցած էր: Քանի՛ քանի՛ անգամ պէտք եղաւ այս դատաստանիս ատեանէն մեզի յիշեցընել այս բանս, թէ որ մտիկ ընելու ականջ և միտք և յարմարութիւն

ունենայինք նէ : Թէմիսդ ոկղէս մէկ
 ճամբայ մը մտածեր էր , որով բոլոր
 յունաստանի պետութիւնը Աթե-
 նացիներուն ձեռքը պիտի անցնէր :
 Եւ ասոր համար ուրիշ բան պէտք
 չէր , բայց եթէ դաշնակից տէրու-
 թիւններուն նաւատորմիլը (տօնան-
 ման) բռնկեցնէլ , որ մէկ մօտ նա-
 լահանգըտի մը մէջ կայնած էր :
 Հասարակութեան ժողովք կար :
 Թէմիսդ ոկղէս ըսաւ թէ՛ մտքէս մեր
 հասարակապետութեանը շատ օգ-
 տակար մէկ բան մը կ'անցնի , բայց
 միայն մէկ մարդու մը կրնամ զըրու-
 ցել . հասարակութեան բերանը
 չեմ կրնար ձգել . չըլլայ որ ասանկ
 բան մը՝ որ ծածուկ մնալ պէտք է՝
 բերնէ բերան երթալով՝ իմանալնին
 պէտք չեղող մարդոց ալ ականջը հաս-
 նի : Արիսդիտէսը ցրցուցին , որ ա-
 նոր պատմէ . և իրենք ամէնն ալ
 խոստացան անոր դատմանը հաւա-
 նութիւն տալ : Արիսդիտէս Թէմիս-
 դ ոկղէսին մտքինը հասկընալէն ետ-
 քը ներս մտաւ . և ըսաւ . Աթե-

նացւոց հասարակապետութիւնը մե-
ծութեան և յաջողութեան ծայրը
հասցրնելու՝ թէմիսդոկղէսին մըտա-
ծածէն աղէկ և յարմար միջոց չի
կրնար ըլլալ, սակայն ասկէց ալ ա-
նիրաւ բան չի կայ: Հասարակութիւ-
նը պօռաց, չենք ուզեր: Այս
ձայնս ամէնէն մէկէն ելաւ: Ո՞վ
Գաղղիացիներ, որքան և քանի՛ վը-
ճիւններ ելան, որոնց դէմ ամէնըդ
մէկ բերան « չենք ուզեր » պօռալու
էիք:

Բառերը ծուռ մտքի առնելէն
որքան մնասներ ելելիքը հասկըցը-
նելու համար բաւական խօսեցայ,
և թէ որ այսքան օրինակներով կա-
րող ըլլայի իմ նմաններս միշտ ասանկ
բաներէն զգուշացրնելու՝ որ անթիւ
և անհամար մոլութիւններու և մոլո-
րութիւններու և գէշութիւններու
պատճառ և աղբիւր է, իմ անդամ
եղած մարդկային ընկերութեանն ալ՝
և մասնաւորապէս իմ ազգիս ալ մեծ
օգուտ ըրած կ'ըլլայի, որ աշխարհ-
քիս մէջ ինձի սիրելի ինչ բան ու-

նիմ նէ՝ միշտ և հանասրազ անոնց
 ամէնէն աւելի ինձի սիրելի երեւ-
 ցած է : Ա՛յ, ատանկ սլըշկուկ հի-
 ւանդութեան մը դեղը ի՞նչ է : Ա-
 մէնէն ասպահովը այս կըրնայ ըլլալ
 որ՝ քիչ մը սխտանի բըռնելած բա-
 ռերուն վրայօք յստակ և ճիշդ գա-
 ղափար մը ունենամք, սահման չի
 տուած բառ գործ չածեմք, և ասոր
 կանոն բըռնեմք մեզի չէ՛ թէ կարծի-
 քը, որ միշտ անհաստատ և փոփո-
 խական է, այլ նոյն իսկ բանին բը-
 նութիւնը : Խեղացի և շիտակ միտք
 ունեցող մարդ մը ամէն ատեն բը-
 նութենէն պէտք է որ խորհուրդ
 առնէ : Ա՛սկէց զատ ուրիշ բան մըն
 ալ պէտք է, բայց գէշն այն է որ
 ասիկայ այնքան գիւրին չէ՛ ամէն
 մարդ մէկ մէկ առանձին մտքի տէր
 ըլլալուն համար, և ասիկայ այն է որ՝
 տրրված սահմանը ամէնուն ալ ըն-
 դունելի ըլլայ, և ամէն մասնաւոր
 բաներու ալ յարմարցընելով գոր-
 ծածելու աղէկ գայ : Թէ որ այս
 զգուշութիւններս հնարաւոր և կա-

րելի ըլլային նէ՝ բառերը ծուռ մտ-
 քի տանելը այսքան ընդհանուրի
 գացած և այսքան միասնեբու պատ-
 ճառ եղած չէր ըլլար : Մայց մար-
 դիկ , և մանաւանդ հասարակու-
 թիւնը ինչպէս որ են նէ անանկ
 բռնելու ըլլամք նէ՝ անկասկած ա-
 նանկ պիտի գիտնամք որ , ամէն ա-
 տեն աղէկ մարդոց դէմ գէշերուն
 ձեռքը շատ միասակար մէկ զէնք
 մը կ'ըլլայ ասիկայ . և խաբեբայ
 մարդիկ հասարակութիւնը խաբե-
 լու և գլխէ հանելու համար ասոր
 չտի չեն կրնար ուրիշ զէնք գոր-
 ծածել : Մսենք թէ մէկ բան մը աչ-
 քէ ձգել կ'ուզվի . ամէն ատեն ա-
 նոր մէկ ատելի անուն մը կը տրվի .
 անանկներուն անգամ՝ որ մեզի օգ-
 տակար եղած ատեննին աղէկ կը
 սեպէինք , մեր աչքէն իյնան նէ այս
 կերպովս կը վարվումք : Մտանկ բանե-
 ըր երբոր մեզի միասակար ըլլան ,
 կամ պարզապէս վտանգաւոր ըլլան
 նէ՝ շուտ մը անուննին կը փոխեմք .
 անանկ անուն մը կը դնեմք վրանին ,

որ հասարակութեան ատելի է կամ նախատելի :

Այս ամէնս ըսելով՝ սիրելիք , դէպ ՚ի երջանկութիւնը էփ աղէկ ճամբայ ըրինք : Նախ՝ թէ որ մեզի աւելի հարկաւոր և սխտանի եղած բաներուն վրան առողջ և յտակ գաղափար մը կրցանք նէ ստանալ : Երկրորդ՝ թէ որ բարիքներուն այլ և այլ տեսակները՝ և բարիքն ու չարիքը իրարմէ որոշելու և իրարու հետ բաղդատելու սպահով և ան սրխալ կանոն դտանք նէ՝ մեր կէնացը սովորական ընթացքին մէջ մենք մեզ կառավարելու համար : Եւ երրորդ՝ թէ որ մեր սխալելուն և մոլորելուն սովորական եղած սրտ ճառները կրցանք նէ ճանչնալ և որոշել :

Իմ այս տեղս ձեզի սորվեցուցած տրամաբանական կանոններս՝ ինձի անանկ կերեւի որ՝ դպրատան մէջ սորվելոված տրամաբանութիւնը կ'աժէ . հաւաքաբանութեան կողմանէ : Ի այց կրից կողմանէ՝ հարկաւորա

պէս անկէց շատ աղէկ է : Թէ որ
կրից և հաւաքաբանութեան տրա-
մաբանութենէն աւելի ամէն ատեն
ասիկայ գործածէինք նէ՝ որքան գէ-
շութիւններէ և մեասներէ ազատ
կը մնայինք :

Գ Լ ՈՒ Խ Է .

Երջանկութեան գլխաւոր աղբիւրներուն վրայ :

Հ Ա Ս Կ Ը Յ Ա Ծ . կ'ըլլաք՝ սիրելիք ,
որ ձեզ երջանկութեան հրաւիրելու
վրա ձեզի չ'ըսի որ այս աշխարհքիս
մէջ պարզ երջանկութիւն կը գըտնը
վի առանց մէջը օտար խառնուրդ
ըլլալու : Վ՝ օրդէր կ'ըսէ . « Երջանկու-
թիւնը ո՞ւր գըտնելու է : Ը՝ մէն ա-
տեն , ամէն տեղ , և բոլոր բընու-
թեան մէջ : Բ՝ այց ամբողջը մէկ
տեղ մըն ալ չի կայ . ո՞ւր որ գըտ-
նես նէ՝ չափով է . իրեն մէկ հա-
տիկ հեղինակին քով գըտնելածէն
զատ ուրիշ ամէն տեղ անցաւոր է » :

Ասիկայ մտացածին բան մը չ'է՛ որ
 ես ձեր խաթերը համար անոր ճըշ-
 մարտութեան կերպարանք տուած
 ըլլամ, պարասպ և սուտ հայեցողու-
 թիւններով խաղալուն ատենը և տե-
 ղը չ'է՛, անոնք անանկ երազ են որ՝
 մարդոյս զուարճալի կուգան, բայց
 արթնցածին պէս ոչինչ և անյայտ
 կ'ըլլան : Արջանիկ ըլլալու սորվիմք,
 բայց անանկ երջանկութեամբ՝ որ
 աշխարհքիս մէջ մարդկային բընու-
 թեան անոր հասնիլը հնարաւոր ըլ-
 լայ : Մինչեւ որ ասկէց աւելի հաս-
 տատուն և տեւական վիճակի մը
 հասնիմք նէ՛ այս աշխարհքիս մէջն
 ալ մեր ձեռքէն եկածին չափ երջա-
 նիկ ըլլամք, և Աստուածային նա-
 խախնամութիւնը մեզ ինչ վիճակի
 մէջ դրեր է նէ՛ թող ըսեն որ՝ ա-
 նոնց ամէնէն ալ մեր երջանկութեա-
 նը պէտք եղածին չափ բան փաստը
 կերու աղէկ ճամբան գտեր եմք : Աւ-
 ստիկայ մեզի հերիք է :

Աս ամէն բանէն առաջ ձեզի
 ինչ խոստացայ : Ախորժեւի զգաց.

մունքներ , ներքին և մաքուր ուրախութիւններ , հոգւոյն միշտ մէկ վիճակի մէջ մնալը , և գրեթէ անփոփոխելի մէկ խաղաղութիւն մը : Ահա իմ ձեզի խոստացածներըս ասանկ բաներ էին : Այս խոստմունքս կատարելագէտ լեցրնելու՝ և ձեզ չի խաբելու համար , նորէն գամք խելքին և կրօնքին մեզի սորվեցուցած առողջ խելքերուն , և անսրխալ գաղափարներուն :

Մէկ Ատուած մը կայ , որ բոլոր գտնելի բաներուն մէկ հատիկ աւրարիչն է , և ամենայն կատարելութեան աղբիւրն է : Արքան որ իրեն ինքնին ինչ ըլլալուն վրայ կը մտածեմ՝ այնքան իրեն գործքերուն վրան կը նայիմ , և այս նայելուս և մտածութեանս մէջ անանկ մէկ փափուկ զգացմունք մը կ'իմանամ՝ որ կեանքս շատ կ'անուշընէ ինձի :

Մէկ հատիկ էակին վրան միացեալ կը տեսնեմ մէկ էութիւն մը հարկաւոր , բացարձակ , անկախ , անփոփոխ , ինքնագոյ էակի մը կա-

տարելու թիւն , առանց սկսանելու
 և առանց վերջանալու մէկ գոյ ըլ-
 լալ մը , որ իրեն հարկաւոր գոյակ
 ըլլալուն հետեւութիւնն է . և ա-
 սոր գոյութիւնը ո՛չ դարէ բաղադ-
 րած է , ո՛չ օրէ , ո՛չ ժամէ , ո՛չ բոպէէ :
 Ասոնք ամէնն ալ սկսված պիտի ըլ-
 լան . ուզածիդ չափ պիտի տեւեն .
 վերջապէս պիտի անցնին երթան և
 ոչնչանան՝ առանց յաւիտենակա-
 նութեան մէկ ամենամանր մասին
 ալ մօտենալու : Այս յաւիտենա-
 կանութիւնս ճանչնալ հարկ կ'ըլլայ
 կոր ինձի : Անոր վրայ անհուն և ան-
 սահման մէկ կատարելութիւն մը կը
 տեսնեմ . որ իրեն ամենակարող և
 իմաստուն և ազատ կամքէն ելած
 են ամէն իրեն ստեղծած բաները :
 Անոր վրայ գերագոյն աստիճանի հա-
 սած կը տեսնեմ կատարելութեան
 և բարութեան և էութեան աստի-
 ճանները . որ ուրիշ ամէն իրարմէ
 կախում ունեցող և փոփոխութեան
 տակ եղած էակները ամէնն ալ էու-
 թիւննին անկէց ունին : Այս յատ-

Կապէս անհուն ըսված բանին գա-
 ղափարը իմ մտքիս մէջ՝ յաւիտենա-
 կանութեան գաղափարին բնութե-
 նէն է, և անոր ամենեւին նմանն է :
 Ասիկայ մէկ յաւելումն մը կամ դու-
 մար մը կամ բազադրութիւն մը սե-
 պել, որպէս թէ շատ մը հունաւոր
 և չափի և սահմանի տակ մտնող է-
 ակներ իրարու հետ միանալով և ի-
 րարու վրայ դիզվելով և եվելնալով
 մէկ անհուն և անսահման մը եղեր
 են. ասիկայ յաւիտենականութիւնը
 և անհնութիւնը բոլորովին աւրել
 և ոչնչացրնել է : Չափու և վախ-
 ճանի տակ մտնող բաներուն գաղա-
 փարները ես անչափով և յաւիտե-
 նականով ունիմ, և ասիկայ ալ կայ
 ըլլալուն համար կրնամ ունենալ.
 անկէց դուրս գտնելված բաները ա-
 մէնն ալ հունաւոր ըլլալով՝ այս
 հունաւորներուն մէկն ալ ինձի չի
 կրնար անհունի գաղափար տալ :
 Ռուսո՝ յաւիտենական էակին վրայ
 խօսելով կ'ըսէ. կրնանք անոր անհուն
 էութեանը վրայ վէճ ընել. բայց

անկեղծութեամբ անխկայ չի ճանչնալ չ'եմք կրնար ընել :

Այս տեղս ես ալ այս Ղինեվա ապի փիլիսոփային մտաց յափրջտակութեանը հաղորդ ըլլալով ես ալ անոր հետ կ'ըսեմ. « Վի էակդ էից .
 » դու կայ ըլլալուդ համար ես ալ
 » կամ . անդադար քեզ մտածելը՝ զիս
 » մինչեւ իմ աղբիւրս հասցընել է . և
 » իմ խելքս բանեցընելուն ամէնէն
 » աղէկ կերպը այն է որ՝ ես զիս քու
 » առաջդ ոչինչ սեպեմ . իմ մտքիս ըզմայլիլը և իմ տկարութեանս հիս
 » ցումը այս է՝ որ քու մեծութեա
 » նրդ տակը ես ճրզմբլածի սէս ըլ
 » լամ » :

Իմ գաղափարներուս համեմատելով անհուն գտածս՝ ցանկութիւններուս հետ համեմատելով ալ անհուն կը գտնեմ : Այլ այս բանիս վրայ իմ միտքս սրտիս հետ կատարեալ համաձայնութիւն ունի : Մէկ անյաղթելի յօժարութիւն մը կ'իմանամ իմ սրտիս մէջ , որ զիս գէպ 'ի մէկ անսահման բարիքի մը կը տանի .

զիս երջանկութեան տանողն ալ
 այն է : Մասնաւոր բարիքներու բըռ-
 նըվիմ մնամնէ՝ կիմանամ որ անոնք
 իմ փափաքներս քիչ մը ատեն կու-
 շացընեն՝ և զիս սպարապ բաներով
 կը յասպաղէցընեն , բայց ուղածս
 տալ՝ անոնց ձեռքէն չի գար : Ասոնց
 վրայ ուրիշ բարիքներ ալ կը բերեմ ,
 ասոնք կ'եվելցընեմ , կը շատցընեմ ,
 բայց ամենեւին անանկ աստիճանի
 մը հասնելիք չունիմ՝ որ այսքանս
 հերիք է ըսեմ ու հոն հանգչիմ : Ա-
 ուարկաները կը փոխեմ , ամէն դի-
 կ'երթամ , ամէն բանի վրայէ կանց-
 նիմ , և բան մը չեմ գտներ որ իմ
 փափաքս կատարելապէս կը շտացը-
 նէ , ամէն օր նոր նոր փափաքներ
 կը ծնանին սրտիս մէջը : Կուզեմ ա-
 մէն բան մէկ տեղ բերել և ամէնն
 ալ ունենալ , և այս աշխարհքիս մէ-
 ջի բաներուն ամէնը ունենամ ալ
 նէ՝ ծակաչքութիւնս կը շտանալիք չու-
 նի , ձեռք ձգելու համար մէկ ու-
 ըրիշ աշխարհք մըն ալ կը փնտրուեմ .
 ինչպէս որ Աղէքսանդր Սակեդոնա-

ցին : Եւ Աեսար բոլոր աշխարհքի տիրելէն ետքը՝ ամէնը աս է մի եղեր ըսածին պէս ես ալ նոյնը կ'ըսեմ : Աեւերոս կայսրը մեռնելու ատենը մօտեցաւ նէ՛ իր մեռնելէն ետքը մարմնոյն մոխիրը մէջը պահիլելու սափորը (խաւանդը) առաջը բերել տուաւ ու ըսաւ . ո՛վ դուն պզտիկ սափոր . զիս բոլոր աշխարհքս իր մէջը չէր կրնար ամփոփեր կոր նէ , հիմա ես քու մէջդ պիտի սղմիմ մի : Իմ ալ է՛ն վերջը ըսելէքս այս է : Ասկայն անիկայ՝ իմին ապականացումսնէս ի՛նչ որ պիտի մնայ նէ՛ միայն անիկայ իր մէջը պիտի պարունակէ . իմ հոգիս անկէց ետքն ալ՝ ամէն աւտեն ցանկացած երջանկութեանս հասնելու համար կենդանի պիտի մնայ :

Աս ինձի համար բնական ազգմունք եղած փափաքներս աւելի բարակ քննեմք . ասանկով երբոր ըզգայարանաց ազատ մնալով՝ զիս ըստեղծողին Աստուծոյ իմ հոգիս ընդունակ ըրած բոլոր խորհրդածու-

Թիւններուն և զգացմունքներուն
 ես զիս տամ նէ՛ այս փափաքներս
 այն ատենն ալ կը գտնեմ որ իմ սրբ-
 տիս էն խորունկ տեղերը քանդակ
 ված են : Ինձի մէկ կատարեալ բա-
 րի մը պէտք է . և ինչպէս որ իմ սրբ-
 տիս մէջ փափաք մը կայ հոգւոյս ան-
 կորուստ և անմահ մնալուն վրայ ,
 նմանապէս անհուն բարին ալ ունե-
 նալու փափաքը կայ . որ է այն՝ որ
 Աստուած լուման իմրս ըլլայ . գերա-
 դոյն աստիճանով իմ սրտիս պէտք ե-
 ղածը ահա՛ այս է : Օ իս երջանիկ
 ընելու բարիքին մէջէն կատարելու
 Թեան մէկ սղտիկ աստիճանը վեր-
 ցուր . անիկայ իմ աստուածս չի կրը-
 նալ ըլլալուն համար իմ վախճանս ալ
 չի կրնար ըլլալ : Այս անկէց պակաս
 աստիճանը՝ (Թէ որ անհունէն բան
 մը սրակսելուն հնարը կայնէ ,) ես ա-
 նոր կուտայի իմ երջանկու-Թիւնս
 կատարեալ ընելու համար , Թէ որ
 ասոր ուժս օգտէր նէ : Այս ի՛նչ որ
 եմ նէ՛ անկէց վար և անկէց պակաս
 ըլլալու ալ յանձնառու կ'ըլլայի ,

միայն ասոր համար որ՝ օր մը անիկայ ստանալու ըլլալով՝ ի՛նչ որ յաւիտեան կրնար մնալ, և ի՛նչ որ էր նէ ինքնին՝ անանկ ըլլար ինձի համար ալ :

Այս աշխարհքիս մէջ գտնուած բաներուն մէկն ալ այս գերագոյն բարւոյն չի կրնալ մօտենալուն համար է որ՝ այն ամէն մասնաւոր բարիքները որոնց ետեւէն մենք այնքան երեւով կ'երթամք, և անով կը մոլորիմք, միշտ մեր սրտին մէջը անանկ պարաս տեղ մը կը թողուն, որ մեր ցանկութիւնը միայն կրնան այն պարասութեանը չափոյն հաւասարիլ, երկուքն ալ անհուն ըլլալուն համար : Այն ալ ասոր համար է որ՝ մեր երեւակայութիւնը՝ որ միշտ նոր սրտկերներ և նոր ձեւակերպութիւններ հնարելու վարպետ է, մեր ցանկացած բանին անանկ կատարելութիւններ կուտայ, որ անոնք ինքնին չ'ունին. և անոնց իրօք ունեցած կատարելութիւննին ալ՝ ի՛նչ աստիճան կ'ըլլան նէ ըլլան, մեզ միայն մինչեւ այնքանը կը բռնեն, որ ու-

նեցած կատարելութիւններնին լը
 ման ժառանգեմք, և անկէց ետքը
 մենք ուզեմք չ'ուզեմք՝ մեր սրտին
 զգացմունքը մեզ աւելի իրական կա
 տարելութիւն ունեցող բանի մը
 փափաքել կուտայ : Ա երջապէս ա
 սոր համար է որ՝ ինչպէս Ատիսըն
 կ'ըսէ, Աստուած մարդոյս հոգին ա
 նանկ ստեղծած ըլլալով, որ իրեն
 վախճանը և իրեն երջանկութիւնը՝
 կատարեալ ըլլալու պայմանով՝ Աս
 տուծմէ զատ ուրիշ տեղ չի գտնուի,
 և այս երջանկութեան էական մա
 սունքներուն մէկը՝ Աստուածային
 էութեան դէմ յանդիման տեսու
 թիւնը ըլլալով, իրեն հաճոյ երեւ
 ցաւ մեր բոլորները գտնուլած էակ
 ներուն վրայ մտածելուն մէջ անանկ
 մէկ հեշտութիւն մը դնել, և այս
 բաներս սրբան մեծ և ընդարձակ
 յատկութիւն ունենան նէ՝ ասոնց
 մէ իմացած հեշտութիւննիս ալ այն
 քան սաստիկ և ուժով կրլայ : Մէկ
 տեղ մը՝ զինքը գեղեցկացընելու և
 ազվոր ցըցընելու պէտք եղած բա

ները ամէնն ալ կատարելապէս ունենայ ալ նէ՛ զիս շուտով կը ձանձրացնէ և կը հոգնեցնէ, երբ որ այն սրտաէզին սահման եղած սրտերը կը տեսնեմ, և երբ որ մէկ սահման մը չ'որոշած տեղ մը գտնուիմ նէ՛ իմ ազատութիւնս այնպէս տեղ կ'իմանամ :

Այս կերպով՝ իմ մտքիս գաղափարներն ալ՝ սրտիս յօժարութիւններն ալ՝ զիս դէպ ՚ի Աստուած տանելու համար իրարու միաբան են . անոր կատարելութիւններուն վրայ ինձի այս տեղ կանխիկ մէկ զուարճութեան և հեշտութեան համ մը կուտան : Անոնցմէ կ'ախորժիմ, որպէս թէ ինձի մասն և ժառանգութիւն ըլլալու բարիքը ասոնք եղած ըլլային :

Իայց նոյն սկիզբէն ելած՝ և նոյն նպատակին նայող ուրիշ շատ մը զուարճալի բաներ կան, որ ինձի ուրիշ կերպ մաքուր զուարճութիւններու և փափուկ հեշտութիւններու և զգացմունքներու ճամբայ կը

բանան : Աս բնութեանը վրայ մտա-
 ծելով և խորհելով կը նայիմ, և ան-
 ջնջելի գրերով անոր վրայ գրված
 կը տեսնեմ գերագոյն էակին կարո-
 ղութիւնը, խնաստութիւնը, բարու-
 թիւնը, հաստատութեամբ կարգ-
 սիրելը, և ամէն յատկութիւնները
 և ստորագելիքները :

Յերեկվան աշխատութեան ժա-
 մանակը անցնելէն ետքը եկած լու-
 թեան և խաղաղութեան ժամանա-
 կին մէջ աչվըներըս մէկ մը երկինքը
 վերցրնելու ըլլամ նէ՝ մէկ տեղ ի-
 բարու վրայ գիղված այն սրբան զար-
 մանալի և հիանալի բաներ կը տես-
 նեմ : Այն ինչ մեծութեամբ և
 վսեմութեամբ լեցուն տեսարան մըն
 է, գիշերվան ճրագ գրված է ար-
 ծաթի պէս փայլուն գնտակ մը, ո-
 բուն պատկերը՝ որ մէկ չափու վրայ
 չի կենար, ջուրերուն մէջ կը զարնէ
 և կը խաղայ, և իրեն հանդարտիկ
 լոյսը էփ աղէկ հեռու տեղեր կը
 լուսաւորէ : Համօրէն բնութիւնը
 տակաւին աչքի առջեւէ չի ծածկե-

լու շատի կը լուսաւորէ , և կակուղ
 և մեղմ գոյներով աւելի գեղեցկու
 թիւն մըն ալ կուտայ , բայց այնքան
 շատ չէ որ մտածութիւնը և հանգըս
 տութիւնը աւրէ : Ասպուտ գմբէ
 թին վրայ անթիւ անհամար աստղե
 բուն փայլելը կը տեսնելի , բայց ա
 սոնք տեսնելով ուրիշ անհամար
 աստղեր ալ մտօքս կը մտածեմ , որ
 հեռու ըլլանուն համար թէպէտ
 մեր աչքին չեն երեւիր , բայց գն
 նէ բազմութիւն մէկէն գտնելած
 տեղերնին իրենց լոյսը իրար խառ
 նելով մէկ ճերմակութիւն մը կը
 ցրցընեն : Աւելի հեռու տեղերը
 ինձի ցրցընող գործիքէ մը օգնու
 թիւն առնելով՝ երկինքին ամէն
 կողմը փայլուն աստղեր կը տեսնեմ ,
 ամէն տեղ աշխարհներ կը տեսնեմ ,
 և ասոնց ամէն մէկուն հետ բաղ
 դատելով՝ այս աշխարհս մէկ կէտէն
 աւելի մեծ չ'է : Ասոնք որո՞ւ ձեռք
 ասանկ վերէն վար կախած բռներ
 է , ի՞նչ խնացականութիւն է որ ա
 սոնց ընթացքը կանոնի տակ է խօ

Թեր, անոնց շուտ քարվածքը ո՞ր գե-
րագոյն երկրաչափ կարգի է գրեր :
Վայծակէն միլեօն անգամ շուտ են ,
և ստեղծված ստեղծէն մինչեւ հիմա
նոյն արագութիւնը և նոյն շիտակու-
թիւնը պահած են՝ ի՛նչ որ ամենա-
կարողը անոնց տպաւորեր է . մէկ
կէտ մը ունին , միշտ անկէց կ'սկըսին
երեւելու . քայելու ճամբայնին
կամ հետքերնին նոյն . ընթացքնին
տեւելու ժամանակը նոյն . շարունակ
նոյնքան ատենի մէջ նոյնքան ճամ-
բան ընելով պիտի գան . առջի օրը
ո՞ր տեղաց երեւիլ սկըսան նէ՛ այն
տեղաց նորէն պիտի երեւին : Այս
ալ տակաւին չ'օգտեր . հաստատուն
և անխոփոխելի օրէնք մըն ալ ունին
որ՝ իրար կը քաշեն , բայց շատ չ'են
մօտենար . իրարու չ'են զարնըվիր՝ և
իրարու ընթացքին ալ արգելք չ'են
ըլլար : Վերին զօրութիւններ կան ,
որ անոնք իրենց շարժմանը կեդրո-
նէն հեռու կը պահեն , հակառակ
զօրութիւններ անոնք իրարու կը մօ-
տեցընեն . որով հարկ կ'ըլլայ իրենց

մէկ վերջին սահման մը բռնել ի
 րենց հեռաւորութեանը, անկէց
 ոչ առաջ անցնիլ և ոչ աւելի հեռա-
 նալ: Այս ահագին զանգուածնե-
 րուն ամէնուն մէկէն միակերպ շար-
 ժելուն ստեներ նրբան ստոնք շարժո-
 զը կը հրէ, և իրենք ալ նրբան և
 ինչպէս անոր հրելուն դէմ կը դը-
 նեն, ինչ ուժ կայ նէ՝ իրարու հեռ
 միացած են, շարունակ մէկ երերալ
 մը՝ բայց ներդաշնակութենէ և չա-
 փէ դուրս չէ՛, ամէն բան ամենա-
 կատար բարեկարգութեամբ կը կե-
 նայ՝ որ նկատողին զարմանք կը բերէ,
 ամէնն ալ ընդհանուրին աղէկու-
 թեանը և տիեզերական կարգին
 պահպանութեանը գործակից կ'ըլ-
 լան իրարու՝ և այսպէս այս երկնա-
 յին ընդարձակ ահագին մարմիննե-
 րը երկինքին երեսը ամէնն ալ իրա-
 րու կապիւմ՝ շղթայի պէս բան մըն
 են: Այսպէս չափը՝ թիւը և կշիռքը՝
 ամէնն ալ կարգի դրում են հոն,
 և ամէնն ալ կատարեալ են: Արար-
 չութեան այս ամէնէն աւելի վար

պետութեամբ շինված գործը ո՞ւր
կը կայնի, վախճանը ո՞ւր կը հասնի :
Հաստատուն աստեղքները ամէն
մէկը մէկ մէկ արեւ են, իրենց բո-
լորը իրենց յատուկ մոլորակներ ալ
ունին, այսքան աշխարհքներուն մէ-
ջը բազմաթիւ բնակիչներ ալ կան¹ :
Եւ թէ որ այս տեսած աստղերուս
ամէնէն բարձրին մէջը և մինչեւ է՛ն
վերին պարունակը մտքովս ելլեմ,
տակաւին տիեզերաց սահմանէն ես
զիս ո՞րքան հեռի կը տեսնեմ : Այլ
Նստուած իմ, միտքս ասանկ ամիշած
ատենը քու առաջդ խոնարհու-
թեամբ գետինը կ'իյնամ, կը վայե-
լեմ աստիք, կը զարմանամ, կ'եր-
կրսպագեմ, ես զիս կը կորսընցընեմ,
և քու էութեանդ անսահմանու-
թեան մէջ կը շփոթիմ, որ երկինքէն
այնքան վեր ես՝ որքան որ հունաւո-
րըն ու անհունը իրարմէ հեռու են :

1 Մոլորակներուն մէջ բնակիչ գանրվիք՝
համեմատութեամբ կարծիք մըն է, այս աշխար-
հիս նայելով մակարեքված : Հաստատուելու կամ
հերքելու ապացոյց բնաւ չի կայ :

Այս մեծ բաներուս նայելէն
 ետքը՝ մեր խենթ կիրքերուն վրայ
 աչքերնիս դարձրնենք նէ՛ այն ինչ
 պրզտիկութիւն կը տեսնենք : Ավ
 երկրաւոր մարդ . որ մէկ հատ մը աւ
 ւաղի վրայ ամէն դին կը խաղաս ,
 կը ծռամուկիս . քիչ մը ոսկիի համար
 դուն քեզ ալ անհանդիստ կրնես՝
 ուրիշներն ալ : Անկ քիչ մը մուխի հա
 մար՝ որ անունը փառք ես գրեր ,
 կտոր մը սուտ մեծութեանց համար ,
 նայէ՛ սա քու անյադ ազահութեա
 նրդ հանած անգութ խաղերը , քու
 տղայական փառասիրութեանդ հաս
 նելու համար ըրած յանցանքներդ
 և անիրաւութիւններդ քեզ ո՞րքան
 անարգ՝ և խաղք ու խայտառակ կը
 նեն :

Բայց ինձի համար ժամերն ալ
 վայրկեանի պէս անցան գացին . Վի
 շերը իրեն քաշած վարագոյրը ժող
 վեց ու ծալեց , աւելի պայծառ լոյս
 մը երեւնալ սկսաւ , և աստղերուն
 լոյսը աներեւոյթ և անյայտ եղաւ .
 միտքս ու զգայարանքներս յափշտա

կելու մէկ ուրիշ նոր տեսարան մը
աչքիս առաջը բացվեցաւ : Արշալու-
սոյ առաջին ճառագայթները եր-
կինքին երեսը կը կարմրցընեն, և ցե-
րեկը լուսաւորելու աստղին երե-
ւելուն աւետիսը կուտան : Այն ալ
կ'երեւի, և սլայծառ սիւսառակը
ամէն դիէն լուսոյ ճառագայթներ
ցաթկեցընելով լեռներուն ծայրէն
կամաց կամաց վեր կ'ելլէ : Արեն
կենդանացուցիչ նայվածքը բոլոր
բնութեան բեղմնաւորութիւն կու-
տայ, բաղմատեսակ գոյներով կը
զարգարէ : Թռչունները անուշիկ
ձայնովին ասոր գալուստը կը բա-
րեւեն, կամ մանաւանդ՝ անոնց եր-
գը արարչին գովասանութիւն մըն է :
Այս քաղցրաձայն երգերը, անուշիկ
առաւօտեան հողմոյն փչելը, յստակ
ջուրով մէկ սղտիկ առուի մը հան-
դարտիկ մըրմըռալով վաղելը, որ
ծուռու մուռ ձամբով մէկ դաշտի մը
մէջ կը քայլէ կ'երթայ, և ուռի
(սէօյիւտի) ծառեր՝ և ուրիշ ամառ
ձմեռ կանաչ մնացող ծառեր՝ վրան

շուք կուտան , պարտեղներուն խոտերուն վրայ փայլող ցօղոյ կաթիլները , դաշտերուն երեսը Ֆինի պէս գեղեցիկ զարդարող գոյնըդդոյն ծաղիկները ասոնցմէ բուրած և օդոյն մէջ ծաւալած անուշիկ հոտերը , առտըվան պաղուկ օդը : Մաքուր հողիներուն և դիւրազգած սիրտերուն , և բնութեան մէջ զԱստուած տեսնողներուն ինչ և սրբան զուարճալի հեշտութիւններ մէկէն աչքին առաջը կուգան :

Մի դու . որ այս աշխարհքիս մէջ ասանկ բաներուն համը մինակ կ'առնես , Աստուած մինակ քեզ այս ամէն բաներուն յարգը գիտնալու և իմանալու և զգալու ընդունակ է ըրեր . եկո՛ւր . թէ որ կրքնաս նէ՛ սա հարստութիւններդ համրէ՛ : Մի մարդ . այս ամէն բարիքներս մասնաւորապէս քեզի համար սահման ված են : Սա պարտեղին վրայ երկուքս մէկէն մէկ մըն ալ աչքերնիս պտրտոցընեմք . ասիկայ զարդարելու պէտք եղած ծախքը միայն բընու-

Թիւնն է ըրեր . և աչքի ախորժեւու
 կանաչ գոյնով վրան կարպետ ձգածի
 պէս գոցեր է : Ասոր մէջ ո՞րքան տե-
 սակ կենդանիներ կան՝ որ քու^մ գոր-
 ծածութեանդ համար տահմանված
 են . այդ բարեբեր գետիներուն
 մէջ խտտելուն մէջ տեղէն կամաց
 կամաց քալողը իր կերը անոնց մէջ
 կը գտնէ : Աստուածային նախախը-
 նամութիւնը անոր տուած զօրու-
 Թիւնը անոր չէ՛ գիտցուցեր . սլա-
 հեր է . մէկ պղտիկ տղայ մը ձեռքը
 ցուպ (տէյնէկ) մը առնէ՝ և ձայն
 մը հանէ նէ՛ կը հնազանդին : Այն
 անասունին էգը (կովը) խտր ու-
 տելով և որոճալով կաթ կը շինէ .
 որ անանկ անուշահամ և ախորժեւի
 տեսակ տեսակ կերակուրներ կ'ըլլայ :
 Արագընթաց և խրոխտ նժոյգը
 (.քէօհլանը) , որ մեր գործոյն այն-
 քան կը ծառայէ , հոս կուգայ իրեն
 ուժը կը նորոգէ . և իրեն աշխատու-
 Թեանը փոխարէն քեզնէ ուրիշ բան
 չուզեր . բայց եթէ ժողոված խտտեղ
 իրեն բաժին կ'ուզէ : Այս սլարտէ-

զին մէջ որքան բժշկական առողջա-
 րար խոտեր ալ կը գտնուիլին . որոց
 ամէն մէկը իրեն յատուկ մէկ մէկ
 բնութիւն ունի : Անկէց .բիչ մը ան-
 դին տխմար բայց օգտակար և ժուժ-
 կալ անասունը՝ որ քու բեռներդ
 կը վերցընէ , փշոտ խոտերով և ան-
 տառի տերեւներով ալ կը շատանայ :
 Անոր քովը շատ մըն ալ ոչխար և այծ
 կարծին ու կը ցաթկըռտեն . և քեզ
 հագվեցընելու համար կըռնակներ-
 նուն բուրդը քեզի կուտան : Անոնց
 ետեւէն հաւատարիմ շունը . միշտ
 աչքը բաց , հարեւանցի նշանները
 անգամ կը դիտէ , անոնք պահպանե-
 լու կը պտըտի կամ կը կայնի , և ար-
 ուեօտներ կը բանեցընէ անոնք վը-
 տանդէ ազատ պահելու համար :
 Աոյն տեսակէն մէկ ուրիշ մըն ալ
 քու քովդ կայ , որ քեզ կը շողօքօր-
 դէ , սէր կը ցըցընէ , քուկին հեշ-
 տութիւններուդ և ուրախութիւն-
 ներուդ ընկեր կ'ըլլայ . գլուխդ գա-
 լու վտանգները քեզի կ'իմացընէ . և
 քեզ պաշտպանելու համար իր կեան-

քր անդամ վտանգի մէջ ձգելու չի վախնար : Ահա ուրիշն ալ կ'երթայ վայրի անասունը իր սրտկած տեղէն կը վերցընէ , կը փախցընէ , որ շուտ մը դուն ալ կասպարեայ գնտակովդ կը զարնես կ'սպաննես :

Աչքբըդ մէկալ դին դարձուր , արտերուն վրան նայէ , որ ոսկէգոյն հասկերով (ցորենի քէլէններով) գոց ված են . և իրենց բունոյն վրայ մէկ մը մէկ դին կը ծըռին այս հասկերը՝ մէկ մը մէկալ դին , բուններնին ալ տը կար . բայց ծունրերով (պողումներով) անանկ վարպետութիւնով կասրված՝ որ կը ծըռին , կը շխտկին , մնաս մը չ'են կրեր : Ասոնք տե՛ս՝ ու Աստուծոյ գոհութիւն տուր , որ ամէն օր վան քեզի սնունդ տուող հացը անկէց է : Աչքբըդ սա ձորերուն մէջ սլըտըտցուր , ցորեն , գարի , հաճար , վարսակ , մըսրացորեն , առուոյտ (եօնձա) , այնքան խոտեր և այնքան հունտեր կը ժողվես , որ կամ քեզի կերակուր կ'ըլլան , կամ անասուններուն , որ առանց անոնց ալ քու բա-

նորդ առաջ չ'ես կրնար տանիլ : Մէկ
ուրիշ տեղ մը կը տեսնես որ քթան
և կանեփ բուսեր են , և մարդիկ ի-
րենց արուեստով ասկէց քեզի ինչ
օգուտ հանելնին ալ գիտես :

Հիմա աչքըդ դառ 'ի վայր (եա-
մաճ) տեղերուն վրայ դարձուր , գի-
տես թէ խաղողի որթերով զարդար-
վելնուն վրայ երեսփդ դէմ կը խըն-
դան , և քեզի ալ ուրախարար և օգ-
տակար խըմելիք կը պատրաստեն :
Հունձէն ետքը քիչ մը ատեն համ-
բերէ՛ , ասոր ալ առատ բերքը կը
ժողվես : Աչքդ վեր վերցնուր , սա հը-
պարտ մարդու պէս գլուխնին տըն-
կած կեցած լեռները նայէ՛ որ հո-
րիզոնին սահման են կրտեր , անկէց
կը վազեն մեր արտերը և պարտեզ-
ները ջրող և կանաչցընող գետակնե-
րը , ասոնցմէ կինջնան խոշոր խոշոր
լայն ու խորունկ գետերն՝ որ ճամ-
բորդութեան և վաճառականու-
թեան շատ մեծ օգուտ ունին , և
ջուրերնին ովկիանոսի ջուրին պէս՝
որ իրենք ալ ետքը հոն սլիտի երթան

խառնըվին , ամպերէն վեր կը քաշ
 վին , օդոյն մէջ կերթան . տաքու
 թիւնով կը նստրանան . հովու չ'են
 կրնար դիմանալ կը ցրուին . կը փոխ
 վին կ'ըլան շող , աղբիւր , ամպ , անձ
 բեւ , մարդոց ծարաւը մարելու հա
 մար , և օդոյն տաքութիւնը պաղե
 ցընելու համար . գետնէն ելած վը
 նասակար գոլորչիքներէն օդը մաք
 րելու և գետինին ալ ուժ և բարե
 բերութիւն տալու համար : Տարերք
 ներուն մէջ այն ինչ համաձայնու
 թիւն է . այն ինչ իմաստուն ճամ
 բով իրարու հետ խառնըվելով և գե
 ղեցիկ միաբանութեամբ ամէնն ալ
 քու օգտիդ կ'աշխատին , և ասով հա
 մօրէն տիեզերաց կարգը կը սլահվի :

Վերջապէս աչքըդ քիչ մը ատեն
 տնկէ սա հին և անմարդաբնակ ան
 տառին վրայ : Վանաւանդ՝ քաղենք
 քիչ մը ներս մըտնենք , երթանք արե
 ւուն սաստիկ տաքութենէն ազատե
 լու համար սըվոր խիտ տերեւներուն
 տակը մեզի ապաւինելու տեղ գըտ
 նենք , որ հիմա՝ ժամանակը օր հա

սարակ ըլլալով՝ շառաւիղները տաք
 կրակի սէս կը դաշին կոր մեղի : Մի
 դու՛ մուժ տեղ՝ որ քու վրագ սկի
 տի ապաւինիմք , ուր ամէն բան՝
 խելքնիս գլուխնիս ժողվելու կը հը
 րաւիրէ մեղ , և ամէն բան՝ բնու
 թեան Աստուծոյն յարգանք մը բե
 րել կուտայ մեր սրտին մէջ , դուն
 մեղի՛ անոր առատաբաշխ ձեռքին
 ուրիշ պարգեւները կը նկարագրես :
 Այս անտառին մէջի ծառերը ինչ
 սէս տեսակ տեսակ բաներու գոր
 ծածութեան համար տրուած են մե
 ղի : Միայն մեր բնակած աշխարհքը
 զարդարելու և գեղեցկացրնելու հա
 մար չեն ասոնք , մեր դգայարանքնե
 րը իրենց կանաչութիւնովը զբօսե
 ցրնելու և գտնված տեղերնին սա
 ղութիւն և շուք տալու համար չեն :
 Հանքերը ասոնք սխտի սպտրաստե
 լու և կակուղցրնելու և հալեցրնե
 լու ծառայեն , մեր կերակուրները
 սխտի եփեն , և օդը ցրտութեամբ
 մեր վրան սաստկացած ատենը՝ աս
 ոնք մեղ տաքցրնելով ջերմութիւն

նիս և կեանքերնիս վրանիս պիտի
 պահեն : թէ՛ տունն՝ թէ՛ նաւ շինեմք,
 թէ՛ ճովուն և գետերուն ջրերէն
 մեր գտնելած կամ մեր ինչքերը
 գտնելած տեղերնիս պահպանելու
 համար թումբեր (պէնտեր) շինե-
 լու՝ և է՛ն սրատուական և պիտանի
 կարասիքնիս (էշեանիս՝) կամ հասա-
 րակ պէտք եղած բաներնիս շինելու՝
 ասոնք ամենահարկաւոր բաներ են :
 Ասոնք կը կտրեն , կը յղկեն , կը քան-
 դակեն , հազար ու մէկ կերպով կը
 բանին , ճախարակէ (չխրըխէ) կան-
 ցրնեն , վարպետը իր շինելու բա-
 նին ի՛նչպէս ուղէ նէ անանկ կը
 յարմարցընէ : Օրուերն ալ նայե՛-
 ր՝ ամէն մեր պէտքերուն գտնելե-
 լու համար ի՛նչ կերպով կը շատնան ,
 ի՛նչպէս կը բուսնին , ի՛նչպէս կը
 պահովին : Ալ թէ որ միայն մէկ ա-
 տենի մը շահու մնասակար խայծը
 մեղ չի բռնէ , կամ անհողութիւն
 չ՛ընեմք նէ՝ ասոնց շատնալը չի դադ-
 րիր . իննամք չի տանելն ալ բընու-
 թեան օրինաց ալ դէմ է՝ բարեկար-

դու թեան ալ :

Մէկ մըն ալ քաղաքներուն ալ մուկներէն փախչիմք , և մեր խաղաղ և հանդարտ բնակարանը մըտնենք . խաղաղ և բարեբաղդ տունը , թէ որ կիրքերուն բռնաւորութիւնը , կամ սիրոյ տեղը ատելու թիւնով և առատութեան տեղը կարօտութիւնով լեցընող մարդոց կիբքը անկէց ետքը իր երկաթ գաւազանը քու գլխուդ վրայ չի ծանրացընէ :

Սիրելի զաւկրներդ ցաթկելով ցաթկուտելով քովդ կուգան , և անոնց սիրուն համբոյրը՝ քու կին անոնք կրթելու և իմաստուն և երջանիկ ընելու համար քաջած հողդ եվելօք կը վճարեն : Աղջախոհ լծակիցրդ , հաւատարիմ բարեկամներդ , (թէ որ անանկ բարեկամ վաստրկելու արժանի եղեր ես և ընտրելու կարողութիւն ունեցեր ես նէ՝) կուգան քու տուն դառնալուդ վրայ ուրախութիւննին կը յայտնեն : Սեղանըդ կը նստին , և Աստուծոյ շնորհած բարիքը վայելելու քեզի մասնակից

կ'ըլլան : Արեւակուրդ որքան սրարկեչտ
 և չափաւոր ը'լլայ , և դուն ալ որքան
 զգաստութիւն բանեցընես ժամանա-
 կին սարագայներուն դէմ գալու-
 բան մը չ'ընելու համար՝ և աղքատ-
 ներուն օգնութեան հասնելով այս
 կողմէն ալ քեզի մէկ քաղցրիկ մխի-
 թարութիւն մը ճարելու համար ,
 ասանկ ըլլալով ալ որքան ուտելիք
 կը գտնուի . օրէ օր ինչպէս տեսակ-
 ները կը փոխվին . ամէն բան իրենց
 եղանակին կը գտնուի : Ասոնք վա-
 յելելու վաստրկած ունակութիւնդ
 քեզի կը մոռցընէ՞ մի այն բարերար
 էակէն շնորհակալ ըլլալու , որ քեզի
 հարկաւոր եղածէն զատ՝ օգտակարն
 ալ՝ աւելին ալ առատութեամբ քե-
 ղի շնորհեր է :

Այս ամէնս իրարու մօտեցընե-
 լով մէկէն աչքիդ սուաջը բերելու
 համար մէկ մը գեղի տունդ երթամք
 սարտեղիդ մէջը ստըտիմք , ձողա-
 բարձերդ (ամալրխներդ) տեսնեմք ,
 որ լէյլա՞րդ և վարդով և յասմիկով
 (եասէմիով) զարդարված են : Օտու-

նոցդ տեսնեմք , որ պատուղներով և ծաղիկներով գոյնըզգոյն և տեսակ տեսակ գեղեցկացեր են . և անուշիկ հոտեր կը բուրեն : Վարմանդըզ (պօստանդ) այնքան խոտեղէններով և հնտեղէններով և խաւարտներով (ղալղալաթով) լեցված , ձկնարանրդ , հաւերուդ բոյնը , ախոռները , ագարակդ տեսնեմք : Թէ որ այսքան բարիքները վայելելուդ առաջին օրը այս ըլլար՝ սիրտդ ո՞րքան ուրախութեամբ լեցված կ'ըլլար . և այս օրվան օրըս ձեռքդ անցած չ'ըլլայնուն համար քու աչքիդ առաջը անարդ մի եղեր են :

Հիմայ քիչ մըն ալ անանկ բաներու վրայ գանք , որ թէպէտ յատուկ քու կիներդ չ'են , բայց քու գործածութեանդ համար ստեղծուած են : Չէ՛ թէ միայն այս երկիրս՝ որ ամէն օր վրան կը կոխես՝ անանկ մը ստեղծուած է բնապէս , որ ժամանակին ինչ որ անոր հաւատաս նէ՝ հարիւրասպատիկը քեզի կուտայ , ո՞չ այնքան կարծր է՝ որ մշակութեան չի գայ ,

և խոտերը շի կրնան իրենց արմատ
 ներուն ճեղերը տակէն երկնցընել՝
 և հոն գտած հիւթերնին ծծել և
 սնանիլ, ո՛չ ալ այնքան թեթեւ է որ
 շի կրնան պէտք եղածին չափ վրան
 հաստատութիւն գտնել, այլ ամէն
 տեղ մէկ մէկ տեսակ հող կայ, որ
 քեզի պէտք եղած ամէն տեսակ
 տունկերուն և բոյսերուն առաջ
 գալուն յարմար հիւթ ճարէ: Այս
 իրարմէ տարբեր տեսակ հողերուն
 մէջէն քու պիտոյիցդ համար կ'առ-
 նես ուժով հող, կաւ, կղմինդը (քի-
 բեմիտ), աղիւս (թողայ), պատ շի
 ներու հող, կիր (քիրէճ), գած (ալ-
 շի), և ի՛նչ որ բրուտի (չեօմէկճի-
 յի) և որմնադիրի (տուվարճիի) պէտք
 է: Թէ՛ աղքատին խրճիթը (խու լի
 պէն) և թէ՛ թագաւորներուն պա-
 լատը շինելու՝ ասոնք բանի կուգան:

Այլ կրիս միայն երեսը մի մտա-
 ծեր ու մնար. քիչ մըն ալ խորունկ
 ները և դեանին տակը՝ քննեմք նա-
 յիմք հոն ի՛նչ կայ: Ասոնց մէջ ծած-
 կըլլած պահլած են քարեր, մարմա-

րիոն (մէրովէու), հանքեր , շատ մը
 գանձ , որ թէ որ անոր մէջ պահւած
 չ'ըլլային նէ՝ քու բնակարանիդ երե-
 սը իրենց տեղ պիտի գտնէին , և
 գետնին վրայի զարդերուն մնասս պի-
 տի ըլլար . որ ասոնց հետ պիտի չի
 կրնային գտնուիլ :

Ես քու աչքիդ առաջը քու հա-
 ըրստուութեանցդ միայն մէկ մասը
 դրի . ասոր վրայ մտքով եւեջընեմք
 այն հարստութիւններուն մէկ մասը՝
 որ կրնաս վաճառականութեամբ ըս-
 տանալ . այս վաճառականութիւնս
 է որ՝ երկու աշխարհք իրարու հետ
 կը կապէ . և պինտ հեռու երկիրնե-
 րն ալ քեզի հարկատուի պէս կ'ընէ :
 Ասոնք ամէնը գիտնալէդ ետքն ալ
 արարչին քեզի ըրած շնորհքներուն
 և բարերարութիւններուն վրայ շատ
 տկար մէկ տեղեկութիւն մը հաղիւ-
 ունեցած կ'ըլլաս : Այլ այս աշխարհ-
 քիս մէջ ո՞ր խնայականութիւնը կ'ըլ-
 լայ որ ասոնց ամէնն ալ ճանչնալու՝
 և անոր ամէն գործքերը աչքէ ան-
 ցրնելու , և անոնց ամէնուն իրարու

հետ և իրեն հետ ունեցած համեմատութիւնները հասկընալու կարող ըլլայ :

Անոր սրարգեւեներուն ամէնէն հարուստը և ամէնէն գեղեցիկը՝ նոյն խոկքու անձդ է : Քու մարմնոյդ զարմանալի կազմութիւնը, բոլոր բնութեան վայելքը քեզի տրուող զգայութիւններուդ գործիքները, մասնաւորապէս աչքդ ու ականջդ և քիթդ, որոնց զարմանալի շէնքին վրայ մարդ որքան մտածէ և քննութիւն ընէ նէ՝ հոգնելիք չունի, ասոնց խաղալը և շարժմունքը և շարժիչ մասունքը տեսնելով՝ զարմանքով կը լեցնի : Քու գոյութեանը մեծութիւնը և արժանապատուութիւնը քու ճակատիդ վրայ որպէս թէ քանդակված է. նայվածքիդ կենդանի բացատրութիւնը, որ հոգւոյդ և սրտիդ ծածուկը կը ցըցընէ. գէսլ ՚ի երկինքը բարձրացած գլուխդ, որուն վրայ կ'երեւի հրամայող ըլլալու համար ստեղծվելուն ամէն նշանները, անդամքնե-

բուդ ճարտար և դիւրագարձ ըլլալը, որ ինչ արուեստի որ ուզես՝ և ինչ պիտոյքի ուզես՝ կրնաս բանեցընել. խօսելու կարողութիւնը, որ մտքէն անցած խորհուրդին նշան ըլլալու համար միայն մարդոյս է տրված. խելքը՝ որ բոլոր տիեզերաց թագաւորութիւնը և իրեն բոլորը գտնելից բաներուն վրան իշխելը անոր կ'ապահովցրնէ, և մարդմարդու հետ հաղորդ՝ և նոյն իսկ Աստուծոյ ընկերի պէս կ'ընէ: Հանձարոյն վարպետ ճարտարութիւնը, որ բազմարդիւն բաներ և հնարքներ գտնելով՝ արարչին գործքերը այս աշխարհքիս մէջ մէկ կերպով մը կը լըմնցրնէ՝ և կատարելութիւն կուտայ: Այն փայլուն և սրայծառ երեւակայութիւնը, որ մէկ բոպէի մը մէջ ինքնիրեն պատկերը կը գծագրէ, և այլ և այլ իրարմէ տարբեր պատկերներ իրարու կը մօտեցրնէ, և կը բաղադրէ, և բու հոգւոյդ առաջը նոր աշխարհք կ'ըստեղծէ: Յիշողութիւնդ, որ բառերու և գաղափար

ներու և եղած անցած բաներու՝ և աշխարհքիս սկիզբէն շարունակ դարէ դար գտնելիւս և վաստրկիւս տեղեկու թիւններու և ամէն ատեն վան սրատմու թիւններու մէկ ընդարձակ սրահարան մըն է : Ասոնց ամէնէն զատ՝ քու կամքդ , ազատու թիւնդ , ինչ ընելըդ և ինչ խորհելըդ և ինչ ուղելըդ գիտնալու կարողու թիւնդ՝ որ Գիտակցութիւն կ'ըսվի , քու բարոյականու թիւնդ՝ որով ըրած գործքերուդ աղէկ կամ գէշ անունը կը վայլէ . քու կիին անսահման յօժարու թիւնդ , զգայուն սիրտը , որ թէ որ կիրքերով աւրելիւս չըլլայ նէ՝ ուրիշին քաշածներուն ալ ցաւակից կ'ըլլայ : Այն ամէն բանը՝ որ քեզ քու նմաններուդ հետ կը կապեն , և զԱստուած ճանչնալու ընդունակ կ'ընեն , որով զԱստուած կրնաս սիրել , և որ մըն ալ անիկայ ստանալ ու վայելել . ահա քու կիին էութեանդ սարունակած անդին հարստութիւնները ստոնք են :

Ասանկ խորհրդածութիւններուն

պատճառած անուշիկ զգացմունքը
 չ'ընդունելու և հերքելու ինչպէս
 անմիտ՝ և իր անձինք թշնամի մարդ
 կրնայ գըտնելիլ : Ա՛հ , անանկ մար-
 դը հրքան մեղքընալու մարդ մը կ'ըլ-
 լայ . տխուր՝ և բազդի կոյր կուսա-
 կից . բուն իսկ իրեն գոյութիւնը իր
 միտքը չի լուսաւորեր , իրեն ձեռքը
 եղած բարիքը կոշտ և անվայել կեր-
 սով մը իրեն զուարճութիւն կու-
 տան , ամենեւին սրտին չ'են դըպչիր
 և չ'են ազդեր . բոլոր բովանդակ
 բնութիւնը անոր սրտին բնաւ բան
 մըն ալ չ'ըսեր . մէկ մութ վարագոյր
 մը քաշված է , որ բնութեան մեծա-
 մեծ գեղեցկութիւնները անոր տե-
 սութիւնէն կըսլահէ , անոր համեմա-
 տութիւնները՝ և ամէնը իրար բըռ-
 նելով մէկ ամբողջ մը ըլլալը չի ցըցը-
 ներ : Բնութեանը ճշմարիտ վայել-
 չութիւնը անոր առջեւէն այն ատե-
 նէն կը կորսըլի՝ երբոր անոնց վրայ
 նայելով չի կրնար իմաստուն և բա-
 րերար էակը տեսնել . որ բնութիւ-
 նը իրեն ինչ շնորհք և ձիւք ցըցը-

նէ նէ՝ ամէնն ալ բնութեան արարչին տուածն են . և անոնց ամէնուն համար մարդս Աստուծոյ պարտական է :

Աս անոր հետ չեմ խօսիր , քան զի անիկայ իմ ըսածս պիտի չի կրնայ հասկընալ : Չեզի է՝ սիրելի բարեկամներ , ձեզի է որ կը խօսիմ . որ ամէն արարածոց և մասնաւորապէս ձեր անձին բարերար Աստուածը ամէն տեղ գտնելէն չէք վախնար : Չեզի կրսեմ , որ երջանկութեան սկիզբ ըլլալու բաները՝ ամէն բարեաց աղբիւրէն առնելու հաճութիւն տուած էք :

Աստուծոյ թէ՛ ինքնին և թէ՛ մեզի նայելով ի՞նչ ըլլալուն գաղափարը՝ ջերմեռանդ և կակուղ սիրտունեցող մարդուն ներսը ի՞նչ փափուկ և ի՞նչ զուարճալի զգացմունքներ կը պատճառէ : Այս զգացմունքներուն առաջինը՝ և ամէնէն անուշը՝ սէրն է : Սէրը կ'ըսեմ , այն Աստուածային կրակը , որ մեր հոգւոյն ճարակն է : Այն կրակը և լոյսը՝ որ

մեր թանձր մթու թիւնները կը փա-
րատէ . և ինչպէս որ վարդապետ
ներուն ամէնէն մեծին առաքեալը
ըսաւ , մեր սրտին աչքին լուսաւո-
րութիւն կուտայ : Մեր ըսված կը
ըսկը՝ որ թէ՛ մեր ներսը և թէ՛ դուր-
սը ի՛նչ որ կաննէ՝ ամէննալ կը մաք-
րէ և կը բարձրացընէ և ազնուու-
թիւն կուտայ և կը կենդանացընէ :

Եւ մեր սիրոյն՝ Աստուծմէ զատ
ի՛նչ արժանաւոր բան կրնայ գտնը-
վիլ . գերագոյն կերպով սիրելի էա-
կը սիրելէն աւելի ախորժելի ի՛նչ
բան կրնայ ըլլալ : Նշմարտապէս ի-
մաստուն մը (Վայպնից) ըսած է որ՝
սէրը այն սրտին կապն է՝ որ սիրած
բանին կատարելութիւններուն մէջը
իրեն հեշտութիւն և զուարճութիւն
կը գտնէ : Արդ՝ Աստուծմէ աւելի
կատարեալ ի՛նչ բան կրնայ ըլլալ :
Եւ ի՛նչ սէր կրնայ ըլլալ՝ որ ասկէց
աւելի մարդուն սիրտը յափշտակե-
լու յատկութիւններ մէկէն կարե-
նայ ունենալ : Ի՛նչ կատարելութեան
գաղափար որ տպաւորված է մեր

հողւոյն մէջը՝ անոնցմէ մէկուն մէկ
 թէթեւ հետքը և նշանը որ տեղ
 մեր աչքին երեւի նէ՝ այն բանը կը
 սիրեմք : Որքան փափուկ և յստակ
 գաղափար ունենամք , որքան ճաշակնիս և ընտրութիւննիս աղէկ և
 ճիշդ ըլլայ՝ և յօժարութիւննիս և
 միտումնիս ազնիւ բաներու ըլլայ նէ՝
 այնքան աւելի կը սիրեմք արդարու
 թիւնը , իմաստութիւնը , ճշմարիտ
 մեծութիւնը , ճշմարտութիւնը , բա
 րութիւնը , գեղեցկութիւնը , կար
 ւր և իրար բռնելու համեմատու
 թիւնը : Իայց այս ամէն բաներս
 թէ՛ մեր վրայ և թէ՛ ամէն ստեղ
 ծուած բաներուն վրայ՝ միայն գե
 րագոյն արարչէն ելած և տպաւոր
 ված բաներ են : Ինքն է էապէս
 ճշմարտութիւնը , մեր իմացականու
 թիւնը լուսաւորող և մեր մոլորու
 թեան սուտ կախարդանքները իրեն
 պայծառութեամբը և տեւողու
 թեամբը յաղթող ճշմարտութիւնը ,
 որ երբոր մեր չուզելովն ալ մեզ մեր
 սրտին մէջը դատելու ըլլայ նէ՝ կը

յանդիմանէ պահասութիւններնուս
 համար : Ղշմարիտ իմաստութիւնն
 է անիկայ , որ բոլոր տիեզերքս ըս-
 տեղծեց , և մասունքները իրարու
 հետ կապեց , և անոր մէջ պարու-
 նակաճ ամէն էակներուն կերպը և
 ձեւը և ինչ ըլլալիքը գծագրեց :
 Միայն անիկայ է ճշմարիտ մեծ : Ա-
 նոր առաջը ուրիշ ամէն մեծութիւն-
 ները շուք և խաւարումի պէս են :
 Անոր անփոփոխելի արդարութիւնը՝
 մերինին կանոնն է . անոր սրդիւնա-
 ւոր բարութիւնը առանց հատնելու
 բոլոր էակներուն վրան կը ծաւալի .
 ամէն կողմէն կարգ է . ամէն կողմէն
 կանոն է . և ամէն բանի մէջ համե-
 մաստութիւն կը պահէ : Այսպնիցին
 ըսածին պէս՝ տիեզերական ներ-
 գաշնակութիւնը անոր բանն է . և
 գեղեցկութիւն ըսվածը՝ անոր շա-
 ռաւիղներուն ծաւալումն է :

Ասոր գործքերը մարդ սրբանքննէ
 նէ՝ բնութեանը վրան վարժըված
 կ'ըլլայ . և սրբան զարմանայ՝ այնքան
 անոր արարիչը կը սիրէ : Ահ . մէկ

մարդ մը իր սիրածը ամէն տեղ գըտնէ . և ինքը միայն անիկայ սիրելու համար ստեղծուած ըլլայ , և իրեն երջանկութիւնը անիկայ սիրելուն վըրայ կայանայ . այն ի՛նչ մեծ և ա՛նուշ բան կ'ըլլայ :

Իայց ետքը զգալի բաներէն առ տիճան աստիճան վեր ելլելով՝ ո՛րքան որ այս անձառելի գեղեցկութիւնը մաքուր աչքով նկատելու հասնի մարդ , այն գեղեցկութիւնը կ'ըսեմ , որ ինքնին կայ , ամենեւին բիծ և փոփոխութիւն և խառնուրդ չի կայ վրան և չի կրնար ալ ըլլալ , և ո՛րքան որ անիկայ նկատելով զուարճանայ , հոգւոյն հեշտութիւններն ալ այնքան աւելի աղէկ կ'ըզգայ . և հոգւոյն հեշտութիւնները մարմնական հեշտութիւններէն շատ վեր են : Աստուածութեան ծոցը ինքըզինք կը կորսնցընէ . նոյն իսկ Աստուածը կը վայելէ , և երբեմն այս վայելքը անանկ կ'ըլլայ որ՝ ա՛լ այն ատենը աշխարհքիս հետ բոլորովին բան մը չունեցածի պէս կ'ըլլայ : Ասոնց հա-

մը առնողին համար ի՛նչ երջանիկ
 ժամանակներ են ասոնք . թէ որ ա-
 սոնք այս աշխարհքիս մէջ միշտ տե-
 ւելու բաներ ըլլային նէ՛ այս երկի-
 րըս այն ատենը այս երեւելի աշ-
 խարհքս եղած չէր ըլլար , ուր որ
 մեր պիտոյից համար Աստուծոյ սահ-
 մանադրութիւնը մեզ կապեր է . ա-
 սիկայ աշխարհք չէր ըլլար , երկինք
 և դրախտ կ'ըլլար . . . : Այսմ թէ որ
 ասանկ բաները հոս ըլլային նէ՛ կա-
 տարեալ երջանկութեան բուն տե-
 զը ի՛նչպէս բան կ'ըլլար :

Ասանկ աստուածային սէրը մեզ
 յախշտակած և բարբոսիլն իրեն ա-
 ռած ատենը՝ կենաց բոլոր հարըս-
 տութիւնները և մեծութիւնները
 և հեշտութիւնները և ցաւերը և
 տրտմութիւնները մեզի համար ի՛նչ
 եղած կրնան ըլլալ : Ասոնց ամէնն ալ
 կը մոռնամք . մէկն ալ մեր աչքին չ'ե-
 րեւիր : Գո՛նէ՛ այս կերպով վայե-
 լած ատեննիս՝ երբ որ հարկ կ'ըլ-
 լայ մեզի աշխարհային ոչինչ բանե-
 րու ինջնալ՝ որ ասոնք են սուխրաբար

մեր ուղած և փափաքած բաները ,
 երբ որ մարդոյս թշուառութեանը և
 խեղճութեանը վրայ կը նայիմք , որ
 քան լոյս կը մնայ մեզի ասոնց ճիշդ
 իրենց վայլած և արժած յարգը
 ճանչնալու , և որքան ալ ուժ կը մնայ
 ասոնց դէմ դնելու :

Թէ որ այս գերագոյն աստիճա-
 նաւ սիրելի էակը անչափ սիրով սի-
 րելու չափ զուարճութեան աստի-
 ճանը հասնիլ՝ մեր այս աշխարհքիս
 մէջ ունեցած վիճակներնուս ձեռք
 տալու բան չէ՛ նէ , մէկ ուրիշ զգաց-
 մունք մը կայ , որ ասանկ ուժով և
 կենդանի՝ բայց շուտ անցնող զգաց-
 մունքին տեղը կը բռնէ , ամէն ա-
 տեն նորոգող և իրարու ետեւէ ան-
 ընդհատ յաջորդութեամբ մեր հոգ-
 ւոյն մէջ երեւան ելող տպաւորու-
 թիւնով : Այլ իմ բարեկամներս , երբ
 որ բնութեան ասանկ ազդու սրտ-
 կերը ձեր առաջը նկարագրեցի , և
 ձեր հարստութիւնը և բարերար
 Աստուածութեան ձեզի տուած շը
 նորհքն ու պարգեւը ձեզի մէկիկ

մէկիկ հասկըցուցի, ձեր սիրտը անոր
 շնորհակալ ըլլալու համար բացվե-
 ցաւ . և նրբան գեղեցկու թեամբ
 ձեր սիրտը յափշտակելու կարող ըլ-
 լալը հասկըցաք : Այլ յիրաւի՝ մէկ
 մարդ մը իր կենացը ամէն բոսէին
 մէջ կարող ըլլայ ըսել թէ՛ այս գո-
 յութիւնս որ ունիմ՝ մէկ գորովա-
 սիրտ և հաւատարիմ բարեկամի մը՝
 և ամէն հայրերէն աղէկ մէկ հօր
 մը շնորհածն է ինձի . և ասիկայ չէ՛
 թէ մէկ շուտով անցնելու երջան-
 կութեան մը համար, այլ թէ՛ սաստ-
 կութեանը և թէ՛ տեւողութեանը
 կողմէն անսահման երջանկութեան
 մը զիս հասցընելու համար :

Այս գիտաւորութեամբս է որ
 զիս կը սրահպանէ, և ինձի օգնական
 և պաշտպան և հովանի կ'ըլլայ . իմ
 մոլորութիւններս շիտկելու և տկա-
 րութիւնս ուժովցընելու և արժա-
 նաւորութիւնս եւեղընելու համար
 միշտ ինձի օգնութիւն կուտայ : Այլ
 կէց քիչ մը առաջ աչքի առջեւ է
 անցուցած բարիքներուս ամէնն ալ

անկէց գիտեմ. ամէնուն համար ալ
անոր սրարտական եմ. շնչած օդըս ,
զիս լուսաւորող արեւը , իմ աչքիս
երեւցած մեծափառ և շատ տեսաւ
կէ բազկացեալ տեսարանը , մինչեւ
խորունկ գիշերվան մէջ ինձի համար
փայլող լոյսը , նոյն իսկ աշխատու
թիւնը անգամ՝ որ իմ աստուծոսիս
համար և զիս ձանձրութենէ ազա
տելու համար իրեն նախախնամու
թեամբը ճարեր է , և փափկութե
նէ և սարսաղ կենալէ սրտձառած
գէշութիւններէն ասով կ'ազատիմ ,
անուշ քունը՝ որ աշխատութեամբ
հատած ուժերնիս կը նորոգէ , և
խաղաղ արթնութիւն մը կը բերէ
ետեւէն . բնութեան և արուեստի
ստուղ ինչ բաներ կան նէ՝ ամէնն
ալ անկէց կը ճանչնամ . քանզի ա
րուեստն ալ մեզի տուողը անիկայ է :
Այսքան տեսակ ուտելիքները՝ որ
իմ ախորժակիս ալ յարմար են՝ աւ
րելուս ալ հարկաւոր են . զիս ծած
կող հագուստը , զիս ջերմացընող
արուեստական տաքութիւնը , որ գի

տես թէ ինձի նորէն հոգի կը բերէ ,
 զիս իրեն տակը սրտասարող տանը
 շինուածքը . սարապ կեցած ատենս
 ինձի զբօսանք տուող այնքան զուար-
 ճալի բաները , իմ կենացս հաստա-
 րան և ուժ եղող ընկերութեան ա-
 մէն գեղեցկութիւնները , բարեկա-
 մութիւնը՝ որ ընկերութեան պինտ
 զուարճալի մասն է , ինչ բան որ իմ
 պիտոյիցս կուգայ՝ կամ զիս հեշտա-
 ցընելու կը ծառայէ , մանաւանդ
 խելքը և զգացմունքը՝ որ ինձի ա-
 սոնք վայելելու կը ներեն , բայց ա-
 նանկ զգաստութիւնով մը որ՝ զիս ա-
 սով իմ արարչիս հետ կապեմ :

Այն տխմար անբան անասունը ,
 որ բնութեան գեղեցկութիւններ-
 րուն մէկն ալ չզգար , և ինչ բան
 որ մեզի ախորժելի կուգայ , հոտե-
 րուն անուշութիւնը , մէկ գեղեցիկ
 տեղի մը տեսարանը , աստեղքով զար-
 դարած երկինքին տեսքը , ասոնք այն
 կենդանիին ազդեն ալ նէ՝ միայն մէկ
 մեքենայի և մէկ գործարանքի մը վը-
 րայ ազդածի պէս կ'ըլլան , այս անա-

տուններուն գլուխը գետինը ծռած, իրենց բնական ազդմունքէն զատ առաջնորդ չունենալով, առանց տուողը մտածելու պարտէզին կամ դաշտին մէջ ինչ խոտ գտնէ նէ կ'ուտէ և կորոճայ: Մայց ակ Տէր, ես որ բարիքներովդ լեցված եմ, և ասոնք տուողը ճանչնալու կարողութիւնն ալ քեզնէ առած եմ, կը հաճիս որ այն կողմէն քեզի վայելուչ սրատիւր և պաշտօնը տալէն հրաժարիմ: Վարդոց առաջը ասկերախտ գտնելուս կ'ամբշնամ նէ՛ կրնամ մի քեզի ապերախտ գտնելուս վրայ չ'ամբշնալ: Ասանկ որ ընեմ նէ՛ միայն զգայարանքներովս այս բարիքները վայելած կ'ըլլամ, սրտիս համար ասոնց գեղեցկութիւնները ամէնն ալ կորսելու կ'ըլլան: Ասոնց իրօք յարգը տուողը և մեզի աւելի քաղցր և սրատուական ցըրնողը՝ երախտագիտութիւննիս պիտի ըլլայ: Այն է որ մեր կերած կերակուրները մեզի համեղ և ախորժեղի կը բերէ, և ինչ բանի որ ես ինձի չ'ըսեմ թէ՛

ահա՛ իմ Աստուծոյս բարերարու-
թեանցը մէկն ալ այս է, այն բա-
նէն մէկ զուարճութիւն մը չեմ կրը-
նար զգալ :

Յիրաւի երբեմն մարդոց չարու-
թեանը երեսէն ասոնց մէկ մասը
կը կորսնցընեմ. և ճիշտ ինձի հար-
կաւորը որքան է նէ՛ միայն այնքանը
ձեռքս կը մնայ : Բայց գոնէ անոնց
կամացը գէմ՝ այս հարկաւորս ինձի
համար պահողը մէկ Աստուածային
նախախնամութիւն մըն է : Այն որ
իրեն ներելուիլ իմ ձեռքէս կ'երլէ,
ես անիկայ անոր զոհ կ'ընեմ. և մնա-
ցածին համար շնորհակալ կ'ըլլամ,
և անուի ալ ես զիս շատ երջանիկ կը
գտնեմ :

Ալ թէ որ ես անոր երկրպագե-
լէն և անիկայ պաշտելէն ետ չի կե-
նամ նէ՛ ՚ի հարկէ իմ կորսընցուցած
ներուս տեղը եվելօքը լեցընելու
ինձի ճամբայ մը կը գտնէ :

Այս տեղս իմ սրտիս մէջ մէկ
ուրիշ զգացմունք մը կը ծագէ, որ
այս ալ իմ հանգստութիւնս ասպա-

հովելով երջանկութիւնս կ'ելեցը-
նէ . և այս է վստահութիւնը : Իմ
վիճակիս վրայ հսկողին իմաստութիւ-
նը և կարողութիւնը և բարութիւ-
նը ինչպէս ըլլալը ես աղէկ գիտեմ :

Իմ աղայութեան ատենս , ճամ-
բէ ելած ժամանակներս անգամ
իմ վրաս ցրցուցած խնամքները՝ ա-
ռանց սիրտս շարժելու չեմ կրնար
մտքս բերել . նոյնպէս կը սիրեմ
յիշել այն վտանգները՝ որոնցմէ որ
զիս աղատեց . այն փորձութիւնը՝
որոնց մէջ զիս ձգեց նէ՝ իմ կրթու-
թեանս համար և անոնցմէ շատ մեծ
բարիքներ ինձի վաստակցրնելու հա-
մար ըրաւ . այն ամէն հոգողութիւն-
ները և խնամքները որ ինձի համար
ըրաւ , զիս գաղտնի յանդիմանելովը
և սպառժելովը , չէ՛ թէ բարկացած
տիրոջ պէս , այլ հօր պէս : Անոր ա-
ւելի կը զարմանամ որ՝ ինչ գաղտնի
կերպով իրարմէ կապված գիպուած-
ներ գլխուս բերելով ինձի սորվե-
ցուց որ՝ իրենմէ զատ ուրիշէ մը
կախում չունենամ . միայն անոր ա-

սրաւինիմ, ոչ յաջողութիւններու և
 ոչ զօրաւոր հնարքներու և ոչ փոփո-
 խամիտ մարդոց վստահիմ, որ տե-
 սակ տեսակ փոփոխութիւններու
 տակ կը մտնեն, և ամենեւին մրտ-
 քերնուս չանցած ատենը մահը կու-
 գայ աշխարհքիս երեսէն կը վերցը-
 նէ. ասոնք ամէնն ալ մարդոյս տը-
 կարութիւնը և ոչնչութիւնը կը
 ցրցրնեն: Ար զարմանամ որ ինչպէս՝
 և որքան առիթներու մէջ՝ միշտ
 փտանգէ ազատ մնալու խաբեբայ
 յուսով ես զիս խաբած՝ և ալ աս-
 կէց ետքը ոչ ինձի փորձանք մը պի-
 տի գայ և ոչ կարօտութիւն պիտի
 ունենամ ըսած ատենս ինձի հարկ
 եղած է ճանչնալ՝ որ անկէ զատ ին-
 ձի ճար ու ճարակ չունիմ, միայն ա-
 նիկայ կրնայ ինձի զօրաւոր թեւ ու
 թիկունք ըլլալ, զիս օգնելու համար
 ձեռքը ինձի երկրնցրնել, ու զածին
 պէս կամ բռնել որ չիյնամ, կամ իւ-
 նալէս ետքը վերցրնել: Աս զիս՝ մոր-
 թըվելու զոհի ոչխարի պէս՝ բըռ-
 նաւորներուն դանակին տակը տե-

սայ . բռնաւորը ինկաւ , դանակը
 կտորեցաւ . և ես ուրիշ շատ մը ին-
 ձի պէս մեռնելէ ազատած մարդոց
 հետ պօռացի . “ Այն որ ալիքնե-
 ” բուն սանձ կը դնէ , գէշ մարդոց
 ” դաւաճանութիւնն ալ կրնայ դադ-
 ” բեցընել : Այս սիրելի՛ Աբեհնեբ
 ” յարգական խոնարհութեամբ Աս-
 ” տուծոյ կամացը հնազանդելով Աս-
 ” տուծմէ կը վախնամ . ու անկէց
 ” զատ ուրիշ տեղաց վախ չունիմ ” :
 (Աստին) : Արքան դիպուածներ է-
 զած է որ՝ չէ՛ թէ ես միայն , այլ ա-
 մէնէն աւելի յամառեալները ան-
 դամ տոխարեցան ըսելու՝ թէ Աս-
 տուծոյ մատը կայ հոն : Աստուծոյ
 խնամքը այնքան ամէնուն յայտնի
 կերեւէր .

Այսքան բաներով վարժուելէս
 ետքը՝ հիմա իմ բոլոր յոյսըս և ակն-
 կալութիւնս անոր վրայ կը դնեմ : Այլ-
 ջանիկ ապաւինութիւն , որ խաղա-
 ղութեան և ապահովութեան աղ-
 բիւրն է . սոսկումը տիրած ատենը
 ասիկայ էր որ զիս այնքան վախերէն

ու սոսկու մներէն ազատեց : Այն ա-
տենը ես իմ Աստուծոյս ծոցը հան
գիտտ կը քնանայի , արթընցած ա-
տենըս ի՛նչ ըլլալիքս ամենեւին հո-
գըս չէր , և երբ որ աչքս բանալով
նորէն լոյս կը տեսնէի՝ կ'ըսէի , մեզի
հանգիտտ և խաղաղ գիշեր չնորհե-
լը Աստուծոյ կ'իցնայ , և ամէն անկո-
ղինէն փափուկ և հանգիտտ անկո-
ղինը՝ Աստուծոյ վստահելով հանգ-
չիլն է :

Վերջապէս , մէկ մարդ մը այս
մըտքերուս վրայ ըլլայ , և Աստուա-
ծային ստորագելիքներուն վրայ մէկ
ճիշդ դաղափար մը ունենայ նէ՛ ամէն
բանի մէջ Աստուծոյ կամացը հընա-
զանդելու և անոր ուղածէն զատ բան
չուղելու ի՛նչ դժուարութիւն կը մը-
նայ , ասկէց անոր ի՛նչ նեղութիւն
կընայ գալ : Անոր ինձի տուած՝ և
խելքիս լուսովը իմ մտքիս մէջ տպա-
ւորած օրէնքները ինձի այնքան ծանր
մի կուգան կոր : Վակայն ասոնք իմ
աչքիս ուրիշ բան չէն երեւար ,
բայց եթէ անոր բարեկարգութիւն

սիրելուն և սրբութեանը և իմաստութեանը, և մեզ երջանիկ ընելու զելուն բացատրութիւնն է: Այլ ես յիրաւի առանց ուրիշի և իմ անձինս անգամ մնաս հասցընելու, և իմ ամէնէն ազնիւ կարողութիւններս անարգ բան մը ընելու, և իմ բնութեանս հակառակելու, և իմ գոյութիւնս սլողտիկցընելու և իր ատտիճանէն վար ինչեցընելու՝ չեմ կրնար այս օրէնքներս աւրել: Ամ ճամբէ ելելը արդարացընելու սպրապ տեղը կ'աշխատիմ. ես ուզեմ չ'ուզեմ՝ ըրածիս չեմ հաւնիր ու ես զիս կը դատասպարտեմ: Այս իմ զիս յարգելու ալ՝ ուրիշներուն առաջը յարգի երեւիլու ալ կը կորսնցընեմ, և սպրապ աշխատանք կ'ըլլայ ուրիշ սպասաւոր և անարգ մարդոց հաւանութիւնովը անոր սակասը լեցընելու հոգնիլըս, որ այնքան գէշ են, որքան որ ես ալ գէշ սլիտի ըլլամ անոնց պէս ընելով, և խղճմտանքիս բոլոր խայթը և ազգեցութիւնները մտրելով:

Այլ և՛ իմ անկարգ կիրքերըս
 զիս ուրիշներու հետ կուուելու կը
 գրգռեն . ինչպէս որ անոնց երեսէն
 ես իմ անձինս դէմ ալ կուիւ բանա-
 լու կ'ըլլամ : Ամէն բանէն երկնչելու
 կ'ըլլամ , և ամէն բան ինձմէ վախ-
 նալու կ'ըլլայ . մինչեւ իմ ստահա-
 կու թիւններուս և յանցանքներուս
 ընկեր եղողները անգամ կարելի է
 որ ասոնց կարգը մտնեն : Վակայն՝ Աս-
 տուծոյ օրինացը հաւատարիմ ըլլա-
 լով՝ այս օրէնքը աւրելէս հետեւած
 ամէն գէշութիւններէն զգուշացած
 կ'ըլլամ . և օրինաց կատարմանը ճիշդ-
 ըլլալու սրտուղ եղող ամէն բարիք-
 ները կը վայելեմ : Իմ մօտս եղողնե-
 րուն ամէնն ալ զիս կը յարգեն . և
 թէ որ անիրաւ զրարարութիւնը իր
 մահաբեր և միասակար թոյնը վրաս
 թափելու ըլլայ ալ նէ՛ և անոնցմէ
 յուսացած արդարութենէս զրկը-
 վելու ըլլամ ալ նէ՛ ամէնէն աղէկ և
 իմ սրտիս հաճելի վկայութիւն տը-
 ւող ունիմ . որ է Աստուած , և իմ
 խղճմտանքս :

Ատուուած զիս փորձելու համար
ինձի նեղութիւններ կը խրկէ . անոր
միշտ սրբազան կամացը գէմ ապրու
տամբելու ասիկայ պատճառ կրնամ
մի բռնել : Մայց ես գիտեմ որ՝ մա
հըս իր ձեռացը մէջ բռնողը , և ա
մէն ըլլալիքները իր խնաստութեամբը
և կարողութեամբը տնօրինողը՝ մին
չեւ որ ես անոր իմ վրայ ունեցած
խորհուրդներուն գէմ չի կենամ նէ ,
չի կրնար իմ կատարելութեանս և
երջանկութեանս օգուտ չ'ընելու
բան մը ընել : Վիտեմ որ՝ իրեն ա
մէն խորհուրդները առ այժմ ծած
կած ալ են նէ՝ յայտնուած ատեննին
շատ փրկարար գործքեր կ'ընեն , և
թէ՛ կանուխ՝ թէ՛ ուշ՝ շատ մեծ բա
րիք կը պատճառեն : Նեղութիւնով
և տրտմութիւն բերելու բաներ
գլխուս բերելով իմ սրտոտութիւնս
կը կրթէ . հոգւոյ կարողութիւնս և
մեծութիւնս յայտնելու շատ երեւե
լի գործքեր ընել կուտայ . զիս մէկ
զօրաւոր ըմբիշ (բէհլիլան) մը , մէկ
մարդ մը կ'ընէ : Սենեքա փիլիսոփայն՝

որ կռապաշտ էր, ըսած է որ՝ Աստուծոյ այս աշխարհքիս մէջ ցըցուցած տեսարաններուն ամէնէն գեղեցիկը՝ անմեղ մարդոյն ձախորդութեան հետ մարտնչիլն է: Առաքի նութեան համար իմ կեանքս և մարդոց առաջ ունեցած պատիւս տալ պէտք կ'ըլլայ, և իմաստնոց աչքին առաջը անգամ այս պատիւս զոհել շատ դժուարին բան է: Այս ասանկ պէտք ըլլայ ալ նէ՛ ես գիտեմ որ արդար Աստուածը իրեն հաճոյ ըլլալու համար ամէն բան զոհ ընողներուն ի՛նչ վարձք սահմաներ է: Այն ատենը մարդոցմէ ըլլալու բոլոր փառքը իմ աչքիս տղու խաղալիքի պէս կ'երեւին, և իմ կեանքս վերջացընելու բոպէն՝ կենացս ամէնէն գեղեցիկը կը սեպեմ:

Անանկ է նէ՛ երեւոյթքը շատ ծանր և դժուար մէկ ձախորդութիւն մը ինձի պիտի գայ եղեր, հոգընելը ինձի ի՛նչ, Աստուածս կը ներէ կոր որ անիկայ զիս գըրանէ, կուզէ ալ որ ես հնազանդիմ, այսքանս

գիտնալը ինձի բաւական է : Անդհանուր բարւոյն յարմար և ինձի օգտակար եղած բանը Աստուած ինձմէ աղէկ գիտէ . և թէ որ ասոնց ընտրութիւնը իմ կամացքս յանձնելու հնար ըլլար ալ նէ՛ որ ուղեմ նէ իմ կամացս համեմատը ընտրեմ, ուղեմ նէ իմ ճշմարիտ օգտիս վերաբերեալ բաներուն վրայօք անոր ապաւինիմ, ինչ ծանրութիւն և ինչ նեղութիւն կրնայ ըլլալ ինձի նէ՛ ամէնուն ալ կատարելապէս յանձնառու ըլլամ. ուղեմ նէ ալ՝ իմ տկար միտքս իր ունեցած լուսովը ինչպէս կը թելադրէ նէ՛ աշխարհքիս մէջ ըլլալու գիպուածները անանկ կարգի դնեմ, ես իմ յօժար կամօքս ասոնց ամէնուն տնտեսութիւնը միայն անոր բարութեանը և իմաստութեանը կը յանձնէի :

Ամէն որ առտրվանց արթնցած ատենս անոր կ'ըսէի, ո՛վ Աստուած իմ, զիս անանկ ըրէ՛ որ միշտ ինձմէ գոհ ըլլաս . քանզի ես դերագոյն օրինակաւ քուկդ եմ, և ինչ որ

դուն կ'ընես՝ և կ'ուզես որ ըլլայ ,
ես ալ անկէց զատ բան չ'եմ ուզեր :

Միտքս ասանկ տրամագրեալ ըլ-
լալով՝ ամէն վախս չափի կը մտնէ ,
ամէն ցանկութիւնս կը կարգաւորի .
այն կրակի սէս ցանկութիւնները՝
որ մեր ճշմարիտ բարիքը ինչ բանի
վրայ կայանալը չի գիտնալէն և ծուռ
կարծիք ընելէն կը պատճառի , և ա-
սանկ փափաքներուն ամէնուն ալ չա-
փազանցը ուրիշ բան ալ չ'ընէ նէ՝
մտքերնուս մէջ մէկ շիտթ գոնէ կը
ձգէ , և մեզի մեծ նեղութիւն կու-
տայ . ես ասոնք ամէնն ալ անոր կա-
մացը կը յանձնեմ . գալիքները ամէ-
նրն ալ աչքս կ'առնեմ և գոհ կ'ապ-
րիմ : Մէկ խօսքով ըսեմ , մեզի բնաւ
մէկ բան մը չի հակառակելուն՝ և
ամէն բանէն գոհ ըլլալնուս մէկ հա-
տիկ գաղտնիքը այն է որ՝ Աստուած
ինչ որ կամի նէ՝ մենք ալ միայն ա-
նիկայ կամինք : Ամօթ կ'ըսէ . « Արբ
» որ գերագոյն կամքը մեր ամէն փա-
» փաքանացը կանոն չ'ըլլայ՝ հեշտալի
» բան մը տեսածնուս սէս Աստուած

„կը մոռնամք , և մէկ ցաւ մըն ալ
 „քաշեմք նէ տրտունջ կ'ընեմք .
 „բայց ճշմարիտ և բարի նախան
 „ձով վառված սրտին համար՝ յաջող
 „բաղդն ու ձախորդութիւնը իրաւ
 „րու հաւասար են . և հաւատաւ
 „ցեայը միշտ թէ՛ աղէկը և թէ՛ գէ-
 „շը խոնարհ և հաւատարիմ սրտիւ
 „կ'ընդունի ” :

Աս՝ բարեկամներ , քաղցր զգաց-
 մունքները և մարուր ուրախութիւն-
 ները և հաստատուն խաղաղութիւ-
 նը հիմակուց վայելել սկսած եմ :
 Բայց ձեզի և ինձի խաղաղութեան
 և երջանկութեան առաջին ճամբան
 բացի նէ՝ միայն բարեկարգեալ բը-
 նութեան և շիտակ խելքին թելա-
 դրութիւնները զրուցեցի : Արջան-
 կութեան մէկ ուրիշ աղբիւր մը կայ ,
 ասկէց շատ աւելի առատ և աւելի
 ասպահով , և այս է՝ Աստուծոյ յայտ-
 նած ճշմարտութիւնները : Թէ որ
 Աստուծոյ գործքերուն և պարգեւ-
 ներուն վրայ նային ու մտածելը ,
 և Աստուածութեան վրայ ունեցած

առողջ գաղափարներս իմ հոգւոյս
 մէջ հնազանդութիւն և վստահու-
 թիւն և երախտագիտութիւն և
 սէր պատճառեցին նէ՛ այս զգաց-
 մունքներուս ի՛նչ զօրութիւն և ներ-
 գործութիւն և ժրութիւն կ'ելեւ-
 նայ՝ և ո՞րքան գեղեցիկ կ'երեւին
 ինձի, երբ մտածեմ որ՝ ամէն բա-
 րութեանց Աստուածը ուրիշ բաներ
 ալ սահմաներ է ինձի համար, որ
 բնութեան կարգէն անհուն աստի-
 ճանաւ վեր են: Այն խորհուրդնե-
 րը՝ որ մեր սկար միտքը ասոնք չի
 հասկընալուն համար կը զարմանայ.
 բայց այս միտքս է որ՝ ասոնց Աս-
 տուծմէ յայտնեալ ըլլալուն ասա-
 ցոյցներուն դէմ չի կրնալ կենալով՝
 մեզ հաւատալու կը համոզէ. ասոնք
 դիւրագգած սրտի մը այն ի՛նչ ըզ-
 գացմունքներ կուտան: Վ՛նչպէս
 կ'ըլլայ որ՝ երբոր Աստուած մեզնէ
 իր տուած աւանդը կ'ուզէ, բնու-
 թեան այն անուշ և միտք հաճեցը-
 նող ձայնը մեր վրայ չի կրնար ուրիշ
 ատենի պէս իշխանութիւն բանեցը-

նել : Այս բանիս վրայ սիրելիք՝
 մենք մեզ հարցընելէն չի վախնամք .
 անիկայ մեզի այս հարցմանս պա-
 տասխանը կուտայ : Թէ որ Քրիս-
 տոնէական կրօնքը մեզի իրեն հոգին
 ներգործած չէ, [Թէ որ մենք Աս-
 տուծոյ միայն մեր խելքովը մօտե-
 ցած սեպեմք մեզ, անանկ բռնելով
 որ՝ զինքը միայն անոր միջնորդու-
 թեամբը մեզի աղէկ ճանչուցեր է,
 Աստուած մեզնէ ի՞նչ իրական պա-
 տիւ մը առած կ'ըլլայ : Անոր կատա-
 րելու թիւնները պատուելու՝ և ան-
 կէց տեսած աղէկութիւններնուս
 տակէն ելլելու մենք ի՞նչ ըրած եմք :
 Անաւանդ՝ անոր սրբաբեւեռները ո՞ր-
 քան ապերախտութեամբ և անըզ-
 դայութեամբ վայելած եմք : Աւե-
 լի ծանրը ըսեմ, նրբան յանդրգնու-
 թեամբ և խեղճութեամբ ասոնք
 գէշի եմք բանեցուցեր : Աստուծոյ
 վրայօք եղած մեծ և վսեմական գա-
 ղափարները՝ որ ամէնն ալ մեր խել-
 քը վրանիս բերելու համար են,
 ինքնին ի՞նչ ուժ ստացած են որ Աս-

տուճոյ ներկայութեան և մեծափառ վայելչութեան զգացմունքի մը մեղի աղղելու պատկառանքը և յարգութիւնը մեղի աղղեն : Ար ձեռքին այնքան երեւելի արարածներէն և իրեն իմաստութեանը գործքերէն որքան քիչ բաներ կան՝ որ մեր միտքը դրդեն , և մինչեւ անոնց արարիչը փնտրուելու վեր հանեն : Այլ մանապէս անոր բարութեանը և անոր նախախնամութեանը մեղի ըրած նպաստներուն և օգնութեանը որքան քիչ վկայութիւններ կան , որ մեզ անիկայ սիրելու և անկէց շնորհակալ ըլլալու յորդորեն : Այլ ըտանգաւոր պարագայներու և մեղի հակառակ երեւցած դիպուածներու մէջ որքան վստահութեամբ և ասպարիներով անոր կ'աղօթեմք : Անչ հընարքներ և ինչ օգնութիւն մենք անկէց կուզեմք , անոր հրամանին ինչ կերպով կը հնազանդ իմք : Այլ անոր կոյր եմք , ասպերախտ , կամապաշտ և ասպստամք , յաջողութեան ատեն անիկայ կը մոռնամք , գուցէ

ճախորդու թիւններնուս մէջն ալ
 մտքերնիս չեմք բերեր, կամ հայ
 հոյելու համար մտքերնիս կը բե-
 րեմք: Ով դուք, որ Քրիստոնէու-
 թեան թշնամի ըլլալը ձեզի սար-
 ծանք սեպելով խրոխտացեր էք.
 կրնաք նէ զիս սուտ հանեցէք: Չէ
 նէ՝ համարձակ խոստովանեցէք.
 դուք չէք մի որ սիրոյն առ Աստուած
 ունեցած աշխոյժը ծաղը կ'ընէք, այն
 գորովական և ոգէշարժ զգացմուն-
 քը կ'ըսեմ, որուն անարատ հեշ-
 տութիւնները ձեզի հասկըցուցի, և
 թէպէտ ասոնք բնական են, և խել-
 քի վրայ հիմնած են, դուք չէք մի
 որ ցնդած մարդու խելք և երազ
 և ցնորմունք են կ'ըսէք: Անանկ է
 նէ՝ հաւատարիմ Քրիստոնեայէն
 զատ ուրիշը չի կայ որ Աստուած սի-
 րելը՝ և անոր վայլած պատիւը իրեն
 շնորհակալութեամբը և որդիական
 հնազանդութեամբը և խոնարհու-
 թեամբը և վստահութեամբը հա-
 տուցանելը գիտնայ:

Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ՝ քրիս-

տոնեայն հաւատով լուսաւորվելով,
 և աղէկ գիտնալով որ հաւատքը զին-
 քը չի կրնար խաբել, և անոր իրեն
 յայտնած խորհուրդներուն կատա-
 րելապէս խելքը պառկելով, և Աս-
 տուծոյ կողմէն տեսած այնքան սի-
 րոյ նշաններուն միտք տալով, ինչ-
 պէս այս քաղցր զգացմունքովս անոր
 սիրտը չի լեցվի: Բանին Աստուծոյ՝
 մարդկային բնութեան հետ միանա-
 լը. որպէս զի՝ Աստուծոյ մեծ վայել-
 չութեանը արժանաւոր եղած պա-
 տիւր մարդոյս կողմէն հատուցանէ.
 անոր կատարելութեանց գերազան-
 ցութիւնը. յաւիտենականին Աս-
 տուծոյ որդին՝ իր հօրը համագոյա-
 կիցը ինքըզինք կրնուիրէ կոր մեր
 միասները և մեղքերը հատուցանե-
 լու և մեզ նորոգելու համար, և
 մեղքը մեզ ինչ բաներէ զրկեց նէ՝
 այն իրաւունքները նորէն մեզի վաւ-
 տրկցրնելու համար. մեր փրկու-
 թեան զարմանալի գործը, խաչին
 խորհուրդը. մարդացեալ Աստուծոյ՝
 մեզ կրթելու և մեզի օրինակ ըլլալու

համար նուիրած ամբողջ կեանքը ,
 անանկ գեղեցիկ և ոգէշարժ խրատ
 ները , անանկ մէկ սուրբ և մաքուր
 բարոյական մը , որ մեր սխտոյիցը
 և մեր կարօտութեանցը այնքան ա-
 ղէկ յարմարած է , և առաքինու-
 թեան և ճշմարիտ մեծութեան և
 ճշմարիտ երջանկութիւններնուս ալ
 համաձայն է : Անանկ օգնութիւն
 ներ՝ որ մեզի մեր անձը մտլընիս
 բերել կուտան , և մեզ մեր ճշմա-
 րիտ վախճանին և նպատակին կ'ուղ-
 ղեն . մեզ կը բռնեն , կ'ուժովընեն ,
 և անգագար օրէ օր աւելի շնորհք
 ներ և արժանաւորութիւններ մեզի
 կը վաստըկընեն : Այլ պատարագ
 մը՝ որ ամէն օր կ'ըլլայ , անանկ մէկ
 վսեմ և վեհափառ պատարագ մը
 որ՝ աշխարհքիս մէջ գտնուլած խե-
 լացիները ամէնը մէկ տեղ դան նէ՝
 իրենք իրենցմէ ասոր գաղափարը
 անգամ չեն կրնար մտլընին բերել .
 և այս պատարագս ալ անանկ պա-
 տարագներու տեղ անցած է որ՝ բը
 նաւ ինքնին բանի մը ուժերնին չէր

օգտեր : Այս պատարագս ամէն օր
մեր սեղաններուն վրայ կ'ըլլայ . և
թէպէտ արիւն չըլլար այս տեղ ,
բայց խաչին վրայ եղած պատարա-
գին անընդհատ շարունակութիւնն
է . անանկ որ՝ այն տեղ թափած Ա-
րիւնն ու խաչված Վարմինը հոս ալ
է : Այս խորհուրդիս մէջ անճա-
ռելի խորհուրդ մըն ալ այս է . միու-
թեան խորհուրդ , որ մեր մտքին
մէջ Աստուածային և երկնաւոր դա-
ղափարներ կ'արթնցընէ , սէր կու-
տայ . մեր ուժը առատութեամբ կը
նորոգէ և միշտ կ'ելլելցընէ , և մեզ
Յիսուս Քրիստոսի կենօքը կենդա-
նի կը սրահէ : Ասիկայ անսահման սի-
րոյ գեղեցիկ և ամենագեղեցիկ մէկ
գիւտն է . և մեզի համար սը՝ այն
միութեան պատուական առհաւատ-
չեայն (բէհն) է , որուն կատարումը
հանդերձեալ աշխարհին երանական
կենօքը պիտի ըլլայ : Ամէն տեղ՝ Աս-
տուծոյ յատուկ ստորոգելիքներուն
և յատկութիւններուն մէկը եղող
անհուն սիրոյն պարգեւները , գործ-

քերը և յատկութիւնները . որ ամէն
կրօնքի ալ որսէս թէ բանալին է .
ամէն սրբագործութիւն և ամէն
խորհուրդ ասոր վրայ հիմնած է :
Ով իմ բարեկամներս . ձեզի ալ կը
հարցնեմ՝ անոնց ամէնուն ալ որ
թէպէտ ձեր մէջ մտած են , բայց
զգացմունք և խելք և կրօնք ըսած
բաներնուս յիմարութիւն և խեն-
թութիւն և ցնորք ըսելու չեն սոր-
ված . թող ամէն միտքը շիտակ և
սիրտը դիւրագգած մարդիկ ինձի
պատասխան տան . այս ամէն ըսած-
ներս մէկ տեղ գալու ըլլան նէ՝ կըր-
նայ մի ուրիշ բան մը ըլլալ , որ ա-
տնցմէ աւելի քաղցր զգացմունք և
լէցուն սրտով շնորհակալութիւն և
սէր և վստահութիւն պատճառելու
բաւական ըլլայ . որ մեզի մեր անձը
մոռցնէ , և այս ճամբով աւելի
ներքին զուարճութիւններ և մեր
սիրտը աւելի յափշտակող ուրախու-
թիւններ՝ և երջանկութեան ճշմա-
րիտ սկզբունք ըլլալու բաները մեր
սրտին մէջ ծագէ :

Սուտ կրօնքներուն մէջ մարդիկ մինչեւ առ Աստուած ելլելու ոչ բաւական խելք և ոչ ուժ ունենալով՝ իրենց Աստուած կարծածնին մինչեւ իրենց հաւասարութիւնը կ'ինչեցընէին, իրենց կրօնը անոնք ալ հաղորդ՝ և իրենց մեղացը դորձակից ընելով: Քրիստոնէական կրօնից մէջ՝ Աստուած իր մեծութիւնը և էութիւնը չի ձգած մարդկային բնութեան հետ կը միանայ նէ՛ մարդըս մինչեւ իրեն բարձրացընելու, և իր հոգւոյն և սիրոյն և սրբութեանը հաղորդ ընելու համար է:

Ահա՛ ասոնք են այն պարզամիտ և յիմար մարդոց հաւատքը, որուն անունը անխափաճառի (.քէօմիւրձիշի) հաւատք դնելով՝ ոմանք կարծեցին թէ վար կը զարնրալի: Ա՛հ, թէ որ Ն'ինէվուայի քաղաքացիին (Սուսօին) կարծեացը մէջ՝ բարոյական զգացմունքը մարդոյս հոգւոյն ամենէն ապահով ազգումն է և ամենա մաքուր լոյսն է նէ, այդ գեղացի և անկիրթ և սրբղ և ճշմարտախօս

մարդը մտաց հաւանութեան առ ի թներէն բոլորովին զուրկ եղած պիտի չըլլայ . և ասիկայ՝ անհաւատներուն ամէն խնաստակութիւններէն սղէկ է : Այս բարոյական ազդմունքովս է որ անիկայ կրօնքին այնքան ամուրկապիւած է : Այսարհքս և անոր աբարիչը տեսնելով՝ սրտածառին ու գործոյն իրարու հետ ունեցած ճշմարիտ համեմատութիւնները կ'իմանայ : Իրեն՝ Աստուծոյն հետ իրեն մեջը եղած համեմատութիւնները կը տեսնէ , ու ասիկայ իր սրտին կ'ազդէ : Անիկայ զինքը սիրելու համար և ճանչնալու համար ստեղծողին անչափ սէրը կը հասկընայ , որ ետքը որ մը անիկայ պիտի ժառանգէ : Իր երջանակութեանը սնունդ՝ և տկարութեանը օգնական՝ և կենաց նեղութիւններուն մեջ իրեն թեթեւութիւն և զօրութիւն , և գալու ամէն անհանգստութիւններէն զինքը սրահպանող , և իր կողակիցին և տղայոցը և ծառայներուն և բարեկամներուն՝ իր գտնելու ա-

մէն երաշխաւորներէն (քէֆիլներէն) աւելի անոնց հաստատուն հաւատարմութեանը և առաքինութեանցը երաշխաւոր՝ միայն անիկայ կրնայ գտնել :

Այս քրիստոնէական հաւատոց բարոյականն է որ՝ ջերմեռանդ աւնունով ծաղրոված կնիկ մարդիկ այս կրօնքիս յարելուն և ասկէց չի զատ վելուն պատճառ է եղած : Այլ յիշաւի ասոնք երիկ մարդոցմէն աւելի ջերմեռանդ են նէ՝ պատճառը այն է որ , անոնց սիրտը աւելի գիւրաղգած և աւելի շիտակ է , և սովորաբար իրենց խղճմըտանքին ձայնը եւել կէկ մտիկ կ'ընեն ու կը յարգեն , և իրենց կիրքերը սանձելու մեղնէ աւելի սորոված ըլլալով՝ իրենց բնական աղէկութիւնը և ամօթխածութիւնը պահել գիտցեր են : Մեզի պէս չ'աշխատիր որ բարակ և սուտ տրամաբանութիւնով պարտականութեան օրէնքներէն ինքրդինք ետ քաշէ : Սերջապէս , անոր համար է ասոնց մեղնէ աւելի ջերմեռանդ ըլլալը ,

քանզի անոնք մեզնէ աղէկ դիտեն
 որ՝ զիրենք ամէն դիէն պաշարող վը
 տանգներէն պահպանուելու՝ և ամէն
 տեսակ փորձանքները և նեղութիւն
 ները քաշելու համար իրեն շատ ա
 ռատ օգնութիւն գտնել պէտք է .
 և ասոնք ամէնն ալ՝ հաւատոյ միջ
 նորդութեամբը ստանալը դիւրա
 ցած զօրաւոր միջոցներով և զօրաւոր
 պատճառներով կը գտնէ : Սիրուն
 են ասոնք , ցաւակից , աղնիւ , փա
 փուկ և դիւրադգած սիրտ ունին .
 ուրիշին օգուտ ընելու և հաճելու
 համար միշտ իրենց օգուտը ետ կը
 ձգեն . քաղցրութեամբ և բարուց
 դեղէցկութեամբ և շնորհքով լեց
 ված են . քանի որ մէկ տղայական
 պարսպ միտք մը իրենց չէ՛ տիրած ,
 և արուեստով իրենց զարդուն ետե
 ւէն իյնալով՝ բնութենէ առած
 զարդերնին չեն տգեղցուցած . և
 անկանոն և անլայել նորելուք բա
 ներու սէր ձգելով ծիծաղելի և ան
 շահ և անպիտան չեն եղած . և կոյր
 և ամէն բան իրեն տաշող անձնասի

բուժեամբ իրենց վայլած չափը չեն
 անցուցած, որ ասով մէկ դաժանու
 թիւն (թի՛թիղու թիւն) մը կը վաս
 տըկին, և հակառակ խօսելու և նա
 խանձու՝ և ամէն բանի վրայ իրենք
 տիրելու փափաք մը կը մտնէ սրտեր
 նին: Ատոնց ալ առաջը առնողը կամ
 շիտկողը և բժշկողը՝ ճշմարիտ բարե
 պաշտու թիւնն է: Ասկէց դուրս, և
 երբ որ այդ վտանգներէն և փոր
 ձանքներէն կ'ազատի, մանր ու մու
 նրը հոգերուն մէջն անգամ՝ և
 պինտ յետին բաներու մտադիր ըլ
 լալու իրեն բնական եղած բարու
 թիւնը հետ ունենալով, և իրեն խե
 լացի սէրը մինչեւ մանր սրարագայ
 ներուն քննութեանը մէջ զինքը ձը
 գելով, անաչառութեամբ զինքը
 քննել ուղղներուն ասկէց ուրիշ
 կերպով չերեւիր: Ալ այս յատկու
 թիւններըս ունի՛ իրեն սեռին յա
 տուկ եղած ամէն հիւանդութիւն
 ներուն և տկարութիւններուն մէջ,
 ամէն սրտմաշութի և հնհընութի մէջ
 անանկ համբերութիւն և անանկ

ամբութիւն և հաստատութիւն կը
 ցըցընէ որ՝ երիկ մարդոց մէջն ան-
 գամ ասոնց նմանը քիչ կը գտնուի .
 և մեր ատենը սրատահած դժուարին
 օրերուն մէջ՝ ասոնցմէ անանկ ան-
 երկիւղ և ամբասիրտ կտրիճներ տե-
 սանք որ՝ կը գիտնաս թէ մարդու-
 թեան տանելիքէն վեր բան է : Ա-
 հա՛ կրօնքով և բարեպաշտութեամբ
 ասանկ կրնան ըլլալ կոր կնիկ մարդիկ,
 որ բնապէս անանկ վախկոտ են որ՝
 իրենց վրայ ալ կը դողան , իրենց
 սրտին սիրելի եղած բաներուն ամէ-
 նուն վրայ ալ՝ վտանգը մօտեցած
 ատենը , և երբ որ վտանգը առաջ-
 նին գայ՝ ներկայ ըլլայ , բոլոր ու-
 ժերնին իրենց կը ժողվեն , բոլոր ժը-
 րութիւննին և ճարպիկութիւննին
 կը բանեցընեն . և փասը ինքըզինք
 իմացուցած ատենը՝ գիտես թէ մէկ
 գերագոյն զօրութիւն մը և յատուկ
 նախախնամութիւն մը անոնք կը հռ-
 գեւորէ ու կը բռնէ : Անանկ է նէ
 կնիկ մարդիկ՝ որ մեր կողմէն պատիւ
 և յարգութիւն գտնելու արժանի

են, երբ որ մեր ամէն սուտանուն
 խելացիութիւնովնիս սխալածներ-
 նուս պակաս կը սխալի նէ՝ անոր
 համար է որ՝ կրօնքը իրեն զգաց-
 մունքովը և կարօտութիւնովը և ա-
 ռաքինութիւնովը և սրտովը կը դա-
 տեն : Այլ մենք որքան ամբարտա-
 ւանիմք ալ նէ՝ և որքան որ անոնք
 տկար կարծեմք ալ նէ՝ շատ կողմէն
 նայելով անոնք մեզնէ շատ զօրաւոր
 են : Այլ թէ որ երբեմն այնքան իրեն
 վրան յարձակող թշնամիներուն դէմ
 ուժը չ'օգտելով յաղթովի ալ նէ՝
 անոր ճամբէ ելելը և իննալը՝ մեր
 պակասութիւններն են : Այց յաղ-
 թեն նէ՝ անիկայ իրենց քաջութեա-
 նը դործն է, և աղբիւրը՝ իրենց կը-
 րօնական զգացմունքներն են : Այս
 ալ ըսեմք որ, այս բարեպաշտ՝ և
 ասանկ ըլլալուն համար ալ բանաւոր
 զգացմունքները որքան որ ասոնց
 վրայ տիրեն, այնքան ալ իրենց հո-
 գւոյն մէջ անցած կ'ըլլան, և ետքը
 ասոնց պատճառած քաղցրութիւնը
 աւելի աղէկ կը տիրէ՝ և սիրտերնին

իրեն կը յամիշտակէ :

Մարտիկամբ , Մատուծոյ վրայօք մեր սրտին զգացմունքէն սրատճառած զուարճութիւնները ձեզի նըկարագրեցի . մեր նմանիքներուն վրայօք ունենալու տրամադրութիւններնէս մեզի դալու երջանկութիւններն ալ քիչ մը տեսնեմք : Ալ մեր նմաններուն հետ ունենալիքնիս առանք պիտի ըլլայ , որ անոնց հետ արդարութիւն բանեցընեմք , անոնք սիրեմք և անոնց աղէկութիւն ընեմք :

Մէնն ալ գիտեն որ՝ անիրաւութիւն ընող մարդոյն իր գործը սրբան իրեն անհանգստութեանը և տառապանքի և սրտի ցաւի սրատճառ կ'ըլլայ : Պարաստեղն է որ ազահութիւնն ու փառասիրութիւնը , սա երկու անսանձ կիրքերը , որ մեզ ուրիշ կիրքերէն աւելի անիրաւ և անգութ կ'ընեն , մարդս ուրիշին գէշութիւն ընելու կը համարձակեցընեն : Միշտ և հանապաղ իրեն ամբաստանողը և դատասխաղը իր քովէն չի զատուիր , բուն իրեն սրտին

մէջը իր դատաւորն ալ այն է՝ տան-
 ջանքն ալ : Ճշմարտութիւնը իր ներ-
 սէն կը պօռայ , և միշտ զինքը կը
 յանդիմանէ թէ՛ ուրիշին անանկ մէկ
 բան մը ըրաւ որ՝ ուրիշ մը իրեն ը-
 նէր նէ չէր ասորթեր . ասիկայ մին-
 չեւ զիշերվան մութ ատենը ան-
 դամ զինքը կը նեղէ և կը շփոթէ :
 Առասպելը կը պատմէ որ՝ Աբսիսն մէկ
 անիւի մը կապրած է անդի աշխարհ-
 քը , և յաւիտեան կը գլտորի անով :
 Ասոր անիւը ասիկայ է : Պրամեթէոս
 սին սիրտը կրծելու յատկացած ան-
 գըղ (ասպապա) թռչունին պէս՝
 ասոր սիրտը կրծելու ալ խղճմբտան-
 քը յատկացեր է . ոչ սիրտը կը հատ-
 նի , և ոչ ալ անիկայ կրծելէն կը
 դադրի : Թէ որ այս զինքը նեղող և
 տանջող ճշմարտութեան ձայնը մա-
 րել և կտրել տալու չափ անիրա-
 ւութիւն և գէշութիւն ըրեր է նէ՛
 իր ընելովը խեղճ եղող և մնասի
 հանդիպող մարդոց լացին և հառա-
 չանացը ձայնը չորս դիէն իր ական-
 ջը կուգան կը հասնին : Աւելի հե-

ուռէն կը լսէ ուրիշներուն սիրտը
 նեղանալուն և բարկանալուն և ա-
 տելութեան և վրէժխնդրութեան
 ձայները, և ասոնց գէշ հետեւու-
 թիւններէն զինքը ազատ պահելու
 համար, և ձեռքէն ելլելու վրայ ե-
 ղած հեղինակութեան մէկ սղտիկ
 կըրտորը ձեռքը պահելու, և թէ որ
 բոլորովին կորսնցուցած է նէ՛ նո-
 րէն ձեռք ձգելու համար՝ սոսկալի
 որոգայթներ և դաւաճանութիւն
 ներ կը լարէ, իրեն խորհրդակից
 ընկերներ կը գտնէ, ամէն տեղ խը-
 ուովութեան և անմիաբանութեան
 կրակ կը ձգէ, ամէն խելացի և չա-
 փաւոր կառավարութեան թշնամի
 կ'ըլլայ, բայց ինքը ուղէ չ'ուղէ,
 հասարակութիւնը ասանկ կառավա-
 րութիւնը կ'օրհնէ, կը յարգէ: Վայց
 թէ որ ասոր մնայ նէ՛ բոլորովին ա-
 նիշխանութեան մէջ սլտի ձգէ ժո-
 ղովութիւնը, իր ամէն սոսկալի գաղա-
 նութիւններովը: Սակայն այն ալ
 գիտէ որ՝ ինքըզինք ինչ վտանգնե-
 րու մէջ կը ձգէ կոր: Վմենաթե-

թեւ շարժմունքներէն , ամենամանր
 ձայնէ և շքնչմունքէ կը դողայ , և
 դողացած ատենն ալ ինքըզինք կը
 բռնադատէ , որ երեսին վրայ վա-
 խուռ նշան մը չի ցըցընէ : Ամէն ա-
 տենն աչքին առաջը մէկ կրակ ցաթ-
 կեցընող փոս մը կայ , որուն պատ-
 ուելիքը և բացվելիքը մօտ է : Ասի-
 կայ ալ անոր համար մէկ ասպազայի
 մը պատկեր չէ՞ մի . Ատուած յիշա-
 տակել մը չէ՞ մի , որ ինքը մտքէն
 հանել կուզէ , բայց չի կրնար ընել :
 Սակայն իրեն իննալիքը կը պատրաս-
 տըվի , մօտ ատենները կործանելուն
 սպառնալիքը ամէն կողմէն կ'իմա-
 նայ , վայրկեանը և բոպէն նշանակ-
 ված է , և հեռու ալ ըլլայ , կամ մինչ
 չեւ վերջը չի կործանի՝ և շարունակ
 մինչեւ ցմահ նոյն յաջողութեամբը
 տեւէ նէ՝ այն բարիքները վայելե-
 լով երջանիկ մարդ մը եղած կ'ըլլայ մի :
 Ասոր հակառակ , արդար և իրա-
 ւունք ճանչցող մարդը՝ որ ուղղու-
 թեան և արդարութեան օրէնքնե-
 բուն իրեն ցրցուցած ճամբէն ամե-

նեւին դուրս չ'ելեր, այս ազմուկ
 ներէն և անհանդատութիւններէն
 և հընհընուքներէն ազատ՝ հանգիստ
 կեանք մը կը վարէ. Վրեն սրտին մէ-
 ջըն ալ կը մտնէ. ո՛չ ամբնալու բան
 մը կայ հոն, և ո՛չ զինքը յանդիմա-
 նելու: Քաղցր ուրախութեամբ և
 զուարճալի յուսով միտքը կը բե-
 րէ Աստուծոյ գաղափարը՝ իր վարձ-
 քը անկէց յուսալով. և իր ձեռքէն
 եկածին չափ՝ անոր ստորոգելիքնե-
 րուն հետեւող և նմանող կ'ըլլայ:
 Վր բոլորը գըտնելոյները ամէնն ալ
 իրեն վրան վստահ ընել տալու հա-
 մար ամէն բան ըրած ըլլալով՝ ամէ-
 նըն ալ իրեն կը վստահին. ինքն ալ
 անով կը զուարճանայ. իր մօտի ե-
 ղածներուն մէջ վէճ մը ելլէ նէ՛ ա-
 նոր դատաւոր կ'ըլլայ. իրարու հա-
 կառակ շահախնդրութիւնները իրա-
 րու հետ կը միաբանէ. ընտանեաց
 մէջ խաղաղութիւն կը հաստատէ և
 տիրել կուտայ. ինքն ալ ամէնուն
 հոգիին վրայ և ամէնուն սրտին մէ-
 ջը կը տիրէ. և իր առօրինութիւն

ներուն եղած յարգութեանը ինքը վկայ ըլլալով՝ գէշ մարդիկ հարկաւորապէս ասոր յաջողուածքին և խաղաղութեանը և երջանկութեանը վրայ կը նախանձին :

Գէշ մարդիկ մի : Այն ինչ հակառակութիւն է ասոնց բարուցը և ունակութեանը մէջ՝ աղէկը գէշին տանջանքին մէկ մասն է . արդար մարդէն գէշը կը վախնայ . ուստի անոր հակառակ կ'ըլլայ : Արդարը միայն աեսնելով , միայն կայ ըլլալը գիտնալով կը տրտմի և կը բարկանայ : Արդարը իրեն խաղաղիկ հանդարտութեանը մէջը կը կենայ . գէշը անիկայ անօրէնութիւնով և զբոսարտութիւնով գուրս կը հանէ . դատաստանի կը քաշէ : Մինչեւ մրտքէն անցած բաներուն վրայ անգամ ամբաստանութիւն կը հանէ . անանկ մարդու մը վրայ՝ որ իրեն աղէկութեանը երաշխաւոր ունի իր բոլոր կեանքը , և սրաշտարան ունի իր անմեղութիւնը , նոր անհնար յանցանքներ կը ձրգէ . և շատ չ'անցնիր , այն

բան մարդոց արիւնը մըտնելուն վը
րայ ասոր արիւնն ալ կը մըտնէ :

Մարեկամներ , այս սիրտ կոարող
ճշմարիտ խօսքերուս ո՞րքան օրի-
նակներ կան ամէն ազգաց պատ-
մութեան մէջ : Մտնամք անոնք .
մտնամք սա ամպամած օրերը ,
սա բարուց աւրըվելուն և կատա-
ղութեան ատենները , որ մեր տա-
րեգիրները մեր միտքը կրնան ձը-
գել : Թող աւելի յտակ օրեր գան
մեր վրան . անանկ օրեր որ աւելի
բազդ բերող աստղ մը մեր վրան կը
ծագէ . թող արդարութեան և իրա-
ւանց և մարդասիրութեան և միա-
բանութեան և սիրելի խաղաղու-
թեան օրերը ասանց տեղն անցնին
ու միշտ մնան : Այս բարեբազդ օ-
րերուս մէջ պիտի ըլլայ որ՝ ճշմարիտ
արդարոյն յատուկ եղած բնաւորու-
թիւնը պիտի փայլի , և բնաւ մէկ
տեղէ մը հակառակութիւն չի կրած
այն ամէն սղէկութիւնները պիտի
փայլէ՝ որ հասարակօրէն մարդ կային
կենաց սովորական ընթացքին մէջ

առաքինութեան հետ կապված են :

Սեր ուրիշ մարդոց ունեցած պարտականութիւններնուս մէկ պըղտիկ մասն է՝ անոնց արդարութիւն բանեցընելնիս : Աստի ասիկայ ընելէն յառաջացած աղէկութիւններուն ալ ճաշակը կէս կը սեպիլի . լըման չէ : Այրջանիկ ըլլալուն ասահոյձագոյն ճամբաներուն մէկը՝ ուրիշներուն երջանկութիւնը իրեն երջանկութիւն սեպելն է : Ար է անոնք սիրելն ու անոնց աղէկութիւն ընելը :

Կնութեան արարչին մէկ իմաստուն անտեսութեամբը , որուն բուն էութիւնն է բարութիւն և սէր՝ ինչպէս որ ըսինք , ուրիշի աղէկութիւն ուղեւոր վրայօք ինչ զգացմունք ունենամք նէ՝ ինքնին զուարճալի և ախորժելի մէկ զգացմունք մըն է : Վարդուն սիրտը ասով կը բացվի և կը ծաւալի : Ասոր հակառակը , ամէն ատելութեան սկզբունքներու զգացմունքը մարդոյս մտքին աշխատանք և ցաւ կը բերէ . և աս որ ճաշակ առնէ նէ սիրտը կը ամբի և կը սխանի : Աս

տելու թիւնը անանկ մէկ թոյն մըն է՝
որ մարդոյս հոգւոյն ամէն կիրքերը կը
թրթուեցնէ, կը կծուեցնէ, և
տրտմութեամբ և դառնութեամբ
կը լեցնէ. բայց ուրիշին աղէկու-
թիւն ուղելը՝ և մեր նմանները սի-
րելը՝ մաքուր ու բախութիւններու
և անմեղ հեշտութիւններու մէկ ա-
ռատ աղբիւր մըն է: Այս աղէկու-
թիւն ուղելու սէրը՝ որ ինքրզինք
նրպատակ բռնող կիրքերէն իրեն
բնութեամբը կը տարբերի, քանզի
ասոնք ամէնն ալ մտացածին և ան-
կարգ են, հարկաւորապէս մեզի սի-
րելի եղած անձանց սրտին մէջն ալ
սէր կը ծնանի: Սիրէ՛ որ սիրվիս:
Ուրիշ քեզի կուտակից ընելու՝ և քու
շահդ անոր սեպել տալու համար
չես կարօտ անկէց ետքը քաղաքաւա-
րութեան կեղծիքով քու վրադ փայ-
լուն ներկ (վէռնիճ) տալու հոգնե-
լու. սրտիդ զգացմունք մը կեղծե-
լու՝ որ ներսէն չունիս, և դրսէն
ցըցուցածդ ալ մէկ թեթեւ փորձի
մը անգամ չի կրնար դիմանալ, շուտ

մը անյայտ կ'ըլլայ : Այլ մարդ խաբէրնին քանի մը բոպէ միայն կը տեւէ : Ուրիշին հաճոյ ըլլալ մտքէդ անգամ չէ՛ անցած , և քեզ ամէնն ալ կը սիրեն , քանզի սրտիդ մէջինը սուկունքիդ վրան է , և քուկին մարդասէր և բարերար բնաւորութիւնդ քու ամէն գործքերուդ մէջ ամէն մարդու յայտնի կ'երեւին :

Այլ յիշաւի մարդ կրնայ մի մարդոց քանի անգամ որ սէտք ըլլայ նէ օգտակար ըլլալը և անոնք երջանկութիւնը միտք դրած ըլլալը չի ցըցընելով անոնց սիրելի ըլլալ : Այլ մարդ մինչեւ որ ինքը երջանիկ չըլլայ նէ՛ կրնայ մի ուրիշ երջանիկ ընել : Հնար է մի որ՝ ուրիշներուն համար թէ՛ կամեցած և թէ՛ ըրած ալէկութիւնները մարդ իր ներսէն չի վայելելով և քաղցրութեան ճաշակը չ'առնելով՝ մանր սպարազայներու մէջ անգամ ուրիշին գործին հոգնիլ և ուրիշին օգնութիւն ընել : Ասանկ մարդասէր և մարդամօտ և բարերար մարդը՝ գիտես թէ միշտ ծիծաղերես

և սիրուն երեւելու՝ իրեն բարի բը-
 նութեան տէր ըլլալը ամէնուն՝ և
 մինչեւ զինքը չի ճանչցողներուն ան-
 գամ կ'իմացընէ : Այց այն մարդը
 որ ուրիշները կ'ատէ և անոնց գէ-
 շութիւն կ'ուզէ , թէ՛ լոկ գէշու-
 թիւն ըրած ըլլալու համար՝ և թէ՛
 այն ճամբովը իրեն աղէկութիւն
 ընելու համար , սովորաբար իրեն
 կեցիւածքին և վարմունքին մէջ ժա-
 նիքոտ և տխուր գէմք և կերպ մը
 կը ցրցընէ : Ինդալը անգամ սուտ և
 բռնի կ'երեւի : Կանաւանդ ճանչ-
 ցըվելու ըլլայ նէ՝ անոր վրայ ինչ որ
 երեւի նէ մեղի գէմ կուգայ , չեմք
 ընդունիր , կը հեռանամք , անոր գէ-
 շութիւնէն և բամբասանքէն և զըր-
 պարտութենէն կը վախնամք : Ա՛ր-
 ջապէս՝ անոր վնասակար և մարդաս-
 պան խորհուրդներուն առաջը առ-
 նելու համար կը միաբանին , և կա-
 նուխ կամ ուշ իրեն գէշութեանը
 վերջին զոհը ինք կ'ըլլայ : Ա՛տանկով՝
 մարդոց թշնամի եղող շատ անգամ
 իրեն անձին թշնամիներուն ամէնէն

գէշը ինքն եղած կ'ըլլայ :

Եայց ձեզի համար՝ որ մարդոց գթասիրտ բարեկամներն էք , ամէն մարդ ձեր վրայ հոգ կ'ընէ : Ամէն սիրտ ձեր առաջը բացված են , և որպէս թէ թռչելով ձեզի դէմ ընդ առաջ կուգան , դուք ուրիշներուն ինչ աղէկութիւն ըրեր էք կամ ընել ուզէք էք , ամէնն ալ կը փափաքին որ անոր փոխարէնը ձեզի հատուցանեն , ամէնն ալ ձեզ կը սիրեն , կը յարգեն և կը պատուեն : Չեր մէջը ո՞վ կայ որ՝ զինքը հոգեւորոզ սիրոյ և բարերարութեան հոգւոյն վարձքը իր վրայ ունեցած և իրեն վաստրկած չ'ըլլայ :

Եարեկամութեան ամէն քաղցրութիւններն ալ ձեզի համար են : Եարեկամութիւնը , այս զուարճալի զգացմունքը , որ մեզ գրէթէ կրկին կ'ընէ , և ինչպէս որ հին իմաստուններուն մէկը շատ աղէկ ըսած է , երկու մարմինի մէջ մէկ հոգի մը բընակածի պէս կ'ընէ : Ասով միացաներուն ունեցած ամէն բան՝ հասա-

րակայ է . թէ՛ յաջողութիւնս և թէ՛
 ձախորդութիւնս . թէ՛ կարօտութիւնս
 և թէ՛ կարօտութիւննիս լեցընելու
 միջոցները . թէ՛ նեղութիւննիս և
 թէ՛ հեշտութիւննիս : Անիկայ մեր
 վայելքը կ'ընդարձակէ , կը պէտպիսա-
 ցընէ և կեւելցընէ , և մեր սրտին ցա-
 ւերուն և տրտմութիւններուն հա-
 ղորդ ըլլալով՝ անոնք ալ կը թեթեւ-
 ցընէ՝ մեր հառաչանքը և արցունքը
 ընդունելով՝ մեր քաշած ցաւոյն
 որպէս թէ մէկ գեղեցկութիւն մը
 կուտայ . և այն տրտմութիւնը՝ որով
 իրարու հետ կապված երկու սիրտ
 իրարու նման կը կրեն , փափուկ հո-
 գիններու համար զուարճալի մէկ
 զգացմունք մը ունի : Արեւկամու-
 թեան կարողութիւնը և ուժը ա-
 նանկ է որ՝ մեր անձին պէս բռնած-
 ներնուս աղէկութեանը համար մենք
 մեր երջանկութիւնը կը մոռնամք .
 անոր երջանկութիւնը մեզի մեր
 կեանքէն աւելի սիրելի է . մարդ
 թէ որ պէտք ըլլայ նէ՛ ինքրզինք
 ալ անոր ճամբուն կը գնէ՝ որ անիկայ

Երջանիկ ըլլայ . և իր սիրածին հա-
 մար զո՛հ ըլլայն ալ իրեն զուարճու-
 թեան առիթ մըն է : Ա՛յդէն կ'ըսէ .
 « Ա՛յ Աստուածային բարեկամու-
 ՞թիւն , կատարե՛ալ երանութիւն . . .
 ՞ առանց քեզի ամէն մարդ մինակ
 ՞ է . և քեզնէ օգնութիւն առնելով
 ՞ կրնայ ինքզինք շտոցընել , և ուրիշ
 ՞ շին անձին մէջը ապրիլ » :

Բայց ասիկայ աղէկ ճանչնալու
 և ասոր համը առնելու համար ալ
 առաքինի ըլլալ պէտք է : Բարեկա-
 մութիւնը աւրած սիրտերու համար
 ստեղծուած չ'է : Բ՞նչ բան կրնայ ըլ-
 լալ իրենց բաժնելիքնին իրենց մէջը .
 եթէ ո՛չ՝ իրենց կիրքերուն անկար-
 դութիւնները և իրենց տկարու-
 թիւնները : Միայն առաքինութիւ-
 նը մեր սիրտերը ասանկ քաղցր շող-
 թայներով կապելով՝ այս միութեա-
 նըս միայ տղջատհ անուշութիւն մը
 կը ծաւալէ . և կապը ամուր կ'ըլլայ
 և շատ կը դիմանայ :

Արդարութիւնն ու ուրիշին ա-
 դէկութիւն ուղեղնիս մեր երջանկու-

Թեանը էապէս առ-իժ ըլլալով՝ այս
 կողմէն ալ թէ՛ ինքնին և թէ՛ մեր վի-
 ճակին նայելով ի՞նչ յարգ և ի՞նչ
 արժողէք կրնայ ունենալ սասանկ մէկ
 կրօնք մը որ՝ մեծ խնամքով ամէն
 մարդուն օգտին հոգ տանելով, և
 ամէնուն պատիւը և ինչքը իրեն հո-
 վանաւորութեանը տակը առնելով՝
 ամէն մարդուն ինկածը ճշդիւ իրեն
 տալ կուտայ մեղի, և հարկ կը դնէ
 մեր վրայ որ՝ որքան որ մեր ձեռքէն
 կուգայ նէ՛ ուրիշներուն հասցուցած
 է՛ն պրզտիկ միասնիս ալ վճարեմք :
 Այլ ամէն չարախօսութիւն և բամ-
 բասանք մեղի արգիլելով՝ յայտնա-
 պէս մեղի կ'ըսէ որ՝ իր լեզուին սանձ
 դնել չ'գիտցողը հաւատք ունիմ կը
 կարծէ նէ՛ ինքը զինք կը խաբէ, և
 մեր վրայ դրած պարտքերուն հետ
 ալ մարդկային սրտին անանկ զօրաւոր
 շարժիչներ և անանկ շուտ հասնող
 զօրաւոր օգնութիւններ տուած է
 որ՝ մեզ ամէն վայրկեան մեծ դատաւ-
 ւորի մը առաջ եղածի պէս կը տես-
 նեմք : Այլ խղճմտանքներնուս բա-

ւահան ուժ և ազգու ու թիւն կուտայ՝
 որ աղքատութենէն և մեռնելէն ա-
 ւելի՛ սնոր մեղի ընելու յանդ իմանու-
 թենէն վախնամք: Այլ իրեն օրէնքնե-
 րուն կատարելապէս վճիռն ալ տու-
 ած է, վարձքին ու պատժոյն բընու-
 թեանը և տեւողութեանը կողմէն:

Վանաւանդ, մեղի համար սրբան
 յարգի պիտի ըլլայ անանկ կրօնք մը՝
 որ սէրն ու ուրիշին աղէկութիւն
 ուղելը իրեն գլխաւոր յատկութիւնն
 է: Ար մեր նմաններուն ունենալու
 պարտական եղած սէրերնիս՝ Աստու-
 ծոյ սրտական եղած սէրերնուս
 հետ կը կապէ, և ասկէց սիրոյ քը-
 րիստոնէական առաքինութիւնը կը
 յօրինէ: Ասով մեղ մի և նոյն հօր
 զաւակ՝ և մէկ մարմնոյ անդամ ընե-
 լով՝ բոլոր աշխարհքիս մարդիկը ի-
 րարու եղբայր, մէկ ազգ և մէկ ժո-
 ղովուրդ կ'ընէ: Սեր սրաին ճշմար-
 տապէս պէտքերուն, և մեր հան-
 դըստեանը և իրեն սիրոյն և դաղտ-
 նի շարժմանցը հաստատուն քաղը-
 րութեանը վրայ միշտ հոգ կը տանի.

ինչ որ ասոնց մէկ շփոթ մը և խառնակութիւն մը կը բերէ նէ՝ անոնք ամէնն ալ կը կտրէ կը նետէ . ատել լութեան արմատը կը քակէ , թէ՛ և ուրիշ մոլութիւններուն ուղղակի չի դրսւջի : Արէժիմնդրութիւնը միայն Աստուծոյ վրայ , և անոր կողմէն այս աշխարհքս արդարութեան սրաշտօնեայ եղողներուն վրայ կը ձգէ . և ասով կոյր և վնասակար կիրքի մը առաջը կ'առնէ մեր սրտին մէջը , որ ընկերական կարգի այնքան վնաս կը դրսւցընէ . և մեզի ալ աղէկ չի բերեր . և մեր բանաստեղծներուն մէկը ըսեր է որ՝ « Արնն վրէժը աղէկ » առնելիս է նէ՝ անիկայ ամէնէն » քիչ գոհ եղած է » (Տիւշէ) :

Վէշութեան փոխարէն աղէկութիւն ընելով՝ և միայն բարերարութեամբ վրէժ պահանջելով ցոյց տրը վելու մեծանձնութիւնն ալ միշտ միօրինակ բռնելը՝ քրիստոնէական կրօնքն է որ իր հոգւովը և իր սկզբունքներովը մեր սրտին մէջ կը գոյացընէ : Ասիկայ է մեզի այն գորո-

վոյ և գթոյ աղէքը տուողը՝ որուն համար Առաքեալը կ'ըսէ . (Աողոս . գ . 12 : Հռոմ . ժբ . 4 . 16 : ա . Արբն . ժգ . 1) : Ամէն ատեն և ամէնուն հետ յարմարվելու բարութիւնը , ուրիշի ներելու և անոնցմէ քաշած նեղութիւններնիս անտրտունջ տանելու հոգին մեզի ասիկայ տուած է : Ասիկայ մեզի կ'ըսէ որ՝ իրարու բեռ վերցուցէք . և Վրիստոսի օրէնքը ա սով կատարեցէք : Այլ ինչպէս որ առաջ ալ նշանակեցինք , ասիկայ է որ մեր սրտին մէջ՝ բոլոր մեր բնութիւնը ունեցող և մեզի պէս մարդոց առաջը կահուողըլուիս ըլլալ և յարգել , և իրարու գործին գտնելէն չի փախչիլ , և ճշմարիտ եղբայրութիւն , և ստոյգ և իրական հաւասարութիւն , և սիրոյն ամէն քաղցրութիւնները և գեղեցկութիւնները իր տուած սկզբունքներովը և զգացմունքներովը մեր սրտին մէջ կը տպաւորէ :

Աիրելի կրօնք , որ միշտ մեզի կը կանչէ թէ՛ իրար սիրեցէք , Աստուած

ամէնէն վեր, և ձեր ընկերը ձեր անձին պէս սիրեցէք :

Սեր սրտին պինդ խորունկէն եղած բարեկամութիւննիս ալ ազնուացընողը և սրբացընողը և յաւիտեան պահողը և օտար ձեռքէ ազատ բռնողը ասիկայ է : Սուրբն () դոստինոս անոր կողմէն կ'ըսէ . « Չեր » բարեկամները Աստուծով՝ և ձեր » թշնամիները Աստուծոյ համար սիրեցէք » :

Հիմակուց խելքն ու կրօնքը ի բարու համաձայնելով՝ մեզ հոգւով անանկ կը տրամադրեն որ Աստուծոյ և մեր ընկերներուն հետ սէտք եղած հաղորդակցութիւնը ունենամք, և ասով մեզի մաքուր հեշտութեանց և ախորժեղի զգացմունքներու մէկ անհատնում աղբիւր մըն են բացած : Ասոնց համաձայնելով մեզի սորվեցուցածնին, մանաւանդ այն բաները որ մեզի կը վերաբերին, մտածելով տեսնեմք թէ ճշմարիտը և բարեկարգութիւնը և խնայողութիւնը սիրելովնիս մեզի ինչ կերպ երջան

կութեան աղբիւր կը բացվի :

Մարդս թէպէտ դիւրաւ սրխալող մէկ արարած մըն է , բայց 'ի բընէ ճշմարտութեան համար ստեղծուած է . բնապէս անոր փափաքանացը նպատակը ճշմարտութիւնն է : Թէ որ մէկ գաղտնի շահ մը կամ ուրիշ մասնաւոր սրտածառ մը զինքը անկէց չի հեռացընէ նէ՛ միշտ անխկայ կը փրնտըռէ , և ասանկ փրնտըռելուն մէջ մէկ անհանգստութիւն մըն ալ կը ցըցընէ . և քիչ մը հէռուէ հեռու նշան մը տե՛սնելուն պէս՝ կը փութայ մէկ նոր ջանքով մը անոր ետեւէն կիցնայ . իրեն մտքին աչքը անիկայ տեսածին պէս՝ ուրախութեամբ կը բռնէ : Միտքը՝ կըշտանալիք չունի ճանչնալէն ու գիտնալէն . և միայն ճշմարտութիւնը գըտնելով կը հանգչի :

Սակայն այն ալ ըսեմք , շատ անգամ ասոր ետեւէն չ'կցնալը և նախապաշարմունքը և կիրքերը բոլորովին ասոր հակառակ գործքեր կընեն : Այլ բեմն մեզի մէկ անհողութիւն մը

և ծուլութիւն մը կը տիրէ, որով ե-
 տեւէ իյնալն ու վնասուելը մեզի շատ
 աշխատելի և ծանր կուգայ: Աստի
 պինտ առաջ ինչ կարծիք իր մտացը
 առաջ ելլէ՝ նէ՝ կուրօրէն անիկայ կ'ըն-
 դունի, և իր սխալելը դժուարու-
 թեամբ կամ շատ ուշ կը ճանչնայ:
 Արբեմն զգայարանքը և երեւակա-
 յութիւնը և անձնասիրութիւնը զին-
 քը կը մոլորեցընեն: Ամէնէն աւել-
 լի իրեն ամբարտաւանութենէն իր
 սրտին մէջը կը ծագին նախապաշար-
 մունքներ, որ իրեն պարծանք բըռ-
 նած խելքին բոլոր ուժը չի կրնար ա-
 նիկայ յաղթել, և կարելի է որ՝ ա-
 սանկ նախապաշարմունքներու մէջ
 իյնալուն բուն պատճառը՝ հասարա-
 կութեան մէջ գըտնելած կարծիք-
 ներուն ամէնուն մէկէն կուրօրէն
 հակառակիլն է: Աւրիշ բաներու
 մէջ այնքան չէ՛, բայց երբոր ճշմար-
 տութիւնը հասարակութեան մէջ
 կը տեսնէ՝ նէ՝ շատ կը վիրաւորի, որ
 տեղ ամպ գտնէ՝ նէ՝ իր գլխուն կը
 ժողվէ, իմաստակութիւնները իրա-

րու վրայ կը դիզէ , մտացածին դրու-
թիւններ կը հնարէ , ճշմարտապէս ե-
ղած բաները ջրել՝ և անոնց տեղը իր
մտքին ցնորքը և երազները գնել
կ'ուզէ . թէ որ ճամբան գտնէ նէ՝
սլարապ բաներու միտք հոգնեցրնե-
լով վաստրկած տեղեկու թիւնները ի-
րարու վրայ պիտի դիզէ , և թէ՛ յար-
մար թէ՛ անյարմար՝ ամէն բանի վրայ
մէկ մը կը բերէ : Արբեմն սուտը ճը-
մարիտի տեղ կըլեցրնելու համար հա-
տոր հատորի վրայ գիրքեր կը շարագրէ
կը հանէ . և ասով չէ՛ թէ միայն ու-
րիշները , այլ և ինքրզինք ալ կը խաբէ :

Բայց ասանկ մարդիկ սրբան քիչ
կը ճանչնան հոգւոյն այն հանգստու-
թիւնը՝ որ իրենք զիրենք խաբելու
համար բռնած ձեւերնուն մէջը ա-
մենեւին գտնուիլէք չ'ունի : Ամէն
ատեն՝ ուզեն չ'ուզեն՝ իրենց մտքին
մէջէն կ'իմանան որ՝ իրենց խղճմը
տանքին դէմ սուտ կը խօսին կոր :

Ասոր հակառակ , քանի անգամ
այն ալ կը սլատահի որ՝ ճշմարտու-
թիւնը անկեղծ սրտիւ փնտրուողնե-

ըր շատ սխարմունքներէ և տանջանքներէ կ'աղատին, և շատ հեշտութիւններ կը վաստըկին: Ասիկայ սիրողը՝ ան մթութեանն ու հակառակութեան տակը ձգել ուղելուն տեղը լուութեամբ ինքնիրեն կը մտածէ, և ձայնը լըսելուն պէս կը հնազանդի: Անչ որ զինքը լուսաւորելու կարող է, և իր անձն ալ՝ ուղիղ իմաստութեան կանոնով կը քննէ:

Անութեան տեսքը անոր շատ կ'ազդէ՝ և անոր սիրտը իրեն կը քաշէ. մարդն ալ իր ամէն գործողութիւններուն մէջ անոր կը հետեւի. մանր մունր բաներուն ալ աղէկ դիտողութիւն կ'ընէ: Ալ որովհետեւ բնութիւնը թէ՛ հարստութեան և թէ՛ զուարճալի բաներու կողմանէ անհատնում է, ամէն ատեն մարդուն աչքին նոր երեւելով մէկ նոր հեշտութիւն մը պատճառելու բան ունի: Ամէն ատեն ճշմարտութիւնը անոր ախորժեղի է, միշտ անոր սիրտը կը յափշտակէ, քանզի՝ ամէն բան իրեն տուողը անոր չի մոռցրնելէն

զատ՝ միշտ և հանապազ բնութիւնը
 զինքը քննողը դէպ՛ի անոր կը տանի :
 Ի՛նչ բան որ բնութեան մէջ կը տես
 նէ նէ մարդս՝ անոնց ամէնն ալ ի
 բարու հետ շարունակ մէկ շղթայով
 մը կապվածի սէս՝ առանց մէջ տե-
 ղերնին բաց մնալու իրարու քով
 շարված կը տեսնէ . քանզի ամէնն ալ
 իրարու համեմատութիւն ունին .
 մէկը առանց մէկալին չըլար : Իրա-
 բու հակառակ և դէմ երեւցած
 բաներուն մէջն անգամ՝ անոնց ի
 բարու հակառակելէն և զարնրվելէն
 և իրարու չինմանելէն և այլևայլ
 կերպ ունենալէն՝ զարմանալի համա-
 ձայնութիւններ և իրական օգուտ
 ներ կ'ելլեն : Մասնաւորապէս ամէն
 մէկ էակը մտադրութեամբ քննե-
 լով՝ ամենեւին աւելորդ և անօ-
 գուտ բան չի տեսներ, բան մը չիկայ
 որ մէկ իրեն յատուկ վախճան մը
 չունենայ . թէ՛ գործածութեանը և
 թէ՛ սրաշտօնին կամ պիտոյիցը կամ
 իրեն տեսակին սահպանութեանը
 կամ արարածոց մէկ տեսակին սահ-

պանութեանը համար չըլլայ . և ու
 բովհետեւ այս մասնաւորս ընդհա
 նուրին կապւլած է՝ և այն կարգին
 մէջն է , ասոր պահպանութիւնը
 ընդհանուրին պահպանութեանն ալ
 պիտանի բան մը կ'ըլլայ : Պինդ սլըղ
 տիկ անասունին վրայ , աչքերնուս ու
 չինչ երեւցած մէկ ճճիին վրայ , որ իր
 ծնած ատենէն սկըսելով իր տեսակին
 հաղորդակցութենէն զատւած է . և
 մէկէն բան մը չի սորված՝ նոյն տե
 սակին ուրիշ անհատները ինչ ճար
 տարութիւն կը բանեցընեն նէ՝ այս
 ալ լոկ իր բնութեանը ազդմունքովը
 նոյն ճարտարութիւնը կը բանեցը
 նէ . նոյն գործքերը կ'ընէ . մարդս
 ասոնց վրայ գերագոյն արուեստա
 ւորին վարպետութիւնը կը տեսնէ և
 կը դիտէ : Թուչուններուն տեղէ
 տեղ փոխվելուն վրայ դիտելու և
 նկատելու բաներ կան ժողովրդիւ
 և ճամբայ ելլելու համար որոշեալ
 ժամանակ ունենալնին . ո՛չ կողմնա
 ցոյց (բուսուլա) ունին և ո՛չ աչ
 խարհացոյց . և օդոյն անբաւ ընդ

արձակութեանը մէջ կրնան գտնել
 ամէն տարի իրենց բռնելու ճամ-
 բան՝ որ իրենց բնութեանը յար-
 մար գալու տեղը երթան, և ետքը
 իրենց ծնած բնիկ երկիրը և իրենց
 բոյնը դառնան, ասոնք դիտելով՝
 ասոնց առաջնորդող ձեռքը կը տես-
 նէ: Պինտ սղտիկ խտտին բացվելուն,
 ոչինչ մէկ ճճիին մէկ ամենամանր
 հաւկիթէ մը առաջ գալուն ու մեծ-
 նալուն, հաւուն ձագը հաւկրթին
 մէջը ինչ կերպով և ինչ ճամբով
 մեծնալուն, այնքան հազարաւոր տե-
 սակ թրթուրներուն իրենց կերպա-
 բանքը և ձեւը փոխելնուն, որ ա-
 ռաջ մէկ ճճի մըն էին, ետքը իրենց
 թեւ կը բուսնի, և կ'ըլլան ճանճ և
 թիթեռն (քէփէնէք), ասոնց ամէ-
 նուն մէջ բազմարդիւն բնական օ-
 բէնքներ կը տեսնէ, որ այդ ամէն
 զարմանալի գործերը ընել կուտայ:
 Անոնց մէջ բան մըն ալ չի կրնար
 տեսնել, որ դիպուածով ասանկ ե-
 ղեր է ըսելու կարող ըլլայ: Այլ ան-
 ստոյգ ճնունդները՝ որպէս թէ հո-

դէն ճճի կ'ըլլայ . մարդուն մարմինին
 աղտէն ոջիլ կ'ըլլայ . տախտակէն
 փատոջիլ կ'ըլլայ , և այլն , որ երբե-
 մըն խոշորացոյց չի գիտցող կոյր փե-
 լիսոփայները ստոյգ կը կարծէին , հի-
 մայ անոր աչքին առջեւը բոլորովին
 սուտ և մտացածին բաներ են : Թէ
 բուսոց և թէ կենդանեաց մինչեւ
 իրարու հետ արտաքին կազմութեան
 կողմանէ ունեցած համեմատութիւն-
 նին ալ կը գիտէ . մարդոց վրայ ալ
 այս գիտողութիւնս կ'ընէ . և ասոնց
 ամենաճիշդ և կատարեալ բաղկա-
 ցութիւնները կը գտնէ : Ամէն տեղ
 մէկ իմացականութիւն մը և մէկ ի-
 մաստութիւն մը կը տեսնէ յայտնի ,
 և ասոր վրայ զարմանալէն չի ձանձ-
 րանար : Միջոցներուն պարզութեա-
 նը հետ՝ անոնցմէ ելած գործքերուն
 շատութիւնը և մեծութիւնը իրա-
 բու կը բազդատէ : Ազանակներուն
 փոխալիքը ամէն անգամ աւելի խո-
 բունի մտածութիւններու տեղ կու-
 տայ . և ամէն ատեն նորէնոր տե-
 սարաններ աչքին առաջը կը բերէ .

միշտ տարբեր բաներ ցըցընելով
 զուարճութիւններն ալ կը փոխախը-
 խէ : Այն ատենը՝ բնութեան վրայ
 գիտմամբ ուշադրութիւն ընելով՝
 բարոյական խրատներ ալ կ'առնէ .
 ամէն ատեն յարմարութիւն ունի
 բնական կարգերուն մէջ տիրած գե-
 ղեցկութիւնն ու կարգը իրեն բընա-
 բան բռնելով՝ մարդոյս կենացը մէ-
 ջըն ալ ասանկ գեղեցկութեան և ա-
 սանկ բարեկարգութեան հարկաւոր
 ըլլալուն վրան խօսքը դարձընելու :
 Այլ և այլ իրարու հակառակ բա-
 ներու իրարու մօտենալէն , բազդա-
 տութեան կողմանէ ունեցած հա-
 ըրատութիւնէն , ձեւերուն և կեր-
 սպարանքներուն կատարելութիւնէն ,
 որ գեղեցիկ բնութիւնը ամէն ար-
 ուեստներու օրինակ կուտայ , կըր-
 նամբ ընտրութեան և ճաշակ ըսլած
 դատողութեանը վրայ հետեւու-
 թիւններ և նմանութիւններ հանել :
 Վերագոյն բարի և բարերար արար-
 չին տուած այս ամէն սպարգեւէններէս
 պատճառ առնելով՝ գիւրազգաց

սիրտ ունենալու և բարերարութեան վրայ կը խօսի :

Ասանկով միտքը կը լուսաւորի , աղէկ ընտրութեան տէր կ'ըլլայ , և սիրտը կը մաքրուի : Ամէն գեղեցկութեան աղբերը՝ և ամէն արարածներուն արարչին վերնալով՝ ընդարձակ և վսեմ գաղափարներ մտքին մէջը կ'ըստանայ , և անկէց ետքը յօժարութիւնները ամէնն ալ ազնիւ կ'ըլլան :

Ով իմ բարեկամներս , ես ձեզի անդադար՝ բնութեան վրայ միտք հոգնեցընելու խօսքեր կ'ընեմ , շարունակ ըսածներս կը կրկնեմ , բայց ասոր վրայ զարմանալ պէտք չէ , մարդ իր սիրածին վրան յաճախ կը խօսի : Իմ կենացս բոլոր սրարապմունքներուս մէջը իմ զուարճութիւնս և փափկութիւնս միայն ասիկայ և ասոր պէտերը բըռներ եմ , և ասոնց վրայ միտք հոգնեցընելը ինքնին ասանկ քաղցր է : Փոփոխութեանց և խառնակութիւններուն և այն ահով գողով լեցուն ատեններուն մէ-

ջըն ալ երանի՛ այն մարդուն՝ որ ժա-
մանակ և սիրտ ունեցաւ այս ուս-
մանս պարապելու . բնութեան բա-
րեկամ եղողին երանի՛ . քանդի բնու-
թիւնը անոր մտացը մէջ Աստուա-
ծային բարութեան գաղափարը ար-
թընցընելով՝ շատ անգամ մարդոց
գէշութիւնները անոր մտցընել կու-
տայ : Հազար անգամ երնեկ այն
պարզ երկրագործին , որ բնութեան
պարգեւներուն յարգը գիտնալու
համար իր աչքէն ու իր սրտէն զատ
բանի կարօտ չ'է՛ , ասիկայ թողված
է որ իր ընտանեացը մէջ խաղաղու-
թեամբ ապրի , ու հոն մեռնի . և
անմեղութեամբ իրեն մշակած երկ-
րին պտուղները ժողվելով՝ անոնք ի-
րեն շնորհող Աստուծոմէ շնորհակալ
ըլլայ :

Միտքը լուսաւորելու աւելի ըն-
դարձակ ժամանակ և միջոց ունենա-
լով՝ ճշմարտութեան ետեւէ իյնա-
լը իրեն զուարճութիւն սեպտղ՝ մի-
այն մէկ բանի մը վրայ խելք հոգնե-
ցընելը բաւական չի սեպելը : Մեր

Տանօթութիւններուն դէպ ՚ի ճշմա-
 րիտ սկիզբը կ'ելէ . Տանօթութիւն-
 ները իրարու հետ կը կապէ . իր ըն-
 թացքը կ'աստիճանէ , գաղափարները
 կ'ընդարձակէ , և մոլորութիւններուն
 դէմ դռուշանալու միջոցներ կը վառ-
 արկի : Մէկ բան մը ինչ ըլլալը աղէկ
 կը քննէ՝ որ անոր բուն արժողէքէն
 զատ աւելի կամ սակաւ յարգութիւն
 չի տայ . և անոնց ամէն մէկը չէ՛ թէ
 շատ մարդոց ծուռ դատմանը՝ այլ
 իրեն բնութեանը վրայ դատելով՝
 ամէն բանին իրեն յարմար կարգը
 կուտայ : Աշխարհքիս հին տարեգիր-
 ները կը քննէ . չէ՛ թէ անոր առա-
 ջին և տղայութեան ատեններուն
 վրայ սրարապ դրութիւններ հնարե-
 լու , և մարդիկ հողէն բուսած են
 ըսելու , և աշխարհքիս առաջին ա-
 տենները ամէն տեղ վայրենի մար-
 դիկ տեսնելու համար , առասպելա-
 խառն հնութիւններու մէջ իր հետ-
 քը կորսրնցնելու և ուր ըլլալը չի գիտ-
 նալու համար ալ չէ՛ , այլ հին աւան-
 դութիւններուն մօտենալու , և ա-

սով ինքը ղինք՝ մարդկային տեսակին
 նախնի պատմութիւնը կապող թե-
 լին կապելու համար . ինչպէս որ ա-
 ռաջին պատմիչը ասոնք ժողովեր և հա-
 լատարմութեամբ շարադրեր ու մե-
 ղի աւանդեր է : Այլ հին աւանդու-
 թիւնները ձեռք ձգելով՝ ետեւէ ե-
 տել ամենահարկաւոր ճշմարտու-
 թիւններուն մէկիկ մէկիկ աւերովին
 ալ կը տեսնէ . կայսերութիւններուն
 ինչ ճամբով երեւան ելելնուն և
 մեծնալնուն և վերջապէս իննալնուն
 պատճառներուն վրայ ճիշդ ծանօ-
 թութիւն կ'առնէ . ամէն մէկ ժա-
 մանակ եղած գործքերուն մէջ կարգ
 մը կը դնէ . իր մտայր մէջ այն ա-
 տենական մարդիկը իրարու դէմ կը շա-
 րէ . որ եղած բաները աւելի աղէկ
 իրարու հետ բաղդատէ և հետե-
 լութիւններ հանելով օգուտ քաղէ .
 և անցածներուն մտածելով՝ դալու-
 տոենը իրեն բռնելու ճամբուն ու
 վարմունքին կանոն հանէ : Աւելի ա-
 ղէկ ճամբայ մըն ալ կը սորվի . և այս
 է . որ մարդս իր կենացը սովորական

ընթացքին մէջ աւելի աղէկ կը սորվի մարդ ճանչնալը, քան թէ գիրքերու մէջ իր օրերը անցընելով: Վարդիկ ամէն տեղ միևնոյն բնութիւն և յատկութիւն՝ և միևնոյն կիրք ունին. թէպէտ տեղերուն և սարագայներուն նայելով՝ հազար կերպ փոփոխութիւններ և այլայլութիւններ ելելցած կ'ըլլայ վրանին:

Եւ այց իրեն գլխաւոր ուսմունքը՝ ինքըզինք ճանչնալու վրայ եղած գիտութիւնն է: Ար սորվի իր բնութիւնը, իրեն կարողութիւնները, յօժարութիւնները, սկիզբը և վախճանը. Աստուծոյ մարդոց հետ ունեցած յարաբերութիւնները, իրեն կենացը մէջ կանոն բռնելու բաները, և բարոյականի ուսման մէջ երջանկութեան ուսմունքը կը գտնէ: Այս ուսմանըս վրայօք եղած անհոգութիւնը տեսնելով կը զարմանայ, քանզի կրօնքին և անոր հիմունքներուն վրայօք եղած ուսմունքներէն ետքը՝ մեր անձին և մասնաւորապէս ամէն մարդուն և ամէն տան և ամէն ըն-

կերութեան և ամէն ազգերու թէ զատ զատ և թէ իրարու նայելով պէտք եղած տեղեկութիւնները և ընելու բաներնին բացատրողը և հասկըցընողը՝ ահա՛ այս բարոյական գիտութիւնս է :

Ասոր դպրատունէն նոր դասեր կ'առնէ . որ մեր ձեռօքը մեր անձին հասցուցած չարիքներէն մեզ կը պաշտպանէ . և կենաց հանգստութիւնը և երջանկութիւնը կ'եմելցընէ : Այն տեղ կը սորվի իր կիբքերը տանձել , իր պէտքը զսպել , իր ցանկութիւնը չափաւորել , իրմէ մոլութեանց բազմութիւնը հեռացընել , որ հոգւոյ տեսակ տեսակ հիւանդութիւններ են . ու մարմնոյ հիւանդութիւններուն վրայ այնքան ազդեցութիւններ կ'ընեն , որով մարմնոյն չափակցութիւնները և իրեն հընարքները ներքի վրայ կ'ընեն : Փառասիրութեան կեր չ'ըներ ինքրզինքը , չի թողուր որ նախանձը զինքը կրծէ . կամ ազահութիւնը և ընչից բաղցը զինքը տանջէ . կամ փափկու-

Թիւնը թուլցրնէ, խենթ տուփական սէրը իր վրայ բռնու թիւն ընէ . և չափազանց անառակու թեամբ ինքը զինք մաշեցրնէ և բարակ հիւանդու թիւններու մէջ իյնայ : Սեր անձը մեղի և ուրիշներուն բեռ ընող անձնասիրութեան շուտ առնրվող փափկասրբութեանը տակն ալ չ'իյնար . քանզի անձնասիրութիւնը՝ իր խորհածէն աւելի արդար՝ և ճշմարիտ . և իր ըրածէն աւելի աղէկ բան չի կայ կը կարծէ, ինչպէս որ ուրիշ տեղ մը համառօտ ծանուցեր եմք . ամէն բանի հակառակելովը անանկ կ'ընէ որ ամէն մարդ ալ իրեն կը հակառակին : Թէ որ տէրութիւնը իր ձեռքը չ'ըլլայ նէ՝ ուրիշ բանով գոհ չ'ըլլար . սակայն ո՞վ որ իրեն կը շողոքորթէ և իր աչքը մտնելու ճամբան գըտեր է նէ՝ անոր թող կուտայ որ իր վրայ տիրէ : Հպարտութիւնը քըրիստոնեայն չ'ուռեցրնէր : Արբան որ քրիստոնեայ է՝ այնքան սրբկեշտ և խոնարհ է . բայց ասով ո՞չ փոքրագի է և ո՞չ տկար : Աչ իրեն յաջողու-

Թիւններովը ինքրզինք կը կորսընցը-
 նէ, և ո՛չ փորձութեան մը հանդի-
 պելով ինքրզինք կը ձգէ: Ա՛յ բար-
 կութեան բուռն չափազանցու-
 Թիւններու զինքը առնել կուտայ,
 ո՛չ խղճմտանքին խայթը զինքը կը նե-
 ղէ, ո՛չ վախով կը խռովի, և ո՛չ սուտ
 յոյսերով կը խաբովի: Ա՛յն ուրախու-
 Թեան ճաշակը և այն անայլայլելի
 խաղաղութեան համը կ'առնէ, որ
 սրբազան մատենագիրներուն մէկուն
 ըսածին պէս մէկ մշտընջենաւոր խը-
 րախճանի (զիյաֆէթի) մը պէս է,
 և ասիկայ որ չ'ըլլայ նէ՝ մարդոյս սիր-
 տը փափկութեանց մէջ կը թոռմի,
 և կը լըխկի: Ա՛սանկ մարդը մայքուր
 և ամբիժ խղճմտանք ունենալով՝
 կըրնայ ինքնիրեն զուարճութիւն
 գտնել, միայն խելացի մըտածու-
 Թիւնները կը ճանչնայ, և ասոնք ի-
 րեն անանկ զուարճութիւններ են
 որ՝ իր քովէն ամենեւին չ'են զատ-
 վիր, և ասոնց ամէն մէկը կամ լու-
 սոյ շառաւիղ մըն է, կամ սրտին ա-
 խորժ գարու զգացմունք մըն է: Ին-

քրդինք բարեկարգութեան մէջ կը
 տեսնէ . և միայն ասանկ տեսնելը՝ իր
 կենաց ամէն վայրկենին վրայ մէկ ան-
 նման ուրախութիւն մը կը բերէ : Վր
 բնութիւնը միշտ կատարելութեան
 ենթակայ ըլլալով՝ աստիճան աստի-
 ճան դէպ ՚ի գերագոյն կատարելու-
 թիւնը կ'ելլէ իր հասնիլ կըրցածին
 չափ . որքան որ իր ուժը կ'օգտէ և
 իր ձեռքէն կուգայ նէ՝ ամէն գե-
 ղեցկութեան և աղէկութեան և կա-
 տարելութեան գաղափարին նմանող
 ըլլալու կը ջանայ . և օրէ օր լոյսը
 շատնալով անոր կը մօտենայ . իր ա-
 մէն կարողութիւնները կը բացփին և
 կ'ընդարձակփին . ամէն առաքինու-
 թիւնները կը կատարէ . մանաւանդ
 իրեն վիճակին և գրտնըլած սրբա-
 գայներուն նայելով՝ իրեն աւելի ին-
 կածը : Վր մտած ազնուական ճամ-
 բուն մէջ առաջ երթալու ամէն
 մէկ քայլափոխը իր երջանկութեա-
 նը վրան յաւելուած մը կ'ընէ :
 Հարկաւորապէս ասոնց սկսած ատե-
 նը առջի բերանը քիչ մը նեղութիւն

քաչսած է . յօժարութիւններ և ծուռ
կամքեր ունեցած է շիտկելու . ունա
կութիւններ ունեցած է յաղթելու .
կիրքեր ունեցած է զսպելու . և շատ
պատերազմեր կուուելու . բայց վեր
ջապէս ամէնէն ալ յաղթող ելեր է .
և իր յաղթութեանը վրայ ամէն ա
տեն պիտի ուրախանայ : Ասանկ են
անոր վրայ ճշմարտութեանը ետե
ւէն իննալուն բարեյաջող պտուղնե
րը : Արդը և իմաստութիւնը սի
րելով վաստրկածը ասոնք են :

Բայց ասանկ ցանկալի վախճանի
մը հասնելու համար արդեօք իր
խելքէն զատ ուրիշ բանի մը կարօտ
եղած չէ՞ մի : Այլ իմ բարեկամներս ,
առաջկուց տեսանք թէ այս խելքս՝
հաւատքը իր հետը ընկեր չ'ունենայ
նէ՞ որքան տկար է , և բնաւ մէկ
բանի մըն ալ ուժը չ'օգտեր : Իմ այս
տեղս նկարագրած պատկերը՝ որ այս
քան ձեր սրտին դարու , իրօք ներ
կայացրնելու համար՝ մեր բնական
լոյսէն ու մեր ջանքէն աւելի կրօնից
օգնութիւնը պէտք է որ հասնի :

Միայն ասիկայ մեր միտքը հաստա-
 տելու կարողութիւն ունի . որ ա-
 ռանց ասոր՝ մարդկային կարծեաց
 մէջ տարտամ մնացած կ'ըլլայ , և
 ո՛ր դին երթալիքը չի գիտնար . կրօնքն
 է որ ճշմարիտը սորվեցընելով միտքը
 կը հանգչեցընէ : Ասիկայ է որ առա-
 քինութիւնն ալ մեր վրան կը հաստա-
 տէ , ամուր և տեւական հիման վրայ
 դնելով : Ալ ինքը իրեն սրտճառներ
 և միջոցներ և հնարքներ սորվեցընե-
 լով՝ սրատերազմիլ և յաղթել կու-
 տայ , և ասոր համար անանկ ուժ
 կուտայ՝ որ մեր վրան փնտրուելու
 պարսպ տեղը կաշխատէինք : Աիւ-
 րափոփոխ և աւրբված և մոլի բնու-
 թիւնը մեր սրտին մէջը կը փոխէ . և
 շիտակ և բարեկարգ բնութեան հաս-
 տատուն և իմաստուն օրէնքներու
 բերելով կը նորոգէ : Մեզ կախար-
 դող բարիքներուն՝ մեր երեւակա-
 յութեան վրայ և մեր զգայարանա-
 ցը վրայ իշխելով ամէն ատեն բրած
 խաբէութիւննին՝ իրեն սրայճառ
 լուսովը կը փարատէ , և մեզի կը

սորվեցընէ որ անոնց տեղը աւելի ճշմարիտ բարիքները գնեմք, որ մի այն ասոնք կրնան մեր սիրտը լեցընելու :

Վերջապէս ասիկայ է որ՝ մեր հիմակական վիճակէն բաժնւրվիլը անհընար եղած գէշու թիւններուն և փորձու թիւններուն մէջ մեզի քաղցր մխիթարու թիւններ կը գտնէ . որ մեր ամէն փափաքը լեցընելու գերագոյն երջանկու թիւնը նկատելով՝ անոր սիրուն և սրտառուչ տեղքը իր հետը կը բերէ այս մխիթարու թիւնս :

ԳՒՈՒԽ Բ :

Կենաց մէջ պատահած չարիքներնուս վրայ մխիթարու թիւն, և մեր յուսոյն երջանիկ վախճանը :

ԱՍԱՆԿ ինքնին զուարճալի զգացմունքները, որ մեզ Աստուծոյ և մեր նմաններուն հետ կը կապեն . առաքինական գործքեր ընելը, ճշմարտութիւն սիրելը, կարգի և խմա-

տութեան վրայ սէր ունենալնիս .
 ատնք ամէնն ալ այս կենացս մէջ
 ամէնէն աւելի փափաքած բաներ-
 նիս մեզի ձեռք բերել կուտան . և
 շատ սխալներէն և մեզի տրտմու-
 թիւն բերելու բաներէն մեզ կը
 պահպանեն . բայց ամէն ատեն մեզ
 ցաւէ և թշուառութենէ և ձախոր-
 դութենէ չեն ազատեր : Անանկ գէշ
 և փոսնգաւոր ժամանակներ ալ
 կ'ըլլան որ՝ ռամիկներէն և հասարա-
 կութենէն քիչ մը աւելի մտքի լու-
 տաւորութիւն ունենալը բաւական
 է . միայն կարգը և առաքինութիւնը
 սիրելը կ'օգտէ՝ որ մէկ մարդ մը ա-
 մէնուն ատելի ըլլայ . ամէնքն ալ զին-
 քը զըպարտեն ու հալածեն :

Անկ մարդուն քաջած ցուր ինչ
 տեսակ կ'ըլլայ նէ ըլլայ . իր նեղու-
 թիւնը մեղմացընելու և ճշմարիտ
 մխիթարութիւն գտնելու համար
 ուր երթալու է : Այլ բարեկամներ .
 այս տեղս թող խելքը իր ձայնը
 կտրէ . կամ ասանկ բան ձեռքէն չի
 գալիքը թող յայտնի խոստովանի :

Մեզի պիտի ըսէ՞ մի քանի մը Ստոյիկեան փիլիսոփայներուն ձայնակից ըլլալով, թէ ցաւը գէշ բան չէ : Անոնց մէկ քանիին ըրածները նուն պէս անզգայութիւն մը պիտի ցրցընէ՞ մի վրան, որ Ստոյիկեանց յատուկ է, բայց բնութիւնը սուտ կը հանէ. և մարդկային հպարտութիւնը իրեն բնական տկարութիւնը ծածկելով՝ և իրեն զօրութիւնը չափէն եւեւ ցրցընելով մինչեւ այս աստիճանը հասած է : Ասանկ ըլլալը հարկ է՝ և ուրիշ կերպ անհնար է որ ըլլայ ըսելը մեզի միտթարութեան տեղ պիտի կրլեցընէ՞ մի, որպէս թէ՛ այն ցաւը հարկաւորապէս քաշելու ըլլար՝ ինձի միտթարութեան մէկ աւիթ մը եղած ըլլայ : Իմ ամէն քաշածներուս վախճան՝ իմ մահս ցրցընելը պիտի հերիք սեպէ՞ մի : Իայց մինչեւ մահը իմ կենացս թելերը կտրելու համար գալու առ տենը՝ ցաւով և հեծութեամբ աչքըս ճամբան մնալը և անոր ըստա սելս զիւ բիշ մի մեղքընալու կ'ընէ :

Եւ անոր եկած ատենն ալ՝ ես որքան
 թշուառ և խեղճ ողորմելի եմ ալ
 նէ՛ արդեօք պիտի յանձնառու չըլ-
 լամ մի ապրելու սրայմանով նորէն
 այն ծանր բեռները վրաս առնելու .
 քանզի ասիկայ մարդոյս շատ բնա-
 կան եղած մէկ զգացմունքն է : Աը-
 թին և խաւարասէր փիլիսոփայու-
 թիւն մըն է մի որ իմ դէմս պիտի
 ելլէ , և ինձի ըսէ թէ մեռնելէն
 անդին բան չի կայ . ո՛չ հողի կը մնայ
 և ո՛չ մարմին : Եայց ես ոչնչանալէն
 անանկ սոսկում մը կ'իմանամ որ՝ ես
 զիս չեմ կրնար յողթել . և ետքը
 ոչինչ ըլլալու գաղտնիարը՝ այս աչ-
 խարհքիս մէջ քաշած ցաւերուս և
 տառապանքներուս վրայ ինձի քաղցր
 փոխարինու թիւն մը կ'ըլլայ մի : Եայց
 թէ որ աւելի առողջ միտք մը՝ ինձի
 հանդերձեալ մէկ աշխարհք մը պի-
 տի ցըցընէ նէ իբրեւ առաքինու-
 թեան վարձք , անիկայ թող ինձի
 ուժ տայ , որ կտրիճութեամբ և
 հաստատութեամբ անոր արժանի
 ըլլամ . իմ կարօտ եղածս ահա՛ այս

ուժս է բողորովին :

Ո՛վ սուրբ կրօնք : Ո՛վ տկարու-
թեանս հաստատութիւն ըլլալու՝ և
մեր կենացը հետ խառնելիս՝ փոր-
ձութիւններուն վրայ մեզ մխիթա-
րելու յարմար քեզնէ ուրիշ բան
չի կրնար ըլլալ : Արօնքը միայն է որ՝
մեր քաջած չարչարանքներուն դառ-
նութիւնը անուշցրնելէն զատ՝ ա-
սոնք մեզի սիրելի անդամ կ'ընէ :

Ասոր աչքին շատ մեծ բան մը
չէ՛ մեր հողւոյն ժրութիւնը ցըր-
նելը , և մարդկային բնութիւնը ինչ
բան կրնալ քաշելիքը մեր անձին
վրան երեւցրնելը , ինչպէս որ Աե-
նեքա ըսաւ , Նորոստ և ամբարտա-
ւան հողի մըն ալ այս բանովս կրնայ
սրարծիլ :

Այս ըսած փիլիսոփայս կ'ըսէ .
,, Արնայ քեզի ծանր և սոսկալի բա-
,, ներ սլատահիլ , որ դժուար կը
,, տարովին , դուն հաստատութեամբ
,, անոնց դիմացիր : Ասով դուն շատ
,, առաջ կ'երթաս , և Աստուծմէ ալ
,, անդին կ'անցնիս : Անոր փորձու-

„Թիւն մը չի կրնար պատահիլ, ուս-
 „տի անոնց յաղթելու առաքինու-
 „թիւնն ալ չունի. քու համբերու-
 „թեամբդ դուն անկէց աւելի կ'ըլ-
 „լաս ” :

Ահա ամբարտաւան փիլիսոփայ-
 ութեան ըսածը այս է : Վրիստոն-
 եայն աւելի խոնարհ և աւելի ճշ-
 մարտախօս է . մեզի տառապանքնե-
 րէն և նեղութիւններէն՝ փիլիսոփայ-
 յութեամբ ձեռք ձգածներնէս շատ
 աւելի մխիթարիչ և շատ ստոյգ պը-
 տուղներ կը քաղէ : Ասոնք կը ծա-
 ռայեցնէ իր խելքը իր դլուխը բե-
 րել տալու . իր մոլութիւնները շիտ-
 կելու . մեզնէ դուրս եղած բարիք-
 ներուն պարագ և անկայուն ըլլալը
 հասկըցնելու . հոգինիս աւելի ազ-
 նուացնող և մտքերնիս աւելի լու-
 սաւորող և մեր սրտին արժանաւոր
 բաղձանքները լեցնող բարիքնե-
 րուն վրայ սէր ձգել՝ և անոնք փրն-
 տըռել կուտայ : Նեղութեան դըպ-
 րատանը մէջ՝ կրօնքին օգնութեամբը
 կըլլամբ խոնարհ , դիւրագգած և

սրտցաւ . մեղի հարկաւոր երեւցած
 բաները ձեռք չի ձգելով ալ ապրիլ
 կը սորվիմք , մեր վրայ անանկ ճարեր
 և հնարքներ կը գտնեմք՝ որ մեղի ա-
 նանկ կուգայ թէ ասոնք գործածե-
 լը մտքերնիս անգամ գալիք չունէր .
 ամէնէն աւելի՛ սրտանց մէկ հաս-
 տատուն բարեպաշտութեան մը ան-
 գին աղէկութիւնները՝ և մեղի պի-
 տանութիւնը կը հասկընամք . և վեր-
 ջապէս այն կը սորվիմք որ՝ մեղի բա-
 ւական ըլլալու միայն Աստուած է ,
 ուրիշ բան չի կրնար ըլլալ : Տանջան-
 քի և նեղութեան ատեն մեր գէ-
 շութիւնները՝ թէ որ մենք կրօնք
 չունենամք նէ՛ ընելիքնին միայն այն
 է , որ կերպարանքնին կը փոխեն .
 երեւոյթքնին ուրիշ կերպ կ'ըլլայ .
 բայց բուն էութիւննին նոյնն է :
 Աիրքերնիս մեղի կը մնան . և անոնց
 կամքը կատարելու կարողութիւն
 չեմք ունենար : Այելքը կորսընցու-
 ցած բարիքներնիս քանի՛ որ մտքեր-
 նիս բերեմք նէ՛ սրտերնիս կը ցաւի
 և կը տրտմիմք . գերագոյն էակը

մեզ պատժած ատենը անոր գէշ կը
 զրուցեմք . իր վրէժխնդրութեան
 գործիք ըրած մարդոցը անէծք կը
 կարդամք . մեղի ինկած գէշ բաղդը
 կը նզովեմք . մեզ լուսաւորող արեւ-
 ւին ալ աղէկ չեմք ըսեր . մեր պզտիկ
 ցած և նախատինք քաշած կամ մէկ
 ցաւի մը ինկած ատեննիս խեղճ ու
 զորմելի մէկ կեանք մը կ'ունենանք .
 և այս կեանքերնիս ալ շատ անգամ
 յուսահատութեամբ կը վերջացը-
 նեմք :

Այն հերիք չէ՛ որ կրօնքը մեր
 քաշած տառապանքը մեր հոգւոյն
 վերքը բժշկելու և մեր մոլութիւն-
 ները շիտկելու գործ կածէ : Ասկէց
 զատ՝ այս տառապանքներս ասպաշխա-
 րանքի տեղ սեպել տալով՝ մեր ան-
 հաւատարմութիւններուն ծանրու-
 թենէն ալ մեզ կը թեթեւցընէ : Չէ
 թէ միայն ծանր մեղքերուն՝ այլ և
 թեթեւներուն ալ փոխարէն հատու-
 ցում մը ընելով քաւութիւն գրտ-
 նելու պարտաւորութիւնը խելքի
 ալ համեմատ է՝ բնութեան ալ . ուս-

տի գրեթէ բոլոր ազգաց ալ բընա-
 կան ազգմունքի պէս բան մը եղած
 է : Միշտ անանկ իմացած են որ՝
 մենք գերապոյն էակին՝ մեր ըրած
 մեղքերուն ամէնուն ալ հաշիւը պի-
 տի տամք . այս մեղքերս բիծ կը սեպ-
 վին՝ որ մաքրել պէտք է . սպարտք մը՝
 որ վճարելու է : Ասոր համար մտած
 է Յունաց և Հռոմայեցւոց և ու-
 թիշ ամէն ազգերու մէջ լուացվիլ-
 ներ , քաւութեան այլեայլ տեսակ
 ներ , և զոհեր . որ ամէն մէկ ազգի
 մէջ մէկ մէկ անուն առած են : Նըւ-
 մարիտ կրօնքին և քրիստոնէութեան
 ոգիին մէջ՝ մեր մեղքերուն հատու-
 ցումը ընելու ասոնցմէ ապահով և
 զօրաւոր ճամբայ մը կայ . որ է՝ Աս-
 տուծոյ մեղի խրկած նեղութիւննե-
 ըր ընդունիլը , և ասոնք իրեն նուի-
 ընելը : Հաւատացեալ անձը ասոնց
 մէջ միանգամայն դատաւորի արդա-
 րութիւն և հօր բարութիւն կը տես-
 նէ , անանկ հօր մը՝ որ առատ դը-
 թութիւն և սղորմութիւն ունենա-
 լով իրեն թուլութեանը և տկարու-

Թեանը օգնութեան կը հասնի ա-
 նանկ այս գործոյս յարմար գալու
 ճամբաներով՝ որ մենք ընտրած չեմք
 կրնար ըլլալ . ուստի անձնասիրու-
 Թեան խաբէութիւն ալ մէջը մտած
 չ'ըլլար : Հաւատացեալ հոգին ի՞նչ
 արժողէքով և ի՞նչ վճարման գիտա-
 ւորութեամբ կ'ընդունի անոր ձեռ-
 քէն այս օգտակար սրատիժները , ո-
 ղով հանդերձեալ կենաց աւելի մեծ
 սրատիժներէն ազատ կը մնայ : Ի՞նչ
 սուրբ նախանձով և սիրով այս գե-
 րագոյն արդարութեան իրեն դէմ
 ըրած վճիւր՝ որ իրեն գործքերուն
 կը վայլէ , կ'առնէ Աստուծմէ՝ որ ան-
 հուն սրբութիւն ունի , և ինքը մի-
 այն անոր հաճելի ըլլալ պիտի ուզէ :
 Ի՞նչպէս ինքն ալ անոր արդարու-
 Թեան ու գթութեան գիտմունքնե-
 ղուն կը համաձայնի . իր բոլոր նե-
 ղութիւնները և քաջածները այնքան
 մեծ վստահութեամբ անոր կը նուի-
 ընէ , որ անոնց ամէնն ալ միջնորդին
 Աստուծոյ արդեանցը հետ կը միա-
 ցընէ , և անոր անուամբը և զօրու-

Թեամբը իրեն նուէրքը կուտայ :
 Սխաբը կը բերէ իրեն աղայու թեա-
 նը ատենը ճամբէ ելլէնէրը , այն-
 քան տարիներով իր Աստուածը մոռ-
 նալը , և անոր օրէնքները անարգե-
 լը և աւրելը , անոր այնքան ապե-
 րախտ ըլլալը , և անոր այնքան ամե-
 նապատուական պարգեւները գէշի
 բանեցրնելը : Այլ ասոնց վրայ զըզա-
 լով աչքէն արցունք կը թափէ . ասի-
 կայ իրաւ է : Բայց այսպէս թափ-
 ված արցունքներս ալ ինչ անուշ են .
 որովհետեւ ասոնք իրեն թափել տը-
 ւողը սէրն է , և այս սէրս անոր սր-
 քան բարձրանալ և ուժ և սրտոտու-
 թիւն կուտայ : Արքան շնորհակալ
 կ'ըլլայ Աստուծմէ՝ որ տանջանաց կը
 բակով զինքը կը մաքրէ , և ասով անոր
 հետ կատարեալ հաշտութիւնը կ'ա-
 պահովցրնէ՝ նոյն գործքերով մարդոյս
 բուն իր մէջը հաշտութիւն կատա-
 բելով : Արեն խոնարհութեամբը Աս-
 տուծոյ կամեցածին յանձնառու ըլ-
 լալով՝ և երախտագիտութեամբ
 ներսը լեցվելով և հոգին որպէս թէ

իրմէ յափշտակըլելով՝ իրեն նեղու-
թիւններուն և քաշած տառապանք
ներուն վերջը երբ ըլլալիքը ամենե-
ւին հոգ չ'ըներ և չի հարցըներ . Աս-
տուծոյ չափ մը չի ցըցըներ՝ որ զինքը
մինչեւ այնքան նեղէ . ինքըզինք Աս-
տուծոյ ուղղութեան և իմաստու-
թեան և բարութեան կարգին մէջ
տեսնելով սիրտը կը հանդարտեցընէ
և կը հանգչի :

Եւ այց թէ որ այս ամէն կողմէն՝
որ ամէնն ալ մեզի օգտակար բաներ
են , կրօնքը մեզի մեր նեղութեանը
մէջ այնքան թեթեւութիւն և անու-
շութիւն գտնել կուտայ , հաւատա-
րիմ հոգին ասիկայ ո՞րքան սլատուա-
կան պիտի սեպէ , երբ ինքն իրեն բը-
նաւ մէկ կշտամբութիւն ընելու
գլխաւոր բան մը չ'ունենալով՝ ա-
ստնցմով իրեն վատորկելու արդիւն-
քը կը մտածէ , և այս կրօնքիս իրեն
ամենակատար գաղափար ցըցուցա-
ծին հետ նմանութիւն ունենալու
այնքան նշաններ իր վրան կը տեսնէ :

Վիտէ որ՝ ո՞րքան համբերու-

Թեամբ և հնազանդութեամբ գրու-
 խուն եկածները քաշէ՝ ինքն ալ իր
 Աստուծոյն այնքան սիրելի կ'ըլլայ .
 և իր վրան այնքան աւելի պայծառ
 կ'երեւի անոր վստահութիւնը և սէ-
 րը : Ահկ մարդ մը հանդարտու-
 Թեան և խաղաղութեան և յաջողու-
 Թեան մէջ ըլլայ նէ՝ դիւրին է ասպա-
 հովութեամբ գիտնալը թէ անոր սի-
 րելի է , և անիկայ կը սիրէ . տակայն
 մեր աստուածսիրութեան մեծ և ե-
 րեւելի փորձը և ասպացոյցը՝ մեր նե-
 ղութիւն քաշած և ձախորդութեան
 մէջ եղած ատեննիս պիտի ցրցընեմք :
 Այն ալ գիտեմք որ՝ այս բարի Աս-
 տուածս մեր նեղութեան մէջը մեր
 հետն է . և մեր չարչարանքներուն
 խորհրդակից վկայ ըլլալով՝ մեր հա-
 ռաչանքն ու արցունքը կը ժողվէ .
 և մենք ինչ որ անոր հաճոյ ըլլալու
 մտօք կը քաշեմք և քաշելու յանձնա-
 ռու կ'ըլլամք նէ՝ անոնց մէկն ալ չի
 կորսընցընեք . իր փառացը և մեր
 երջանկութեանը համար կը պահէ .
 այն վայրկենին մէջ մեզ իր երկնային

զօրութեամբը կը զօրացընէ, և աւելի ոգէշարժ կերպով ինքըզինք մեր սրտին կիմացընէ: Այն ատենն է որ մենք ալ Վաւիթ մարգարէին ըսած խօսքը կը կրկնեմք. բնաւ մէկ տեղ մը իմ քաջածնեբուս յլրայ միսիթարութիւն չի գտայ. Աստուածս յիշեցի, և այս յիշատակութիւնս ինձի շատ զուարճալի ուրախութիւն տըւաւ: « Այ կարէր միսիթարիլ անձն յիմ. յիշեցի զԱստուած և ուրախ եղէ (Սաղմ. հգ. 4) »: Այլ յիրաւի ասկէց մեծ ինչ միսիթարութիւն կըրնայ ըլլալ մեզի. որ մեր քաջած ձախորդութեանցը մէջ և հալածանաց մէջ կարող ըլլանք ըսելու թէ՛ քաջածնիս արդարութեան համար է: Թող անօրէն դատաւորներ մեր վըրայ մահուան վճիռ կտրեն. թող մեր տանջանաց գործիքը մեր սէքին առաջը պատրաստըլի. թող մեզ ստաննելու մարդոց սուրը մեր գլխուն վըրայ բացած վեր վերցուցած ըլլան. թող մեզ աքսորեն, բանտը գնեն, երկաթը զարնեն, սաստիկ տանջանք

ներ տան , և ասոնց ամէնովը մեզ
 փորձեն . մենք մեր դատաւորներն
 ալ կը զարմացընեմք , մեր բանտին
 սրահասպաններն ալ , մեր դահլիճնե-
 րն ալ , մեր հոգինիս այս ամէն բա-
 ներուն մէջ մի և նոյն աստիճան բըռ-
 նելով , և հաստատուն կենալովնիս
 և մեր մտքէն չի խախտելովնիս : Աւ-
 րախուժեան ձայներ կը հանեմք .
 յաղթող մարդ մը իր յաղթական
 կառքին վրայ ելածին պէս կ'ելլեմք
 մենք ալ մեր գլխատվելու տեղը . և
 մեզ ըսպաննողներուն համար՝ « Հայր
 » թող սոցա , զի ոչ գիտեն զի՛նչ գոր-
 » ծեն » ըսելով կը մեռնիմք : Այս
 չէ՞ մի այն մարդուն սիրտը յափշտա-
 կող տեսարանը՝ որ սա վերջին ժա-
 մանակներս մեզի տուին կրնիկ մար-
 դիկ իրենց տկարութեամբը , և մեր
 կրօնքին այնքան դիւցազունքը , որ
 բրիստոնէութեան առաջին դարուց
 աշակերտներուն արժանաւոր հետե-
 ւողներ էին , և անոնց պէս՝ Յիսուս
 Քրիստոսի քալած ճամբովը կ'եր-
 թային :

Իրենց Աստուածային վարդապե-
 տին և գաղափարին այս երջանիկ հե-
 տեւողութիւնն է՝ որ անոնց մխիթա-
 րութիւնը կատարեալ և ծայրագոյն
 աստիճանի կը հասցընէ . Քրիստոնէ-
 ին քաշած նեղութեան մէջ խմացած
 ուրախութեանը վերջին աստիճանը
 այս է : Աչքը կը տնկէ իր հաւատքին
 հեղինակին և կատարողին վրայ . այն
 մարդացեալ Աստուծոյն վրայ՝ որ մե-
 զի համար այնքան չարչարանք քաշեց,
 և մարդկան փրկութեան համար զոհ
 ըլլալու չափ մեզ սիրեց . մինչեւ որ
 խաչին վրայ մեռնելու յանձնառու
 եղաւ . և ասիկայ բաւական է որ՝
 իր ետեւէն տարածներն ալ իրեն
 սիրելի ընէ : Հեթանոսաց Առա-
 քեալը կ'ըսէր . մեր ամէն նեղու-
 թիւններուն մէջ ուրախութեամբ
 լեցված եմ . « \ ի եմ մխիթարու-
 թեամբ , առաւելեալ եմ ու-
 թախութեամբ յամենայն նեղու-
 թեան մերում (բ . Կրն . է . 4) » :
 Մարդոյս կենացը ամէն վիճակին
 մէջ Յիսուսի Քրիստոսի խաչելոյն

ուսմունքը՝ իր դաւանած կրօնքին
 սուրբ և վսեմական ըլլալուն կատա-
 րերապէս խելքը հասնող Քրիստոս
 նէին համար շատ հոգեւոր տեղե-
 կութեանց աղբիւր է . բայց աւել-
 լի ձախորդութեանց և հիւանդու-
 թեան և նեղութեան մէջն է որ՝ ի-
 րեն չարչարանք քաշող և մեռնող
 տիրոջը ոգէշարժ պատկերը իր բնու-
 թեան ամէն տկարութիւններուն
 վրայ ալ զինքը յաղթող կ'ընէ . անանկ
 որ՝ մարդս ինքն իրմէն վեր կ'ըլլայ .
 և նոյն իսկ սաստիկ նեղութեան մէջ՝
 Պօղոս առաքելոյն ըսած լեցուն մխի-
 թարութիւնը և առաւելազանց ու-
 բախութիւնը կը գտնէ : Սա ցաւոյ
 անկողինին մէջ պառկող , սակայն
 հաւատով լեցուն և Մտուածային
 սիրոյն կրակովը բռնկած մարդը
 նայեցէք : Թող խաչելութեան պատ-
 կեր մը բերեն առջին . աչքը վրան
 կը տնկէ . սիրով իրեն պողունքները
 վրան կը փակցընէ . և իրեն սիրոյն
 յափշտակութեանը չի կրնալով դի-
 մանալ՝ Հնդկատանի և Ղաբօնի նոր

առաքելոյն սէս յօժար սրաիւ կը պօռայ . “Օ իս աւելի տանջէ՛ տէր . ” տանջանքս աւելցուր ” : Հիւանդանոցները դնացէք , որ հաւատքը հոն տակաւին մեռած չէ . կրօնքը իր բոլոր իշխանութիւնը պահած՝ կամ ձեռք ձգած է . և այն տեղը տեսէք որ այս փրկութեան նշանքս և գործիքս՝ նեղութեան և չարչարանաց մէջ եղող անձինքներուն վրայ ինչ աղէկ գործքեր կ'ընէ : Թէ որ մէկ անկողինի մէջ երկու հոգեվարք հիւանդ սրառկած ըլլան , և մէկը կրօնից բոլոր ազդեցութիւններէն օտար ըլլայ , և այս բաներս ալ տեսնելով սաղ և անզգայ մնայ , տեսէք որ ի՞նչ մխիթարութիւններէ զրկուած կ'ըլլայ . ի՞նչ խռովութեան և յուզմունքի մէջ է . ի՞նչսէս կը տանջուի և յուսահատութեան մէջ կիչնայ . իրեն ի՞նչ դժնդակ հոգեվարքութիւն կը սպտճառէ . այն ատենը որ մէկալը Փրկչին խաչին հետ միանալով՝ Աստուծոյ խաղաղութեամբ և ուրախութեամբը կը քաշէ ու կը

մեռնի : Հոս ալ անհաւատը պիտի
 սօռայ . ատիկայ կրօնքէ առաջ ե-
 կած խենթութիւն և մոլոր երեւա-
 կայութիւն է . հինցած սովորութե-
 նէ մնացած բան մըն է պիտի ըսէ ,
 որ որքան որ հիմայ ուրիշ ժամանակ
 ներէն աւելի մեղի անարգ և յիմա-
 րական բան մը պիտի երեւի նէ՝ ա-
 սիկայ ձեռքէ հանելը անոր դժվար
 եկած է : Ահ , թէ որ քրիստոնէու-
 թիւնը իրեն Աստուածային ըլլալուն
 այնքան կողմէն յայտնի նշաններ
 չ'ունենար ալ նէ՝ այս խենթութիւն
 և ծուռ երեւակայութիւն ըսածնին
 որ հիմայ նկարագրեցինք , ճշմարիտ
 իմաստունին առաջը յարգի և սրտ-
 ուական բան մը սեպւելու էր . ու
 ըովհետեւ միայն անիկայ մեզ երջա-
 նիկ կրնայ կոր ընել թէ՛ մեր կենա-
 ցը մէջ՝ և թէ՛ մեռնելու ատեննիս :

Մարդոյս այս աշխարհքիս վրայ
 ընդունակ ըլլալու երանութեանը և
 երջանկութեանը ճշմարիտ տարերք
 և սկզբունք ըլլալու բաներուն հա-
 մար ըսածներուս այս ալ եվելցընեմ ,

որ աշխարհային երջանկութեան վը
րայ որպէս թէ կնիք կը զարնէ . և թէ
որ ասանկ կրնամք ըսելնէ՝ անոր լըու
մըն և կատարումն է : Այս է՝ ասկէց
աղէկ կեանքի մը ակնկալութիւնը ,
որ մեր ամէն փափաքները հոն պիտի
լեցվին : Անանկ մէկ առողջ խելք մը
և բանավարութիւն մը ունենալու
եմք որ՝ կիրքերուն և մոլութիւննե
րուն մեզի ծուռ հասկըցուցած ա
մէն առժամանակեայ օգուտներէն
զատված ըլլալու է . քանզի ասոնք սև
ամպիպէս մեր աչքին առաջը կու
գան՝ ու ճշմարտութիւնը մեզնէ կը
ծածկեն : Ասոնցմէ ազատ խելքը մե
զի հերիք է՝ ինչպէս որ ըսինք և որ
քան կրկնեմք նէ քիչ է , որ այս հան
դերձեալ կենացը գոյութիւնը մեզի
հաւտացընէ : Այն նոր կարգը՝ որ
Աստուած իրեն արդարութեանը
կողմէն պարտական է բերելու . որ ի
րեն մեր սրտին մէջ քանդակած և
տպաւորած օրէնքներուն վճիռը ա
սով կատարումն առնէ . և ամէն բան
իր կարգը և իր տեղը գտնէ , և ա

ուաքինութիւնը՝ որուն այնքան վը-
 տանգաւոր բաներու մէջ մարդոցս
 հանգստութիւնները ամէնն ալ մէկ
 դի ձգեր և ներդութիւններու մէջ
 խնայու յանձնառու եղեր է, իրեն
 վարձքը և անոր հաւատարիմ մընա-
 լուն փոխարէնը առնէ : Սեր հոգ-
 ւոյն բնական յօժարութիւնը, իրեն
 գաղափարները՝ որ միշտ զինքը ամէն
 ժամանակներէ և ամէն չափէ անդին
 կը տանին, իրեն անհուն ցանկու-
 թիւները՝ որ միայն իրեն դիտմանցը
 համեմատ նպատակ կրնան ըլլալ,
 բնական ազդմունքը՝ և աշխարհքի
 մէջ գըտնելոյ թէ՛ վայրենի և թէ՛
 կրթեալ ազգաց ամէնուն համաձայն
 հաւանութիւնը՝ որ մեռելներնուն
 հոգին կը սրտուեն և հանդերձեալ
 կեանք ըլլալուն կը հաւատան, նոյն
 իսկ չար մարդուն վախը՝ և անօրէն
 մարդոց՝ այս խելքի և բնութեան
 համեմատ՝ և միայն իրենց օգտին հա-
 մար չ'ընդունած հաւատալիքը ջրե-
 լու համար քաշած սրբապ աշխա-
 տութիւննին, ասոնք ամէնն ալ այս

հաւատալիքս անխախտելի հիման վը
րայ կը հաստատեն :

Բայց կրօնքին ձայնը , որ սուտ
դրութիւններով չի մօլորած մարդոց
որտին վրայ շատ մեծ զօրութիւն ու
նի , հոս մեղի աւելի ներքին մէկ
հաւանութիւն մը կուտայ , և նոյն
խիստ խելքին լուսոյն վրայ մէկ նոր
սրայծառութիւն մը կ'ելլեցընէ : Ա
նիկայ միշտ մեր անմահութիւնը մեր
աչքին առաջը կը բերէ , և այս
հաւատալիքս մարդոյն շատ հարկա
ւոր է , մեր ամէն գործքերուն վրայ
աչվնները միշտ բաց սրահելով դի
տող Աստուծոյն գոյութիւնը ճանչ
նալնուս ետքը ասկէց աւելի հարկա
ւոր գիտելիք չեմք կրնար ունենալ :

Ահա Քրիստոնէութիւնը բոլոր՝
այս սուրբ հաւատալիքիս վրայ կը
կայանայ . իր սորվեցուցածներուն
հիմը՝ և մեղի օրուած յուսոյն վախ
ճանը ասիկայ է : Սեր հնազանդու
թեան և քաջած նեղութիւններնուս
և տառապանքներնուս փոխարէն՝
անվախճան և անսահման և անխառն

մէկ երանութիւն մը տալ կը խոս-
 տանայ . մաքուր հեշտութիւններ
 պիտի տայ՝ որ մեր հոգւոյն մէջ ոչ
 կըշտանալ կը պատճառեն և ոչ ձանձ-
 րութիւն . փափկութեան տուտու-
 թիւններ՝ որուն համեմատելու ար-
 ժանաւոր բան չիկայ այս աշխարհ-
 քիս մէջը . նոյն իսկ գերագոյն բա-
 րին ստանալով՝ անայլայլելի կերպով
 մը ամէն բարիքներն ալ պիտի վայե-
 լեմք : Այս գերագոյն էակին մէջ,
 այս լուսոյս մէջ, որ էութեան և ի-
 մացականութեան լրութիւնը միայն
 անոր վրայ է, ամէն ճշմարտութիւն-
 ներուն ծանօթութիւնները պիտի
 ստանամք . և անոր ճամբաներուն
 իմաստութեանը տեղեակ ըլլալով
 պիտի զարմանամք : Արեւն յաւիտե-
 նական գաղտնիքներուն մէջ և իրեն
 բանին մէջ պիտի տեսնեմք բոլոր
 արարչութեան նախագիծ գաղափա-
 րը, իր երկրպագելի խորհուրդնե-
 րուն գաղտնիքը, իր ամէն բարու-
 թիւններուն և գերազանց մարդա-
 սիրութեանը հրաշքները : Արարած

ները ամէնն ալ իրենց իրարու հետ
 ունեցած կապակցութեամբ և մե-
 ծագործ վայելչութեամբը մեր աչ-
 քին առաջը պիտի բացվին ու երե-
 ւին . հոն ամէն բան իրեն կատարե-
 լութիւններուն կաարված պիտի ըլ-
 լայ . որ ստեղծեալ հոգևոց համար
 միշտ նոր և միշտ արդիւնաւոր և
 արգասաւոր ըլլալով՝ իրենց անսահ-
 մանութեամբը մեր անսահման հա-
 յեցողութեանը և մշտնջենաւոր տե-
 սութեանը յարմար ենթակայ կ'ըլ-
 լան : Ամէն կարգի և ամէն գեղեց-
 կութեան սկիզբն ու հեղինակը՝ և
 գերազոյն կատարեալ և գերազոյն
 սիրով սիրելի էակը ինչպէս է նէ ա-
 նանկ տեսնելովնիս՝ որքան կրնամք
 սիրել նէ՝ այնքան պիտի սիրեմք ա-
 նիկայ : Մեր հոգին իրեն բնութեա-
 նը վերցընելու գերազանցութեան
 գերազոյն աստիճանին հասնելով՝ ի-
 մացականութիւն և սէր պիտի կրտ-
 ըի բոլորովին : Աստուածային սէր .
 զուարճալի զգացմունք . որովհետեւ
 սիրվելու ամէն բանէն աւելի արժա-

նաւորութիւն ունեցող էակին կալմբ
 պիտի տարվի բոլորովին, անանկ է-
 ակ մը՝ որ առաջ ինքը մեզ սիրեր է.
 և սիրելուն ալ մէկ հատիկ նպատակ
 և վախճան այս է՝ որ մեզ իր հրովը
 բորբոքելով երջանիկ ընէ: Այս սէ-
 րըս շարունակ մեզ պիտի յափշտա-
 կէ իրեն քաշէ. որ մենք այս աշ-
 խարհքիս մէջ ասոր բաւականու-
 թիւն չունիմք:

Արօնասէր և հաւատացեալ մար-
 դու համար այս ի՛նչ յոյս և ի՛նչ տե-
 սարան է: Վարդոյս համար սրա-
 րաստրված երջանկութեան գաղա-
 փարը՝ իր կենացը ամէն վայրկենին
 վրայ որքան քաղցրութիւն և գեղեց-
 կութիւն կը ծաւալէ: Անոր որքան
 անուշ կուգայ ինքնիրեն ըսելը թէ՛
 ամէն բան զինք իրեն ցանկացած
 երջանկութեանը կը մօտեցընէ. ի՛նչ
 որ միայն աղէկութեանը համար կը
 սիրէ և կը փափաքի՝ անոնցմէ բնաւ
 մէկն ալ իրեն համար կորսելած պի-
 տի չըլլայ. և ի՛նչ բանի որ իր Աս-
 տուծոյն աչքին առաջը կը դիմանայ

և կը համբերէ , ի՛նչ բանի որ՝ միայն
 անոր հաճոյ ըլլալու համար ձեռք
 կը զարնէ , վերջը ի՛նչ կ'ըլլայ նէ ըլ-
 լայ , մինչեւ իրեն պինտ պղտիկ աշ-
 խատու թիւններն ալ , մանր նեղու-
 թիւններն ալ , ամէնն ալ իրենց հա-
 տուցմունքը պիտի ունենան . և այս
 հատուցմունքըս է նայն ինքն Աստ-
 ուած : Ի՛նչպէս իր հողւոյն մէջ այս
 ամէն գործքերուն պտուղը կը քաղէ .
 ի՛նչպէս ժամանակը հասնելէն ալ
 առաջ այս պտուղներըս կը վայելէ .
 և միշտ զինքը գոհ կը գտնէ : Ա՛յլ
 իմ սիրելի բարեկամներս , դուք ալ
 խոստովանեցէք որ՝ ճշմարիտ քրիս-
 տոնեայն այս աշխարհքէս կ'սկըսի
 երջանիկ ըլլալ , նրբան որ մարդ կըր-
 նայ երջանկանալ :

ԳԼՈՒԽ ԹՎ.

Ճշմարտապէս կրօնասէր և հաւատացեալ մարդուն վրայ, ընկերութեան և ուրիշ մարդոցը երջանկութեանը նայելով:

ԽԵԼՔԻ և կրօնքի լուսով լուսաւորված մարդուն միայն այնքանը հերիք չէ՝ որ ինքրզինք երջանկութեան հասցրնէ. ձեռքէն եկածին չափ ուրիշներուն երջանկութեանը համար ալ աշխատելու է: Առանց ասոր՝ իրեն խելքն ալ իրեն շատ քիչ և անկատար լոյս մը կուտար, իր կրօնքը կամ սուտ՝ կամ ծուռ հասկցված կ'ըլլար. և իրեն երջանկութիւնն ալ կատարելութիւն և հաստատութիւն չէր ունենար: Այլ յիրաւի մեր վիճակը ուրիշ մարդոց վիճակին հետ աւանակ կապված է որ՝ մինչեւ որ ուրիշներուն աղէկութիւնը մերիններուն հետ կցորդելուն ճամբան չի գրունեմք, և մեր ձեռքէն եկածին պէս աւսոնց վիճակն ալ մերինին հաւասարելու չ'աշխատիմք նէ՝ մենք չեմք կրօնար երջանիկ ըլլալ: Ասկէց աւելինը

սեմ՝ մեր ժամանակաւ որ շահը՝ ընդ-
 հանուր օգտին համար ետ ալ ձգե-
 լու եմք . աղէկ գիտնալով որ՝ ամէն
 ընկերութեանց գլուխը և այս մեծ
 գերդաստանիս հատարակաց հայրը
 մեզ երջանկութեան համար ստեղծե-
 լէն ետքը՝ մեր անոր համար նուի-
 ըած բաներնիս առանց փոխարինի և
 վարձքի չի թողուր : Աստուած՝ սի-
 րոյ Աստուած , և էապէս նոյն իսկ
 սէրն ըլլալով՝ անիկայ մարդոց յայտ-
 նող կրօնքն ալ պէտք է որ՝ բոլոր աիե-
 զերքը սիրելը իրեն յատկութիւն ու-
 նենայ , և ահա՛ այս է որ էապէս այս
 կրօնքիս հետ կրցված է : Այլ որ այս
 սուրբ օրինաց ճշմարիտ ոգւոյն դէմ՝
 գործելու ըլլայ նէ՛ կրնայ յիրաւի քը-
 ըրիստոնէի անուն վրան ունենալ .
 բայց ճշմարիտ քրիստոնեայ չի կրնար
 ըլլալ : Արրնայ այն ատենը ըլլալ սնո-
 տիապաշտ , կրօնքի անունով ծուռ
 երեւակոյութեան տէր եղած , ա-
 ըրիւնտէր , սակայն՝ փառասիրու-
 թեան և ազահութեան և վրէժխնդ-
 րութեան՝ և կրօնքի սրատճառանօք

իրենն ձեռքը զէնք տուողներուն բռ-
լոր կրկնը գործիքի պէս ծառայելով՝
տուտ նախանձաւորութիւնը զինքը
ճամբէ կը հանէ : Աոյն խկ որդւոյն
Աստուծոյ ըսածին պէս՝ որդի բար-
կութեան կ'ըլլայ . Յիսուսի Քրիս-
տոսի ճշմարիտ աշակերտ չի կրնար
ըլլալ :

Քրիստոնեայն՝ իրենն վարդապե-
տին Աստուծոյ խրատներով և մտօքը
իր միտքը աղէկ մը կըթած և տոգո-
րած ըլլալով՝ կենաց ամէն վիճակին
մէջ ինչ պէտք էր ըլլալ նէ՝ այն է :
Աղէկ հայր . աղէկ զաւակ . գթոտ և
հաւատարիմ երիկ , հաստատուն և
ազնիւ բարեկամ . ընտել և մարդա-
սէր վարպետ . և իր վիճակին երե-
սէն որկէց որ կախում ունի նէ՝ անոր
ալ աղէկ կապւած , և պատուոյն նա-
խանձաւոր : Արիչներուն խեղճու-
թիւնը իրենն եղածի պէս սրտին կը
դրպչի , և միշտ անոնց ճար մը ընելու
և օգնութեան հասնելու ճամբան
կը նայի : Իրենն յայտնի թշնամի եղող-
ներուն ալ կողորմի և գութ կը ցը-

ցընէ . անոնցմէ տեսած գէշութեանը փոխարէն աղէկութիւն ընելով անոնցմէ վրէժ կ'առնէ . մարդոց տըկարութեանը վրայ չէ՛ թէ արհամարհելով՝ այլ մեղքընալով և ներելով կը նայի . թէ՛ և իր պաշտօնը անանկ բերէ՝ որ անոնք պատժէ . բնական և ընկերական կարգը անոր վրան ինչ պարտականութիւն որ դնէ՝ այն ամէն գործերուն մէջն ալ իրեն պարտք կը սեպէ արդարութեան և պատշաճից կանոնէն դուրս չելլել . . : V. յս ստորագրած պայմաններս երեւակայութեան պտուղ են մի : Չէ՛, սիբելիք . ես ձեզի ճշմարիտ իմաստուն մարդոց նկարագիրը կ'ընեմ կոր , աւետարանական օրինաց ստոյգ և ճշմարիտ աշակերտները ասանկ կ'ըլլան : շիմա այս ատենս ձեր մէջն ալ կըրնան ասանկ մարդիկ գըտնելիլ . թէ՛ և մեր հիմակ վան դարը ապականութեան և ամէն տեսակ խենթութեան դար մըն է :

Շիմա ինձի ըսէք . ասոնց ո՞րը յարգութեան և վստահելու և սի

րելու արժանի կը դատէք . այս կե-
նացս գործոց մէջ ձեր հանգստու-
թիւնը և խաղաղութիւնը և երջան-
կութիւնը ասոնց սրբ աղէկ տեղն ՚ի
տեղը ճարելու կարող է . արդեօք
քրիստոնէութեան հոգւով ճշմար-
տապէս լեցուած՝ և իրեն ինկած բա-
ները կատարող մարդը մի , եթէ
սուտ դրութիւններով ճամբէ ելած՝
և իրեն կիրքերէն զատ իրեն առաջ-
նորդ և կանոն չի ճանչցող մարդը մի :

Սեր նայվածքը քիչ մըն ալ հե-
ռուն . տանիմք : Արօնասէր և լուսա-
ւոր միտք ունեցող մարդուն վրայ
մէկ մըն ալ քաղաքական ընկերու-
թեան նկատելով մտածեմք , որ ին-
քըն ալ այս ընկերութեանս անդամ-
ներէն մէկն է : Արօնքի կապով ալ ի-
րեն հայրենեացը և իրեն ազգին
կապված ըլլալով՝ ինչ կողմէն անոր
պարտական ըլլալը շատ աղէկ կ'իմա-
նայ : Անոր մէջը ծնած ըլլալով՝ իրեն
երկրորդ մայր անիկայ կը սեպէ . իր
ապրելուն վրայօք առատ օգնու-
թիւն առած է անկէց . իրեն քաղ-

ցրը զուարճութիւններն ալ անոր
 ձեռք բռնելովը եղած է . իր բռ-
 լոր կրթութիւններուն՝ և իր միտքը
 և կարողութիւնները բացվելուն և
 լուսաւորվելուն վերաբերեալ ի՛նչ
 որ ունի նէ՛ անկէց գիտէ . հոն կը
 գըտնէ իր ճնողքը , իր բարեկամնե-
 րը , իր ինչքը , իր կրօնքը , կամ գոնէ՛
 մոլորութեան և խենթութեան ա-
 տենէն դուրս՝ իրեն կրօնքին ազատ
 գործադրութիւն , և ի՛նչ որ իրեն
 աւելի սիրուն և պատուական սե-
 պած է : Այն ո՛րքան կապանքներ
 են որ՝ սրբազան կըսեպլին , հետերնին
 բնական ազգմանց զգացմունքալ կայ .
 և ասոնցմով իր ճնած երկրին կասլ-
 ված է : Թէ որ ամէն մարդիկ կը սի-
 րէ նէ՛ իր քաղաքակիցները և եղ-
 բայրները ո՛րքան աւելի սիրելու է :
 Հայրենասիրութիւնը իրեն ամէնէն
 զօրաւոր կիրքը եղած է . իր հայրե-
 նեացը պատուոյն հոգ տանելուն
 հաւասար՝ այս աշխարհի մէջ ուրիշ
 բանի հոգ չ'ունի . անոր վրայ գե-
 շութիւն մը գայ նէ՛ կը տրամի և ի

րեն ցաւ կ'ընէ , մէկ յաջողուածքը տեսնէ նէ կուրախանայ : ()տար երկիրներ ալ աքսորված ըլլայ՝ աքսորէն դառնալուն հառաչանօք կը փափաքի . արցունքով թրջած աչքը դէսլ 'ի անոր կը դարձընէ . Իսրայէլացի գերիներուն նման , որ Ափրատայ եղերքը բուսած ուռիներէն (սէօյիւտներէն) վար իրենց նուագարանները կախելով՝ քաղցրաձայն նուագնին և երգերնին և ոգէշարժ յիշատակնին Արուսաղէմայ համար կը սրահէին :

Այս իրեն հայրենեացը վրայ ունեցած սէրը մէկ անպտուղ զգացմունք մը չ'է : Քանի՛ որ անոր մէջը կ'ապրի , այս սիրոյս հաստատուն վրկայութիւնները կուտայ անոր օրէնքներուն հնազանդելովը , և իր ձեռքէն եկած ամէն ծառայութիւնները անոր ընելով , թէ՛ իր մտքին լոյսը անոր հաղորդէ , թէ՛ իր ճարտարութեանը և աշխատութեանը ստողովը անիկայ հարստացընէ , և թէ՛ անոր պաշտարան կենալու համար ղէնք առնէ : Անոր հայրենասիրութիւնը մի-

այն մէկ բոսկէի մը չափ հազիւ դի-
մանալու բըռնկիլ մը չէ՛, առանց
գաղափարի անուն չէ՛, իրեն անձնա-
կան դիտմունքները և իր կրից ան-
կարգութիւնները երեսանց ջանացո-
ղութիւններով գոցելով բազմութիւ-
նը խաբելու համար հնարված բառ-
չէ՛: Այգիսի անուն հանելով՝ կը-
ռիւի պատճառ բռնելիք չունի, որ
չատերը կ'ընեն. գուցէ իր քաղա-
քակիցներուն և հայրենակիցներուն
դէմ անգամ կռիւ բանալով. քան-
զի ասիկայ թէ՛ հայրենիքը՝ և թէ՛ բո-
լոր մարդկային ազգը ծաղրել կ'ըլ-
լայ: Ամենեւին անոր համար չափա-
զանց սէր չի կեղծեր. անոր համար
իբրեւ Աստուած կը սիրեմ և կը յար-
գեմ չ'ըսեր. այլ կը յարգէ, և զինքը
անոր զուակներուն մէջ ամէնէն ա-
ւելի անոր սիրող կը ցըցընէ: Հայ-
րենեաց անունով սեղան չի կանգ-
ներ. բայց անոր համար ապրիլն ու
անոր համար մեռնիլը գիտէ: Թէ որ
մէկ բարձր պատուոյ մը հասնելով մեծ
իշխանութիւն ունենայ՝ անիկայ ա-

մէնուէն միտքը չ'է թէ իրարմէ բաժ-
 նելու և զատելու՝ այլ իրարու հետ
 միացրնելու գործ կածէ . ատելու
 թիւնները չ'է թէ բռնկեցրնելու՝ այլ
 մարելու կը նայի . հեղինակու թիւնը
 և իշխանու թիւնը ամէն մարդու չ'է
 թէ երկիւղալի՝ այլ սիրելի և յար-
 գելի ընելու կ'աշխատի . հասարա-
 կու թեան չ'է թէ ինչքը կողոպտել և
 բռնաւորու թիւն ընել՝ այլ հայր ըլ-
 լալ կը խորհի : Սէ որ բաղդը բանե-
 ցաւ ու իրեն կեանքը մասնաւոր և
 առանձին վիճակի մը մէջ անցրնելու
 կարգը մտաւ նէ՝ ունեցած քիչ մը
 խելքն ու հանձարը կը խարճէ ճշը
 մարտու թիւնը պաշտպանելու , ըս-
 տոյգ կանոնները պահելու , և իր քա-
 ղաքակիցներուն՝ իրենց ճշմարիտ օ-
 գուտը սորվեցրնելու : Այամ թէ որ
 աւելի մէկ բան մը չի կրնար ընել նէ՝
 իրեն սիրելի եղած առաքինու թիւն-
 ները կատարելու ջանք ընելով՝ իր
 քովիններուն ասոնց օրինակը իր ան-
 ձինը վրայ կը ցրցրնէ :

Արօնքի հոգւով լեցիլած մարդն

ու՛ իր դժբաղդութեամբը ասկէց
 զըկրված մարդը՝ հասարակաց բար-
 ւոյն վրայօք իրարու հետ կատարեալ
 բաղդատելու համար այն խորհիւմք
 որ՝ ասոնց դիտաւորութիւններուն՝
 և գործոցը սլատճառ եղած բանե-
 րուն տարբերութիւնը անոնց վար-
 քին և ընթացքին մէջն ալ ո՞րքան
 տարբերութիւն կը մըտցընէ : Ահկը
 իրեն նոյատակ կը բռնէ միայն իր ա-
 բարչին փառքը . և ասիկայ էսպէս
 իրեն ինքըզինք կատարելագործելու
 և բարոյական կարգի և հասարակաց
 աղէկութեան համար ընելու հոգոյն
 հետ կասկած կը գտնէ : Ահկալը կը
 ցանկայ ալ նէ՛ մէկ փառքի մուխի
 մըն է ցանկութիւնը . և բոլոր հոգը
 կամ իշխանութիւն կամ հարստու-
 թիւն կամ հեշտութիւն ձեռք ձը-
 գելու վրայ է : Ա՛նչ ըլլայ նէ հոգը
 չէ՛ ինչպէս որ Աուսօ կ'ըսէ . միայն
 այն կը նայի որ՝ ի՛նչ կերպով որ ըլլայ՝
 իր փափաքածին հասնի . տիրէ . վա-
 յելէ . և ուրիշները անկէց վախնան :
 Ասիկայ հնազանդութեան և հար-

կի տակ իննալուն բնաւ մէկ տեսակն
 ալ չի սիրեր . ինչ իշխանութիւն որ
 իրեն մեծանալու և հարստանալու
 գիտաւորութիւններուն դէմ ելլէ ,
 և իր ցանկութիւններուն տանձ դը-
 նէ , անոնց ամէնն ալ իրեն ատելի
 կ'ըլլայ : Շփոթէն և աղմուկէն կ'ա-
 խորժի . քանզի միշտ իրեն անանկ
 կուգայ որ՝ ասոնց մէջ իրեն մէկ մաս-
 նաւոր օգուտ մը կ'ըլլայ . թէպէտ
 շատ անգամ ասոնք իրեն կործանմա-
 նը սրտածառ կ'ըլլան :

Ասոր հակառակ՝ կրօնասէր մար-
 դը և հաւատարիմ քրիստոնեայն՝
 հասարակաց օգտին տակը չի մանող
 մասնաւոր օգուտը բանի տեղ չի
 դնելով , և իր խրղճմբտանքին սկիզբ-
 ներովը՝ Աստուծոյ արդարութեամբը
 կամ գթութեամբը հաստատել կա-
 մեցած ամէն իշխանութիւններուն
 ալ գլուխ կը ծռէ ու կը հնազանդի .
 ապստամբութեան խորհուրդները
 անգամ մտքէն կը հեռացընէ . չըլլայ
 որ կարգի դէմ աղմուկ մը հանէ :
 Վիտէ որ մարդոց մէկ կառավարու-

Թիւն մը պէտք է . և մարդկային օ-
 րէնքներն ու սահմանադրութիւններ
 ըր իրքան բնապէս անկատար ըլլան ,
 և կառավարութեան ամէն տեսակն
 ալ փոփոխական ըլլան , տակայն ամէ-
 նէն գէշը՝ սահմանադրութիւն և կա-
 ռավարութիւն չունենալն է : Վիտե-
 որ անխիստանութիւնը ինչ գէշու-
 Թիւններ հետը կը բերէ : Ալ իրքան
 որ մասնաւոր մարդոց այս ինչ կամ
 այն ինչ վիճակին վայելլու կարգին
 կանոնին վրայօք լոյս առած ալ է նէ՝
 և իրքան որ իրեն քաղաքակիցները
 լուսաւորելու համար բոլոր անձամբ
 ինքըզինք տուած է նէ՝ օրինօք սահ-
 մանած կարգն ու կանոնը կը յարգէ .
 և այս կանոններու հարկաւոր հե-
 տելութիւնը եղած կապակցութիւ-
 նը և միութեան կեդրոնէն չի զատ
 վիլը՝ իրեն անդամ եղած մարմնոյն
 ամբողջութեանը հարկաւոր կը սե-
 պէ : Անոր բերնէն բնաւ տրտունջ
 և գանգատ չի լավիր : Շ փոթութեան
 մէջ ինկած հոգիները ձեռքէն եկա-
 ծին պէս կը խաղաղօրնէ աւելի եր-

Զանիկ կենաց մը յուսով, և անոնց
 քաջածներուն և Աստուծմէ եկածին
 հաճութիւն տալուն և հնազանդե-
 լուն փոխարէն առնելու վարձքեր-
 նուն վրայ խորհրդածութիւն ընե-
 լով զանոնք կը մխիթարէ . հին ժա-
 մանակի քրիստոնեայներուն օրինակը
 առաջնին կը բերէ, որ գրեթէ շա-
 բունակ իրենց տէրը փոխելով՝ և
 իրենց կրակ կտրած հալածիչներուն
 ձեռքին տակը ըլլալով ալ՝ ամէնէն
 աւելի հանդարտ և հեղ և հաւա-
 տարիմ հպատակ կը ցրցընէին իրենց
 անձը՝ իրենց տէրութեանը : Այլ այս
 կանոնս մէկ գործնական կանոն մը
 կ'ընէ, որ մինչեւ որ օրէնքներուն
 այս կերպով հպատակութիւն չըլլայ՝
 քրիստոնէութիւնը ինքնին բնաւ մէկ
 տեղ մը հաստատութիւն չի գտներ,
 և մէկ տեղ մը չի մնար . բայց այս
 հնազանդութիւնս ալ՝ կրօնքի և
 խրղճմբտանքի դպչելու բաներու
 համար հասկցովելու չ'է :

Արօնասէր և դիւրազգած մարդ-
 ուն խօսքը այս է :

“ Թէ որ կրօնից և հայրենեաց
 աւելի աղէկութեան համար , և
 սուրբ կանոններու և սկզբունքնե-
 ռու հնազանդելու համար՝ սրտին
 խորունկէն կրօնքի վրայ հաստատ-
 ված և լուսաւոր միտք ունեցող
 մարդը իր ձեռքէն եկածին չափ
 ամէն մարդուն միտքը այն ամէն օ-
 ղէնքներուն և սովորութիւններուն
 կը հնազանդեցնէ , որ առանց դրսւ-
 չելու կրօնքի և առաքինի վարուց՝
 միայն քաղաքական ընկերութեան
 կը վերաբերին , և ինքն ալ միայն
 այս կողմէս մտածելով ինքրզինք ա-
 սոնց պահպանութեանը պարտա-
 կան կը սեպէ , և ամէն ատեն ի-
 ռեն հաւատքը չի ստելու համար ի-
 ռեն կեանքը զսհելու անգամ պատ-
 ռաստ է , ասանկ մարդը իր քաղա-
 քակիցներուն երջանկութիւնը միտ-
 քը դնելով , և անոնց աղէկութեա-
 նը փափաքովը կրակի սէս երելով՝
 որ ամէնուն սիրտը իրարու հետ
 միացնէ , կ'ուզէ որ իրեն կարողու-
 թիւն տրվի իր ձայնը այնքան հա-

„ զարաւոր մարդոց վրայ հեղինակու
 „ թիւն ունեցողներուն լսել տայ , և
 „ անոնց ըսէ ” :

“ Վ՛ի գուք , որոնց հեղինակու
 „ թիւնը և իշխանութիւնը կը յար-
 „ գեմ , որ Մտուածային նախախնա
 „ մութիւնը իրեն ողորմութեամբը
 „ կամ անաչառութեամբը ձեր ձեռ-
 „ քը յանձնած է՝ ձեր այն իշխանու
 „ թիւնը գործածելու կերպին նայե-
 „ լով , ներեցէ՛ք որ մէկ ճշմարտապէս
 „ ազատ քաղաքացի մը՝ որ ազատու-
 „ թիւնը մէկ պարապ և աննշան բառ
 „ մը չ'է՛ բռնած , և զինքը իր հայրե-
 „ նեացը զաւակի տեղ կը դնէ , որ ձեր
 „ գորովական սէրը անոր վրայ է , հա-
 „ մարձակի թէ՛ իր հայրենեացը և թէ՛
 „ ձեր օգտին համար ձեզի հետ ճըշ-
 „ մարտութեան լեզուն խօսի ” :

“ Մի՛ մոռնաք որ՝ ձեր ամենահար-
 „ կաւոր օգուտը՝ իրենց հանգստու-
 „ թիւնը և երջանկութիւնը ձեզնէ
 „ սպասող մարդոց օգտին հետ կապ
 „ ված է . և բնաւ անանկ իշխանու-
 „ թիւն մը չի կայ որ մշտատեւ ըլլայ ,

77 մինչեւ որ արդարու-թիւնը և իրա-
 77ւունքը իրեն հիմն ու խարխիս չու-
 77նենայ: Թէ որ ձեր հեղինակու-թիւ-
 77նը հասարակու-թեան սիրելի ընե-
 77լու հոգէն մէկ վայրկեան մը միայն
 77դ ադ արիք նէ՝ չէք կրնար անկէց ետ-
 77քը այն իշխանու-թիւնը յարդի ը-
 77նել. մարդիկ խաղաղու-թեամբ կա-
 77ռավարելուն մէկ հատիկ գաղտնի
 77արուեստը ասիկայ է: Այս իշխա-
 77նու-թեանս մէկ մանր կտորը անգամ
 77յանձնած մարդերնիդ՝ դուք ձեզի
 77ինչ վախճան և նպատակ բռնած
 77էք նէ՝ այն ալ նոյնը պիտի բռնէ,
 77որ ամէնուն ալ փափաքած նպատա-
 77կըն է. և ասոնք ալ ձեր իշխանու-
 77թեանը միայն այն ատենը հաղորդ-
 77պիտի ըլլան՝ երբ որ ձեր ընտրու-
 77թեանը ճշմարտապէս արժանի են:
 77Ասանկ էր Աթէնք. մինչեւ որ իրենց
 77կարող եղածին չափ մէկ մարդուն
 77հաւատքը և բարքը և առանձին
 77վարքը ինչպէս ըլլալուն վրայ աղէկ
 77և ստոյգ տեղեկու-թիւն չունենային
 77նէ՝ այն մարդուն ձեռքը քաղաքա-

Կան պաշտօն չէին հաւատար : Վրլ
 խաւորասէս՝ մասնաւորաց ձեռքը
 փախուտի ճամբայ չի ձգելու՝ և
 օրինազանցութեան պատրուակ չի
 թողելու համար՝ սէտք է օրէնքներ
 սարգել և յստակ և ճիշդ ընել,
 որ դժուար չ'իմացվի՝ և երկու մըտ
 քի վրայ չի տարվի . թող չի տալ որ
 իրենց մթութեամբը և տարտամ և
 անստոյգ միտք մը տալով սուտ մեկ
 նութիւններու տեղի տան , և ոչ
 շատութիւնովնին աչք վախցընելէն
 զատ՝ մէջերնին իրարու հակառակ
 բաներ ըլլայ . քանզի ասոր հարկա
 ւոր հետեւութիւնը՝ այն օրէնքին և
 անիկայ դնողին անարգութիւնն է :

“Վայց այս ասանկ ըրած ատեն
 նիդ այն ալ նայեցէք որ՝ հասարա
 կութեան բարքը մաքուր ըլլայ .
 քանզի ժողովրդեան բարքը մաքուր
 չ'եղած տեղը՝ օրէնքները ոչինչ են :
 Այս ալ ըսեմք որ՝ առանց կրօնից
 մարդու համար ոչ աղէկ բարք կայ՝
 և ոչ առաքինութիւն : Ալ աստ
 ուածպաշտութեան արտաքին կեր

77 պերուն վրայօք անտարբերութեան
 77 ոգին սիրտը մտածին պէս՝ շատ չ'անց-
 77 նիր, կրօնքն ալ անկէց կը վերնայ 77 :

“Նոյն կանոնին համեմատելով՝
 77 երդումը մէկ պարաս պըրուցվածքի
 77 ձեւի մը տեղ մի՛ դնէք . ինչպէս որ
 77 ոմանք կ'ընեն, շատ գործածելով՝
 77 և պէտք չ'եղած տեղն ալ ընելով՝
 77 աննշան բառի տեղ դրած են : Այլ
 77 այս կարծիքս հաստատվելէն ետքը՝
 77 միայն երկիւղած մարդոց համար
 77 ետ չ'առնելու և չի ստելու խոստ-
 77 մունքի տեղ բռնելոված են : Այլ
 77 դուք ալ ասոնցմէ զատ ձեզի վախ
 77 չի տալու մարդ չ'ունիք : Ա՛մէն աղ-
 77 դաց և ամէն ճշմարիտ իմաստնոց ա-
 77 ռաջը՝ ամէն ատեն երդումը սուրբ
 77 բան մը սեպված է . և ծանօթ է որ
 77 ինչպէս Հռոմայեցւոց և Յունաց
 77 տէրութիւններուն մէջ պինտ երե-
 77ւելի գործքերուն պատճառ, և հա-
 77 սարակութիւնը իրարու վտահելու
 77 անխախտ հիմն, և քաղաքացւոց
 77 հաւատարմութեան ապահով ե-
 77րաչխաւոր՝ և ամէն աղէկութեան

„ որպէս թէ ջիղը սեպիւած էին ” :

“ Իրարու դէմ նախանձելու կիր-
 ” քը մարեցէք . ատելու թիւնները
 ” ամէնն ալ վերցուցէք . երկպառա-
 ” կու թիւնները զսպեցէք , և ամէն
 ” բան իշխանութեան ներքի առէք :
 ” Ասոնք են որ սաստիկ մրրիկներ և
 ” փոթորիկներ կը հանեն , որ թէ՛ կա-
 ” նուխ թէ՛ ուշ տէրութեան կործան-
 ” մանը սրտաճառ կ'ըլլան . ասոնք են
 ” որ ներսէն իրարու հակառակ ըլլա-
 ” լով պետութիւնը կը բաժնեն և կը
 ” տկարացնեն . և անդադար նորէ
 ” նոր փոսեր փորելով՝ երկու կողմին
 ” դըրխաւորներն ալ ինչպէս որ տիրող
 ” կողմին կամքը կուզէ՝ իրարու ետե-
 ” լէ այն փոսերուն մէջը կը ձգեն ” :

“ Ա երջին ըսելիքս ըսեմ . ճշմարիտ
 ” մարդասիրութեան ոգւով լեցվե-
 ” ցէք , որ ամէն մարդու և ամէն տե-
 ” ղի և ամէն ժամանակի վրայ կը տա-
 ” ըածի , և ասիկայ թելադրողը ողջա-
 ” միտ փիլիսոփայութիւնն է . բայց
 ” իրօք ասիկայ մեր սրտին ազդողը մի-
 ” այն մեր կրօնքն է : Ամէն ատեն բա-

„ Լահան առատաստուութիւն և մե-
 „ ծանձնութիւն և իմաստութիւն
 „ ունեցէ՛ք, որ ամէն անչափ փառա-
 „ սիրութենէ վեր ըլլաք, և ձեր ձեռ-
 „ քէն եկած ճամբայները ամէնն ալ
 „ բանեցուցէ՛ք հաշտութեան հոգ-
 „ ւով տիրել տալու. ասոր աւելի
 „ ճշմարիտ դիտաւորութիւն ցրցրնել
 „ սկէտք է՝ քան թէ սուտ իմաստուն-
 „ ներուն մեզի խոստացածը. որ ի-
 „ բեւեք զիրենք Աւրոպայի հաշտեցու-
 „ ցիչ և բոլոր մարդկային ազգի բա-
 „ րերար ըլլալ կը քարոզէին ” :

“ Ա՛տանկով ամէն ազգաց մէջ և ա-
 „ մէն ատեն զարմանալի մարդիկ ըլ-
 „ լալու արժանի կ'ըլլաք, ամէնքն ալ
 „ ձեր երախտիքը կը ճանչնան ու ձեզ
 „ կը սիրեն ” :

Ա՛հա՛ մէկ կրօնասէր և դիւրազ-
 գած մարդ մը՝ խօսքը մտիկ ընել տա-
 լու քիչ մը հանճար ունենայ՝ և զին-
 քը քիչ մը յարգեն նէ՛ ըսելիքը այս
 է : Աւրաւ ի՛ երբոր կրօնից ճըշմա-
 ըրիտ ոգին անոր սրտին մէջը բանած
 ըլլայ նէ, միայն իրեն հայրենեացը

վրայ եռանդուն սէր ունենալով, և
 անոր օրինացը հպատակելով՝ և անոր
 հեղինակութեանը գործիք և աւան-
 դապահ եղողներուն յարգութիւն
 տալով չի շատանար. այլ և բոլոր աշ-
 խարհի քաղաքացի և բոլոր մարդոց
 բարեկամ կ'ընէ. այս բառերս ճշ-
 մարիտ մտքի առնելով: Միայն ա-
 մէն տեսակ աշխատութիւններու մէջ
 մտնել՝ և ամէն ծանր գործքեր վրան
 առնելը՝ և ամէն վտանգներուն ին-
 քըղինք մատնելը հերիք չի սեպեր
 քաղաքականութեան լոյսը և բարե-
 բարութիւնը և փրկութիւնը աշխար-
 հիս պինտ անկիրթ տեղերը տանելու,
 ինչպէս որ աւետարանի այնքան ա-
 ռաքեալները և քարոզիչները ըրին.
 այլ և՛ թէ որ իր ձեռքէն դարնէ՝ կու-
 ղէր որ ամէն ազգ մի և նոյն բարեկա-
 մութեան և խելացիութեան և միա-
 բանութեան կապով իրարու մօտե-
 ցընէ, և իրարու հետ կապէ. և ա-
 նոնք կառավարողներուն խելքը հաս-
 ցընէ որ թէ՛ անոնց ամէն մէկուն և
 թէ՛ իրենց երջանկութիւնը անոնց ա-

մուր միութեանը և ամէն ընդհա-
նուր երջանկութեանը մէջ փրնտը-
ուեն :

ԳԼՈՒԽ Ժ.

Ըսվածներուն բովանդակութիւն և եզրակացու-
թիւն :

ՍԻՐԵԼԻՔ, մեր սրտին անդիմադ-
րելի յօժարութիւնը խորհելով՝ որ
մեր ամէն յօժարութեանն ալ արմա-
տըն ու աղբիւրն է, կրցաք հասկընալ
որ մենք երջանկութեան համար ըս-
տեղծուած եմք : Մայց այս ալ խել-
վնին կրտրեց որ՝ շատ անգամ երջան-
կութիւնը ուր որ չ'է նէ՝ հոն կը փրն-
տըուեմք : Ալ ես ալ ասով՝ մարդոյս
մինչեւ իւր ամէն փափաքանաց փախ-
ճան եղող գերագոյն բարին ստանա-
լու ատենը՝ այս մահկանացու կենա-
ցրս մէջ իրեն բնութեանը կողմանէ
բաւական և ընդունակ ըլլալու բա-
ներուն մէկ ճիշդ և ստոյգ գաղա-
փար մը տալ ուղեցի : Ալ ձեր այս

աշխարհքիս մէջ ձեռք կրնալ ձըգել-
լու երջանկու թիւննիդ հաւատարիմ
գծագրութեամբ ձեր աչքին առա-
ջը ներկայացրնելէն ետքը՝ ձեզի այն
ալ խոստանալու համարձակեցայ որ,
թէ որ ես երջանկութեան հասնելու
համար ինչ ճամբայ բռնեցինէ՝ դուք
ալ այն ճամբան մտնէք և ետեւէս
գալու ըլլաք նէ՝ դուք ալ անոր կը
հասնիք :

Մեր երջանկութիւնը հաստա-
տուն մէկ հիման մը վրայ դնելու հա-
մար՝ հին խմատուններուն շատե-
րուն կարծիքը քննեցի . մեր ատենի
փիլիսոփայներուն ըսածներն ալ քնն-
նութեան առի , ինչ կողմէն որ մեր
երջանկութեանը կը վերաբերին . և
դուք ալ՝ ասոնց մեզ ձգել ուզած
մութ ու խաւար անդունդները , և
անոնց սուտ և վտանգաւոր դրու-
թեանը աւաղելի հետեւանքները
տեսնելով՝ ձեզ սոսկում բռնեց , և
իրաւունք ալ ունեիք :

Ուրիշ տեղաց աւելի յստակ լոյս
փնտրուել հարկ ըլլալով՝ Մտուածա

յին յայտնութեամբ ստացած հա-
 ւատքիս սորվեցուցածներուն ձեռք
 զարկի . և ստուգութեանը վրայ ա-
 ղէկ և միակերպ և գերազոյն և սուրբ
 վկայութիւններ ունենալով՝ անոր
 ջահովը նոր լոյս առնել սկսայ : Այս
 կրօնքիս՝ մեր երջանկութեանը աւել-
 լի մօտ եղած բաներուն վրայ ծաւա-
 րած լոյսը՝ նոյն իսկ այդ լուսովը մաք-
 րելած մարդկային խելքին տուած
 լուսոյն հետ բաղդատելով անոր մօ-
 տեցուցի , և ասոնց իրարու հետ հա-
 մաձայնութենէն՝ աղէկ ճանչնալը
 հարկ եղած բաներուն վրայօք առ-
 ողջ գաղափարներ ժողվեցի : Ասոնց-
 մէ զատ՝ աղէկին և գէշին բնութիւ-
 նըն ալ քննեցի , որ ասոնք իրարու
 հետ բաղդատելու՝ և ամէն մէկուն
 իրեն ճիշդ արժէքը հասկընալու և
 հասկըցընելու կարող ըլլամ . և ասոնք
 ինձի առաջնորդ բըռնեմ ընտրելու
 և գործածելու , և անանկ կերպով
 մը ՚ի գործ դնեմ որ՝ իմ ձեռք ձը
 գել յուսացած պի՛նդ մեծ բարիքը
 ստանամ , որքան որ այս աշխարհքիս

մէջ կրնամ և կը փափաքիմ ստանալ :
 Եւ մեզ ասկէց հեռացընող խաբե-
 բայ բաներէն միշտ զգուշանալով՝ ա-
 մէնէն ետքը մեր խիստ շատ անգամ
 սխալներնուս աղբիւրը և պատճառ-
 ները հասկըցուցի :

Այսպիսի հիմները մէկ անգամ
 մը հաստատութեամբ դնելէս ետքը՝
 երջանկութեան ճշմարիտ աղբիւրնե-
 րուն և տարերքներուն վրայ խօսիլ
 սկսայ : Սիրելիք, կրօնքի և սիրոյ մի-
 ջոցով և օգնութեամբ ինչ որ ձեզի
 խոստացեր էի նէ՝ ամէնն ալ ամբողջ
 հոն գտանք, ինչ որ մեզի ամէնէն ա-
 ւելի ախորժելի գալու զգացմունք-
 ներ կան, ինչ ներքին և մաքուր ու-
 բախութիւններ կրնան ըլլալ, և ա-
 սոնցմէ զատ մէկ անայլայլելի խաղա-
 դութիւն մը, աղէկի և գէշի մէջ մի-
 օրինակ հոգւոյ հաւասարութիւն մը,
 որ ամենեւին չի խախտիր, ասանք ալ
 անոնց հետ մէկ տեղ գտանք :

Բայց որովհետեւ մարդկային վի-
 ճակին սպայմանը անանկ է որ՝ բնաւ
 մէկ տեղ մը այս աշխարհքիս բարի-

քը անխառն չեն գըտնըլիլ, ուստի
 ուրիշ տեղ, մանաւանդ կրօնից մէջ
 ձեզի քաղցր մխիթարութիւններ
 գտայ ձեր նեղութիւններուն և տա-
 ռապանքներուն գէմ, և ձեզի ցը-
 ցուցի. և մեր արժանաւորութիւնը
 ինչ վարձքի տէր կըրնայ ըլլալ, և
 մեր յոյսը ինչով կըրնայ կատարուիլ,
 ասոնց ալ գեղեցիկ պատկերը
 ձեր մըտաց առաջը նկարելով ցը-
 ցուցի:

Եւ որովհետեւ մեր երջանկու-
 թիւնը միայն մեզնով պիտի չի լըմն-
 նայ, անոր ալ ապացոյցները տուի
 որ՝ մեր կրօնքը ինքնին մտածելով՝
 և ասիկայ գէշի տանելուն կարելի
 ըլլալը մէկդի ձգելով՝ թէ որ մէկը
 ինչպէս որ պէտք է նէ՝ անանկ իմա-
 նայ և ՚ի գործ գնէ նէ, մեր նման-
 ները երջանկացընելու համար մեզի
 օգնելու ասկէց աւելի բան չի կըրնար
 ըլլալ. և այս կողմէն ասիկայ է որ՝
 մեր ամէն մէկը հայրենասիրութեան
 ոգւով լեցուն և հաւատարիմ և
 հնազանդ քաղաքացի կ'ընէ քաղա-

քական կարգի մէջ, և ամէն մարդու բարեկամ կ'ընէ, այս զրուցվածքըս իր ճշմարիտ և պի՛նդ ընդարձակ միտքովը առնելով, և հասարակաց բարւոյն և ընդհանուր կարգին ջանացող կուտակից կ'ընէ :

Թէ որ ամէնուն՝ և մասնաւորապէս մեր երջանկութեան վրայօք կը բօնքը ասանկ պտուղներ ունի, թէ որ առանց կրօնից մեր միտքը մարդկային կարծեաց հաճոյիցը մէջ կը ծրփայ և կը տարակուսի, և ասիկայ մտքերնիս մէկ որոշեալ ճշմարտութեան մը վրայ կը հաստատէ, թէ որ միայն ասիկայ է որ՝ խելքին վերին օգնութենէն զրկւած ատենը ինքն իր գլխուն չի կրնալ գտնելու շիտակութիւնն ու հաստատութիւնը կուտայ, թէ որ ասկէց զատ՝ մեր սրտին պիտոյքը լեցնելու բաւականութիւն ունեցող չիկայ, թէ որ ասիկայ գերագոյն էակին փառացը՝ և անոր ըստորոգելիքները և յատկութիւնները ճանչնալու՝ և անոր ճշմարիտ պաշտօնը և սէրը գիտնալ

լու այնքան համեմատութիւն և կա-
 պակցութիւն ունի, որքան որ անոր
 հաստատութիւն և խարխախ եղած
 առաքինութեանը հետ ունի, և մեզ
 մարդոյս վայելուչ ճշմարիտ մեծու-
 թեանը կը հրաւիրէ, և իրական եր-
 ջանկութեան՝ մեզի նկատելով՝ ամե-
 նակատար և ամենամաքուր աղբիւրն
 է. և բոլոր աշխարհս բաղկացընող
 մեծ գերդաստանին ընդհանուր բա-
 րին ալ ասոր հետ կապված է. և ալ
 աւելի ի՞նչ ըսեմ, ամէնը մէկ խոս-
 քով լմընցընեմ, կրօնքին ուժովն է
 ի՞նչ կապակցութիւն և հաղորդակ-
 ցութիւն ունիմ Աստուծոյ հետ, և
 ուրիշ մարդոց հետ, և ճշմարտու-
 թեան հետ, և առաքինութեան
 հետ, որ ինչպէս որ ամէն գէշու-
 թիւնները մոլութեանց հետ՝ ասանկ
 ալ ամէն աղէկութիւնները առաքի-
 նութեան հետ կապված են քրիս-
 տոնէական կրօնքին մէջ, և վերջա-
 պէս՝ իմ երջանկութեան հետ ունե-
 ցած կապս ալ՝ յայտնեալ կրօնքին
 վրայ հաստատված է: Վի իմ քաղա-

բակիցներս և բարեկամներս . ասոր
մեզի ցըցուցած այսքան աղէկու-
թիւնները տեսնելէդ ետքը տակա-
ւին կրնա՞ք մի երկմտութեան մէջ իջ-
նալ : Մէկ կողմէն այս հեզ և սիրուն
և մարդուն խելքին համաձայն փի-
լիսոփայութիւնս ունիմք , որ բրիւ-
տոնէութենէ եմք առած . և մէկ
դիէն այն փիլիսոփայութիւնը կեցած
է որ՝ ներողութեան և գթութեան
և մարդասիրութեան և բարերարու-
թեան սուտ և խաբեբայական ա-
նունները վրան առնելով , և մեզ գրե-
խէ հանող զգայական հեշտութիւն-
ները և ազատութիւնը և անկախու-
թիւնը մեզի ցըցնելով՝ երբօր այս
ամէն վարագոյրները վրայէն վերցը-
նեսնէ՝ ուրիշ բան չես տեսներ , բայց
եթէ՝ ես բնութեան ամէն գործքե-
րուն հարազատ թարգմանն եմ բտե-
լուն վրայ՝ ամէն բանի մէջ բնու-
թեան հետ հակառակութիւն , կա-
տարեւապէս աւրրված վարք , ան-
գութ աններողութիւն (դասիպու-
թիւն) , ցած և աներես ինքնապաշ-

տութիւն , կրից բռնաւորութիւն ,
 և մարդոյս ալ իր կիրքերուն խայ-
 տառակաբար ծառայ ըլլալը : Այլ
 անձոնի փիլիսոփայութիւն , որ մէկ
 անատուածութիւն մըն է . վրան
 քիչ կամ շատ ծածկոյթ առած . որ
 մեղի միայն չար գործքեր ընելու հա-
 մար գործունէութիւն կուտայ . և
 ուրիշ բանի օգուտ չ'ըներ . բայց է-
 թէ իրեն դպրատանը մէջ սորված
 աշակերտներուն նախատինքը և ցա-
 ւը կ'եւելցընէ :

Այլ դուք՝ որ անոր սուտ խոստ-
 մունքներուն և պարսպ խաբէական
 ձեւերուն բռնըլելով խաբվեր և
 գլխէ ելեր էք , բայց սրտին մէջէն
 շիտակութիւնը բոլորովին չէ՛ աւրը-
 ված և չէ՛ վերցած . մոլութեան և
 մոլորութեան վտանգաւոր վարդա-
 պեաններուն ըսածին տակաւին շատ
 երկար ատեն ականջ դնելու՝ և ա-
 նոնց ցրցուցած ճամբան երթալու
 հաճութիւն պիտի տա՞ք մի : Չեղ
 նման մարդիկը՝ և ձեր անձը անդամ
 այնքան քիչ մի պիտի սիրէք՝ որ ա-

սանկ ամէն աղէկ բանի թշնամի սուտ
դրու թիւններու կապովիք մնաք, որ
ամբողջ ազգի մըն ալ վարքը աւրե-
լու կարող ըլլալով՝ թէ՛ հատարակու-
թեան և թէ՛ մասնաւոր մարդոց եր-
ջանկութիւնը թունաւորելէն զատ
բան չեն կրնար ընել:

Աղո՛ւկ: Սա նոր ատենվան խելա-
ցիները՝ բոլոր աշխարհքիս մարդիկը
իրենց խելքովը գըտնէին նէ ի՞նչ
չահ պիտի ունենային արդեօք: Ա-
նոնց վարքին պէս և անոնց կանոնու-
վը ամէն մարդ երթար նէ՝ աշխարհ-
քիս վիճակը ինչ կ'ըլլար: Ա՛յլ դուք՝
որ զաւակի տէր էք, թէ որ ձեր տը
ղայքը հաստատուն և անփոփոխելի
սկզբունք չ'ունենան, թէ որ ճիշդ կա-
նոն և որոշիչ պատճառներ և խրղճ-
մըտանք և սանձ չ'ունենան նէ՝ վեր-
ջերնին ո՞ւր կ'երթայ, և ետքը անոնց-
մէ ի՞նչ յարգանք, ի՞նչ հնազանդու-
թիւն և ի՞նչ սէր կրնաք յուսալ: Ա՛յլ
դուք՝ սիրալի՛ր ամուսիններ, որ մինչ
չեւ հիմայ ասանկ մէկ քաղցրակիր շող-
թայով մը կապիւած էք, կրօնքը վեր-

ցընէք նէ՛ ձեր իրարու միշտ հաւա-
 տարիմ մնալնուդ և ամուսնական մի-
 ութիւննիդ անքակտելի մինչեւ վեր-
 ջը տեւելուն մէկ ապահով երաշխա-
 ւոր մը ունի՞ք մի: Պարկեշտ աղջկան մը
 և որդէսէր մօր մը և հաւատարիմ ա-
 մուսնի մը համար այն ի՞նչ անտանե-
 լի տարակոյս և կասկածներ կ'ըլլան:
 Վարելի՛ է որ այն ատենը զաւակնիդ
 անխնամ իրենց բաղդին և անկայուն
 դիպուածոյն ձեռքը կը ձգվին, իրենց
 ծնողքը մեռնելէն առաջ որք կը մը-
 նան, և անոնցմէ առած կեանքերնին
 մէկ գէշ և վնասակար ընծայ մը կը
 սեպեն, ասոնց ետքը աղէկ ըլլալուն
 վրայ ի՞նչ վստահութիւն կրնաք ու-
 նենալ: Առանձին մարդոց առաքի-
 նութեանց ամուր խարխիս՝ և ընկե-
 րական սիրոյ և առաքինութեանց ա-
 մուր կապ՝ և աղէկ վաբբի մէկ հատիկ
 ապաւէն եղող կրօնքը մեր մէջէն ո-
 ջընչանալու ըլլայ նէ՛ մենք ամէնս մէ-
 կէն այն ատենը ի՞նչ վաստրկած կ'ըլ-
 լամք: Անանկ է նէ՛ կրօնքը մեր սրը-
 տէն քակելու աշխատելով՝ միայն ա-

նոր ընելու աղէկու թիւններուն տեղը մէկ իրական աղէկու թիւն մը չի կրցող բերող մարդիկը առհասարակ ամէն մարդոց թշնամի են :

Բայց ես՝ ձեռքէս եկածը ետ չի թողուցի աղէկ առաջնորդ ըլլած խելքով մը իմ քաղաքակիցներս և բարեկամներս և եղբայրներս ճշմարտութեան և երջանկու թեան հասցընելու : Թէ որ միտքս դրածիս կրրցայ հասնիլ նէ՛ք բաւական ապրեր եմ, և թէ որ քաղցր բարեկամներ և հայրենակիցներ չ'ունենայի նէ՛ք աշխարհքիս վրայ ձգած ըլլալուս համար ցաւելու բան չ'էի ունենար :

Վ.Ե.Ր.Թ.

ՅԱՆԿ ԳՐՈՑՍ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆ ՉԻՆ

Շ

ԳԼ. Ա.	Երջանկութեան փափաքիլը և անիկայ փնտրուելը .	1
ԳԼ. Բ.	Երջանկութիւնը սւր որ չէ նե հոն կը փնտրուի : Ճշմարիտ երջանկութեան գաղափարը .	10
ԳԼ. Գ.	Մեզի աւելի օգտակար ըլլալու բանին վրայօք հին և նոր փիլիսոփայներուն կարծիքը .	21
ԳԼ. Դ.	Մեր երջանկութեանը վրայօք խելքէն և կրօնքէն առնելու ամենահարկաւոր և անսխալ գաղափարներուն վրայ .	51
ԳԼ. Ե.	Ազէկն ու գէշք ազէկ հասկընալու և կշռելու վրայ . և մեզ երջանկութեան մօտեցընելու կանոններ .	84
ԳԼ. Չ.	Մեր սխալներուն գլխաւոր աղբիւրները .	101
ԵՂԲԻԻՐ Ե.	Ճշմարտութեան հոգ ըլլալնիս .	101
“ Բ.	Նախապաշարմունք .	107
“ Գ.	Չգայտրանքները .	111
“ Դ.	Երեւակայութիւն .	115
“ Ե.	Կիւք .	127
“ Չ.	Սուտ կանոններ . Սուտ սկըզբունքներ .	132

- * Է. Սուտ տրամաբանել . 145
 * Ը. Բառերուն միտքը ծուռ առնել . 176
 ԳԼ. Է. Երջանկութեան գլխաւոր աղ-
 բիւրներուն վրայ . 203
 ԳԼ. Ը. Կենաց մէջ պատահած չարիք-
 ներնուս վրայ մտիթարութի .
 և մեր յուսոյն երջանիկ վախ-
 ճանք . 316
 ԳԼ. Թ. Ճշմարտապէս կրօնասեր և հա-
 լատացեալ մարդուն վրայ ,
 ընկերութիւն և ուրիշ մարդոց
 երջանկութեանը նայելով . 342
 ԳԼ. Ժ. Ըստիմաններուն բովանդակութիւն
 և եզրակացութիւն . 363



